



ԱՏՐՊԵՏ

891. 99

Ա-

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԹՈՒՐԲԱՀԱՆՆԵՐԻ ԿԵՆՆՔԻՅ

A $\frac{11}{10183}$


ԱՐՄԱՆԱԿԱՆ ԲԻՆՆԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԹԱԽԻԶ

Առաջատականի Հայերի Թեմական Արագատիպ
(Ազգամեծիկ եղիտարեթ Միբղարեղեանցի Յիշատակին)





Յանկարով ուսուսչայ պարբերական գանազան
 չրատարակութիւնների մէջ ունեցածս գրուցները,
 պատկերները, վէպիկները, վէպերը համախմբել, չրա-
 տարակել և առաջադրել հասարակութեան, այս հատո-
 րով ձեռնարկեցի այդ նպատակս գլուխ բերելու: Նկա-
 տելով ժողովուրդի ընթերցանութեան հակումը, թուր-
 քահայ եղբայրների վիճակի մասին ունեցած անչափ
 հետաքրքրութիւնը, հաւատացած եմ, որ ապարդիւն
 չը պիտի մնայ գործս:


Ե Տ Բ Պ Ե Տ

7 Հոկտեմբերի 1903 թ.

Թաւրիզ

Ն Ի Ի Բ Ե Ր Ի Ծ Ա Ն Կ Ը

- Ա. ԵՐԱՆՏԱՊԱՀԱՆՁ ԿԱՄ ՏԺՂԺԻԿ
- Բ. ԵՐԿՈՒ ՎԱԼԻ ՄԻ ՎԻՂԱՅԷԹՈՒՄ ԿԱՄ ԱՅԻՇԷ - ԽԱՆՈՒՄ
- Գ. ԽԱՌԱ ԽՐԽԱ.
- Դ. ԾՊՏԵԱԿ ՍՈՒԼԹԱՆ
- Ե. ԿԱՂ — ՆԱԶՈ.
- Զ. ՂԱԴԻ.
- Է. ՎԻՇԱՊԻ ԱՌԱԿԱՍՏԸ.
- Ը. ՓԱՇԱ.
- Թ. ՔԻԻԼՂԱՆ — ԲԷՅԻ.
- Ժ. ՕՐԻՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳ.



Ա.

ԵՐԱԻՏԱՊԱՀԱՆՁ

Կ Ա Մ

Տ Ժ Վ Ժ Ի Կ



Արտատպած - Աղբիւր - Տանգէտի 1897 թ . Նույ. գրքից

Ե Ր Ա Ի Տ Ա Պ Ա Հ Ա Ն Ձ

Կ Ա Մ

Տ Ժ Վ Ժ Ի Կ

Չ Ր Ո Յ Յ

Սրանից մօտ ութսուն - իննսուն տարի առաջ էր գրուածի մէջ ապրում էին տնանկ Ներսէս - աղբարն ու մեծ կարողութեան տէր Նիկողոս աղան: Վերջինս Կ. Պոլսում երկար ապրած լինելով՝ լաւ լուսարէն գիտէր, այդ պատճառով էլ Կարնեցիք նրան միւս Նիկողոս աղաներից զանազանելու համար, Ուսում Նիկողոս էին կանչում:

Ներսէս աղբարն էլ ժամանակին շատ հարուստ է եղել, մեծ օջախի որդի, խօսքը փառաների, վէզիրների քով անց, բայց չարաչար ձախորդութիւնների է հանդիպել: Նրա ապրանքների կարաւանները Կ. Պոլսի, Դամասկոսի ճանապարհների վրայ աւարի է մատ-

նրւել աւագակների ձեռքը, նաւերը Սև և Միջերկրական ծովերում ծովահէնների ձեռքն է անցել, ոչխարների հօտերը քրդերը քշել տարել են, իսկ քաղաքում ունեցած ապրանքների մթերանոցները և հացի շտամարանները կրակի էին տւել, վառել նրա հակառակորդները: Այնպէս քաղաքւել էին նրա միւլքերը, խաները, խանութները, որ ըոլորի հիմքն արեգակն էր ելել, այս ու այն եկել, բանի տիրացել ու իրենց համար կալածներ էին շինել: Ներսէս աղբարն էլ այնպէս մոլորւել, այնպէս յուսահատուել էր, որ ամեն բան, ապրելը, կեանքն անգամ աչքից ընկել էր, զգւել չարասիրտ դրացիներից և տանջանքով քաշքշոււմ էր:

Թէև բլբլկած, խարխլած, բայց մեծութեան նշանները դեռ երևում էին նրա տան արտաքին տեսքից. իսկ ինքն էլ թէև հին հագուստ էր հագնում, մաշւած և մաղւած, բայց մամանակին այդ շորերը ինչ թանգագին կերպասներից կազմւած լինելը լայտնապէս նշմարոււմ էր: Նա ծերացել, կորացել, դէմքը կընճիւններով ծածկւել էր, բայց վեհ հոգին դեռ չէր կորցրել: Խեղճ էր, աղքատ էր ներսէս աղբարը, դրացիների, բարեկամների նպատաներին կարօտ, բայց երբէք նա չէր մուրացել, երբէք չէր դիջել, ողորմութիւն խնդրել և ուրիշի միւննաթով չէր ապրել:

Մի օր բազարում նիկողոս աղան մտազործի խանութի առաջ պատահեց ներսէս աղբօրն ու նրա համար տասը փարայի (1 ¹/₂ կոպ.) մի ոչխարի թոք գնելով ասաց.

— Ներսէս աղբար, այս թոքն էլ դու տար ձեր տուն:

— Ենորհակալ եմ, ասաց Ներսէս աղբարն ու թոքը մտագործի ձեռքից առնելով՝ Նիկողոս աղալի հետ վերագարձան իրանց տները: Նիկողոս աղան մի շախկա միս էր առել, ամբողջ դմակն էլ հետը, տւել էր ծառայի կռնակը, որ ետեից գալիս էր, իսկ Ներսէս աղբարն էլ համեստաբար մի քալլ ետ ընկած հետեւում էր Նիկողոս աղալին:

Երբ շուկայից դուրս եկան, անօրէն տաճիկների շրջանից ազատւեցան, այնպէս որ այլ ևս ենիչերից, կամ կծան սօֆիթայից զդուշանալու առիթ չըմտաց, Նիկողոս աղան ասաց Ներսէս աղբօրը փորձւած մարդու խրատականի շեշտերով.

— Վիտես, քրոջս (այսինքն Ներսէսի կնոջը) ասա՛, թո՛ղ թոքերի, սրտի ճարպերը առաջ սուր դանակով լաւ մաքրէ, լետոյ այդ ճարպը կրակի վրայ սկաւառակում հանդարտ հալեցնէ, մի օր այդ ճարպի մէջ սպիտակ թոքերը տապակէ, միւս օրը սւր և երբորդ օրը սիրտը: Պատուիրի, որ լաւ մանրէ թոքերը, թէ չէ Տ ժ վ ժ ի կ ր համով չի լինիլ: Գիտես, Ներսէս աղբար, մենք բարեկամ ենք, այդ սլատճառով բարեկամական խորհուրդ եմ տալիս: Խօ՛ տեսնու՛ ես, թէ որքա՛ն դժւար է այդ անհաւատների բազալի միջից մի բան առնելն ու տանելը: Աէս կեանքդ մաււում է, հապա որքա՛ն դժւարութեամբ է մարդ տասը փարա աշխատում: Պէտք է տնտեսութեամբ ապրել, շահից հազարներ չի դիզւիլ, ատամներից պէտք է աւելացնել, ետ ձգել: Ասա՛ քրոջս (կնոջդ), թո՛ղ կըրակը մեղմ վառէ, որ ճարպը չըսււանայ ու չըփչանայ. փայտին էլ խնայողութիւն կըլինի, կերակրին էլ համը

չի կորչի և սեղան բերելիս, թո՛ղ ճարպը լաւ քամէ, պահէ, որ միւս օրւան տապկոցին բանացնէ: Անտե՛կէ լաւ տնտես լինի մարդու կինը, կարգին տնարար, Տ ժ վ ժ ի կ ի եզը այնպէս խնայողութեամբ կըբանացնէ, որ չորրորդ օրը նրա մէջ կարողանայ բ ի շ ի եփել և մանր ու խոշորին կշտացնել: Տ ժ վ ժ ի կ ի ը շատ համով բան է, բայց հարկաւոր է լաւ զգուշութեամբ ազը, տաքեղը կարգին լցնել և մեղմ կրակով տապակել: Աւելի լաւ կըլինի, որ սև թոքի և սպիտակ թոքի կէսերը մի օր եփէ, միւս օրը մնացորդները: Արքան համով կըլինի, տաք-տաք մարդ փափուկ լաւաշի մէջ բրդուճ անէ ու խշտէ: Ներսէս աղբար, երբ երեւակայում ես, թուքդ չի վազում...

Ներսէս աղբարը լաւ, մունջ հետևում էր բարերար Նիկողոս աղային և վերջինս երբ հարցեր էր տալիս ու նրա երեսին մտիկ անում, Ներսէս աղբարը գլուխը խոնարհեցնում էր համաձայնութեան նշան տալու ձևով: Նիկողոս աղան սպասում էր, որ Ներսէս աղբարը շնորհակալութիւն լայտնի, երախտագիտութիւնը արտայայտի լեզուով ու սրոշ բառերով, բայց Ներսէսն ամօթից ձայն անգամ չէր կարողանում բարձրացնել: Նիկողոս աղան իբր մի մեծ բարիք գործած, դարձեալ շարունակեց իր խրատական լորդորները ու տիրական հարցերը Ներսէս աղբօր բերանից կրախտագիտութեան խօսքեր լսելու մտքով, բայց Ներսէսը խրատուզած դառն մտքերով, չէր՞ էլ բմբռնում Նիկողոս աղայի ասածները:

Խեղճ Ներսէ՛ս, ասում էր նա իր մտքում, մի ժամանակ հարիւրաւոր աղքատներ, կարօտեալներ,

թշուառներ և օտարականներ քո հովանու տակ պատըսպարան էին գտնուժ, ուտուժ, խմուժ, կշտանուժ, հագնուժ և ծածկուժ ու այնպէս ճանապարհ ընկնուժ, հարիւրաւոր կարօտեալներ գործ էին ճարուժ քու դրան և ընտանիքները ապրեցնուժ. ամեն մի դրացուդ, ծանօթիդ ու անծանօթիդ օգնութեան էիր հասնուժ և ոչ սքից մի օր երախտագիտութեան նշան մտքովդ անգամ չէր անցնուժ պահանջել, իսկ այսօր Ուռուժ Նիկողոսը, կարկատող Թողորի որդին մի թոք առնէ ընտանիքդ կերակրելու համար այսքան քարոզ կարդայ գլխիդ և երախտագիտութիւն պահանջէ . . .

Մինչև տուն հասնելը. էլ ի՞նչ քարոզ չըկարդաց Նիկողոս աղան Ներսէս աղբօր գլխին, ի՞նչ խըրատներ չըտուեց, որ ժուժկայ լինի, քչով բուականանայ, ուրիշի արած բարիքը գիտենայ և ոչ սքի երախտապարտ չըմնայ: Նա ասուժ էր անդադար.

— Ի՞նչ մեծ բան է, որ տղայիդ ուղարկես մի օր գայ մեր ավթարը կտրէ, խօ հոգին չի դուրս գայ, ձեռները չի չորանայ: Նս տանը մի քանի տեսակ ծառաներ ունիմ, այնքանն ձրիակերներ, հացկատակներ կան, որ կարիք չունիմ մարդու: Բայց թող լինի, պատիւ պահելը մեծ բան է: Մի օր աղջկադ ուղարկէ, թող գայ մեր տախտակները լւանայ, ի՞նչ վնաս, խօ մէջքը չի կոտրի: Ելի չասի, մեր տունը դու գիտես, որ մի քանի տասնեակ բանանոցներ, աղախիններ կան, մեր սենեակների լատակները այնպէս մաքուր և այնպէս ճերմակ են, որ եղ թափես կըթողովւի առանց մի հատը աղտոտելու, կամ փչանալու, բայց իմ ասելս, միտքս ուրիշ է: Պատիւ պահէ, որ պատիւդ բարձրանայ: Եթէ քո կինը

մի օր զալ և մեր լացքը լանալ, կամ հացը եփէ, խօ՛ չի մեռնիլ, բայց չէ՞ որ կինս նրա պատիւը պարտաւորեա՞ծ պիտի պահէ, փոխադարձաբար նրա վըրայ իր շնորհքը պիտի աւելացնէ :

Նիկողոսը բնական ճարպիկ մարդ էր, իսկ Կ. Պարուժ երկար ապրելով լեզուել ու զեւել էր : Այնքան լեզու թափեց, որ խլացուց Ներսէս աղբօրը, որը մըտքումը ասում էր. — Երանի՛ ախօր քեզ պատահած չըլինէի, գլուխդ ուտէր այս թոքը : Թո՛ղ ընտանիքս քաղցից կտտորէր ու դու այս թոքը ինձ չըտայիր տուն տանելու : — Բայց Նիկողոսը խօ՛ մարդարէ չէր, որ հասկանար Ներսէս աղբօր մտքից անցածն ու խօսքը փոխէր : Նա միայն մի բանի էր ձիտում, որ մարդիկ ասեն. խօսեն, թէ կայ, չըկայ Երզրուժում մի աղա՛ կալ, այն էլ Աւուժ Նիկողոսն է և ամենքն էլ երօխտագիտութեամբ խոնարհւին նրա առաջ :

Երբ հասան Ներսէս աղբօր գրան առաջ, Նիկողոս աղան կանգնեց ու ասաց — տանդ տեղը շատ լաւ է եղել, բայց ափս՛ոս որ շինողները անտաշ, կօպիտ մարդիկ են եղել, այնպէս չեն կարողացել շինել, որ դարերի դէժ կուրի : Աւուժ էր այս խօսքերով ծակծկել Ներսէսի սիրտը և իր մեծութիւնը, հետատեսութիւնը ցոյց տալ :

Երբ Ներսէս աղբարն արտօրում էր տուն մըտնել, Նիկողոս աղան էլ ճար չըգտաւ նքան խօսեցնելու, ասաց .

— Յանկանում եմ բարի ախօրժակ, համով ուտես Տ թ Վ թ ի կ ը :

Շնորհակալ եմ, ասաց Ներսէս աղբարն և արագ

քալլերով ներս ընկաւ իր տունը, հազիւ ազատւելով
Նիկողոս աղալի ճանկից:

Մեծ էր Ներսէս աղբօր ընտանիքը: Կինը ար-
դէն թանը պատրաստել էր, ելաւ Տ ժ վ ժ ի կ ն էլ ե-
փեց, նստան կերան և հազիւ կշտացած սեղանից բար-
ձրացան: Մեծ տան զաւակներ, տնանկացած, թան
ապուրով կամ Տ ժ վ ժ ի կ ո վ մի՞թէ կարելի էր նրանց
կշտացնել. . . Բայց ամեն բան համբերութեամբ տա-
նում էին և ձայները մարդ չէր լսում:

Իրիկնադէմին, երբ ծանր քալլերով ժամի կող-
մըն էր գնում Ներսէս աղբարը, որ գիմէ իր Արարչին,
նրա օգնութիւնը և ողորմութիւնը խնդրէ, ճանա-
պարհին պատահեց Նիկողոս աղան և ասաց. — Բարի
իրիկուն, Ներսէս աղբար, քէֆդ, հալդ ինչպէս է,
ինչպէս նկատում եմ առոյգ - առոյգ ես փոխում քալ-
լերդ. երիտասարդի ուժ ես ստացել: Խնչպէս էր Տ ը ժ -
վ ժ ի կ ը, համո՞վ էր, կարգին տալից քոյրս. . .

— Նատ օրինաւոր, աղա քան, շատ շնորհա-
կալ եմ, տունս, բոյրս էլ շատ շնորհակալ ենք, ա-
բադ — արագ պատասխանեց Ներսէս աղբարը, որպէս
զի Նիկողոս աղան Տ ժ վ ժ ի կ ի մասին խօսքը թողնէ,
աւրիշ բան խօսէ, որ շըլինի թէ ժամւորները լսեն և
նա անարգւի, պատիւը վիրաւորւի:

— Երևի լաւ ախարժակով ես կերել, կարծես
թարմացել ես, գոյնդ մինչև անգամ փոխւել է: Խօ՞
աղը, տաքտեղը, տապակւածքը կարգին էր, ասաց զը-
ւարթօրէն Նիկողոս աղան, առանց նկատողութեան
առնելու, որ իր ձայնը փողոցից անց ու դարձ անող-
ները լսում էին և Ներսէս աղբարը զայրոյթից կուչ

եկած, կարծես ուզում էր, որ դետինը ճեղքւի ու ինքը մէջն ընկնի:

— Ամեն բան, ամեն ինչ կարգին էր, ասաց կակազելով Ներսէս աղբարը, որպէս զի մի կերպ վերջ տայ այդ խօսակցութեանը, բայց Նիկողոս աղան անպատճառ ուզում էր, որ այն օրւայ ժամւորները բոլորն էլ լսէին, թէ ինքը մի տասը փարանոց թոք է ողորմացել իր գրացուն՝ Ներսէս աղբօրը:

— Աղորմած հոգի մայրս, ասաց խօսքը շարունակելով Նիկողոս աղան, խիստ լաւ Տ ժ վ ժ ի կ էր եփում, այնպէս պատւական, որ երբ դռնով տուն էի մտնում, նրա տապկոցի տնուշ հոտից կշտանում էի: Այնպէս համեղ էր լինում, որ նրա մասհից լետոյ կարօտ եմ մնացել էն համի Տ ժ վ ժ ի կ ի: Ափսոս, հները մեռան, իրենց հետ կարգն ու սարքը գերեզման տարան: Քանի քանի անգամներ ատորժակս գըրգուել է, սիրտս ուզել է մի համեղ Տ ժ վ ժ ի կ, բայց երբ կարող են հիմիկւանները այնպիսի քաղցրաբօյր կերակուր եփել: Բայց բոյրս (քո կինը) նորերից չէ, նա կարծում եմ, որ լաւ տնարար պիտի լինի և համոզւած եմ, որ քեզ այսօր անփոխարինելի պատւական Տ ը ժ վ ժ ի կ կերցրած է, խո սխաբած չեմ: Հը՛, լաւն էր, չէ— ասաց ժամի զաւթում կանգնելով Նիկողոս աղան, աչքերը ուղղելով Ներսէս աղբօր երեսին:

— Ինչպէս չէ, ինչպէս չէ, հրաշալի էր, ասաց Ներսէս աղբարը և շտապեց եկեղեցի: Բայց եկեղեցում փոխանակ աղօթելու, փոխանակ փառարանելու, սկսեց զանգատուել իր տիրոջից, թէ բաւական չէր, ու նրան այդ վիճակի մէջ էր զցել, բաւական չէր, նա այնքան

զրկանքների և անարգանքների էր մտանել, իսկ այժմ տանջւում էր Նիկողոսի նման մի փաստաւէրի ձանգում :

Հետեւեալ առաւօտ բազար էր գնացել Ներսէս աղբարը : Սիրտը մի ֆինջան սուրջ խմել ուզեց ու մտաւ սրճարան : Պային այնպիսի բարի հագիններ, սրանք նրա անցկացրած փառքի սրերին քաջ անզեակ լինելով, առանց նկատելու, միայն մի ակնթարթով գայժաչուն իմացնում էին, որ մի ֆինջան սուրճ տալ Ներսէս-աղբոր : Այնպէս որ առանց մարդ իմանալու, առանց մէկի, միւսի գիտենալուն, սա, նա, մի մի ֆինջան սուրճով պատուում էին անանկին և նա սրպէս իր գրպանից վճարելով, պատուաւր կերպով հնամանում էր սրճարանից : Սովորականի համաձայն երբ սկսեց սուրճը խմել, Նիկողոս ազան մտաւ սրճարան և անմուռն բարեկրով նստաւ Ներսէս աղբոր գիմաց : Ներսէսի սուրճը քթից եկաւ : Նա գզաց, որ Նիկողոսը անպատճառ իր բարեբարութեան խօսքը բանալու էր, այն էլ հրապարակաւ : Եւ իսկայէս սուրճի ֆինջանը ձեռքին, չիրուխից ծխախոտը ծխելով ասաց Նիկողոս ազան .

— Հը՛, ի՛նչպէս ես, Ներսէս աղբար, երեկ լուսխորժակով վալելեցիր Տ ժ Վ ժ Ի կ ը, համով էր, հը՛ : Մարդու քէֆը կը գալ, երբ սրտի ուզածին պէս պատրաստեն սիրած կերակուրը :

— Ի՛նչպէս չէ, ի՛նչպէս չէ, կմկմաց Ներսէս աղբարը, լուսալով որ Նիկողոս ազան իր պատուից կ'ամաչէ և չի պարզիլ թոքի պատմութիւնը, թէ և սիրտը ըօրրօքումից արդէն սկսել էր արագ արագ թրթուալ :

— Այդ ի՞նչ Տ ժ զ ժ ի կ է — մէջ ընկաւ սրճա-
բանի պարսպ հիւրերից մինը :

— Այնչէ, սասց նիկոզոս աղան ծանրացնել ի
խօսքը, երեկ մեր մտազործի մօտ մի լաւ թոք տեսալ :
Սիրաս ուզեց, առալ, որ տուն ուղարկեմ, բայց ամ-
սասցի, որովհետեւ մեր տնեցին կարգին չի կարող ու-
զածս Տ ժ զ ժ ի կ ը եփել : Այդ մըմտունքի մէջ էի,
որ պատահեց ներսէս աղբարը, խկոյն աւի նրան : Ասի
մէկ չէ՞ մեր տուն զրկած, ձեր տուն զրկած : Փսնք
Աւածու, մենք գրացիներ ենք, շոկոզու թիւն երբէք
գրել չենք իրար մէջ, իմ ու քու երբ է մտել մեր
մէջ, ո՞վ է փընտրել : Մենակ քէֆս եկաւ, ես հաւա-
սացած եմ, որ քոյրս չէր փշայնի ալն պատուական
թոքը, կարգին բան կեփէր : Իմ ուզածն էլ ալն է,
որ բանը տեղը տանէ և լազա թ ունենալ : Մեր տուն
որ զրկէի՞ զահրումար էր գտնալու, ո՞վ կարող էր
թիքս ուտել : Լաւ բան սիրում եմ, գիտեմ, որ քոյրս
այնպէս տապկած կըլինէր, որ ներսէս աղբարը համից,
հօտից հարբած՝ մտաներն էլ խածուած կըլինի Տ ը ժ-
զ ժ ի կ ի պատահաների հետ : Ե՛հ, այժմ շարունակու-
թիւնը դու պատմէ, ներսէս աղբար, ես իմս պըծալ :

— Ե՛հ, ինչ պատմեմ, շնորհակալ եմ եփեցինք,
կերանք, պըծաւ, գնաց, սասց ներսէսը կարմրելով,

— Անուշ լինի, խօսքս գրա մասին չէր : Աւ-
զում էի իմանալ, թէ կարգին էր տապկած Տ ժ զ ը-
ժ ի կ ը, համով էր :

— Նաա համեղ, շատ ախորժելի, սասց սիրտը
մորմօքալով ներսէս աղբարը սղջ անձով քրանած, թըր-
չւած :

— Այդ հասկանում եմ, մարդ ուզածը գտնէ, գոյքը, տեղակի:

Ներսէս աղբարը դուրս եկաւ, այլ ևս կիրքը չբարոզանալով գսպել, բայց Նիկողոսին էլ հաճելի էր, որ ամեն տեղ Տ ժ վ ժ ի կ ի պատմութիւնը խօսէ: Արտեղ որ պատահէր, ուր որ հանդիպէր, խօսքը Տ ը ժ վ ժ ի կ ի մասին պիտի բանար, կամ այդ մասին հարցեր պիտի տար:

— Ներսէս աղբար, լիշում ես թոքը, կամ թէ — ինչպէս համեղ էր Տ ժ վ ժ ի կ ի ը: Աղջ քաղաքը Տ ը ժ վ ժ ի կ ի չաւն ընկաւ, Նիկողոսը ամեն տեղ պատմեց ու խօսեց:

Անցաւ մի շաբաթ, մի ամիս, երեք ամիս, վեց ամիս, վերջապէս տարի, բայց Նիկողոս ազան որտեղ պատահէր՝ պիտի լիշեցնէր Ներսէսին թոքը և Տ ը ժ վ ժ ի կ ի ը: Թէ փողոցում, թէ եկեղեցու գաւթում, թէ սրճարանում, թէ բաղնիսում, թէ հարկինքում և թէ վերջապէս ժողովներում, այնպէս որ հազար անգամ Ներսէս աղբոր քթից, պնչից դուրս եկաւ Նիկողոս աղայի դնած թոքից Տ ժ վ ժ ի կ ի ը: Ել համբերութիւնը սպառած, մի օր նոյն մտազործի խանութի գրան առաջ կանգնած, արայի (արևելեան վերաբերու) տակ մի բան թագցրած՝ սպասում էր Ներսէս աղբարը: Ինչպէս այնպէս բերեց, որ Նիկողոս ազան էլ այնտեղ եկաւ: Իրենց ծառայի հետ միս տանելու և նկատելով Ներսէս աղբորը, ասաց.

— Ներսէս աղբար, ինչպէս ես, լաւ ես: Յիշում ես այն թոքը, այն համեղ Տ ժ վ ժ ի կ ի ը...

— Ես առ քու թոքը, և չայնդ կարէ, ասաց

Գ Ա Տ Կ Ե Բ Ե Բ Բ



A 10182

զալրացած ներսէս աղբարը և արալի տակ թաքցրած
թոքը գուրս հանելով, այնպէս շրմփացրեց նիկողոս
աղալի քթին, բերանին, որ վերջինս ապուշ դարձաւ,
տեղն ու տեղը մնաց, երեսը, գլխի թանգագին շալը,
վիզը արիւնով ներկեած:

Բ

ԵՐԿՈՒ ՎԱԼԻ ՄԻ ՎԻԼԱՅԷԹՈՒՄ

Կ Ա Մ

Ա Յ Ի Ծ Է - Խ Ա Ն Ո Ւ Մ

Արատապած «Տարազ» Հանդէսի 1895 թ. № № 31 - 38

ԵՐԿՈՒ ԳԱԼԻ ՄԻ ԳԻԼՍՅԵԹՈՒՄ

Կ Ա Մ

Ա Յ Ի Ծ Է - Խ Ա Ն Ո Ւ Մ

Վ Է Պ

Ա

— Այս էլ կեանք է, այս էլ վիճակ է. հազար
անգամ աւելի բարեբաղդ կըլինէի, եթէ Արարիայի ան-
շրդի անապատներում քաղցած - ծարաւ թափառէի, . . .
Տարտարոսի դատապարտեալները աւելի երջանիկ են,
Աբիայի բերդարգեալները աւելի քիչ հոգեկան տան-
ջանքներ են կրում, Սինոպի տաժանակիրները այնքան
զգւած չեն կեանքից, որքան ես այս պաշտօնից . . .
Մարբի, ինչի ինչ ստեղծեցիր, ինչի կեանք տւիք, ան-
գութ ծնողներ, ինչի ինչ լոյս աշխարհ բերիք, ինչի
համար ես գոյութիւն ունեցայ, ինչ է կեանքիս նը-
պասակը Միթէ Բարը - Սէրասքէրիէի (սպարա -

պետի դուռ) մի նեղ սենեակում առաւօտից մինչև իրիկուն տոմարներում հաշիւներ արձանագրելու մեքենայի դերը կատարելու դատապարտւած չեմ : Այս է անհեռատես ծնողներ ձեր ինձ համար պատրաստած ապագան, այս է կոյր ամբոխ, նախանձելի համարածդ պաշտօնը, իւղոտ տեղը, փայլուն շրջանը և երանելի ասպարէզը : Որքան երջանիկ պիտի լինէի, եթէ այս փառահեղ պալատի, պաշտօնի, համազգեստի և աստիճանների փոխարէն ինձ գերի վաճառէին, ոտքերս, ձեռքերս շղթայէին, որպէս զի աւելի որոշ կերպով զգալի ազատութեանս կորուստը և աւելի ճիգ թափէի ստրկական վիճակից ազատւելու : Գոնէ այնտեղ կըզննէի, կըքննէի շուրջս կատարւածները և մեքենայի դերից դուրս կը պրծնէի :

Ծառայել, գործիք դառնալ կեղտոտ, կաշառակեր, պետութեան գանձարանը կողոպտող մի գողի, մի սինքլորի ձեռքի տակ . . . Տեսնել ամեն ժամ նրա կատարած օտոր աւազակութիւնները և պարտաւորւած լինել, թողնելու, որ նա անխնայ կողոպտէ հասարակական սեփականութիւնը : Գեռ մինչև ամգամ կեղծ թղթեր կնքել տալ և պատրաստել՝ ծածկելու նրա չարագործութիւնները . : Տանել նրա տեղի, թէ անտեղի հրամանները համբերել, լուել, երբ նկատում ես բռնակալի չարագործութիւնները և չկարողանալ անգամ օգնել ամենամօտիկ սրտակցիդ, որին մի հարւածով շարտում է անդունդը, որեւիցէ կըքին բաւականութիւն տալու համար . . . :

Պաշտօնից պաշտօն, եօթը տարւայ մէջ գրագրութիւնից հաշուակալութեան և գլխաւոր հաշուապահ աստիճանին հասալ, լետոյ . . . լաւտեան իշի պոչի նման էլ

չերկարել, մնալ մինչի մահ նոյն դիրքում . . . : Բարձր ուսում չունիմ, որ նախարարութեան ձգտեմ, ստորութիւն չեմ կարող տանել և դանձարանը, կամ կապալառուները կողոպտել, . . . : Նրան . . . ցնորք է երևակայելն անգամ, չեմ կարող հասնել. . . թէև մեծ շանսեր ունիմ : Ել ինչ նպատակ կարող է սիրտ տալ, քաջալերել և մղել կուէի դաշտը . . . : Ո՛չ, այս կեանքը չեմ կարող տանել, պէտք է, անհրաժեշտ է սողալ այս շրջանից և մի նոր կեանք ստեղծել, նոր լոյսերով ոգևորել, նոր ձգտումներով ապրել ոչ թէ անշունչ մեքենաների նման հարւել, մաշւել :

Այս մենախօսութիւնով էր զբաղւած Թէֆլիգ-բէյը՝ զինուորական նախարարութեան ընդհանուր հաշւակալը առանձասենեակում կէսօրի ժամանակ : Երբեմն երբեմն նա հառաչում և շրթունքները պինդ սեղմած անդադար մշում էր : Թէֆլիգ-բէյը քսան վեց, կամ քսան եօթ տարւան երիտասարդ էր, միջակ հասակով, ոչ շատ լղարկազմւած քով, ձիւնի նման սպիտակ մորթով, վարդագոյն այտերով, սկեթել շեկ մազերով ու պիտերով և անչափ նուրբ շրթունքներով : Նրա խաժուժ աչքերը գժւացնում էին Ստամբուլի քնքոյշ գատններին ու հանմներին, որոնք նրա համակրութիւնը որսալու համար ոչ մի միջոցից երես չէին դարձնել : Երկու անգամ Թէֆլիգ բէյը ժամացոյցին նայելուց լետոյ, անհամբեր բարձրացաւ և լուսամուտին մօտենալով, սկսեց դիտել հեռուն ծփացող Բոսֆորի ալիքները, նրա մէջ սահող բազմաթիւ գալիքները, մակոյկներն և Ասիական բազմերանգ փերեր :

Պարզ օր էր, արեգակը սփռել էր իր բոցափայլ ճառագայլները ծովի արծաթափայլ մակարդակ մակե-

ընդամենը վրայ, որի ալիքներէից անդրադարձել էր բիւրա-
ւոր ճաճանչներով: Ո՛չ բարձրագագաթ մինարէները,
ո՛չ արճիճապատ մզկիթները, ո՛չ փառայեղ պալատներն
և ապարանները, ո՛չ փողոցների, հրապարակների բազ-
մազան ամբոխը, ո՛չ ծովի վրայի նաւերն ու նաւակները
ո՛չ սարերի լանջերի անտառներն ու այգեստանները,
ո՛չ գէրն ու անոցն ու ճիւղն ու շինարանը շէնն գրա-
ւում Թէֆլիզ-բէլի հայացքը, նա Բէլլէր-Բէլի պալատի
մօտը մի ե ա լ բ ի (ծովեզրեայ տուն) նաւամատուցի
վրայ աչքերը անթարթ լառած՝ դիտում և հազիւ կա-
րողանում էր զանազանել մի շարժուն կէտ, որը հե-
տըզհետէ հեռանում էր: Իսկոյն գիտակը ձեռքն առաւ,
բայց այդ էլ գոհացուցիչ չըգտաւ: Դիտում էր, տես-
նում էր, որ նաւակը քիչ քիչ հեռանում էր ափից,
բայց ո՛վքեր կային նաւակում, քանի՛ մարդիկ, անհնար
էր տեսնել: Այդ միջոցին ներս մտաւ Ֆրանսիացի
Monsieur d' Hollys-ն, ու բարեկեց:

— Bonjour, Թէֆլիզ-բէլ:

— Բարո՛վ, ասաց երիտասարդը ետ դառնալով:
Իսկոյն, խնդրեմ, նստեցէք, իսկոյն: Մի քիչ էլ գիտե-
լուց լետոյ, երբ չըկարողացաւ մի բան նկատել, նեղա-
ցած ձեռքից բաց թողեց գիտակը, ետ դարձաւ ու տե-
ղը նստեց:

— Մի ամբողջ հանելուկ է այս օրիորդը, անբա-
ցատրելի մի խնդիր, ասաց շշնջալով:

Ֆրանսիացին ընդհանուր ազգերի և քաղաքա-
կրթութեան պատմութիւնն էր անցնում Թէֆլիզ-
բէլին, որից լետոյ խօստացել էր և տեղեկութիւններ
անցնել նրան հասարակական գիտութիւններից: Թէֆ-

ւիգը բաւականաչափ վարձատրելով սովորում էր և իր ընդունակութիւններով ոչ միայն ուսուցչի, այլ թուրք ազատամիտ երիտասարդութեան ուշքն էր գրաւել: Նախ բաւական ազատ կարգում էր ֆրանսերէն և գըրում, մասնաւոր էլ գիտէր անգլիերէն: Սովորածով նա չէր լագենում, անդադար կարգում էր և ասին սիր հարց, սիր խնդիր իրան համար օրերով մտածելու նիւթ էր դառնում: Նա աւանգամ գծագրէ էր մընում ուսուցչից և շրջապատողներից, երբ սրանք չէին կարողանում պարզել, կամ ըմբռնել իր հարցերը, որոնց աստիճանաբար ուսումնասիրութիւնը նրան սգեւորում ու էլ առաջ էր մղում գէպի գիտութիւնները: Գասաւանդութիւնից յետոյ ուսուցչի հետ միասին դուրս եկան և մի կառք նստելով իջան կամուրջ:

Նանապարհին մտախոհ առաջ էր գնում Թէֆլիզ Բէլը և զւարթախօս Վ' Hollys-ի հարցերին միայն կըցկտուր պատասխաններով գոհացնում: Կամուրջի վրայից ֆրանսիացին Ղաւաթ աւանցաւ, իսկ Թէֆլիզ-Բէլը նստեց շոգենաւ՝ Բէլը և Բէլի գնալու: Այդ օրը նա հրաւիրուած էր ճաշի Ալիշէ-խանումի մօտ, որտեղ լինելու էին Վ. Պոլսի թրքական հօրեգոնի վրայ փայլող երեւելի և ընտրեալ աստղերը՝ Ջաֆէր-Բէլը, Ջէլլալէդին-Բէլը, Միհթատ էֆէնդին, Տիրան էֆէնգին, Նուրուլլահ-Բէլը և Ֆէլիք-Բէլը, որոնք գանուում էին Օսմանեան կառավարութեան բարձր ծառայութեան մէջ և միանգամայն լայտնի էին, որպէս ազատամիտ կուսակցութեան պարագլուխներ: Այդ անձնաւորութիւններից միայն Տիրան-Բէլը ծննդով հայեկեղեցիին էր պատկանում, մնացեալները բոլորը Կալա-

մի գաւակներ էին, բայց ամենը անխտիր ընկերներ էին և ամենքը մի գաղափարի էին ձգտում — երկրի վիճակը բարւոքել, հայրենիքը և ազգաբնակութիւնը կործանումից ազատել:

Բայց ով էր այդ Ալիշէ - խանումը, կըհարցնէ լայտնի բան է ընթերցողը: Միթէ Իսլամ երկրի մէջ, խալիֆական հպատակութեան տակ կարող է գտնուել մի այդպիսի տիպար, որը կարողանայ այդքան քաջութիւն ունենալ և հակառակ Ղուրանի վարդապետութեան՝ նա մէհրէ մական քողը պատառելով, լարկի տակ ընդունել երիտասարդ պաշտօնականներին ճաշի:

Յայտնի Ալի փաշան, Օսմանեան — եթէ կարելի է ասել — հանգուցեալ երկաթի-կանցլերը, որը մատի վրայ երկար տարիներ խաղացրեց եւրոպական գիււնագէտներին, Փարիզի կոնգրեսի ժամանակ լափշտակւեց ու սիրահարւեց մի լայտնի Ֆրանսիացի ուսանողուհիի վրայ, որի հետ ամուսնանալով վերադարձաւ Կ. Պոլիս: Այդ կինը, որ անզուսպ սիրով կպած էր գիտութեան հետ, հանգիստ չըմնաց Կ. Պոլսում, նա սովորեցաւ թուրքերէն լեզուն, Օսմանեան բոլոր գաւառները ման եկաւ, ուսումնասիրեց տեղում ժողովրդի կեանքը և նրա կարիքները, որոնք երկար տարիներ քննութեան նիւթ անելուց լետուի, միակ, դստերը ժողանդութիւն թողնելով, ջերմից մեռաւ մի նոր ճանապարհորդութեան մէջ, որ կատարում էր Միջագետքում, անձը գիտութեան զոհելով:

Ալիշէն Ալի փաշայի այդ ֆրանսուհից ունեցած դուստրն էր, որ մանկական դաստիարակութիւնից լետուի,

մի քանի տարիներ Եւրոպայում էր ապրել, լսել էր Փրանսիայի, Քերմանիայի և Անգլիայի համալսարանների զանազան գիտնականների դասախօսութիւնները և դոկտորի աստիճանին արժանանալով՝ վերադարձել էր Վ.Պոլիս, հայրենի առաջադիմութեան գործին ծառայելու տենչով: Նրան շրջապատել էր Վ. Պոլսի ազատամիտ երիտասարդութիւնը և սկսել զիցուհիի նման պաշտել, ոչ միայն նւիրական դադափարի, այլ և երկաթի նման հաստատակամութեան համար:

Այդ երիտասարդութիւնը, որ իրան նպատակ էր դրած ուսումն ու գիտութիւնը տարածել Սամանեան բոլոր երկրներում, տնտեսապէս և բարոյապէս բարեօքել ժողովրդի վիճակը, վերջ տալ կրօնական բարբարոսական հալածանքներին, կապել տնտեսական շահերով բոլոր ժողովրդին, ծաղկեցնել երկիրը արհեստներով, երկաթուղիներով, գործարաններով, արդիւնագործութիւններով, արտաքսել վարչութիւնից մոլի և տգէտ սոփթալականներին, խլել դատաստանական հիմնարկութիւնները Ղուրանի այդ կեղծաւոր աշակերտների ձեռքից և նոր հրատարակած օրէնքները գործադրել տալ երկրում, — ունէր իրան արբանեակները ինչպէս մայրաքաղաքում, նոյնպէս գաւառներում անխտիր ամեն ազգութեան ու կրօնի մէջ, որոնք ամեն միջոց գործէին դնում ենիչէրական և բաշիբոզուքական օջախների ժառանգների ձեռքից առնել երկրի վարչութեան ղեկը:

Երիտասարդութեան պարագլուխ կարելի է համարել Ֆէլզի բէլը, որը թէ բոլորից տարիքով մեծ էր և թէ ամենից բարձր գիրք ունէր: Նա ծանրաբարոյ և միանգամայն լուրջ մարդ էր համարւում:

Ամենից ազնիւ և ամենից անձնւէր էր այդ կենտրոնա-
կան խմբի մէջ Ջաֆէր բէլը, բայց որովհետև սաստիկ
լափշտակուող էր և ոչ մի գէպքում չէր կարող կրքերը
զսպել, գրաւ համար էլ միշտ նրան հեռացնում էին
լալանի գործերից, չընայելով որ Ջաֆէրը գուցէ բոլորից
բարձր էր իր զարգացումով, Թէֆլիզ-Բէլը իր զարգացու-
մով ամենից թույլն էր նրանց մէջ, բայց իր անկաշառ
սակաւապետ, անկողմապահ, անձնագոհ բնաւորու-
թեամբ և աշխատասիրութեանը գրաւել էր բոլորի սիրտը:
Իսկ նրա աննկարագրելի քաջասրտութիւնը խոնարհեց-
նում էր ամենին:

Նաշից լեռու էրր ժողովականները մտան զահ-
լիճը ծխելու և սուրճ խմելու, Ալիշէ-խանումը բազ-
մոցի վրայ տեղ տալով Թէֆլիզ-Բէլին, մասնաւոր
խօսակցութեան բռնւեց: Ամենքը այս ու այն կողմը
զւարճարանութեամբ էին զբաղւած, միայն Ֆէլիզ Բէլը
թէև նկարագրում էր մի ինչոր նոր անեկզոտ, բայց
ուշքը Ալիշէի խօսակցութեան հետ էր: Թէֆլիզը լուղ-
ւած նկարագրում էր նրան իր հօր աննկարագրելի
ազիտութիւնը և լամառութիւնը, որի պատճառով չէր
կարողացել շարունակել ուսումը:

— Ինչ անեմ, եթէ դուք գիտենալիք, թէ իմ
աչքում ինչ հրէշի կերպարանքով է դրոշմւած հօրս
տիպարը, նրա լամառութիւնը ինչ սուկալի կերպով
ճնշել է հօգիս, դուք կըկարողանալիք ըմբռնել իմ
մշտական տխրութեան պատճառը: Հարբիէլում
(գինւորական ուսումնարան) ինձ վաղ նախանձում էին
բոլոր ընկերներս, ուսուցիչներս գրաււած էին ինձա-
նով, ամեն տարի մրցանակներ էի ստանում, գիրէկտորը

պատրաստուում էր ինձ արտասահման ուղարկել պետութեան հաշուով, լանկարծ հայրս ինձ դուրս է հանում այդտեղից և տանում լանձնում Բարը-Սէրասքէրի գրագրութեան: Եւ գիտէք ինչի՞ — նրա համար, որ այդտեղ դաս էին տալիս Ֆիզիկա, աշխարհագրութիւն, պատմութիւն, երկրաչափութիւն և այլն: Նրանք, ասում էր, գեաւուրի որոգայթներ են, դրանք մարդու սրտից հանում են Ալլահի երկիւղը, դրանք Ղուրանի հակառակ բաներ են: Նիրէկտորը խնդրում է, աղաչում է Սէրասքէրին նամակ է ուղարկում, որ ինձ վերադարձնեն ուսումնարան, իսկ հայրս ներկայանում է նախարարին և ասում, թէ ինքը, որպէս իսլամ, չի ցանկանում, որ որդին անհաւատ դառնայ: Տասն և եօթ տարեկան հասակում ընկնում եմ սարկութեան մէջ և եթէ թւարանութիւն և տարրական գիտութիւններ չիմանայի, գրագիր էլ մեռնելու էի:

— Բայց և այնպէս, Բէլ, ասաց Ալիշէ-խանումը, դուք ձեր աշխատասիրութիւնով լրացրել էք այն պակասը: Բայց մէկ առաւելութիւն ունիք, որ ուրիշները չունին, այն է որ աւելի լաւ էք ըմբռնել գիտութեան յարգը և աւելի եռանդով էք կուռում խաւարի դէմ: Ձեր եռանդը, ձեր անվերջ ձգտումը, ձեր ընդունակութիւնները ոչ միայն նախանձելի է մեզ համար, այլ գրաւում է բոլորիս սիրտը: Շատերը գիտութեան մեծ պաշար կարող են ձեռք բերել, շատերը կարող են ունենալ ծրագրող ընդունակութիւններ, բայց կեանքի մէջ այդ ծրագիրները իրականացնելու ընդունակութիւնը վերապահւած է ձեզ նման հազուադէպ եռանդուններին:

— Բէյեր, էֆէնգիներ, կարծեմ ժամանակ է ժողովն սկսելու, ասաց Ֆէյզի Բէյը, լուրջ դիրք բռնելով: Մենք այսօր խորհելու շատ նիւթ ունինք: Վանում, հեռաւոր մի նահանգում ահագին իրարանցում կայ, քրդերը յարձակում են անգէն հայ գիւղացիների վրայ, հայ քաղաքացիները գրգռւած են իրանց կաշառակեր վալիի և դատաւորների դէմ: Այդ նահանգում վալին հրաժարեցնելու են. պէտք է մի այնպիսի մարդ գտնել, որ երկիրը հին աղաների, դէրէ - բէյերի և տգէտ սոֆիստների ճանկից ազատէ, խաղաղացնէ ազգաբնակութիւնը: Ես խորհուրդ կը տայի անմիջապէս միջոցներ ձեռք առնել և մի այնպիսի մարդ ուղարկել, որ իսկապէս երկրի շահերին ծառայէ: Այդ վալիի պարտականութեան շատ ծանր լինելը ըմբռնելով, խորհուրդ կը տայի մի այնպիսի եռանդուն մարդ գտնել, որ կարողանար երկիրը լեղաշրջել և գործադրել տալ իսկութեամբ բոլոր հրատարակւած օրէնքները:

— Ես խորհուրդ կը տայի հէնց այս մեր շրջանից, ասաց Այիշէ - խանումը, մէկին ուղարկել, որ իսկապէս հոգւով գործին կապւած լինելով, կարողանայ գլուխ բերել այդ ձեռնարկութիւնը: Կրա լաջողութիւնը աւելի կը խրախուսէ և աւելի եռանդուն գործունէութիւն կը ստեղծէ:

— Կ. Պօլսից չի կարելի գործել, տեղական ուժերը բաւարարութիւն չեն տալիս, ասաց Ջաֆէր Բէյը, այդպիսի մի անշնաւորութեան ներկայութեան նահանգում հրաշքներ կարող է գործել:

— Ես համամիտ եմ Ջաֆէր Բէյին, ասաց Տի-

րան Բէլլը, բայց նրան ձայն չեմ տալ նահանգ գնալու, որովհետև կարող է գործին վնասել իր ծախարանից բնաւորութեամբ:

— Ես պատրաստ եմ, բէլլէր, ասաց Ֆէլդի-Բէլն, ուրախութեամբ կերթամ:

— Ո՛չ, ձեր այստեղ լինելը անհրաժեշտ է, ասացին Ջէլլալէդին և Նուրուլլահ բէլերը: Գուք կենտրոնից չըպիտի հեռանաք:

— Բէլլէր, ես կըցանկամ գնալ, եթէ յարմար կը գատէք, ասաց Թէֆլիզ Բէլլը:

— Ես յոյս ունեմ, որ գուք ձեր ընթացքով յաղթանակը շուտով մեզ կըտաք, ասաց Ալիշէ-խա, նու՛մբ:

Բ

— Խանճու՛մ, մնաք բարով, գուցէ իրար էլ չըտեսնենք: Ես յոյս ունեմ, որ ձեր սիրալիր և ոգևորութիւն ներշնչող նամակներին կարժանացնէք երբեմն երբեմն, որը ինձ մոռացնել կըտայ կեանքի ամեն դառնութիւնը:

— Յաջողութիւն եմ ցանկանում ձեզ և յոյս ունիմ, որ կիրականացնէք մեր բոլորի իղձը, ասաց ոգևորւած Ալիշէ-խանումբը: Ձեր ամեն մի գործը՝ մեզ նորից կեանք է պարգևելու, ամեն մի յաջողութիւնը՝ երջանկութիւն պատճառելու: Գրեցէք ինձ ձեր ձեռքով այն բոլորը, ինչ որ մեզ հետաքրքիր է,

նկարագրեցէք ձեր գրութիւնը և այն խոչընդոտները, որոնց կը հանդիպէք: Գնաք բարով, թող զաղափարի սէրը մեր սրտերը իրար մօտեցնէ և քաղցրացնէ այս անջատման դառնութիւնը: Գնաք բարով, ասաց ու երկնցուց ձեռքը Թէֆլիզիին, որը շրթունքներին մօտեցրեց: Ալիշէն լուզւած և ոգևորւած համբուրեց Թէֆլիզի ճակատը և ճանապարհ գցեց:

— Գնանք, ասաց Ֆէլզի լէլը, չկարողանալով զսպել վրդովմունքը, նաւաստիները հազիւ կարողանան շոգենաւ հասցնել, — գնանք, Խանումը առաջնորդեց նրանց մինչև իրանց տան նաւամատուցը, որ բակի հետ միացած էր: Երբ նստան և նաւաստիները մակուկը դուրս բշեցին, անտիական օրիորդը մի ցնցում ևս գործեց ու ասաց.

— Բարի ճանապարհ և երեսը շուր տուեց:

— Ցտեսութիւն, կրկնեց Թէֆլիզը, իսկ Ֆէլզին ակնոցի տակից կարողացաւ նկատել այն արտասուքի կաթիլները, որոնք գլորւեցին Ալիշէի աչքերից:

Հազիւ շոգենաւ հասան, որն իսկոյն ճանապարհ ընկաւ: Մակուկի մէջ երկու ընկերները համբուրեցան և բաժանուեցան: Ֆէլզիի գոյնը սաստիկ սպրտնած էր: Այդ չընկատեց Թէֆլիզը, որն ընդհակառակը սրտի բարախումից աւելի կարմրել և ոգևորութիւնից թռչում, սլանում էր գէպի նւիրական գործը:

— Եօթը տարի է, որ ես մեռնում, խորովւում եմ, մի ժպիտի անգամ չեմ արժանանում: Սա, այս երեխան մի անգամից արժանանում է և ձեռքն համբուրելու, ճակատից համբուրելու և արտասուք խլելու: Ահ, եթէ մի քիչ նախապաշարմունք մնացած լի-

նէր . . . Բայց և այնպէս հեռացրի . . .

Երբ նաւակը մօտենում էր Ալիշէի եայլին, Թէյզին նկատեց, որ շոգենաւից կասպոյտ թաշկինակն էր ծածանում Թէֆլիզը, իսկ լուսամուտից դեղին թաշկինակն՝ Ալիշէն: Այս նշանները աւելի բորբոքեցին Թէյզիի սիրտը, որ տխուր և մտախոհ մտաւ իր եայլին:

Մի ամսից յետոյ Թէֆլիզ բէլը իրան յանձնւած նահանգում կարգադրութիւններ էր անում, վերափոխում էր բոլոր անւանական հիմնարկութիւնները, արժանաւոր մարդիկ էր հրաւիրում պաշտօնի, թէ տեղացիներից և թէ դրսեցիներից, ամեն գործի անձամբ հսկում էր, ամեն կարգ խստիւ պահպանում, ծառայողներին ամենաթեթեւ զանցառութիւնների համար պատժում, պատուհասում, արտաքսում, աքսորում, մի խօսքով երկիրը աւազակներից, կողոպտողներից, հարստահարողներից ազատում էր:

Բայց նրա ամեն գործերը ծայրում, արհամարհում էր նահանգում մի խորամանկ մարդ, որ նորեկ վայիին խելագարի տեղ էր ընդունել: — Ահա մարդ, ասում էր դա իր շրջանում, որ բերան ունի, ատամները թափւած չեն, բայց ուտել չէ իմանում: Սրա բերանին քիչ քիչ մեղր քսելու է, որ համն առնի և ուտելու վարժուի: Ե՛հ, — ասում էր յաճախ խելով նրա իզարէի մէջիսում (նահանգական ժողով) տւած խորհուրդները, — Քեզ պէս կրկուան հաւ շատ եմ տեսել, բայց որ հաւկիթ չեն ածում: Պրանք գաղարկ բաներ են: Փող, փող ունիս, ամեն բան կարող ես վայելել:

Յայտնի բան է, այս խորամանկ մարդը այնպի-

սի լիմարներէից չէր, որ ամեն շրջանում խօսէր, և իր խօսքերը հասնէին Թէֆլիզ փաշայի ականջին: Նա ունէր իր շրջանը, որն իր օջախն էր համարում և կազմւած էր իրան անձնէր, ստորադրեալ հլու հպատակներէից: Այս մարդուն Վանցիք անւանում էին նոյնպէս վայի: Դա մի խորամանկ թուրք էր, Գուրսուն անուանով, որ կարողացել էր Վանի բոլոր փաշաներին սանձել և գործիք շինել: Նա այնքան վարժ էր, այնքան հմուտ, որ բոլորովին տարակոյս չուներ և վստահ էր, որ շուտով պիտի սանձէր և Թէֆլիզին: Այս մարդը, կարծես, մշտնջենաւոր ընտրւած լինէր վիլայէթի իզարէի ժողովի անդամ, կամ որպէս մի մշտական զիկատատոր, որպէս մի ժառանգական շէյխ, չէր էլ մտածում, որ ժողովուրդը կարո՞ւ է մի օր նոր մարդ ընտրելով իրան հեռացնել այդ կոչումից: Իզարէի անդամների ընտրելու օրէնսդրութիւնը նրա համար մեռած տառ էր, էլ ժողովուրդը ինչ իրաւունք ունէր նրան հեռացնելու:

Որպէս արեւելքցի, ստորաքարշ, տգէտ, կեղծաւոր, լայտնի բան է, նա սաստիկ ճկւում էր, ամեն տեսակ ստորութիւններ էր անում մեծաւորների առաջ, կեղծում, շողոքորթում, մինչև որ մի կերպ կապուում էր ամեն մի նորեկի հետ: Իսկ երբ բարեկամանում էր, նրանց շինում մի մեքենայ և շարժում, ինչպէս որ ցանկանում էր: Թէև միշտ ստորաքարշութիւնով, բայց իրան ձեռնտու պայմաններով:

Այնպէս էր տիրապետել նահանգին, որ ով գործ ունէր իզարէի ժողովի հետ, ուղղակի Գուրսուն բէլին էր գիմում, նրանից էր սպասում իր ցաւի ճարը: Գա-

ւտոների գայմագամները, միւզիրները ամեն մի խնդրով նրան էին դիմում, գրանց շատերին նա էր պաշտօն տւել, կամ բախտի հասցրել: Պատաստանական, հողալին (արաղի), կալւածական (էմլաք) վիճակագրական բոլոր ծառայողները գողում էին նրանից: Պուրսուն բէլի մի նալւածքը, մի խօսքը, ուսերի մի շարժումը ամեն կարգի պաշտօնեաների կարծիքը վայրկենաբար փոխել էր տալիս: Աշաբի միւլթէզիմները՝ նրա գործակառարներն էին, էղնամ հաւաքողները՝ նրա շիբուխները, բուսումաթի (հարկ), բէժի (ակցիզ), գէօմբիւկի (մաքս) զօլջիները (հօկոզ) նրա նախկին հովիւներն էին, ժանգարմներն ու պոլիսները՝ նրա ծառաններն ու ստրուկներն էին, այնպէս որ ամենքը սարսափում էին, բոլոր իրանց արածի, գրածի, լսածի ու տեսածի համար նրան հաշիւ էին տալիս: Այնպիսի հանգուցներով կապւած էր Պուրսունը վիլայէթի բոլոր գաւառների բէգերի, քրդական էլ-աղասիների, հարուստ վաճառականների և ամեն կարգի ազգեցիկ մարդկանց հետ, որ նրա մի խօսքը, մի նամակը՝ նրանց կըստիպէր ամեն տեսակ աջակցութեան հասնելու: Անից, Բիթլիսից մինչև Պիարբէքիր տարածւած էին նրա թայֆայականները: Այդ բոլորից, լայտնի բան է, ամենքը գժգոհ էին, բայց որովհետև չարաչար պատժւել, անվերջ, հալածւել էին Պուրսունի հակա-կորդները, այդ պատճառով ոչ ոք սիրտ չէր անում նրանց դիմագրելու, նամանաւանդ, որ ոչ ոք չէր ցանկանում իր հացից զրկւել:

Թէֆ իզը հետզհետէ այդ բոլորի հետ ծանօթա

ցաւ, բայց գործին չմտաւ յու համար, սկսեց կարգով
և մեծ զգուշութիւնով գործել: Նախ սկսեց իր
նախագահութեան լանձնւած վիլայէթի իդարէի (վարչ.)
ժողովը բարեփոխել: Կ. Պոլսից մի նոր օգնական
(դէֆթէրդար) և մի նոր քարտուղար (մէթրօքը) բե-
րել տւեց: Գրանից յետոյ հայոց ծերացած առաջնոր-
դին փոխել տւեց և նրա տեղ մի երիտասարդ
վարդապետի ընտրելուն միջամտեց: Յետոյ
առաջնորդին լանձնարարեց, որ բոլոր ժողովրդին քաղա-
քում և գաւառներում հրաւիրեն եկեղեցիներում,
օրէնքի հիման համաձայն՝ պատգամաւորներ ընտրե-
լու, որպէսզի այդ պատգամաւորները ընտրեն մի
ներկայացուցիչ իդարէի ժողովի համար: Այդ ընտրու-
թիւնը շատ լաջողակ կատարեց և արժանաւոր
ժողովրդական մի մարդ, պ. Նաթանեանը ընտրեց և
ոչ առաջւայ նման մի աղա: Այսպիսով վալին ժողովի
հինգ ձայնը իր կողմը ունեցաւ, մնաց խլամների
երեք ձայնը — Միւֆթին, Ղազին և պատգամաւորը:
Ղազին կարողացաւ սրաշտօնանկ անել տալ, հակա-
ռակ շէրիաթի տւած մի վճռի համար, այնպէս որ
մնացին Ռուսունն ու Միւֆթին ընդդէմ վեցի: Այս
արդէն լաղթութիւն էր համարում Թէֆլիզը և
ինչ որ ցանկանում էր, կատարել էր տալիս ժողո-
վի մեծաձայնութիւնով, այնպէս որ Ռուսունը միշտ
կատաղած էր դուրս գալիս ժողովից, թէև խորաման-
կութեամբ զսպում էր կրքերը և ոչ միայն չէր արտայայ-
տում բարկութիւնը, այլ ձեւացնում էր, որ խոնարհոււմ
է Թէֆլիզի ու մեծամասնութեան ձայնի առաջ և
համակերպւում է:

Այդ ժամանակները Թէֆլիզը սկսեց հետզհետէ դուրս բերել գաւառական տղէտ, կաշառակեր ծառայողներին ու նրանց տեղ ընտրեալ մարդիկ դնել: Այդ բոլոր ծառայողները քաղաք գալով դիմում էին Վուրսուներն ու ահագին գումարներով կաշառում, որպէսզի իրանք հացից չը զրկուեն: Վուրսուներ չէր ուզում դիրքի փոփոխութիւնը ցոյց տալ, նա վերցնում էր կաշառները և ամեն միջոց գործադրում նպատակին հասնելու, բայց չէր լաջողուում: Յայտնի բան է, կաշառք տուողները չէին հանդգնել այդպիսի մի խտտապահանջ վայիի ներկայութեան դուրս գալ և տւած կաշառները ետ պահանջել, բայց և այնպէս տուժողները իրար ականջում փսփսում էին իրանց անբաղաւթիւնը, որի մասին խուլ տեղեկութիւն հասնում էր Թէֆլիզին: Պաշտօնանկ ծառայողներից քաջասիրտները մտնելում էին Վուրսուներն և բաւարարութիւն պահանջում, իսկ վերջինս զանազան խոստումներով, Կ. Պոլսից ստացած նամակներով նշրանց լուսադրում և ստիպում էր սպասել մի առժամանակ էլ, մինչև գործերի կարգին գցելը:

Վատաստանական հիմնարկութիւններում անդադար այցելութիւններ էր կատարում Թէֆլիզ փաշան և դատաւորների վրայ տրւած բոլոր բողոքագրերը ուշի ուշով քննութեան նիւթ շինում: Վատաւորները և դատախազները անաչառ քննութիւններից և խիստ պատիժներից սոսկացած, ամեն միջոց գործ էին դնում օրինազանց չլինել իրանց պարտականութիւնների մէջ: Թէֆլիզ փաշան ամեն շաբաթ այցելում էր գաւառները և ժողովրդից ընդունում բերանացի և զբաւոր բողոք-

ներն իրանց կառաւարիչների զէմ : Այն գառարանում .
որ մի հեռաքրքիր գործ էր մշոււելու , նա ներկայ էր
լինում և կամ իր լիազօրն էր սւղարկում : Գառարան-
ների սրահները , ու մինչև այդ միջոցներին անմերձե-
նայի էին , Թէֆլիզի օրով բացուեցան ժողովրդի առաջ ,
ուր այցելուները ազատ նստում , լսում էին գործավարու-
թիւնները :

Այդ օրերը Գուրսունի աներձագը ամբաստան-
ւած էր օրովս աւագակ և մարդասպան , մի հայ վաճա-
նականի սրբուն զրէմիւնդրու թեամբ սպանելու և կո-
ղտաբերու համար : Այս-բէլին (ստիկանսպետը) այդ
աւագակի ձեռքին բռնել էր սպանածի ժամացոյցն
և մատանին , նրա հօր և ուրիշ ազգականների ներ-
կայութեամբ : Քննիչը և դատախազը խիստ խուզար-
կութիւններ էին կատարել և կողտուտած աւրանքի
մի մասը գտել էին աւագակի և նրա ընկերոջ տանը :
Կախազանի զեկուցում էր աւել քննիչը և Հիէթը-
թիմաժը հաստատել էր այդ զեկուցումը :

Այս արգէն մահացու հարւած էր գուսունի հա-
մար : Նա կատակ էր իր Ա . Պոլսի բարեկամների վը-
րայ , որոնք եօթ-ութ ամսի ընթացքում չէին կարողացել
միկերպ Թէֆլիզին ստիպել խնարհուելու իր առաջ ,
Բաւական չէր այդ հարւածը , Ա . Պոլսի գործակալից՝
Մուլա նարիից նամակ ստացաւ , որը խոստանում էր
Թէֆլիզին պաշտօնանկ անել տալ , միայն տասը հա-
զար լիրա էր պահանջում , մի լայանի ներքինիի անու-
նով : Կառաղեց Գուրսունը , չըզիտէր ինչ անէր : Ար-
գէն աշարը ծախելու օրերը մօտենում էին , եթէ մինչ
այդ մի կերպ հաշտութիւն չըկալայնէր վալիի հետ ,

ահագին կորուստների էր ենթարկւելու : Բայց և այնպէս այդպիսի մի դուժար հեշտ չէր մէկ անգամից վըճարել : Երեք օր մտածելուց լետոյ, նա պատասխանեց Վ. Պոլսի պաշտօնակալին, որ նրա արամադրութեան տակ թողնու՛մ է միայն հինգ հազար լիրա, այդ գործը գլուխ բերելու համար :

Մինչև Վ. Պոլսից պատասխան յօտանալը Գուրսունը ուրիշ միջոցի գիմեց, Թէֆլիզին մի կերպ կաշառելու համար : Բայց որովհետև մինչ այդ ժամանակ կաշառելու փորձեր կատարողները սաստիկ սուժել էին և շարաշար պատժւել, Գուրսունը կաշառելու մի նոր միջոց լղացաւ : Թէֆլիզը այդ օրերը ժողովրդի քրիստոնեայ, իսլամ հարուստներին հաւաքելով առաջարկել էր մի կանոնաւոր ուսումնարան շինել և Վ. Պոլսից զարգացած ուսուցիչներ հրաւիրելով՝ գիտութիւնը, անհետները ծագկեցնել երկրի մէջ : Ժողովականներին այդ միտքը շատ դուր չըզալով, իրականացնելու համար շատ քիչ փող էին ստորագրել, մօտ երեք հարիւր ոսկի, այնպէս որ այդ դուժարով չէր կարելի կարեօր շինութիւնը կառուցանել : Գուրսունը մի իրկուն այցի գնաց փաշայի մօտ և սրա ճառից մի քան նախադասութիւններ կրկնելով, ասաց. — Ես տասնուհինգ օր է խորհում եմ, ձեր առաջարկութեան երկրին և ժողովրդին բերելիք օգուտները աչքի առաջ ունենալով, մճուեցի այս ուսումնարանը իմ հաշւով շինել : Երկու հազար հինգ հարիւր լիրայից մինչև երեք հազար լիրա պատրաստ եմ մճարելու : Զեր արամադրութեան տակն է, երբ որ հրամայէք, կարող էք ստանալ :

— Եստ շնորհակալ եմ, ասաց Թէֆլիզ փաշան, ձեր այդ առատաձեռնութեան և մեծահոգութեան համար: Ես կըզրեմ Բ. Գրան, որ ձեզ Մէջրիզէի ա. կարգի շքանշանով վարձատրեն: Կ. Պոլսի լրագրներում ինքս մի նամակով շնորհակալութիւն կըլայտնեմ ձեր այդ օրինակելի արարքի համար:

Գուրսունը ոչ շքանշանն էր ուզում, ոչ լրագրներով վալիի լայտնելիք դատարկ շնորհակալութիւնը, բայց Թէֆլիզը խոստմունքի վարձը իսկոյն վճարեց, որ ետ չըկանգնի կամ ուրիշ պահանջներ չառաջարկի խորամանկ վաշխասուն: Գուրսունը այդ պարտութեան էլ չըկարողացաւ դիմանալ: Անառիկ բերդ էր դարձել վալին, ոչ մի միջոցով չէր կարողանում ոչ թէ նւաճել, այլ պաշարել անգամ:

Թէֆլիզը ուսումնարանի տեղը որոշեց, երկրաչափ ս. Թազւորեանին լանձնեց, որ լատակագիծը պատրաստէ, կապարտուունք հրաւիրեց և շինութեան հիմքը փորել տուեց: Այդ օրերը ստացուեց «Թադւիմ» լրագիրը Կ. Պոլսից, որտեղ լատարարւած էր Թէֆլիզ փաշայի բաց նամակը Գուրսուն բէլին: Մի քանի օրից էլ ստացուեց պաշտօնական տեղեկութիւնները և շքանշանը: Գուրսուն բէլը շքանշանի համար մի լիսուն լիրա ծախս վճարեց, մի հրաւէր էլ սարքեց, որը հարիւր լիրա նստեց, Այդ հրաւէրից շուտ գուրս եկաւ Թէֆլիզ փաշան, որն աւելի բորբոքեց Գուրսունի սիրտը:

Այդ օրերը սկսուեց աշարի հրուսական բերքերի տասանորդը — բէհրէ) աճուրդը: Ալլին բոլոր գործերը բռի մէջ ամփոփած, նախանհանի միջոցով ազատ

սարալ Տրաւիբեց լայտնի կապալառուներին: Այն հո-
լերը, որոնք սարսափում էին Գուրսուն բէլի անունից,
աներկիւղ նրա գործակատարների գէմ կանգնած աւե-
լացնում էին աճուրդի գումարը: Նախորդ տասը տարի-
ների աշարի գումարների միջին թւի կրկին գնից բար-
ձրացրին ամեն մի գաւառի աշարը: Ամեն մի կապա-
լառւի կամ նրա երաշխաւորի մասին զանազան պատ-
ճառներ էր առաջ բերում Գուրսուն բէլը, որպէս զի
մի կերպ նրանց հեռացնէ գործից, բայց Թէֆլիզ փա-
շան և Նաթանեանը ջրում էին նրա պատճառարա-
նութիւնները և հաստատում աճուրդները մեծամաս-
նութեան ձայնով:

Գուրսունը մոլորեց, մահը նրա համար նախա-
պատիւ էր, քան թէ այդ նախատինքը: Նա պարտա-
ւորւած էր խոստովանելու պաշտօնանկ ծառայողնե-
րին, ծանօթ բէլերին, բարեկամներին, աշարի կապա-
լառուներին և էղնամ — հաւաքողներին, թէ լարւած
էր իր յարաբերութիւնը վալիի հետ: Բայց և այն-
պէս նա չէր լուսահատում, կրկնում էր նրանց. — Սպա-
սեցէք մի ամիս էլ:

Գ

Գարեոր ստրկի լուծի տակ տանջւածները թէև
վալիից քաշոււմ էին, բայց գուրսունից միշտ սարսա-
փում էին: Աղալական կամ ինչպէս իրանք իրանց
անւանում էին, իշխանական հայերը հայհայում էին

Նախնականին, այն երկուսսարգ նորահաս վաճառականներին, որոնք Թէֆլիզ փաշայի խորհրդով էին շարժուած և Վուրսուլնի կատարութիւնը բորբոքում: Այդ միւլքերով կարողութիւնով և ծագումով սրածեցողները ամեն տեղ կրկնում էին.

— Հեղեղը — գետը գայիս է ու գնում, բայց աւազը միշտ իւր տեղն է մնում: Թէֆլիզի նման փաշաներ շատ են եկել ու գնացել. բայց նրանց ներկայութեանը, թէ ետեից Վուրսուլն էլի իւր ասածն արել է, Նախնականներին մկիրներն է մտցրել:

Այս կարծիքն ունէին միւսլիման աղաները, որոնք կրկնում էին Վուրսուլնի լոխորտանքը.

— Նա Վուրսուլն (մնացական) է, Վուրսուլնը, միշտ նահանգի մնացող պետը, իսկ վալիները քամիներ են, որ կը գան ու կերթան:

Լճացած, նեխուած, տգիտութեան մէջ տարականուած մեծամիտները չէին կարողանում հաշուել, որ մի արհեստաւորի տղա փաշայի բէգերի, եպիսկոպոսի հետ նահանգի վարչական ժողովում բազմի, կամ ջահել ջիւհիլները աշարի աճուրդից մաս վեր առնելով կարողանան օգտուել, առանց նահանգի վարչութեան մեծամեծներին կաշառելու:

Թէֆլիզն էլ նկատում էր, զիտէր, որ իւր գէմ զինուած էին բոլոր ազալեանները, բայց նա այդ բոլորին արհամարում — ծաղրում էր: Նա արդէն ներքին գործերի և ֆինանսի նախարարներին ցոյց էր տւել, որ նահանգներից կարելի էր սմբորականից երկու անգամ աւել եկամուտ ստանալ և պետութեան զիֆիցիտը ծածկել: Աստահ էր, որ իւր գործունէու-

Թեան այդ զգալի և դրական ապացոյցը իրեն կըփրկէր
ամեն տեսակ զրպարտութիւններից և դաւաճանութիւն-
ներից : Գանձարանին հասցրած այդ զգալի օգտի հա-
մար նոր վալին արդէն վարձատրուել էր Սուլթանից
Ֆէրիդութեան աստիճանով և Օսմանիէ օրդէնով :

Այս տութիւ Ալիշէից ստացած մի քանի տող
նամակը Թէֆլիզին աստիճաններից , վարձատրութիւն-
ներից , լաղթութիւնից աւելի ուրախացրեց : Ամբողջ
Բոսֆորի փեւրում երկրպագւած և ամենքի իղէալը
դարձած օրիորդը երիտասարդ վալիին գրել էր հետեւեալ
տողերը .

« Ազիզս (նւիրականս) : Օրէցօր հրճուում եմ ,
ժամ առ ժամ քու արարքները ինձ իմ աչքում բարձրա-
ցնում են , քանի որ սխալուել չեմ , քանի որ բնագոյս
իրականանում է քեզնով : Ես որ լոկ ընտրութեանս
համար այսքան հպարտանում եմ , արգեօք դու որքան
վսեմ , որքան վեհ տեղ ես դրաւում աչքիս լսի , սրտիս
խորքի մէջ : Հողիս հարբել է քեզնից ստացածս բարի
համբաւներով , ուշքս ուրախութեամբ միշտ դէպի քեզ
է թռչում և պատկերդ ոչ մի լոպէ չի անհետանում
մտքիս տեսութեան միջից : Ըսկատիդ վրայ դրոշմւած
շրթունքներս գեռ այրում են և քու կարօտով
պապակում է սիրտս , սառը ջրով չեմ կարողանում
այլոցքս հանգցնել : Բայց գաղափարի համար , լաղթա-
նակներիդ համար պատրաստ եմ տոկալու և դիմադրե-
լու բոլոր զգացումներին : Թող սրտիս խորքերից բղ-
խած այս տողերը քեզ արիւթիւն և քաջալերութիւն
ներշնչեն : Յոյս ունիմ , որ երկար չես սպասեցնել
մի տառապեալ թոյլ արարածի գրի պատասխանին :

Գլխի կեանքից արկածներից զազափարից երկրպագողին. Ալիշէից: -

Թէֆուիզը ոգևորւած շրթունքներին մօտեցրեց նամակը, ստորագրութիւնը և մի քանի անգամ կարդալուց լետուլ, դրեց ծոցը, ձախ կողմը, ճիշտ սրտի վրա. կեանքի բնի վրա: Կրակի նման նրա սիրտը ալբում էր սլոգ գիրը, բորբոքում էր և սաստկացնում սրտի բարտխումը: Անշագար նա հանում էր ծոցից, մօտեցնում էր շրթունքներին, ղննում էր տառերը, շարքերը, տողերը, կէտերը և զրանց դատաւորութիւնը, բերկրանքից հրճւում էր երախալի նման: Քանի քանի անգամ նա սրտախառնեց պատասխանել և մի տառ անգամ չը գրած թողեց գրիչը, արտրեց թուղթը: Մինչ ալդ նամակի գրելը, Ալիշէն միշտ իւր լարարբութիւնների մէջ մտերմական էր եղել, իսկ այս լրով արդէն թռչկոտելով առաջ էր վազել, կամ զոնէ ալդպէս էր թւում Թէֆուիցին:

Մինչ ալս բերկրաստիթ սիրուլ արտալայտութիւնն էր կարգում վալին իւր տալարանքում, մինչ նրա ուղին ցնցում, հրճւում, թռչկոտում էր գէպի իրեն կեանք ներշնչող արարածին, ալարանքից ոչ շատ հեռու, իւր բնակարանում առանձնացած Դուրսուն բէլն էլ կարգում էր Վ. Ալսից ստացած աննպատ նամակները և կատաղութիւնից ատամներն էր կրճտացնում: Սա էլ իւր կուռքերի, իւր զանձարանի պաշտամունքի բուրվասն էր ուզում ծխացնել, բայց այս անգամ նորան խնկի ու զմուռի փոխարէն կաշի ու եղջիւրի փռչէին ուղարկել, որի ծուխը նրա աչքերից արիւն — արտասուք էր քամում: Այնքան էր բորբոքել, որ կա-

տաղել էր, բայց և այնպէս զգուշանում էր. շնորհա-
լով էր հալոյում իւր առանձնարանում անգամ: Գուր-
սունի Կ. Պոլսի գործակալը՝ Մօլլա Նէրին գրում էր,
թէ ներքինին պնդումէ և տասը հազար լիրալից չի
զիջանում: Թէֆուզի սիրուհին սիրոյ գոհարներով էր
լքցնում սիրեկանի սրտի խորշերը, այն ինչ Գուրսունի
սրտից նրա պաշտած սակիները Կ. Պոլիս էին ձգում
գործավարները: Մանուանդ, գրում էր մօլլա Նէրին,
ուսումնարանի շինութեան համար աւածդ երեք հազար
լիրան, արտեղ քու կարողութեան համբուր հարիւր
հազարների է բարձրացել: Ամենքը մեծ համարում են
կազմել քեզ վրա և առիթից օգտուել են ձգտում: Եթէ
երկու ամիս առաջ տասը հազար լիրալով խոստացած
չը լինէր, զույգէ այժմ քսանը հինգ հազարով էլ չը
զիջանէր: Այս տողերը աչքի անցկացնելուց լեռոյ կըր-
կնեց Գուրսունը.

— Ա՛յ, աւագակներ. հո՛յ, . . . : Քրդերին նա-
խատում են, բայց իրենք նա մարդ գողեր են: Երբ
ձեռքերը ֆրսանդ անցնի, մարդու կաշին էլ կը քեր-
թեն: Երկու ամիս սպասելուց լեռոյ, արտալէս պատաս-
խան . . . : Հալ թէ մի մարդ կունենայի, մէկ սիրտ
ունեցող տղամարդ: Տասը հազար լիրալ, ինչ հեշտ է
վաստակելը: Արդի չեղան ինձ համար, որդունք են . . . :
Պանխիկ սակի տանին, ուտեն: Թո՛ղ Գուրսունի հօգին
դուրս գայ, գատի, նրանք միայն ուտել զիտեն: Ա՛յ
թէ ջահէլ վախտս կը լինէր, . . . այ թէ երկու գլուխ
կունենայի . . . : Մարդ չունիմ, մարդ չեն գաւնարու:
Ելի գրտից գտնելու է: Նէազօն լաւն է, թէ ուզենայ,
գազանի պէս վրա կըտայ, կըլափէ, տղամարդ է, զը-

լուխ բերող է, . . . վնլթէ վախենալ, բաշէի, վրան
 շաննէ: Հասն, չէ, սա կարող է մինչև անգամ ինձ
 մատնել. . . ժամանակը վատացել է: Իրօն, . . . ոչ, նա
 սարալն անգամ չի կարող մտնել: Ջաւօն, Սուլօն,
 Մատօն, . . . ոչ, չէ, չէ, վտանգաւոր է, վալ օտարի
 ձեռքով քաղւած փշին: Մի կերպ տասը հազար ոսկին
 ուղարկելու է, թէ չէ ալստեղ դատաստան տեսնելը
 որքան հեշտ է, ալթմ, սրա օրով ալնքան էլ վտան-
 գաւոր է, . . . : Թէ սատանի պոչը բացւեց, տնով, տե-
 ղով, եօթը պորտով ձկների պահապան (պալըդ էմինի)
 կերթանք: Այս ինչ անօրէնին դէմ առինք, հնլ, չի
 թողնում առաջը բերան բանալու: Քիչ էր մնում ինձ՝
 Գուրսուն բէլիս, քսանը հինգ տարւան վարչութեան
 փորձառու անգամիս գուրս շարաէր իդարէի մէջլիսից
 մի խումբ գեաղա — գողուղի ձայնով: Լաւ էր խնա-
 մութիւն կար, հին հին բարեկամութիւններ, հաշիւ-
 ներ, առուտուրական կապեր կալին, բոլորը կանգնեցին
 ու ձայն տւին, թէ չէ, մի հ րւածով պիտի մորթէր:
 Իրբև թէ չի՝ մորթել: Ահա մի տարի է խալտառակել,
 թողել է: Երեկուալ Սթամբոլի համալ բաշիի տղան,
 ալն գերձակ՝ Նաթանի թողը իրեն ցանկացածը գլուխ
 բերէ ու Գուրսուն բէգին խալտառակէ: Հը, . . . ալս-
 տեղ կաշառքի բան չը կալ, թէ ուտող լինէր ալս խե-
 լագարը, խո ինձնից շատ տուող չէր գտնել: Ալստեղ
 մի ուրիշ բան կալ:

Գուրսունը ալնպէս սիրահարւած էր իւր ոսկի-
 ների գէղով, ալնքան սոսկալի էր նրա համար գրան-
 ցից բաժանուելը, ալնպէս սարանիչ էր նրա ալն վիճակը,
 սր էլ չէր կարողանում կուտակել ալգ գէղը, սր նա

յուսահատութիւնից քիչ էր մնում խելագարւի: Այդ ծանր վիճակում նա յաջախ մենախօսում էր .

— Այն, այստեղ մի բան կայ, թէ չըկայ էլ, պէտք է ենթադրել, զրպարտել, թէ կայ: Ձի էլ կարող չը լինել, անպատճառ կայ, պրծաւ գնաց: Ա՛խ, եթէ չորս հինգ խելքը գլխին մարդ գտնէր, որոնք գալին ու վկայէին: Անիծեալները վախկոտներ են, սիրաչունին: Գրեմ, . . . պատասխանեմ, տասը հազար սկիից ձեռք բաշեմ, թէ այս ճանապարհով մի փորձ . . . : Այն գեափուրը՝ Նաթանեանը անպատճառ սրա հետ կապ ունի: Գեափուրների պատճառով՝ միւսլիմներին այսքան էլ տանջել: Բանտերը լցրել է քուրդերով և թուրքերով: « Հան, դու այս ինչ հայի քիթն արիւնեցիր, հան, դու այս ինչ գեափուրի գէգն ալրեցիր, հան, դու այն ֆլահին ճանապարհին թալանեցիր, սպանեցիր . . . : Այս դեռ բաւական չէ, չի ուզում որ քուրդերից ձիւսը գունդ կազմւի (համիզիէ), նրանց գէնք բաժանի: Այս կէտի վրա պնդելու է . . . : Աւշազրութիւն գրաւելու փաստ է . . . : Բայց եթէ զեկուցումս ետ դարձնեն վալիի քննութեան, նա էլ հետամտի . . . : Ձէ, ուրիշ ընթացք պէտք է բռնել: Ես գիտեմ, ինչպէս պէտք է շարժուել: Միայն մի ճանապարհը միշտ կարող է վտանգի ենթարկել, այս էլ, այն էլ . . . տասը հազարից ձեռք վերցնելու է, փոխադրեմ պրծնեմ . . . : Բայց որպէսզի կասկածի չերթան, վալիի համար շնորհակալութեան հանրագրութիւն կազմելու ձեռնամուխ լինեմ: Այդ բանն էլ գուցէ կուրացնէ Թէֆլիզին:

Վուբուռնը երկար բարակ տատանելուց լեռոյ, քուրդ ազալանների կնիքով մի ամբատանազիր ուղար-

կեց Բ. Գրան, որի պատճէնը տասը հազար լիբալի փոխանակազրի հետ՝ իւր զօրծակալին հասցրեց, ծանօթ ներքինին լանձնելու համար: Աւերջը նախանեանին խորհրդի կանչելով, համոզեց որ միասին հանրագրութիւն պատրաստեն, վալիից գոհունակութիւնները արտաբայտեն սազբազամին: Հազարից աւելի ստորագրութեամբ այս հանրագիրը հասաւ նախարարպետին:

Բայց նախարարութեան խորհրդի մէջ քուրդ ազալանների ամբաստանագիրը աւելի մեծ դրդիւն հանեց, քան թէ սպասում էր Գուրոււնը: Նախարարները համոզուած լինելով, որ ամբաստանագրի պատճէնը հասցրած կըլինէին իրենց հակասակորդ ներքինիների ձեռքը, շտապեցին հեռագրով զործի մանրամասնութիւնների հետ ծանօթանալ և պալատում տեղեկացնել իրենց հասած լուրերը: Գործը պարզելու համար Թէֆլիզը կանչեցաւ հեռագրով Կ. Պոլիս: Այս անակնկալ հրաւէրը ապշեցրեց Ալալին, որ առանց տատանելու ճանապարհ ընկաւ, զործերը օգնականին իսկ տունը նախանեանին լանձնելով:

Գուրոււնը և իւր խնամիները հրճեցան: Ականջից ականջ փարտալով իրար աչքալուս էին տալիս նախանեանների դէմ, ատամներ էին կրճտացնում և սպառնում էին ոչ միայն իզարէի ժողովից, այլ քաղաքից, վիճակից աքսորել: Բայց և այնպէս վալիի օգնականը, քարտուղարի, զազիի, առաջնորդի և նախանեանի աջակցութիւններով ցանկացածը կատարում էր:

— Մի ամիս էլ սպասեցէք, ասում էր Գուրու-

նը իւր շրջանում, որանց էլ ճանապարհ կը գցենք:

Կ. Պոլսի բարձրագոյն ատեանում իսկոյն քննութեան ենթարկեցին ^{(Թէֆլիզին):} Ամենքը համոզւած էին, որ վալին պիտի սրապանձւի և չըպիտի կարողանայ իւր վրա բարդւած մատնութիւնները հերքել: Բայց երբ նա ամբաստանութեան բոլոր կեղծիքը մերկացրեց, բացատրեց իւր ընթացքը, լալտնեց նպատակները, ապացուցեց գրպարտութիւնը, նկարագրեց տեղական դէրէրէյերի իրեն գեմ ունեցած ատելութեան պատճառները և հասկացրեց Գուրսունի նման ազրուկների երկրին ու ազգարնակութեան տւած անփոխարինելի վնասները, ժողովը միսձայն արդարացրեց նրան: Մանաւանդ երբոր ներքին գործերի, զինւորական, ֆինանսական և արդարութեան նախարարները միաբերան շատ նպատառող վկայութիւններ և անչափ դոհունակութիւնները լալտնեցին, պարզեւտարութեամբ և աւելի մեծամեծ իրաւունքներով վերագործրին դէպի իւր պաշտօնատեղին՝ Ասսպուբական աշխարհ: Գուրսուն բէյի աջակից ներքինին ոչ միայն զրկւեց տասը հազար լիբալից, այլ գուր ամբաստանութեան համար արտաքուեց սարալից, այնպէս որ այլանդակ խափշիկը կատաղած չէր իմանում ինչ միջոցով վրէժը լուծել այդ երիտասարդ փաշայից, որ չէր զիջանում ներքինիի գերիշխանական իրաւունքներին:

Բայց և այնպէս Թէֆլիզի ընթացքը ատելութիւն էր բարձրացրել և հակառակութիւն սնուցրել բարձր պաշտօնակալների սրտում: Այդ նեխուած մեծամեծները զգում էին, որ այդ անկաշառ անձնաւորութիւնը այնպիսի հերոսական լատկութիւններ
Պ Ա Տ Վ Ե Ր Ն Ե Ր

բով սպառնում էր մի օր իրենց բոլորին տապալել և նրանց գլխին բազմելով երկրի վարչութեան ղէկը իւր ձեռքն ամփոփել, ջախջախելով կաշառակերութիւնը: Զինւորական նախարարի տւած զեկուցումը Թէֆլիզի տնկաշառ, անդրդւելի, անձնավստահ, կամքի ոյժի և յատկութիւնների մասին, գրգռել էր բոլորին: Շատերը չէին կարողանում ըմբռնել, թէ էլ ինչ բանը կարող է նրան ձգտեցնել, առաջ մղել, երբ վայելչութեան — կերու խումի, հագուստի, կապուստի, վաւաշտութեան — համար այդքան սակաւապէտ էր: Ինչ բանն էր նրա վեհ հոգին զւարթացնում և երկինք բարձրացնում: Թէֆլիզին շրջապատող ապականւած պաշտօնակալները չէին կարող զգալ նրա ձգտումները:

Գուրսունի գործակալը եղելութիւնը պայմանական հեռագրով տեղեկացրել էր Վան: Գուրսունը կատաղած էր, կինը փախցրած քուրդի նման հոգեկան խաղաղութիւնը կորցրել էր: Որպէսզի խայտառակութիւնից ազատի, իրաւունք էր տւել Կ. Պոլսի գործակալին քսան հազար լիրա ծախսել, կաշառել ամենին, միայն թէ արգելել Թէֆլիզի Վան վերադարձը: Ներքինին գործակալի հետ քսանհազար լիրայի փոխանակագրով մօտեցէլ էին վիւքեալայի աղաներին (տնտես), որպէսզի հնար գտնեն գոնէ Թէֆլիզին Վանից հեռացնելու: Ոչ ոք չէր համարձակոււմ այդ առաջարկը Թէֆլիզին անել, քանի որ նա արժանացել էր Սուլթանի առանձին համակրանքին: Սակայն Գուրսունի քսան հազարանոց փոխանակագիրը հրապուրել էր շատերին, որոնց բեղնի ջուրը վազոււմ էր, այդ համեղ պատառի համար: Աղաները (տնտես) երկար,

բարակ հարց ու փորձից յետոյ, համոզւել էին, որ Ֆէլիքի բէլը մեծ ազդեցցով թիւն ունի Թէֆլիզի վրա, ալդ պատճառով ներկայացել էին նրան և թախանձել, որ համոզէ Թէֆլիզիին Վանի վիլայէթից հրաժարւելու, Արգրուժի, կամ մի ուրիշ աւելի ընդարձակ և առաջնակարգ նահանգի վարչութեան ղէկն ստանձնելով:

Թէֆլիզի մեկնելու նախընթաց իրիկունը ազատամիտների առաջնորդները դարձեալ խմբւած էին Ալիշէխանումի տանը: Ընթրիլին Թէֆլիզը նստած էր տանտիրուհիի աջ կողմը և բոլոր սեղանակիցների ուշադրութիւնը լարւած էր նրա պատմած արկածներով: Հազաւոր հարցերի չէր իմանում ինչպէս բաւարարել և անընդհատ բացատրում էր ամենին, որքան կարողանում էր: Ալիշէն ուրախութիւնից հարբել էր: Ալդ գիշեր Թէֆլիզիին ուրախութիւն պատճառելու տենչով, չէր խնայել, ճոխութեամբ լքցրել էր սեղանները: Աշնանային եղանակ, բնութեան Բոսֆորի ափերում հասցրած սքանչելի բերքերով զարգարել աջ ու ձախ, որոնք զետեղւած էին Չինական հազաւազիւտ յախճապակիներում, խորամիտ դասաւորութեամբ նրբաճաշակ մատներով: Կերակուրները, քաղցրեղենները, գինիներն ու օշարակները հրապուրում էին ամենակուշտ աչքերը, զրգուում էին յազեցած ախորժակներն անգամ: Տան թանկագին արդ ու զարդի, բէհէզի, թաւիշի, գիւրակի և ուրիշ մետաքսի գործւածքների վրա նկատելի էր Ալիշէի քնքոյճ ձեռքերի հետքերը և խնամքը: Այս բոլորը, մանաւանդ Թէֆլիզի պատմութիւնները ընթրիքը երկարացրին վեց ժամ:

Այիշէի անթարթ հայացքները, ուշադրաւ ունկնդրութիւնը, Թէֆլիզի յափշտակած նկարագրութիւնները բորբոքում բռնկցնում էին Ֆէյզիի նախանձառ սիրաբը: Նա զգում էր, որ իւր աստղը ինչպէս սեղանակիցների, նոյնպէս պաշտելի տանտիրուհիի աչքում հետզհետէ նսեմանում, աննշմարելի էր դառնում: Այիշէն գաղափարի, բարձր զարգացման և անհուն պաշարի համար յարգում էր ու խոնարհում Ֆէյզիի առաջ, բայց պաշտում, երկրպագում էր Թէֆլիզին, այդ գաղափարը իրականացնելու համար կեանքի կռւի դաշտն ընկած զինուորին, որ աներկիւղ գործափարութեամբ կատարել էր այնպիսի յարձակումներ, տարածել, արծարծել էր իրենց դաւանանքը և զիմարել անվերջ յաղթանակների: Այս պատկերից յուզւած և բորբոքւած, ասաց Ֆէյզին.

— Բէլեր, երբէք չէի ցանկանալ սեղանի—
ուրախութեան ընթացքում որևէ անհաճոյ խօսք քանալ, որևէ անդուրեկան լուր հաղորդել, բայց որովհետև բոլորիս սրտին ամենամօտը, ամենանւիրականը մեր երկրի բարեկարգութեան և լեղաշրջութեան գործն է. ես պարտաւորւած եմ մեր ուրախութիւնը ընդմիջել մի միջնադէպով, որը ետաձգել անկարող եմ, քանի որ տաւաօտ վաղ Թէֆլիզ փաշան ճանապարհորդելու է: Ինձ հաղորդում են, որ բարձր շրջաններում Թէֆլիզի Վան վերադարձը մեծ տհաճութիւնների առիթ է պատճառել: Այս հանգամանքը ինձ օտիպում է ձեզ առաջարկել, խորհել այդ մասին և եթէ հնարաւոր է, քանի որ նախարարութիւնն էլ համաձայն է, փոխադրել նրան Արզրումի վիլայէթը: Վանում նա աներկքն ա-

բաւ : Եթէ սրանց կամքի հակառակ այժմ Վան գնայ, կարող է գործը վնասել, և մենք, երիտասարդութիւնը մեծամեծ զոհողութիւնների կենթարկւինք :

— Խնդրեմ, ասաց Թէֆլիզը. բացատրութիւն տաք, թէ որտեղից էք ստացել այդ տեղեկութիւնը :

— Բացատրութիւն, բացատրութիւն, կրկնեցին ամեն կողմից :

— Ես պարզ չեմ կարող բացատրել, որովհետեւ ինձ էլ անյայտ է : Այս իրիկուն գաղտուկ ինձ այդ բանը հաղորդեցին երկու աղաներ :

— Այդ ես գիտեմ, ասաց Թէֆլիզը, այս իրիկուն գրա բոլոր պատճառները ես էլ իմացայ : Գուրսուն բէլը քսան հազար լիրա է խոստացել այդ աղաներին և ես համոզւած եմ, որ աղաները այդ գումարը կուլ տալու համար, ձեզ վախեցրել են : Իմ Վան վերադարձս անհրաժեշտ է նրա համար, որ Գուրսունի ատամները բոլորովին քաշեմ, որպէս զի իմ յաջորդիս վրայ էլ չըկարողանայ փորձել : Իմ չըզնալս նա յաղթութիւն պիտի համարէ, կամ պիտի ձեացնէ և դարձեալ շարունակէ իր « Իէրէրէգութիւնը » : Այո՛, ես ինքս էլ այնտեղ երկար մնալ չեմ ցանկանում, բայց մեր ազդեցութիւնը պահպանելու համար, պարտք եմ համարում մի ժամանակ էլ մնալ, կազմակերպութիւնը հիմնովին հաստատել և ապա անցնել Արզուրում կամ մի ուրիշ տեղ :

— Ես կարծում եմ, ասաց Ֆէլզի բէլը, որ աւելի լաւ կըլինի, դու չըվերադառնաս Վան, եթէ գէնաս, իսկոյն փոխադրւես մի ուրիշ նահանգ : Տեղական ազգարնակութիւնը գրգռելու չէ մեր գէմ, գրանով

գործը կը վնասուի :

— Ի՞նչպէս թէ գրդո ելու չէ, ուրեմն թողնենք, Գուրսունի նման վաշխառուները կողոպտեն և՛ ժողովուրդը, և՛ պետութեան զանձարանը . . .

— Կէցցէ, գտնացին Ջաֆէր և Տիրան բէլերը, կեցցէ Վանի վալին, բարի ճանապարհ գէպի իր պաշտօնատեղին :



Գուրսունը երբ լսեց Թէֆուիզի վերադարձը Վան, սարսափեց : Կ. Պարսից ստացած հեռագիրները նրան չէին միամտացրել, նա սպասում էր նամակով սանրամասնութիւնների : Նախանեանը ահագին բազմութիւնով քրիստոնեաների և իսլամների հետ նրան փառահեղ ընդունելութիւն կատարեցին, մեծ թափուրով, ահաւոր հանդիսականներով զիմաւորեցին, ազմկալի հանգէսով քաղաք մտան : Գիմաւորացիների թւումն էր և Գուրսունը, որը մինչև վերջը խոյս էր տալիս Թիֆուզի հալացքից և նրա հետ խօսակցութեան բռնելուց : Արգէն նկատելի էր Գուրսունի թայֆէի մտատանջութիւնը, բարբի գէմբի մտալը մտանում էր նրանց հոգու ալեկոծ վիճակը :

Այդ օրուայ պոստից Գուրսունը ստացաւ սպասած նամակը : Գործակալը և խափշիկ ներքինին քսան հազար լիրան (որից խոշոր տակոս մաս էին վերցնելու) ձեռքից չէ փախցնելու համար, սրան յայտեր էին տա-

լիս, հաւատացնելով որ շուտով Թէֆլիզին փոխադրել տալու էին մի ուրիշ նահանգ: Գուրսուներ թէև էլ չէր հաւատում նրանց, բայց մի կերպ ինքնախարէութեամբ այդ յոյսերով ապրելու էր ձգտում:

Անցան ամիսներ, անցաւ և այդ տարին, Թէֆլիզը ամենայն եռանդով առաջ էր վարում գործերը, և բռնած ընթացքով օրից օր ստորացնում, ոչնչացնում էր ժողովրդի աչքում Գուրսուների հեղինակութիւնը: Այլ Գուրսուներ կարողանում էր հաշտուել այդ պարտութեան հետ, ոչ նրա սիրտը դադարում էր մորմոքելուց և ոչ էլ Կ. Պոլսի գործակալները իրենց ամեն շարաթւայ ծրարներով յոյսերի կապոցները ընդհատում էին: Գործը արագացնելու, գործակալների գրածները ստուգելու համար, Գուրսուներ եղբօր՝ Եմրահին Կ. Պոլիս ուղարկեց: Սա էլ թէև չըկարողացաւ շտապով բան շինել, բայց գոնէ համոզեց և հաւատացրեց եղբօրը, թէ գործակալն ու ներքինին քնած չէին և բաղխում էին զանազան դռներին: Վերջապէս խափշիկը Եմրահին վերադարձրեց Վան մի վերջնական - կտրական ծրագրով: Գուրսուներ հաւանեց և այդ մեքենայութեան իրագործման ձեռնամուխ եղաւ:

Խափշիկը Եմրահի հետ Կ. Պոլսից ահագին կապոցներով թուրքերէն և հայերէն գաղտնի տպագրւած թերթեր, գրքովներ և պատկերներ էր ուղարկել: Այս թղթերը գաղտնի պիտի կաղէին վալիի և նրա համախոհների բնակարաններում, որպէս զի Գուրսուներն ու թալիֆէն սրանցով քրէհական դատարանին մատնէին իրենց հակառակորդներին: Այդ դարանը պատրաստող դաւաճան ընկերակիցներ շատ գտան, որոնք խոստա-

ցան խաւարի մէջ գլուխ բերել ալդ շարագործութիւնը :
Եւ անմիջապէս պայմանական հեռագրով իրենց կազմ
ու պատրաստ վնեւը և ճրագիրը գործադրելը իմացրին
4. Պոլսի գաւակիցներին :

Բայց ալդ թերթերը վաշալի առանձնատենեակում
գեանգելու գիշերը, Նաթանեանը գաւթից գուրս գա-
լու պահին, մի՞նում ինչոր կասկածելի ձայներ լսելով,
կանգ առաւ և պահւեց նամագրուս : Մինչ տան դրսի
դռները փակած, սպասաւորները առանձնացած հան-
գատանում, քնում էին, գարանագործները աներկիւղ
աշխատում էին խոստումները գլուխ բերել : Նաթա-
նեանը շունչը զսպած, ամբողջ մարմնով և զգայա-
րաններով լսելիք դարձած, ջղերը լարած սպասում էր,
թէ ինչ էին կատարելու ալդ ճիւղալին աւազակ-
ները :

— Ես վախեցալ, ասաց շշնջալով գաւազիրներից
մէկն ընկերին, կարծես ականջիս քալիերի ձայներ հա-
սան, բայց վստահ եմ, որ խորուեցալ, կաուի, կամ
շան քալի քսածք էր :

Չգնչ, ևս էլ համոզւած եմ, որ ալդ մարդ
չէր, բայց ով գիտէ : Դիչ էլ սպասենք :

— Այնչ, հիմի բոլորը քնեցան, այնպէս լող-
նած էին, որ պառկելն ու թմբելը վայրկենական բան է
նրանց համար : Դու ապահով եղիր, տախտակն առանց
ազմուկի լստակից քանդելն ու մեխելն իմ պարտքս :

— Լաւ, բայց քիչ էլ սպասիր : Դու համոզ-
ւած ես, որ այն գեաւուրը գուրս կորաւ :

— Գնացած պիտի լինի, փաշան արդէն մտաւ
ննջարան :

— Այստեղ, դահլիճում խո՞ մարդ չի կայ :

— Այ՛ տք :

— Անցնենք այնտեղ, քիչ էլ սպասենք :

— Այ՛ սպասելու կարիք չը կայ, որքան շուտ, այնքան ապահով : Ամեն մի կորած բոպէ մեզ կախադանին աւելի կը մօտացնէ, առանց նպատակներիս հասնելու :

Նախանեանի սիրտը տրոփում էր, նա երկիւղից և կատաղութիւնից քիչ էր մնում մատուի : Չը նկատելու համար լատակի վրա փռւած թաղիքի վրա պռակեց, նրա ծայրը բռնելով գլորւեց, գնաց պատի տակ կոյրւած սպասեց գործողութեան աւարտին : Գաւազիքները անդադար ներս ու դուրս էին անում : Վերջապէս երբ նկատեցին, թէ բոլորը քնեցան, չարագործները մտան Թէֆլիգի առանձնասենեակը : Նախանեանը զգուշութեամբ դուրս եկաւ, դիմեց վալիի սպասաւորներին առանձնարանները և չորս-հինգ մարդ արթնացընելով, դուրս բերեց, լանկարծակի մտաւ և բռնելուց ներքնագործ գաւաճաններին : Կարկամեցան մնացին նենդաւորները : Խսկոյն վալիին ձայն տւին, որն անմիջապէս քննիչին և դատախազին կանչելուց, չարագործներին իրենց բերած թղթերով կալանաւորեցին, արձանագրութիւն կազմեցին, լանցաւորները իրենց մեղքը խոստովանեցան, կնքեցին արձանագրութիւնը և հեռացան :

Քննիչը կարողացաւ գաւաճաններին խոստովանացնել չարագործութեան մանրամասնութիւնները : Գաւաճանները, մատնեցին իրենց ընկերակիցներին և թելադրողներին : Կէս դիշերին քննիչը դատախազի հետ

մասւ Գուրսունի տունը, խուզարկեց և եղբօրը Հեօ
բանա ուղարկեց: Գուրսունի տանը գտան Կ. Պոլսից
ստացւած և վախի ապսրանքի լատակում զետեղւած
լատարարութիւնների, լեղափոխական թերթերի և
գրքակների մի մասը, Կ. Պոլսից ստացւած նամակնե-
րով: Գուրսունը ուրացաւ բոլորը և շմտնեց Կ. Պոլ-
սի գործակալին, որը թուրքական սովորութեան համա-
ձայն ոչ կնքած և ոչ իսկ ստորագրած էր նամակը:
Նեոբակալեցին Գուրսունի առաջնակարգ արբանեակ-
ները: Կալանաւորումը սարսափեցրեց ողջ քաղա-
քը, սոսկումն ու կասկածանքը տիրեց բոլորի սրտին:
Նախանեանը համոզւած լինելով, որ հակառակորդները
իրեն էլ նեոբակալել տալու համար ամեն ստոր միջոց-
ների դիմելու պատրաստ էին, աչալըջութեամբ գիշեր,
ցերեկ հսկեց ու քննեց շուրջը կատարւածները:

Կ. Պոլսից եկաւ արտակարգ գաղտնի քննիչը և
ամենից առաջ խուզարկեց նախանեանի այգեստանի
տունը, որի ընդարձակ պարտիզի մաշառների մէջ գտաւ
Գուրսունի և ընկերների զետեղած թերթիկների, լա-
տարարութիւնների և բրօշիւրների մի սոււար ծրարը:
Նախանեանին իսկույն բանտարկեց և շարունակեց խու-
զարկել Բէֆուի գաշալի իսլամ և քրիստոնեայ կուսա-
կիցների բնակարանները: Մտտ մարդիկ բանտարկեցան,
շատ ծնողներ ցաւից կաթւածահար ընկան, շատ կի-
ներ յացին ու ողբացին իրենց ամուսիններին, զաւակ-
ներին, բայց բարեբաղգաբար երեք-չորս օրից բոլորն
էլ արձակեցան նախանեանի հետ: Իսկ Գուրսունի
մարդիկը բանտում շղթայել տալուց լետոյ, արտակարգ
քննիչը հեռացաւ Վանից դէպի մայրաքաղաք, պատուի-

րելով մեծ աշայրջութեամբ հսկել դաւաճաններին, մինչև Կ. Պոլսից կարևոր կարգադրութիւնների հասնիլը: Գուրսունը շատ աշխատեց, մեծամեծ կաշառներ խոստացաւ, Կ. Պոլիս վիւքեալալին ու ներքինիներին հեռագրեց, ինչ միջոցների չը գիմեց, որ գոնէ երաշխաւորութեամբ էլ է արձակւի բանտից, ճար չըգտաւ, վալին չը գիջաւ:

Բայց ոսկիները ընկնելով Գուրսունի մեղքի կշեռքի նժարների կողմը, նրան երաշխաւորութեամբ բանտից արձակել տւին, իսկ Թէֆլիզին Կ. Պոլիս մեկնելու հրամանը ճողոպրեցին խնամիները մեծամեծ զոհողութիւններով: Գուրսունը դուրս գալով բանտից, էլի կարողացաւ իւրալիններին կրկնել.

— Դո՛ւք մի վախենաք, ջուրը և քամին, շատ փաշաներ ու բոշաներ, մացառների ու փայտի կտորներ բերում են ու բշում, տանում գէպի ծով, այնպէս էլ կը տանեն Թէֆլիզին, իսկ կամուրջը մշտնջենական մնացող է, մնացական է, ինչպէս Գուրսունը (Մնացական):

— Հէլբէթ, հէլբէթ, կրկնում էին Գուրսունի կուսակիցները, աղաջան, մենք ծերացել ենք, հարիւրաւոր փաշաներ ենք տեսել, որոնք եկել են ու զնացել, ո՛չ մէկը մեր ցաւին զեղ չէ տւել: Նրանք միայն երկիրը կողոպտել, մեր կաշին են քերթել, տարել, իսկ դուք մերն էք եղել, մենք էլ ձերը: Եթէ ձեր սպասին գտնուել ենք, դուք էլ մեզ պահպանել էք այդ գիշատիչների ձեռքից: Մեր սև օրին էլ էք հասել, ուրախութեանն էլ: Ինչ որ տւել ենք քեզ, հալալ լինի մօրդ կաթի պէս, իսկ այդ մեղկ, Կ. Պոլսի թեթևստիկ-

ներին ինչ ենք պարտական: Ինչպէս հարիւրներին ճանապարհ էք գրել, զստահ ենք, որ այս ջահիլ վալիի հախիցն էլ կը գաք և կը հանգստանաք:

— Ըննապարհ գցեցի, մի վախենաք, էլ չի կարող ետ գալ:

Գուրսունը մի կերպ այս փորձանքներից, գատաստանից ու Թէֆլիզից ազատելու համար խոտացել էր կրկնակի վճարել: Երկու երեք ամսի քննութիւնները, բանակցութիւնները և փաստերը էլ աւելի բարձրացրին Թէֆլիզի արժանաւորութիւնները, այնպէս որ Վանի գատաւորները առանց այլևայլի պարտաւարած էին Գուրսունին, եղբօրը և ընկերակիցներին գատապարտելու: Այս պարագան իմանալով Գուրսունը շտապից Էմրահին կրկին Կ. Պոլիս ուղարկել, որ գործին ցանկալի վախճան տալու հնարքը գտնի: Բայց զուր, Էմրամը կարողարու գործը ձգձգել, ետաձգել տալ, Թէֆլիզին մի առժամանակ Կ. Պոլսում պահել, բայց արտաւարել, կամ պաշտօնանկ անել երբէք:

Գործը ձգձգելու, ժամանակ վատկելու և ցանկալի վախճանի հասցնելու նպատակով Էմրահը բնական հազար լիբան գոհեց և արգարութեան նախարարի գլոնից մի հրաման ուղարկել աւեց Վան, որ գործը, գատապարտեալները և վկաները փոխադրեն Կ. Պոլիս: Այս որոշումով Թէֆլիզը հինգ - վեց ամիս զարձեալ մնալու էր մայրաքաղաքում, մինչև գատարանի վճիռ արձակելը: Վանի վալին գործի ներքին գաղտնիքների և զարձածների մանրամասնութիւնների հետ ծանօթ լինելով, բորբոքում, գալբութից հալ ու մաշ էր լինում, բանի որ համոզուած էր, թէ այս խաղերը պատրաստ -

ւում էին մէկ երկու խափշիկ ներքինի, մի երկու տնտես - կառավարիչների ձեռքով: Այս ստոր արարածները կաշառուելով կարողանում էին բարձրագոյն ատեանները իրենց գործիք դարձնել, ծաղրել թուրք ազատամիտ երիտասարդութիւնը և նրա ներկայացուցիչ՝ Թէֆուիզը: Այս վիշտը, այս ստորութիւնը իբր բաւական չէր Թէֆուիզին. Ֆէյզի - բէյն էլ միշտ կրկնում էր առանձին թէ ժողովներում .

— Գուք Վան չը պիտի վերադառնալիք, Թէֆուիզ փաշա՛. գործից պատուաւոր կերպով դուրս գալու համար, պիտի հեռանալիք այդ վիճակից Արզրում, կամ Սիվազ: Յանկարծ չի կարելի ջախջախել այս հները, ժամանակը և խոհուն աշխատութիւնը պիտի ազատէ ժողովրդին գրանց ճիրաններից: Ձեր արածը արդէն շատ շատ էր, պէտք է մի ուրիշ նահանգում էլ ցնցէիք երիտասարդներին և սարսէցնէիք հներին, այն ինչ կիսատ թողիք թէ Վանի գործը և թէ ձեռքերդ ծալած մնացիք մայրաքաղաքում:

— Գործը ոչնչով վնասւած չէ. այսպիսի խոչընդոտները չեն կարող արգելք դառնալ այն հսկայական բալլերին, որով առաջանում է երիտասարդութիւնը գաւառներում: Վնասը դուք էք տալիս, որ այստեղ նստած գաւառների համար երևակայական ծրագիրներ էք կազմում և միջոցների չէք դիմում, որ սանձէք այստեղի կաշառակերներին և այն ներքնագործ տնտեսներին, որոնք շրջապատած են մեր նախարարներին:

Աւելի սուր լեզուով էր խալթում Թէֆուիզը Ֆէյզիին Այիշէի ներկայութեանը, այնպէս որ թուրք երիտասարդութեան պարագլուխը միշտ խոյս էր տալիս այս

կէտի մասին անտիական օրինորդի ներկայութեան խօսք
բանաբու։ Սրից որ այս երկու ընկերի մէջ սաստկանում
էր հակակրօթիւնը, այս վիճարանութիւնը բորբոքում
և առեւութիւնը սաստկացնում էր, այն սաստիճանի, որ
սասնարիւն իրար ներկայնութիւնը չէին կարողանում
տանել։ Մաս խօսքեր իրար ճակատի չը կարողանալով
խօսել, ընկերների միջոցով իրար յուր էին հասցնում։
Ֆէլդին պնդում էր, որ Թէֆլիզը, որպէս ներկայա-
ցուցիչ իրենց խմբի, պարտաւոր էր այս մասնաժողովի
հրամաններով ղեկավարելու, իսկ Թէֆլիզը նրա հա-
կառակ պահանջում էր անպայման լիազօրութիւն և
անկախութիւն, որպէսզի ինքը կարողանայ նահանգ-
ների և գաւառների ներկայացուցիչների հետ, տեղա-
կան պայմանների, պահանջների համեմատ գործերը
վարել։

— Դեր լիազօրը, ձեր գաղափարակիցը, եթէ
հաւատացած էք, որ իմար չէ, չի գաւաճանել ձեր սկզ-
բունքներին, ինչի չէք համաձայնում, որ ազատ գոր-
ծէ և առաջ տանի այն դրօշակը, որի երկրպագուններն
էք ձեանում, Ինչի Կ. Պոլիս նստած ձգտում էք, ա-
ռանց ծանօթ լինելու երկրին, ժողովրդին, առօրեայ
կեանքի պայմաններին, դարանագործութիւններին,
պատգամներ ուղարկել գաւառացիներին։ Ինչով էք
տարբերում ներկայ բէթիմից, երբ չէք ցանկանում
գաւառացիներին յանձնել իրենց վիճակի վարչութիւնը։
Մեր գաւառանքով խօյս ենք տալու կամայականութիւն-
ներից բաշխողուկներից, ենիչերիներից, աղաներից,
բէգերից ու ամիրաններից, իսկ զուք ինչի էք ձգտում
մի նոր ենիչէր - աղա գառնալ մեր գլխի, կամ գաւա-

ուացու գլխին: Աեր երազածը, ձեր երևակալածը, ձեր
զաղափարը իրագործելու համար ձգտում էք մարդիկ
պատրաստել, այն ինչ, մինչև ձեր սթափումը, ժողո-
վուրդը ձեզանից շուտ է ըմբռնել կարիքը և հասցրել
է անձնագոհ գործիչներ, որոնք նպատակի հասնելու
համար պատրաստ են ամեն քայլափոխի նւիրել զա-
ղափարին: Ինձ գաւառացիները մատնացոյց էին անում
իրենց վիճակի ամենասոսկալի վերքերը, Դուրսուն բէ-
գերը, վաշխառուները, սարբաֆներն ու սօֆթա «
պաշտօնակալներն են նրանց լառաջադիմութեան առաջ
պատուար քաշողները: Եթէ այս ազրուկները սանձեն,
երկրի եկամուտով ոչ միայն կարելի է բարեկարգել
պետութիւնը, երկաթուղիներ շինել հում բերքերը ար-
տահանելու, երկրամշակութիւնը դիւրացնելու գործիք-
ներ տալ, ուսումը, գիտութիւնը և արհեստները
տարածել, այլ մինչև անգամ հասարակական թատրոն-
ներ, թանգարաններ, այգեստաններ և կենդանաբանա-
կան պարտէզներ հիմնել: Ֆինանսական նախարարու-
թիւնը այնքան մանրամասն տեղեկութիւններ չունի
ժողովրդի վճարած և գանձարան մտած գումարների
տարբերութեան մասին, ինչպիսին ունին Վանում,
Էրզրումում, կամ Սիվազում նստած մասնաւոր անհատ-
ներ: Եթէ վաշխառուների և կաշառակերների սան-
ձերը քաշելով, Վանի վիլայէթի աշարը ազատ աճուր-
դի գնելով, հնարաւոր եղաւ նախորդ տարիների եկա-
մուտի կրկնակի գումարից աւել ստանալ, ինչի չէք
համոզուում, որ երեք տարի լետոյ ազատ մրցումը
եռապատիկն է տալու: Դեռ հաշուեցէք, որ այդ աշար
վերցնողները քսան - երեսուն հոգուց բաղկացած ընկեր-

ներ են, որոնք նույնպէս իրենց համար որոշ շահ են վերցնելու ալդ ձեռնարկութիւնից: Գեռ ամեն մի բաժնի տէր ուրիշ քսան-երեսուն մարդու մէջ ածուրդի է զնելու իւր վերցրած վիճակը, որոնք հինգ-վեց հարիւր հոգով և ալդքան էլ ծառայողներով ու գործակատարներով ոչ միայն ապրւստ են հանելու, այլ իրենց դրած կապիտալի տոկոսն են վերցնելու և բաժին ստանալու: Ուրեմն հաշիւ արէք, քննեցէք և կիժանաք թէ որքան է վճարում երկիրը: Եթէ ժողովրդից լափշտակեած տուրքի կէս մասը ինքը՝ հասարակութիւնը ուղղակի իւր ձեռքով հասցնէ պետութեան գանձարանը, այսօրուայ եկամուտի քառասույտիկը կը դամարւի ամեն տարի: Գաւառացին ձեր սպասածից շատ վաղ էն ըմբռնել, հաշուել, եզրակացութեան հասել, ձեզանից շատ լաւ են ծրագրել այն ուղին, որը նրանց հասցնելու է բարեբաղդ վիճակի և միակն ձեր նպատին կարօտ, օգնութիւն են պահանջում, ոչ թէ զեկավարութիւն:

— Ուրեմն ձեր կարծիքով քրդերը, զազաները մեզանից առաջ են գնացել, մեր զեկավարութեան կարիք չունին, ասաց արհամարական ծաղրով Ֆէյզիբէլը:

— Ա՛շ քուրդերը, ոչ թուրքերը, ոչ էլ հալերը ընդհանրապէս, այլ անհասաներն են առաջ գնացել, զարդացած քաղաքացիները և մանաւանդ հալերը: Եւ պէտք է խոստովանած, որ մենք շատ ենք պարտական հալերին և միայն սրանց ձեռնաւարութեամբ պիտի կարողանանք մեր ազգարչակութիւնը անկուծից փրկել և պատւառտել և բուպական կուլտուրայով: Գուր

եւրոպայում սովորել էք սեռափոփոխ , Թէյզի - բէյ , քննեցէք , գնեցէք այս թուերը , ասաց զայլրալի ծոցի տեարը դուրս հանելով և ներկայացնելով , — համեմատեցէք այս հաշիւները և այնժամանակ կըմբռնէք , որ հայերը մարդիկ են առաջացրել , որոնք քսան տարի առջ հաւաքել են պարբերապէս այս տեղեկագրերը , որոնց մասին դուք դեռ նոր էք մտածում ծրագիր կազմել : Թերթեցէք , թերթեցէք , այդտեղ շատ գազանիքներ էք գանելու , այդ թուերը ձեզ շատ բան են սովորեցնելու . . . : Այդ տեղ կը դանէք մինչև անգամ , թէ ամէն մի վայր իւր արբանեակներով պետութեան հարկի քանիապատիկն է իւրացրել իրեն լանձնած վիճակից :

— Աւրեմն էլ ինչ կարիք ունին մեր ձեռնառութեան այդ հայերը , ասաց Թէյզին հեղներով :

— Մի հեղնէք , բէյ , այդ ձևերը կարող էք պահել , գրանուուր պէտք կը գան : Արջութեամբ հարց էք գրել , լրջութեամբ էլ վախճան տալու գիրք բռնեցէք : Մենք պէտք է պետութեան կենարոնից դիւրացնենք գաւառացիների գործը , պիտի աշխատինք փշրել , հեռացնել ինչպէս աղահ , կաշատիկեր պաշտօնակալները , կրօնամոլ և ձրիտիկեր սոփիստները , նոյնպէս սրանց գործակից գաւառարնակ աղաներն ու բէյերը , որոնց աջակցութեամբ , թէ ժողովուրդն է կեղեքում , սովի մասնում , թշտանում , պանդխտում և նւաղում և թէ հասարակական գանձրանն է կողպում և պետութիւնը կործանման գատապարտում : Այն յանկալի է փրկել պետութիւնը , հասարակութիւնը սպառնացող ստրկութիւնից , որի մէջն է արդէն ընկել անզգայիա-
 Պ Ն Տ Կ Ե Ր Ն Ե Ր

բար, պէտք է բոլոր ոյժով աջակցել գաւառացիներին, որպէսզի կարողանանք նպատակի հասնել, պէտք է նոյնպէս ուսում և գիտութիւն տարածել, միւսլիման ժողովրդին իւր դարևոր թմբուժիւնից սթափեցնել, որպէս զի նա մոյի կղերի ճիրաններից դուրս պրծնի և ալլակրօնների հետ համերաշխութիւն կազմելով, դիմեն դէպի յառաջագիմութիւն, որ կողմը մենք յառած ենք աչքերս: Իսկ այս գրութիւնը տալու համար, չը պիտի ջանանք նրանց ստրկացնել, ինչպէս տենջացել և կատարել են մեր անհետատէս պապերը:

— Իսկ մեր, գաւառները իրար մէջ կապ չը պիտի ունենան, ասաց Ֆէլզին մունջելով, յաղթականի միմիկաներով, չը պիտի գաւառները տեղեկութիւն ունենան, թէ ինչ է կատարոււմ իրար մէջ, իրար օգնութեան, նպաստի կապեր չը պիտի ունենան:

— Ինչպէս շէ, բայց այդ կապը ոչ թէ մենք պիտի ձևակերպենք, այլ իրենք պիտի կազմակերպեն: Կ. Պոլիս նստողները պիտի նպաստեն գործի զարգացման, թողնելով որ գաւառները իրենց ոյժով գործեն: Կողմնակի, կամ ուղղակի կարելի է հաւաքել տեղեկութիւններ, եղելութիւններ, որոշումներ և տպագրելով ընդհանրացնել, խրախուսել, որ ամեն մի գաւառից օր ուսումնարանների թիւը շատացնէ, արհեստանոցներն ընդարձակէ, եւրոպական համալսարաններ յաճախեն, թերթեր խմբագրեն, օրինակելի ազարակներ կազմակերպեն, գործիքներ բերել տան, կենդանի օրինակներով ժողովրդին դարևոր քնից սթափեցնեն և զարգանան: Հէնց այս է Սամաճեան օրէնսդրութեան հիմունքը, այս է թանգիմաթի նպատակը, վիլայէթներ-

րի կազմակերպութեան օրէնագրութիւնը այս սկզբունքով է ծրագրուած և վարչութիւնները ժողովրդի ներկայացուցիչներով է կազմակերպուած : Պէտք է մեր օրէնօգրական այս սկզբունքները ժողովրդի մէջ ընդհանրացնել, մտրմնացնել, ամէն խաւի մէջ արծարծել, թէ վիւալէթը, սանջակը, դազան, նահիէն և գիւղը, դատարանները, կամ ուրիշ հիմնարկութիւնները կառավարելու են ժողովուրդից ընտրուած պատգամաւորները հասարակութեան ցանկութեամբ : Այսուիտի վարչութեան ո՛չ մեր օրէնագրութիւնը և ո՛չ իսկ շէրիաթը հակառակ է :

— Աէցցէ, կէցցէ, չանկարձ դուստրին ընկերակիցները ծափահարելով և սգևորութեան մէջ ճղճում էին ամեն կողմից :

— Մենք միայն նպաստողի, կամ շատ շատ խորհրդատուի դեր կարող ենք կատարել, թող ժողովուրդն ինքն իրեն կառավարէ, Ջնջւին կաշտակերները, ջնջւին վաշխասունները, կեղեքիչները և շէլիները :

— Եթէ ձեզանից մէկը ցանկանում է գործիչ լինել, ո՛չ թէ նպաստող, ասպարէզն ընդարձակ է և կարիքն անչափ, թող հրամէ, մանի գաւառ : Ժողովուրդն իր բարեկամին կուռք է շինում, պաշտում :

Ե

Ֆէլդին բոլորովին կատաղեց :

Մինչ այդ միայն Ալիշէն էր լափշտակած Թէֆլիզի տաղանդով, խկ այժմ ազատամիտ երիտասարդութեան սիրտն էլ կապուած էր զազափարական գործիչի հետ : Նա համոզուած էր, որ Ալիշէի սիրուն տիրանալու և նրանից ձեռք վերցնելու մահացու հարուածից փրկելու համար, անհրաժեշտ էր միշտ կուսակցութեան ղեկավարի բազմոցն ունենալ և ընկերակիցների համակրութիւնը վայելել : Յառաջադիմութեան գրոշակից անջատուելը, երիտասարդութեան պարագլխի տխուրից գլորելը լախտենական տաժանակրի դատարարութիւն էր նրա հոգու համար : Ֆէլդին վաղուց նկատել էր, որ Ջաֆէրը, Տիրանն ու Միհրատը իրեն չէին ցոյց տալիս նախկին անպայման հպատակութիւնը : Միւսներն էլ թէև ճկուած էին նրա հեղինակութեան առաջ, բայց պատեհ պարագային նրա ետը վերաւորելուց, խալթելուց ետ չէին մնում :

Ֆէլդին բորբոքումից քիչ էր մնում խելագարուէր, երբ նկատում էր, որ Թէֆլիզը ձգտում է լափշտակել Ալիշէի սիրտը. այն սիրտը որին ինքը երկրպագում և այնքան եռանդով պաշտում էր : Այս դառն վիճակում նա աշխատում էր Ալիշէի վրա, նորա բարբի-վարբի մէջ բծեր գանձել, նորան ստորացնել, նորան մոռանալ, բայց զուր, հնար չէր գտնում, մի ինչ որ զգացում որդի նման խալթում, կրճում, կսկծացնում,

մրմնացնում էր նրա սիրտը, մղկտացնում և աչքից չէր հեռացնում անտիական օրիորդի պատկերը: Անդադար Ֆէլդիի մտքի աչքի առաջ կանգնած էր Ալիշէի ուրւականը, յաւերժահարսի նման իւր կայտառութեան գեղանքի կատարելատիպով, շուրջը հիասթափումն ու ապշութիւր տարածելով: Արքան աշխատում էր Ֆէլդին խոյս տալ, մոռացութեան մասնել այդ արարածը, այնքան աւելի բորբոքւում էր իւր սէրը, իւր տենջանքը: Եթէ պատահում էր, որ երկու կամ երեք օր նորան չէր տեսնում, համարեալ թէ նա գժուում, խելագարւում էր: Բայց միանգամայն այնքան մեծամիտ, այնքան ծածկամիտն էր, որ ոչ մի կերպ, ոչ Ալիշէին, ոչ էլ նորա շրջապատողներին չէր ցոյց տալիս իւր հոգեկան վշտերը: Նրա ետը չէր զիջանում, որ նա մերկացնէ իւր սիրտը փաթաթեալ գոռոցութեան քօղից: Ֆէլդին նպատակին հասնելու համար պարսկի նման ծպտեցնում էր իւր գիմզածերը և համակերպութեան գիմակ էր հագնում, ենթադրելով որ գրանք անհրաժեշտ են նպատակին հասնելու: Նա կարծում էր, որ այդ արատները, այդ բծերը կանհետանան, կը ջնջւին իսպառ, մտադրածը գլուխ բերելուց լետոյ:

Այս սիրոյ տանջանքները բաւական չէին, հերիք չէր նրա հոգեկան յուզումները, մորմոքները, բացարձակապէս էլ նրա ետը, նրա համոզումները, նրա ձեղտումները խորաակւում էին Թէֆլիզի առաջարկած ծըրազրով: Աննի վախին գաւառական ասպարէզ էր հրաւիրում, գործի գլուխ էր կոչում Ֆէլդիին, որտեղ ինքը արգէն ստանձնել էր գլխաւոր հրամանակալի գերը: Թէֆլիզը գաւառից ուզում էր հրամայել 4. Պոլսի նը-

պատաստողներին մասնախմբին, որ իրեն այս ու այն կարգադրութիւնները իրագործեն, կամ այս ու այն նիւթերը մատակարարեն ֆ այս և այն ծառայութիւնները կատարեն :

Աէկը թողնել և ասագաստ կապել Ֆէլզին չէր կարող, չէր էլ երևակայում որ իրեն կառաջարկեն: Իսկ երբ աստորդութեան ղեկավար կոմիտեաք Ալիշէի հետ ընդունում էին Թէֆլիսի ասաջարկութիւնը, պատրաստականութիւն էին լայանում բաւականացնել և լրացնել գաւառական պահանջները: Դեռ շատերը մտածում էին ուրիշ նահանգ գնալ, պաշտօնով և գիրքով, որպէսզի կարողանան ասաջնարդել գաւառացիներին տեղական պահանջների համեմատ: Արդէն Ջաֆէր-բէլը պատրաստում էր Տրարիզան վալի գնալու, Միհրատը՝ իւր ծննդավայրը՝ Արզուրում: Տիրանը որպէս հալ յայտ չունէր իւրտ պաշտօն և բարձր գիրք ձեռք բերելու, մանաւանդ որ նա շարունակելու էր իրենց օրգանք՝ Բդէալը՝, ալդ պատճառով նա մնալու էր Կ. Պոլիս, որ խմբադրէր թերթի բովանդակութիւնը և ուղարկէր ամէն պոստով Եդիպտոս տալագրելու:

— Իսկ դուք Ֆէլզի բէլ, ասաց մի անգամ Ալիշէ խանումը, չէիք ցանկալ մի սրեւէ նահանգում մի քանի տարի պաշտօն վարել և անձամբ գործի կալել:

— Միթէ ես կարող եմ, խանում, գործից մի օր, մի ժամ, կամ բոպէ հեռանալ: Միթէ մտածում էք, որ ես կարող եմ զգացումներիս հակառակ ընթացք բռնել և պաշտամունքիցս անջաղել: Բայց . . .

— Ես ալդպէս էլ հաւատացած էի, բայց վեր-

ջերս մեր ժողովներից աւելի շատ լաճախում էք լուսաւորութեան նախարարի տունը և աւելի մեծ տեղ է բռնել ձեր սրտում Պատմէ խանումը, քանթէ ձեր հին ընկերները . . .

— Խանում, զուր կասկածներ է, անտեղի նկատողութիւններ, որ չկամորդներս ձեր ականջին հասցրել են: Ընդհակառակը ես աշխատում եմ մեր ընկերների շրջանը մտցնել մի օրիորդ ևս: Աւելի ամսից աւելի է, որն ինձ աշակերտում է, արդէն յոյս ունիմ, որ առաջիկայ ժողովին նորան ներկայացնեմ ձեզ:

— Ես երբէք կասկած չեմ ունեցել, ներեցէք պարզասրտութեանս, որ լսածներս բառ առ բառ կըրկնեցի: Բայց ինձ ասէք, գաւառ գնալու մասին ձեր կարծիքն ու մտադրութիւնը:

— Ես կարող եմ գաւառ գնալ, գործերը քննել, ուղղութիւն տալ, գործողներին ոգևորել, գաղափար կազմել, ծանօթանալ մօտիկից ընթացքի մասին, իսկ այնտեղ ապրել . . . դժւար է ինձ համար: Առանց չբնջանի, առանց եւրոպական հաղորդակցութեան, առանց մտաւոր աշխարհի ուսումնական և քննական հանդէսներին, վերջապէս առանց Բոսֆորի փեղերին ես կը բէթանամ, կը նեխուիմ, կը մեռնիմ - կը դիակնանամ: Բայց իմ կարծիքով, գործի վարչութեան ղէկը երբէք չի կարելի հեռացնել կենտրոնից: Ամէն գործունէութիւն պիտի ամփոփուի Կ. Պոլիս, ինչպէս ամէն երակների արիւնը՝ սրտում և այստեղից պիտի մաքուր ու թարմ արիւն - ոյժ ստանան գաւառական գործիչները . . . :

— Աւրեմն զուր կենտրոնացման կողմն էք, հարկաւոր էք գտնում կենտրոնից ղեկաւարել ամեն

կողմ .

— Չեմ ասում, որ ամէն կարգադրութիւն կ' Պոլսից բղիթի, ամեն գաւառ ազատ է իւր ներքին վիճակը բարւոքելու և առաջանալու, բայց գաւառների միութեան - միացոր գէպի նստատակը հասնելու համար, անհրաժեշտ է մի կոճակի վրա գցել իւրաքանչիւր գաւառի օգակը, որպէսզի հակասական ընթացքից խոյս տրուի :
— Ար այգպէս է, համաձայն էք և ապակենտրոնացման :

— Թողէք, խնդրում եմ, բաւերը, այլ խօսենք գործի մասին : Միթէ հնարուոր է առանց կապի, առանց կենտրոնական մի վերատեսչութեան, թողնել որ գաւառները որոր - մոլոր ընթացք բռնեն : Չեմ ասում, որ մենք ամէն ինչ կ' Պոլսից որոշենք ու կարգադրենք, այլ իրար ներհակ գործ չը բռնելու համար, կարևոր է մի կենտրոն, որ ամենքի՞ լարաբերութեան մէջ գնէ և ընթաց տալ հակընթաց գործունէութեան :

— Այդ գէպքում կարևորութիւն չըկալ կենտրոնի, կամ կենտրոնացման, այդ գործը կարող է կատարել մի հասարակ գրասենեակ, որը բոլոր գաւառների որոշումները կը ստղադրէ և ամենքին կը ցրէ : Իսկ գաւառներն իրենց ներքին պահանջի համեմատ ազատ կը գործեն :

— Փրասենեակ, թէ ուրիշ բան, ինչպէս ուզում էք անւանեցէք, բայց կ' Պոլսում մի մարմնի անհրաժեշտութիւն կալ : Մանաւանդ որ այս մարմինը անընդհատ լարաբերութեան մէջ պիտի լինի պետական բարձր պաշտօնէութեան հետ, որպէսզի հնարուորու-

թիւն գտնի գաւառների որոշումները գործադրել տալուն, նպաստի և աջակցի որոշումների իրագործման:

Աւրեմն դուք կը մնաք Վ. Պոլսի, գրասենեակում, ալստեղից աջակցելու գաւառացիներին և ներգործելու պաշտօնէութեան վրա.

— Այդ էլ ամենակարեւոր կէտերից մէկն է, բայց և այնպէս դեռ պէտքէ խորհել այդ մասին:

Պէտքին օրից օր ընկնում էր ընկերների աչքում, հէնց գլխաւորապէս այն պատճառով, որ այնքան բարոյական քաջութիւն չունէր, Բոսֆորի ափերից դուրս գալու և գաւառական վաշխառուների հետ բռնցկամարտելու:

Այն ինչ Թէֆլիզի վիւքարայի մէջ տարած լազթանակը էլ աւելի բարձրացրեց նրա վարկը ինչպէս ընկերների, նայնպէս Ալիշէի աչքում: Թէև ամէն օր նախարարները իրենց անտեսների, հարձերի և սիրելիների թախանձանքներից և զրոյարտութիւններից բըռնազատուած, խոստանում էին մի կերպ տապալել և հեռացնել Թէֆլիզին Վանից, բայց սա իւր ազդու և համոզիչ փաստերով սարացուցանում էր, թէ անհրաժեշտ էր իւր ներկայութիւնը Վանում, պետութեան կենտրոնական իշխանութեան պրիստիթը. և հեղինակութիւնը պաշտպանելու համար: Արդարութեան ատեաններում թէև մեծ ջանք գրին, որ ազատեն Վուրսունին, Էմբրահին և սրանց գլխաւոր թալֆաներին գատապարտութիւնից, բայց վկաների ցուցումները, Թէֆլիզի ներկայութիւնը չը թողին, որ պաշտօնակալները աներկիւղ շարժւին և տողելին քիւրդերի լեռնական իւզով: Հիէթը - Նիվամը (նախաքննիչ ատեանը)

իւր զեկուցումով զատաստանի մատնեց Գուրուենին իր բոլոր զորձակիցների հետ: Իսկ քրէհական գառարանի նախագահն ու գառախաղը ձեռք ձեռքի տուած ետացնում էին գառափարութիւնը այլևայլ պատրւակներով և անտեղի բանակցութիւններով, որոնց իւրաքանչիւր թղթի պատասխանը ամիսներից լետոյ հազիւ էր ստացւում: Թէֆլիզը ամէն մի նենգամիտ քայլի սկզբնապատճառները ժամանակին տեղեկանալով և հոտառութեամբ զգալով, անչափ բորբոքւում էր, բայց կաշառակուլ պաշտօնակալներին զինաթափ անելու հնարը չը գտնելուց բորբոքւած, լուզւած գիմում էր Բէլլէրբէլի սպարանքը, Ալիշէի օտքերի տակ թափելու սրտի մաղձը և նրա խօսքերից սփոփւելու և լուսաղբւելու:

Այս սերտ լարաբերութիւնը այնքան էր բորբոքում Ֆէլզիին, այնպէս էր մաշում նրա նախանձոտ սիրտը, որ վերջինս չը գիտէր թէ ինչ հնար գտնէ, որ կարողանար խղել այդ սերտ սրտերի լարաբերութիւնը և վերանսրոգէր իւր եթերացած լոյսը: Հմուտ ձկնորսը շատ առատ որս էր վերցրել իւր լարած ուրկաններով, բայց այնպիսի կարթ չէր կարողանում ձարել, որ Ալիշէին էլ կարթէր, կապէր, սրտի ջղերի ու մկանների հետ: Երկար գեգերումներից լետոյ, Ֆէլզին Ալիշէի նախանձը բորբոքելու տենջանքով, գնացել էր, մտերմացել լուսաւորութեան նախարարի գոտեր՝ Պաթմէի հետ: Շատ վաղ Պաթմէի ծնողները ցանկանում էին իրենց ազնկալ բաղդը կասել Ֆէլզիի ձեռքին, բայց սա միշտ խոյս էր տւել: Թէֆլիզի անչափ մտերմութիւնը այնպէս էր ներգործել, որ հակառակորդը զիջել էր բարեկամանալ Պաթմէին, Ալիշէին

բորբոքելու և գրաւելու նպատակով: Նոտ վաղ Ֆէյզին սպասում էր Ալիշէի շրթունքներից այդ օրւայ գանկատը, բայց օրիորդը կարծես գիտմամբ, արհամարելու նպատակով, չէ գիտնալ էր ձեացրել, այդ օրւայ նկատողութիւնը անչափ ուրախացրեց Ֆէյզին, որն շտապեց տոթից օգտուել և հետևեալ օրը պաշտօնական այցելութեամբ Պատմէին ներկայացրեց Ալիշէին:

Երկու օրիորները ամբողջ ժամ իրար հետ անցկացրին, խօսեցան առօրեայ հարցերի մասին, քննադատեցին իրենց հայրենիքի անարժան պաշտօնակալութիւնը և այն հարածանքը, որ հները մղում էին նորերի դէմ, երկրի արմատական վերանորոգութեան անհրաժեշտութիւնը խստովանեցին, բայց ընդհանրապէս սառն անցաւ այս այցելութիւնը: Կարծես երկու ախոյաններ իրենց մտաւոր, ֆիզիքական և բարոյական ուժերն էին չափում: Պատմէն կարգացած գրքերից և Ֆէյզի ներշնչումներից օգտուած, աշխատում էր մտքի մթերանոցի ապրանքները, զարդերը՝ վաճառականի նման ցոյց տալ Ալիշէին: Իսկ վերջինս հմուտ մասնագէտի նման, շատ աժան էր գնահատում այդ քանքարը և նկատելի էր, որ վաղ նախապաշարւած էին երկուսն էլ իրար մասին:

Ալիշէն այդ այցելութեան պատասխանեց տասն օր չեաոյ: Այս լապաղումը Պատմէն նւաստութիւն համարեց և սխալալուծ քարեր չպրտեց Ալիշէին հակառակ քաղաքավարական էտիկայի: Ֆէյզին թէև աշխատեց կատակի շապիկ հագցնել այդ լարձակումներին, բայց Ալիշէն ներքուստ անչափ վրդովեց, որը թէև չարտայայտեց, բայց Ֆէյզի աչքերից չէ կարողացաւ խու-

սափեցնել: Թէֆււիգին հետն էր տարել գաղափարական օրիորդը, որպէս զի վրէժը լուծէ Վէլլիքից՝, քանի որ նա Վաթմէի հետ էր եկել: Այս վրէժի խնդիրը այնքան պարզ չէր Թէֆււիգին, որն հոգւով աշխատում էր միացնել երկու ազգեցիք օրիորդերը, որպէս զի երիտասարդութեան նեցուկ պատրաստէր: Այս պատճառով Վանի եռանդալի նահանգապետը անշափ վշտացաւ, որ օրիորդները աւելի սառնասիրտ իրարից բաժանուեցան:

Երբ Օրթա գիւղից նաւակ նստան Ալիշէն ու Թէֆււիգը Բէլլէր - բէլի անցնելու, վերջինս չէ կարողացաւ սրտի վրա պահել վշտի բեռն ու ասաց վրդովւած.

— Ես մնացել եմ շւարած: Մենք այդպիսի զարգացած կնոջ ընկերակցութեան համար պատրաստ ենք ամէն տեսակ զահագութեան, քանի որ գեւ մեր կանաչք զարգացման այն կէտի վրա չեն, որ կարողանան հասարական գործերի համար անձնագոհ լինել. դուք ձեր այսօրուայ ընթացքով ուղղակի վանողական գերկատարեցիք: Փոխանակ այդպիսի մի ընկերուհու գրկարաց ընդունելու, դուք նախանձորդի մտրակով հարածեցիք նորան:

— Ար այսպիսի ներքին խնդիրների մէջ չէ սպրդիք, աւելի քիչ կը վրդովէք ինձ: Ես ամեն մի նոր ընկեր գտնելու, ա՛նն մի աջակցի աւելացման համար, պատրաստ եմ կեանքս անգամ զոհել, որի ապացոյցին կարիք չունիք: Ես ինչ մեղք ունիմ, եթէ Վաթմէներդ անպէտք են, նրանցից օգուտ մի սպասէք: Ես ամբողջ ժամանակն ուրիշ մտքով էր զբաղւած և նրան մարդ ընտրելու խնդիրն հազար անգամ աւելի շատ է հետա-

բրբրում, քանթէ, իւր հայրենիքի փրկութեան և ազա-
տութեան հարցը: Այս երկրորդ անգամն է, որ ես գրա
հետ անցկացնում եմ ժամերս, նամբրկած սրտով դիտում
է, նախանձոտ աչքերով ուզում է թափանձել սրտիս
խորքերը և ըմբռնել, թէ արդեօք չեմ սիրում ես էլ
Ֆէյզին, որի համար ինքն այրւում է, տանջւում:

— Ըմբռնեցի, ներողութիւն եմ խնեում, որ
ես չէի կարողացել կանխազգալ ձեր պատմածը: Բայց
և այնպէս, ես կարծում եմ, որ դուք գործի յաջողու-
թեան համար, պիտի զիջող լինէիք, մեծահոգութեամբ
պիտի ներէիք նորան և աշխատէիք ձգել և քարշ տալ
դէպի գործ: Ֆաթմէին հեռեօդներ շատ կը լինէին.
գուցէ նրանց մէջ մենք կը գանէինք այնպիսի հոգի-
ներ, որոնք պատրաստ կը լինէին գոհոգութիւններ կա-
տարելու, հասարակութեան բարւոքման գործի համար:

— Գուցէ, ես հոռեաես չեմ, բայց ջիղերս չէի
կարող զսպել և զգացումներիս հակառակ ընթանալ:
Այս կնոջից օղուտ չըկալ, նա կուրացած է Ֆէյզիով:
Եւ որպէս զի սիրեկանին ամբողջապէս գրաւէ, պատ-
րաստ է թուիտի նման պատահած ամեն մի դէմք
ճանգուել և հեռացնել իւր փալիփալածից:

— Աւրեմն դուք հին հաշիւներէք ունեցել:

— Ես ո՛չ, բայց նա Ֆէյզիին իւր ստալինը դը-
լորելուց լետով, ճիգեր է գործ դնում, որ էլ չը փախ-
ցնէ:

— Երևի ենթադրում է, որ դուք տքնում էք
Ֆէյզին յափշտակել, ասաց Թէֆուիզը հալացքը ուղե-
լով Ալիշէի աչքերին . . .

— Ատրով, գլխով նորան փէշքաշ լինի Ֆէյզին,

պատասխանեց յայտարար Ալիշէն և Թէֆուղի Հեա նա-
ւակից զուրս գալով, մտան օրիորդի ապրանքը :

Իուրսունը նկատելով որ ինքը եղբոր և իւրա-
լինների Հեա մշտնջենաւոր բանտարկութեան է դատա-
պարտուելու, զգալով որ մօլլա նէրին և խափշիկ ներքի-
նին միայն զուր լուսերով իրենց խարխուժ են, սրտեցին
և զիջան Թէֆուղի ամենամտերմին զիմելու, սրպէսզի
գործը իրենց մէջ հաշտութեամբ վերջացնեն : Էմրահը
թէն հակառակ էր եղբոր այս ծրագրին, բայց անճա-
բացած էր զիջելու, քանի որ իւր խորհրդով տրւած
հազարաւոր լիրաները ոչ մի օգուտ չը բերելուց զտա,
իրենց տամանակիր աշխատանք էր սպասնում : Թէն
դատախազը, քրէհական ասեանի քարտուզարն ու նա-
խագահը մութ մութ խոստումներ էին անում, սակի-
ներ վերցնում, բայց Էմրահը արդէն համոզուել էր,
որ Թէֆուղը պալատում, Սուլթանի ներկայութեանը
այնպիսի զիրք էր բռնել, որ փշրում էր իրեն զէմ
լարւած ամեն մի մեքենայութեան : Բայց Թէֆուղի
ամեն մի ընկերը, բարեկամը — երիտասարդութեան
ընտիր վարդերն էին — մի մի անսովի ամբոց էին ներ-
կայացնում : Երկար քննութիւններից և զեզերումնե-
րից լետոյ, մի օր Էմրահը բաղխեց Ֆէլղի դուռը : Երբ
հասկացաւ Ֆէլղին ինզրի էութիւնը, ճանապարհ գրեց
Էմրահին և ուրիշ անգամ էլ չընդունեց :

Թէֆուղի միւս ընկերներն էլ դունից վոնդեցին
այդ աներեսին : Իսկ Էմրահը չը լուսահատուեց, գիմեց
Ֆէլղիի, միւս ընկերակիցների վտերիմներին, բարեկամ-
ներին և ազգականներին : Ամբողջ ամիս ամէն դունից
նրան բացատում էին, բայց Էմրահը տուանց կտարւե-

լու գիմում էր ուրիշների: Նա ազուններ էլ կաշառով էր բաց անել տալիս և շատ տեղ էլ անտեսներին կաշառելով, նրանց միջոցով ստիպում էր տէրերին իրեն ընդունելու, խնդիրքը լսելու և միջոցներ ցույց տալու:

Թէֆլիզը երկար տանջուեց, որպէսզի համոզէ Ալիշէին զիջանելու Փաթմէին և գորա հետ մտերմանալով, միանալով՝ միջոցներ գտնել, վիւքեարալի կանանց շրջանը մտնելու: Գեռահաս երիտասարդը նկատի առնելով, որ փաշաների տան անտեսները իրենց տիրուհիների միջոցով կարողանում են ազդել իրենց տէրերի՝ մեծամեծ պաշտօնակալների վրա, իրերի ընթացքը, գործերը շրջում են վաշխառուների և հարստահարողների ցանկացած կողմը, մտածում էր, այդ կանանցից մի շրջան ստեղծել, մի գորեղ ընկերութիւն կազմել, որպէս զի զրանք ոչ միայն աջալրջութեամբ հսկեն անտեսներին և փշրեն նրանց թակարդները, այլ կարեւոր գէպում գործերը երիտասարդութեան ցանկալի կողմը թեքեն: Ալիշէն չը կարողացաւ չը զիջել, Թէֆլիզի թախանձանքները անհնար էր մերժել: Որպէսզի մի նոր տեսութեամբ կարողանայ հաշտեցնել և կապել իրար հետ օրիորդներին, Թէֆլիզը պարտաւորւած երեք-չորս անգամ այցելեց Փաթմէին և իւր ճարտար լեզուով ուղեց նորան համոզել, որ, լանու՛ն իրենց ներական գործի, զիջանի աջակցել և հասցնել նպատակներին:

Թէֆլիզի այցելութիւնների պատճառն, որքան որ հաճելի էր Փաթմէին, այնքան էլ տհաճոյ էր նորան միջնորդութիւնը՝ Ալիշէի հետ մտերմանալով, միացած գործելու: Փաթմէն ինքն էր ձգտում կեն-

տրան կազմել և շրջապատել երիտասարդութիւնով ու
կ. Պոլսի խոյսմ ազգաբնակութեան բանիմաց խանութնե-
րով: Յատկէն հասել էր մի այնպիսի կէտի, թէ
մտաւոր դարգացումով, թէ բարեգործական - ընկերա-
կան աջակցութիւններով, որ նորան երկրպագում էին
շատ ու շատ խոհուն գլուխներ, որոնք յուսադրում
էին, վստահացնում էին, թէ ինքն էլ կարող էր մի
բայն շրջան առաջ բերել և զեկափարել թուրք երիտա-
սարդութեանը: Այս պատճառով շատ դժուար էր նո-
րան համոզել, որ իւր շրջանով զայ միանայ Ալիշէի
խմբին: Արքան որ մտերմական էին բանակցութիւնները,
որքան որ նոյրական էր նպատակը, այնքան էլ խնդի-
րը օրից օր բարդւում էր: Կործի սիրուն համար
Թէֆլիզի արած զիջումները ոչ միայն փքացրին Յատ-
կէին, ոչ միայն խրախուսեցին աւելի առաջ մղելու
իւր պահանջները և պայմաններ առաջարկելու, այլ
մինչև անդամ Յատկին, լափշտակած երևակայական
բողբոսութիւնով, իւր շրջապատողներին նախապատրաս-
տական ժողովի հրաւիրեց և մի մասնախումբ կազմե-
ցին ծրագիր կազմելու:

Յատկէի այս հրապարական կուռի կոչից լեռույ,
Թէֆլիզը այնպիսի լանդիմանութիւն ստացաւ, այնպի-
սի անել փիճակի գրեց իւրայիններին, որ նա խելագար-
ւածի նման չէր ըմբռնում արածն ու գրածը:

2

Թէֆլիզին հետամուտ էր ԷմբաՆը, որպէսզի
ուսումնասիրէ նորա ընթացքը, ճարէ սրտակից - խոր-
հրդակիցները և հնար գտնի փրկելու եղբօրը՝ Գուրու-
նին, իւր գլուխը և իրենց Լեւիական թալֆայականներին:
Նկատելով Թէֆլիզի այցը Փաթմէ խանումին, նա
միջոցներ գտաւ և ներկայացաւ լուսաւորութեան նա-
խարարութեան զստեր խնդրելու, որ իրենց հաշտեցնէ
այդ հաստատամիտ ու յամառ հակառակորդի հետ:
Փաթմէն այնպէս էր ուսումնասիրել Թէֆլիզին, որ
հաստապէս ասաց ԷմբաՆին:

— Բարեկամս, ձեր մէջ հաշտութիւն չի կա-
րող կայանալ, զուր է ձեր տենջանքը: Գուր ըրքան
էլ որ զիջումներ անէք, Վալին՝ Թէֆլիզ փաշան նորա-
նոր պայմաններ պիտի առաջարկէ, մինչև որ ձեզ
լիովին զինաթափ անէ, այսինքն աղքատացնէ և փո-
ղոցային մշակների դասի հետ հաւասարեցնէ: Գուր
ուրիշ ճար փնտոեցէք, հաշտութիւնով ազատել չէք
կարող:

— Հապա ինչ անենք, խանում, ում գիմում
ենք, մեզ չեն ցանկանում օգնել, մեզնից երես ևն
չուն տալիս: Ի՞նչ մեղք ունինք, միթէ մենք էլ
Մուհամմէդի հիւմմէթից - չենք: Փրկեցէք, ազա-
տեցէք մեզ:

— Ի՞նչ կարող եմ անել, ես մի թող կին եմ,
Գ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

ինչ ոյժ և ինչ հնարաւորութիւն ունիմ անելու :

— Եթէ ցանկաք, կարող էք ձեր բարեխօսութիւններով մեզ անկումից ազատել .

— Չարագործներին կախաղան էլ կը բարձրացնեն, գնդակի էլ կը բռնեն, ողջ ողջ կրակն էլ կը գցեն : Այդ ինչ նենգութիւններ էք կատարել :

— Խանութ, միթէ գուք էլ չէք հաւատում, որ մենք անընդունակ ենք այդպիսի նենգութիւններ կատարելու : Քուրդը միթէ կարող է խարդախել : Այն բոլոր թղթերը և գործերը Վալին կատարել է գեափուր հայերի հետ : Երբ մենք վշտացած, ուզեցինք գործը սուլթանին յայտնել, այն գեափուր հայը այնպիսի թակարթներ լարից, որ մեզ գլորեցին անդունդը :

— Ստում ես, Էմրահ - բէգ, գաղտնի քննիչը, գատախազը, բարձրագոյն ատեանը երբէք չէին զիջել, չարագործ հայերին բաց թողնել, միւսլիմներին կալանաւորել և տանջել :

— Ինչ լեզուով խօսենք, չեմ գիտեր, ինչ բառեր գտնեմ, որ ձեզ կարողանամ համոզել, թէ մենք արդար ենք : Այս բոլոր կուռի պատճառը այն է, որ հայերը տքնում են երկրի արդիւնքը սեփականել, վարչութիւնը ձեռք ձգել և մի օր էլ մեզ ասել .-

— Կրմանջներ, կորէք, գնացէք մեր երկրից : Իսկ դուք, ձեր ընկերակիցները, արդարութեան պաշտօնակալները չէք ըմբռնում, թէ ինչ թակարդ են լարում հայերը իսլամների համար :

— Մեր սուլթանի պաշտօնակալները այնքան հաւատարմութիւնով և աշայրջութիւնով են հսկում

երկրում չարագործ և վնասարեք խմբակների քալերը, որ նրանց աչքից խոյս տալն անհնար է: Եթէ որևէ դաւադրութիւն լինէր, անպայման նրանք այժմ բանտարկւած կը լինէին:

— Ախ, խանութ ևս գոհ՜իկ գաւառացի, քուրդի սերունդ, իսկ Թէֆլիզ փաշան Պոլսեցի ճարտասան, լայտնի բան է իմ խօսքերս չեն կարող ներգործել և թափանցել դատաւորների սիրտը . . .

— Քու սովիները սղոցաձև սնդուկներն էլ կարող են փշրել, ներս մտնել, ինչի՞ չըպիտի ներգործեն և խոնարհեցնեն դատաւորներին, որոնք գիշեր-ցերեկ դաւաճաններ են փնտռում, սրպէսզի իրենց գործ բացւի, թէ խալիֆի աչքը մտնեն և թէ գրպանները լըքցընեն:

— Այդ դատաւորներից մէկը դուք դարձէք առժամանակ և ինձ լսելով, վճիռ կալացրէք: Եթէ արդար եմ, ինձ օգնեցէք, իսկ եթէ մեղաւոր դատապարտեցէք:

— Աեզ նման խնդրոյին և աղերսողին չեմ կարող լսել: Քաջերն են միայն իրենց բողոքի ձայնը ամեն տեղ հասցնում և ստիպում, որ նրանց բողոքները լսեն և կատարեն . . .

— Թոյլերի համար ուրեմն արգարութիւն չըկալ, խանութ,

— Այդ դուք էք ասում:

— Աւրիշ, ասաց Էմրահը մտախոհ.

— Դուք էք իմանում, ասաց սառն կերպով Փաթիմէն ու լոեց:

Էմրահը դուրս եկաւ մռայլ և բարբոճւած: Նա

որս մոյոր Գարաթաշի փողոցները թափառում էր ամբողջ օրը, չը կարողանալով վճռել, թէ ինչ ընթացք բռնէ: Էմբա՛հը անզգալաբար երեք չորս անգամ գնաց դարձեալ Փաթիմէի տան կողմը և ետ դարձաւ: Նրա աչքերը միմտեղ էին, ոչինչ չէր տեսնում և ոչինչ չէր զգում: Փաթիմէն նրան նկատելով իրենց գոների առաջ թափառելիս, ասաց, մտքումը.

— Այդպէս էլ հարկաւոր է, վագրը արիւն տեսաւ, նրան էլ մարդ չի կարող զսպել: Երկու որսը մի անգամից:

Էմբա՛հը մինչև արևի մայր մտնելը թափառում էր փողոցներում, ծանր ծանր շնչելով և անվերջ հաւաստելով: Երբ միտանը անցաւ Ղալաթաի կամրջից դէպի Կ. Պոլիս, նա ասաց շշնջալով.

— Էլ ուրիշ միջոց չը մնաց, կամ նա, կամ ես:

Թէֆլիզի բանակցութիւնը Ֆիասկօի ենթարկելուց լեռոյ, կողմերն սկսեցին լայնապէս իրար ներհակ ընթացք բռնել և հակառակութիւնները օրից օր աճում էր: Այլիշէի շրջապատողներին ծաղրում էին Փաթիմէականները, վերջիններս էլ արհամարում էին իրենց բարոյական սնանկութեան համար՝ հակառակորդներից: Բայց և այնպէս Այլիշէականները հսկայական քայլերով առաջ էին գնում, մտնելով Կ. Պոլսի ամեն մի խուլ անկիւնը և նրանց զաղափարը բերանացի կամ խերթերով քարոզում էր ամբողջ յժուրքիայում:

Գատափարութեան օրերը մօտենում էին: Կ. Պոլսի քրէհական գատարանը սլիտի զբաղւէր Թէֆլիզ

փաշայի դէմ քրդերի կողմից լարւած դաւադրութեան
խնդրով: Արդէն Գուրուանն էլ իւր Թայֆայականների
ետեից եկել, հասել էր Կ. Պոլիս: Մօլլա Նէրին՝ Գուր-
ուանի գործակալը և արտաքուստ ներքինին մեծ փաս-
տաբաններ էին վարձել, թէև համոզւած էին, որ դա-
տը տարւելու էին: Էմրահը ծպտեալ թափառում էր
Կ. Պոլսի և շրջակայքի նեղ նեղ փողոցները, այդեւ-
տաններն ու նաւամատուցները: Մի ժամանակ ստիկա-
նութիւնը նրա հետքը կորցնելով, կարծում էին, թէ
փախել է: Շատերը տարածում էին, որ նա դատաւա-
րութիւնից վախենալով գնացել է Տրիպոլիս: Եղան այն-
պիսի անհատներ, որ վկայեցին, թէ նրան տեսել են
շոգենաւում, Չմիւռնեայի ճանապարհին, կամ նոյն իսկ
Բէլուսում: Թէֆլիզը նրա անհետանալուց բոբբօքւած.
ամբողջ օրը նրան փնտռել էր տալիս իւր ծառա-
ներին:

Այդ օրերը Ֆէլզին ընկերակիցներին ժողովի հը-
րաւիրեց Ալիշէ խանումի սուլնը և երկար բարակ ա-
ռաջաբանից լետոյ, առաջարկեց մի մասնախումբ կազ-
մել, մշակելու կանոնադրութիւն վիլայէթների գործիչ-
ների միութեան և յարաբերութեան համար: Թէֆլիզը
հակառակեց այդ առաջարկին, առարկելով որ մի այդ-
պիսի կանոնադրութեան անհրաժեշտ է, որ մասնակ-
ցեն բոլոր գաւառները՝ իրենց լատուկ ներկայացուցիչ-
ներով: Ախճարանութիւնը սուր կերպարանք ստացաւ
և վերջապէս ժողովը քւէարկեց ու ընդունեց Թէֆլիզի
բանաձևը: Այս պարտութիւնը այնպէս բոբբօքեց Ֆէլ-
զին, որ նա կտրեց իւր բոլոր կապերը և այդ ժողովից
ուղղակի բաժանուեց ընկերներից, անցաւ Փաթիմէի կոյ-

մը, որն արդէն ինքն էր ստեղծել:

Այս կորուստով էլ շննկճւեցին Ալիշէի բնկերակիցները: Չափէբը և Միհթատը անմիջապէս մեկնեցին դէպ իրենց պաշտօնատեղին՝ Տրաբիզոն, Արգուրում, ծառայելու իրենց կոչմանը և ազատելու ազգարնակութիւնը կաշառակերների, սոփիստների և վաշխառուների ճիրաններից, ուսումնարաններ բանալով լոյս գիտութիւն տարածելու, արհեստները զարգացնելու, սրպէսզի թշուառին նպաստեն կարգին ապրուստ հայթայթելու: Թէֆլիզը այնպիսի կարապետ էր եղել, որ բորբոքել էր երիտասարդների սիրտը և կապել դաւառի ազգարնակութեան հետ, որտեղ օդը այնպէս ապականուած չէր, այնպէս նեխուած չէր, ինչպէս և Պոլսում:

Թէֆլիզը բոլոր գործերը վերջացրած, փնտռում էր էմրահին և սպասում էր գատափարութեան օրին, որից անմիջապէս լետոյ մեկնելու էր դէպի Վան: Ամէն առաւօտ և իրիկուն նա ժամերով խօսում էր Ալիշէի հետ իրենց գործի բնթացքի մասին և ծրագիր էին կազմում ապագայի համար: Ալիշէն սաստիկ վերաւորւած էր Ֆէլզիի բնթացքից և չը կարողանալով կրքերը զրսպել, լաճախ ասում էր.

— Այս մարդու եսը այն աստիճանի զօրեղացել այնքան խոր արմատներ է գցել, որ ես վախենում եմ, թէ սա էլ մի նոր աղա, մի նոր սոփիստ, մի նոր բռնակալ ամիրա չը դառնալ: Առ այժմ, որ ոչ մի գործ չէ շինել, ոչնչով չէ ցոլց տուել իւր ռօզտակարութիւնը, ոչ մի գոհօղութիւն, ոչ մի վտանգաւոր քայլ չէ արել և բոլորից անսպաման հպատակութիւն է պահանջում, եթէ մի անգամ գաւառ գնալ, կամ մի գոհօղութիւն

կատարէ, դուցէ ոտքերը մեր ուսին է դնելու և պատ-
դամներ կարգալու: Ի՞նչ, միթէ առաջադիմական և ար-
մատական գաղափարները իւրացնելով, լեղաշրջական
պատմութիւնները ուսումնասիրելով, կարծում է, թէ
ինքն է այդ աշխարհային անցքերի ղեկավարն ու հե-
ղինակը: Հաւատացած եմ, որ նրանից շատ լաւ այդ բո-
լորն ըմբռնել են մեր միւս ընկերակիցները, աւելի
մարմինն ու ջիղ են շինել իրենց համար և իւրացրել
առաջադիմութեան ոգին: Ամէն անգամ իւր կամքը
առաջ տանելու համար, խօսքերին այնպիսի տօն է տա-
լիս, որ իբր թէ դիմացիները չեն հասկանում, միայն
ինքն է, որ ըմբռնել է: Թշուառը չը գիտէ, որ այդ
հարցում հեղինակութիւն ունեցող անձնաւորութիւն-
ների սրտում - եսը — եթէ չի ջնջւած, գոնէ այն-
քան նւագած է, որ չի կարելի գոյութիւնը նկա-
տել:

— Այդ է, որ ինձ տրաքացնում է, դրա եսն է
ինձ սպասում, բունս, դադարումս կտրում: Բայց ինչ
օգուտ, այն երիտասարդները, որոնք ամէն խօսքի մէջ
կրկնում են, թէ իրենք չեն չարոզ բռնակալների հպա-
տակւել, չեն զգում, որ իրենց մկի նման խաղացնում է
Ֆէյզին և ոչ ոք սիրտ չի անում նրա գերիշխանական
ձգտումների դէմ բողոքել: Կարելի է տանել մի ան-
տաշ փաշայի, մի վալրենի դէրէ - բէլի, մի անկիրթ
շէլիսի, մի կրօնամօլ սոֆիստի, մի ոչխարային Իմամի
տեսակ տեսակ կամօյականութիւնները, բայց կրթւած
մարդու գաղափարակցի բռնապետութունը - երբէք:

— Աղալութիւնը, եսականութիւնը ժառանգել
են պապերից, ասաց հառաչելով Ալիշէն, դա սերնդական ա-

բառ է, զեռ սրանց որդիների և թոռների սրտից դրժ-
 փար թէ Հնարատ որ լինի դուրս զցեղ: Քրտութիւնը և
 կրթութիւնը պիտի ազատեն սրանց ալդ արատից: Մա-
 տապարտում են իրենց բռնակալ իշխանաւորներին, չեն
 զգում, որ իրենք էլ նոյն ձեռք բռնանում են ալն
 անձնաւորութիւնների խղճի վրա: որոնց զազափարակից
 են անւանում:

— Նոր սերունդը, զաւտացին պիտի Հարածէ
 զրանց, ասաց Թէֆուիզը ողևորած, ես Հաւատացած եմ,
 որ նրանք անշնոփ ազնիւ են ալս ալլաւսեւուած մալլա-
 րազաբացիներից, բալց ինչ սգուտ որ ալդ ներքին
 կռիւն ու Հարածանքը պիտի դժարացնէ և զանդազա-
 ցընէ լառաջագիմութեան գործը:

Նրանք վրդոված լսեցին: Երբ քիչ լետոյ Թէֆ-
 փզը ստքի ելաւ և պատրաստուում էր գնալու, Ալիշէն
 ասաց.

Մեր էք շտապում, ինչի ինչ մենակ էք թող-
 նում ալս վրդովման մէջ: Անացէք, մնացէք մի երկու
 մամ էլ, կը խոսենք: Կարող էք ալստեղ էլ գիշերել:
 Աէլցին իւր լնթացքով բոլորովին գոյնը դուրս աւեց:
 Ես Հոգով վերաւորեցի, անսահման վշտացալ, որ նրա
 մասին սխալ զազափար եմ կազմած եղել: Այս կասկա-
 ծանքը վաղ ծնել էր գլխումս, բալց ես չէի ուզում
 Հաւատալ իմ զգացումներին, որոնք տարարազառար
 իրականացան: Քաղցր լսիւերն ալնքան դուրեկան են, որ
 մարդ ահամալ ինքն իրեն խարումաէ, ևնթագրելով որ
 կարող են իրականանալ անուրջները բալց դուք
 դարձեալ պատրաստուում էք:

— Աւրախութեամբ կը մնայի, բալց . . .

Գիշերեցէք այստեղ, մի գնաք, ինչ մի թողնէք մեկնակ այս գիշեր, . . . Անտանեյի է վիճակս, ներկայութիւնդ ինչ քաջայերու՛մ և կեանք է ներշնջում :

— Պատրաստ եմ ձեզ օգտակար լինել, բայց ներեցէք, որ ժամադիր եմ : Ինչ խոստացել են այս իրիկուն մի պատասխան բերել է՛մբա՛հի մասին . . . :

Վազը կարող էք իմանալ, թողէք ինչ հանգիստ և նստեցէք :

— Ես տանը տասը բողէից աւել չեմ մնալ : շրամայեցէք ձեր նաւաստիներին ինչ տանեն ու վերադարձնեն : Մինչև մի ժամ ինչ ժամանակ տւէք, ես անպատճառ կը վերադառնամ :

Չինդ բողէից լեռոյ նաւաստիները պատրաստ էին : Թէֆուրը Ալիշէի ուղեկցութեամբ իջաւ գաւիթ, բացեց նաւամատուցի դուռը, նստաւ նաւակը և դուրս եկաւ Բասթարի ասիւր : Այդ միջոցին ծովափի նեղ փողոցից՝ միմուսը կանգած մի մարդ առաջ եկաւ և ատրջանակը ուղեկցով Վանի վայրին, գնդակը հասցրեց ճիշտ նրա կուրծքին, որը ծակեց ու անցաւ : Միտիտեան մէջ գոռաց շարագործը՝ էմբա՛հը :

— Իմ գնդակը չի վրիպիլ, Թէֆուր փաշան, ու հեռացաւ, փախաւ :

— Իտրանագործին բռնեցէք, օգնեցէք, հասէք, ասաց Թէֆուրը և ընկաւ նաւակի լատակին :

Ալիշէի մարդիկը անմիջապէս դուրս թափուեցան ճրագներով և ազագակներով, ընկան շարագործի հետքից, բայց սճրագործը մութ փողոցներից սրացաւ, մրտաւ ծուր ու մուր փողոցներ և անհետացաւ : Էմբա-

Տի հետքը չը կարողացան գտնել: Նուակը ետ դարձրին: Թէֆլիգի արիւնտհաս, կիսասունչ գիակը տարին տուն, որտեղ Ալիշէի գրկում հոգին աւանդեց, չըկարողանալով ցաւը նորան բացատրել երկու խօսքով:

4. Պոլսի ստիկանապետի ընկերակցութեամբ արտակարգ գործերի քննիչն ու դատախազը այդ գիշերը խուզարկեցին Թէֆլիգի ու Ալիշէի տները, արձանագրութիւն կազմեցին ինչպէս մարդասպանութեան, նոյնպէս այդ տեղերում գտնուած կասկածելի գրութիւնների և մնասակար թերթերի ու գրքոյկների համար, որոնց մուտքը արգելւած էր թուրքիս: Էմրահը առաջ ընկած քննիչին ցոյց էր տալիս այն տեղերը, ուր խորւած ու զաղւած էին այդ առարկաները: Թէֆլիգից լետոյ չը գտնուեց մի մարդ, որ կարողանար բացատրել Էմրահի մեքենայութիւնները, պատտռել նրա գիմակը, և շարադործին արժանաւոր պատժին հասցնէր:

Գատաւորները բոլորովին իրենց գատաւարութեան ընթացքը փոխեցին, դատախազը ներում խնդրեց Գուրսունի, Էմրահի և նրանց թայֆալականների համար: Քրէհական գատաւորները քննելով գործը և Գուրսունի ոսկիները, նրան արգարացրին, որը նորանոր շքանշաններ ստանալով վերադարձաւ Վան, բազմելու իդարէի ժողովում: Մօլլտ Նէրին Վանի վիլայէթի վալիանւանուեց՝ նաքի փաշա դառնալով: Ներքինին նորից պատմաւ ներքինապետի օգնականի պաշտօնով: Տրածնից և Արզուրումից ետ կանչուեցան և Աքէա աքրւեցան Ջաւադ և Միհթազ փաշաները: Նախանետ-

նին առանց քննութեան հրաման տրեցաւ կախելու, բայց սուլթանը ներում շնորհելով, մշտական բանտարկութեան դատապարտեց Աքիալի բերդում: Ալիշէին, որպէս նախկին լայտնի փաշայի և մօր կողմից Քրանսուհիի դստեր, Փարիզ աքսորեցին: Պատրիարքարանը ետ կանչեց պատրիարքական փոխանորդին, նրա տեղը հին եպիսկոպոսին լանձնելով:

Տիրան բէլը նկատելով իւր դրութեան վտանգները, անշշուկ հետեւեց Ալիշէին, որտեղ շարունակում է իւր «Ի դէ ալի» խմբագրութիւնը և յօյս ունին Ալիշէի հետ նորից խմբել և կազմակերպել իրենց ցրած ուժերը: Փաթիմէն ցրելով իրեն շրջապատող երիտասարդներին, ամուսնացել է Ֆէյզիի հետ, որն ստանձնել է գլխաւոր գրքաքննիչի պաշտօնը լուսաւորութեան նախարարութեան դռնում, հալածում է «Ի դէ ալը» առարկելով որ դեռ շատ վաղ է այդ մտքերը թուրքերի համար:

31 Մարտի 1893 թ. Թիֆլիս

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ

Վ Ե Պ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՏԱԹԻԻՆՆԵՐԸ

ԸԼՄԸՍՑ թրքահայերի կեանքից գինն է	2 ռ.	10 զո.
Խեի - ՎԵՐԲՊԵՏ -	1 ռ.	5 -
ՔՅՈՒ - ԵՂԻԿ	30 կ.	30 շՆ.
ՃԽԵՑՑ	30 կ.	30 շՆ.
ՓՐՈՒՆԳՆԵՐ	30 կ.	30 շՆ.
ԲԵՐՄԸՆ ԸՌՒՔԷԼԷ	25 կ.	25 -
ԽՈՍԻ ԱՍՄԲԷՋՆԵՐ	10 կ.	10 -
ՊԵՏԿԵՐՆԵՐ թրքահայերի կեանքից	1 ռ.	5 զո.
ՎԵԻՔԵՐԼԵՑԻ ԳԵՂՏՆԻՔԸ	1 ռ.	5 -
ՃՈՒՃԸՆ Ողբերգութիւն	1 ռ.	5 զո.
ՍԵՐԵՔ	30 կ.	30 շՆ.
ԽԸԼԻՓԸԹ Պատմական տեսութիւն :	30 կ.	30 -

Գիմսի թիլիսի կեդարանական և Գուտաէմբէրգ Գրա-
 վաճառանոցները և Կովկասի քաղաքների հայ գրա-
 վաճառներին :

Գրավաճառները կարող են գիմել նոյնպէս.

TAURIS (Perse) & ATRPET

որոնց կը լինի սովորական 20 օ գիշումն :

ԱՐՏԱՏՊԱԾ

Տարազ - Հանդիսի № 37 — 40 1893 թ .

4

ԽԱՌԱ - ԽԻԽԱ

ԽԱՌԱ - ԽՐԻԱ

Պ - Ի Է Է :

Ա

— Մայրիկ, սոված եմ, մի կտոր հաց, ասաց զարթելով մանուկը մօրը :

— Համբերէ գառնուկս, քիչ համբերէ, հայրիկը հիմի բազարից կրբերէ, ասաց Նունա բաջին և հառաչեց տղին մօտենալով : - Առաջ վեր կաց, լացւիր, հագիր տղամարդու պէս, լետոյ հաց ուզէ և խտակ ձեռքով կեր :

— Քաղցած եմ սիրտս խառնում է, ըհը, ըհը, սկսեց տրտնջալ երեխան :

— Գու խելօք տղայ էիր, իմ խօսքն հասկանում էիր, քեզ ինչ եղաւ, հիմի ուր որ է՝ հայրիկդ կըզայ, խրախուսելով հագցնում էր Նունան երեխային շորերը : Տխուր էր մօր գէմքը, թէև Նա ցանկանում էր ժպտող երևալ :

Մայիսի սկզբներում սրանից քսանուձէկ տարի առաջ, (1872 թ.) Կարինի էրզինգեանի — դռան թաղի մի խրճիթում ապրում էր Նունա բաջին (քոյր) : Ամուսինը՝ Նարիմանցի Մամօն էր, սրը փայտ կտրեւելով էր պահում իր ընտանիքը, բայց դուռ - դրացի ճանաչում էր իսկապէս Նունային, ամեն տեղ լիշուում էր Նունայի անունը, ամենքը ասում էին, Նունայինց Մա-

ման : Ամէն գրկցի գործի օղնութեանը հասնում էր նուեան, ամենքի հետ մօր ու բրօջ նման էր վարուում և թէև վարձատրուում էր, բայց շատերին ինքն էլ էր նպաստում, և բամակից զարա-խրիտան (գործի մէջ հազսեյի սև շոր — միտնոց) երբէք չէր հանում : Փոքր ընտանիք չէր, նուեան ունէր շորս որդի, որանցից երեքը փոքրիկ աշակերաններ էին գարբնի, մաշկակարի և սափրիչի մօտ, իսկ շորորդը վերև լիշուած երեխան էր, շորս էլ աղջիկ, ամենափոքրին զեռ գիեցնում էր մայրը :

Մեծ աղջիկը՝ Էսման, որ նուեայի անգրանիկ գաւակն էր և հազիւ տասնուհինոց տարւան լինէր, աւելում էր բակը : Պարզ էր որը, արեղակը զեռ հազիւ մի նիզակի բարձրութեամբ բարձրացել էր լեռան գագաթից, սարի, ձորի, գաշտի գալարը իրենց արծաթափայլ ցողերով ծփում էին և անթիւ ճաճանչներ սփռելով խառնազնում ու զմայլեցնում գիտող աչքերը : Էսմանն էլ փշոտ թփերում աճած ու բացւած կոկոն վարդի նման, թէև աղքատիկ միտնոց հնտախներում փաթաթւած, բայց զեռահաս շքնաղ սրտակերով զբաւում էր անցնող-գարձողի ու շագրութիւնը : Նրա բարձր հասակը, բարակ մէջքը, բոլորակ գէմքը, խոշոր ու սև սև աչքերը իրանց երկար թևթևիչքներով ու թաւ ունքերով, բազմահիւս սաթի նման փայլուն ծամերը, մինչև արմուկը բաց ձիւնի նման սպիտակ դաստակները կարող էին ամէն մէկի ու շքր գրաւել :

Տխուր էր խեղճ օրիորդն էլ, աւելում էր և երբեմն երբեմն կանգնելով՝ դիտում էր շուրջն ու հասնում : Քուցէ նա էլ սոված էր, նա էլ բազց էր զգում, գուցէ հոգեկան բազց ունէր . . . Այդ միջոցին

փողոցից անցան Հաջի Արղայի ընտանիքի բազմերանգ ջարդեահաները (եզի լծւած մի տեսակ ծածկւած կառչ, որով ճանապարհորդում են թիւրք կանայք), որոնք գնում էին Ելիջայի ջերմուկները՝ ամառանոց: Էսման նկատեց Հաջի Արղայի դեղնած աղջկան իրա խառախրխալով (գիպակ շրջագգեստ), զարդարւած թանկագին սկիւներով և գոհարներով: Մոռացաւ գլուխը խեղճ աղջիկը, յափշտակեաց, մօտեցաւ դրանք պճնածներին աւելի լաւ դիտելու համար ու աչքերը լառած երկար ժամանակ մնաց սառած, դրան սէ ո վ ի ն կրթնած: « Ջառ - խառա խրխան » (սկիւթեկ գիպակով շրջագգեստ) գրաւել էր նորա աչքը, բայց նորա գեղն էր վաղուց գրաւել Հաջի Արղայի որդու՝ Եօմէրի սիրտը, որը առթից օգտւելով՝ երկու անգամ ձիու գլուխը ետ դարձրեց Էսմային կրկին ու կրկին անգամ դիտելու և փափազն առնելու լոյսով:

— Էսման, գոռաց յանկարճ Նունան ներսից, Էսման, ոչ ու փուշ, էդ սրտեղ ես, շուտ արա, պրծիր:

— Ահա պրծալ, մայրիկ, պատասխանելով շտապեց գործին թշուառ աղջիկը, սրտի խորքից ծանր կերպով կրկին հռոաշելով:

— Ինչ ո՞վ կտալ զառ - խառա - խրխա, ասում էր մտքումը խեղճ Էսման և մտածում, թէ որքան կըսազէր իրան ալդպիսի թանկագին յարերը: Աարախրխա (մխրոց սև « հասարակ կապուտ կտաւից » շրջագգեստ) շատ եմ գտնում:

— Էսման, պրծիր, երթանք, կրկին բզաւեց մայրը և աղի ձեռքից բռնած գուրս եկաւ: Էսման արդէն

վերջացրել էր գործը :

— Դէ՛հ, էհրամդ ծածկիր, երթանք, ասած ու երկնցուց աղջկան շագանակագոյն բրդէ ծածկոցը :

— Ե՛ս դարա - խրխալով (մխնոցով) ինչպէս գամ, մայրիկ, հարցրեց դողդոզալով Կաման :

— Չէ, խառա - խրխաղ ես հագնելու, պատասխանեց զայրացած մայրը, ուր ենք գնում, որ . . . եղնջի ձորը : Դրան ինչ է եղել, թէ զաթ զաթ սընդուկում դարսած ունիս, գառ խրխաներ, ուզում ես մէկ մէկ ցոյց տալ աշխարհին :

Աղջիկը զղջաց տւած պատասխանի համար :

— Այ՛ման, ասաց Նուենան երկրորդ աղջկան, որը հագիւ տասներկու տարւան ինէր, արի դուռը փակիր, քօլքերիդ լաւ մտիկ տուր, դուրս չըգաս, մենք շուտ կըգանք : Մինչև մեր գալը՝ գուլպադ սիտի պըծնես :

— Մայրիկ, սոված եմ, կրկնում էր դարձեալ երեխան արտնջալով :

— Գնանք, հիմի այնքան սինձ քաղեմ քեզ համար, էրիժնակ, զօխ, ձորը լիքն է :

Բայց մօտիկ տեղերում այնքան սոված քաղմութիւն էր լցւած, որ ոչինչ չէին թողել, ամեն կողմ հարս, աղջիկ, երեխայ, հալ - թուրք լիքն էին, սէտք էր հեռու գնալ մի բան ճարելու համար : Մայր ու աղջիկ էհրամների մէջ պլւած, սալաները ձեռքերը՝ գնում էին ձորի միջով երեխին էլ քաշ տալով : Խեղճ Նուենան մի սնձի, մի զօխի մի էրիժնակի փշի համար որքան գէս ու գէն էր ընկնում, որ մասամբ կարողանայ զուակի քաղցը լաղեցնել : Կամանն էլ անմուռնչ կկգած ժայռերի տակ, քարեր մէջ եղինջ էր քաղում ու լըց -

նում սալան (կողով) :

Կէսօրը մի ժամ անցած՝ հազիւ նրանք վերադարձան տուն, հեռները երկու սալա եղինջ բերելով, որոնցից մէկը՝ Նունան շանապարհին իրանց դրացի պղնձագործ Մատօի գուռը, զարկեց ու կնոջը՝ Նազիին լանձնեց : Փայտահատ Մամօն զեռ չէր վերադարձել, իսկ երեսան անընդհատ կրկնում էր՝ սոված եմ, քաղցած եմ : Նունան օջախը լիտուեց և սկսեց եղինջը լւալ : Այդ միջոցին գուռը զարկին : Կաման գուռը բացեց և Նազին ներս մտաւ սալան ձեռքը, որի երեսը ծածկել էր մի կտորով :

— Նունա բաջի, ինչի ներս չեկար, դանից դառնայն էլ նոր ես սովորել :

— Շտապեցայ Նազի ջան, որ մի բան եփեմ, հիմի ուր որ է, եղբայրդ կը գալ : Կս ինչ է ասաց սալալի երեսը բանալով և սահանով դառուրմէն վեր տանելով :

— Եղինջը առանց դառուրմի (տհալ) կեփւի, գիտեմ, որ դուք դառուրմա եփելու սովորութիւն չունիք :

— Եղպէս ես անում, որ ես էլ չեմ գալի ձեր տունը, խարւեցայ մի սալա, եղինջ բերի, էս էլ փոխարէն . . .

— Նունա բաջի, էղպէս խօսքերը թող, մենք ի՞նչ, երեսուն, քառասուն տարւայ գրկից ենք, մեր մէջը ջոկոզութիւն չըկայ, իմն ու քոնը որն է . . .

— Նազի ջան, դու գիտես որ քեզ քրոջիցս շատ եմ սիրում, շնորհակալ եմ, բայց ախր տեղը էլ բան չի մնալ . . .

— Ասուած ողորմած է, աշխատող ու բարեօրա մարդուն կը հասցնէ . . .

— Է՛հ մեռնիմ նրան... բայց աշխատելով էլ գը-
լուխ չենք գալիս: Մամօն կացինը ձեռքն առաւօտինց
մինչև իրիկուն վազում է. բայց էլի դարգակ. հացի
փող հագիւ է ճանկում... հացն էլ էս որքան թանգա-
ցաւ, հոխան երկու դրոճշ, կրակ ու սրտիժ: Սրական
ինչքան պիտի դատի. քանի սալլ փալտ պիտի կոտրէ
Մամօն, որ երկու երեք հոխա հացի գին տուն բերէ:
Ա՛յ կնիկ, գիտես թէ սովի տարին մարդ ծակ աչք է
գառնում. սովորական խո՞ ալսքան չենք ուտում:

— Հա՛ն, նունա ջան, բարկենդանից ետև երկու
անգամ հաց արի, էլի հացերս պարպել է, մի ջլալ ալիւր
ունինք, էն էլ երկուշարթի ուղում եմ շաղել, տես-
նենք երկու ամիս կամ օգտէ, կամ չօգտէ: Չըմտանաս,
երկուշարթի արի, ես կըզբանկեմ, գուն եփէ:

— Անիկ, էդ ինչ շուտ պարպեցիք...

— Նունա, հաց կուզեմ, մալրիկ, քաղցած եմ,
մօտեցաւ երեխան և սկսեց քաշքշել մօր մխնոցից:

— Պնա՛. գնա քիչ խաղա՛, եփեմ, նստինք ամեն-
քս մէկ տեղ հաց ուտենք: Հիմի որտեղ որ է՛ հարիկդ
կըզալ, համբերէ, քիչ էլ համբերէ...

— Խելօք կեցիր, Սուլօ ջան, խելօք, կուզես արի
գնանք մեր տուն, Մովսէսի հետ խաղա...

— Թո՛ղ, չարութիւն կանէ, կըկուռին, մի տանի,
Նազի ջան, մի տանիր:

— Չէ, ես կերթամ Մովսէսի մօտ, ասաց ու
գուրս թռաւ Սուլօն:

Նունէն դարձեալ խորասուզեցաւ դառն մտքերի
մէջ, նա թէև ամաչում էր, չէր՝ ուզում, որ որդին
գնա ու ծանրութիւն պատճառէ Նազիկն, որ նոյնպէս

անհետաւորի կին էր, օրական սպրուստ հազիւ ունէր, բայց և սննդէս երեխին ազգելու էլ ուժ չունէր, իր սիրտն էլ էր դալարուում, երբ անմեղ զուակը — սոված եմ — կանչում էր: Մի՞թէ ինքը կուշտ էր, մի՞թէ ինքը քաղց չէր զգում, մի՞թէ մատղաշ աղջիկների համար նսննդէս չէր հարուում, մաշուում, բայց ինչ կարող էր անել, էլի իրանք, կանայք. կարծես որպէս լաւտե- նական տանջանքների դատապարտեալներ, վարժուել էին և տանում էին ամեն տեսակ զրկանքներ, իսկ ազան, ազան ազատ էր, նրա համար ամօթխածուժիւն չը- կար, ինչ ուզէր, կարող էր անել:

— Քիտես ինչ կալ, նունա բաջի, ասաց նա- զին, եղբայրդ իրիկուն ասաց, որ մէջլիսները՝ Ալի էֆէն- զին, Քիւրքչի բաշին ու Հաջի Արդալն ընկեր են եղել և ինչքան որ զեղերը ցորեն կալ եղել, աշունքը մող- ւել են, յորել ամբարները, հիմի քիչ քիչ բերում են քաղաքը՝ մէկը հինգ զնով ուտացնում աղքատներին: Մէջլիսները տիկ են դարձել, Հաջի Արդալին շինել են բերան, ամենքը նրա հետ ընկեր են:

— Մամօն էլ իրիկուն ասաց, էրէկ զայֆան փալտ կարելիս մի քանի հօւրի խօսել են էդ բոլորը, իմացել է:

— Աշունքն առնելիքի մէջ, աշարի փոխարէն, էս ու էն սոմարը վաճառուն զուրուշի առել, հիմի եր- րէք հարիւր զուրուշից պակաս չեն տալիս: Փաշան ա- ուաջի օրը կանչել է ու հրամայել, որ բոլոր ցորենն ու ալիւրը երկու հարիւր լիսուն զուրուշի վրայ բաժնէ աղքատներին, Հաջի Արդալը դէմ է կեցել, երեք հա- րիւրից պակասով չէ տուել. . .

— Ախար էդ գնով պիտի ծախէ, որ կարողանայ միշտ իրա կնկանն ու աղջիկներին զառ-խառախրխա հանգցնել, ասաց հառաչելով Նունան:

— Հապա ֆոնչինները, հօ հացը չեն եփում, հում հում մեզ ուզաի նման խմոր են կերցնում: Իրիկուն Մամօի բերած հացը խօ չըկարողացանք ուտել, դրել եմ սաջի վրայ, նսրից եփել:

— Փոնչի Ալէքի տղան էլ մէջլիս է, փաշան կանչել է, բարկացել է ֆոնչինների վրայ, նա առաջ է եկել ու պաշտպանել, թէ ինչ մեղք ունին ֆոնչիները, երբ ալիւրը թանգ է: Թանգութիւնն իրա կարգին, գոնէ շնորքով եփեն:

— Մեղքը մերն է, հազար անգամ ասի եղբորը՝ Մամօին, թէ աշունք է, ալիւր գնէ, ալիւր գնէ՛ քանի էժան է, բայց որ խօսք չի հասկանայ... Աշունքը մի ջլայ առաւ վախճուն զուրուշի, բայց մէկ ջլայով ինչ գուրս կըգայ: Խեղճը ինչ անէր, կառնէր բայց փողը, փող սրտեղից: Օրական պիտի երկու արարա փայտ կարէ, որ երեք զուրուշ փարա աշխատի և գրանով տուն պահի, էն էլ ամենն օր պատահի լաւան է: Ե՛հ, մենք էլ կեանք ենք անցկացնում...

Նագին հեռացաւ: Նունան շարունակում էր իր գործերը, բայց կանգնած տեղը գլորում էր, ուշքը վրան չէր: Նա երկու երեք ամուսայ ընթացքում իրանց տանը օրական հազիւ մի քանի պատառ բան էր ուտում, սուտ կուշտ էր ձևացնում, անեցիներին խաբում, թէ ինքը գրացիների մօտ կերել է և խոյս էր տալիս ճաշերից: Ինքը կարծում էր, որ կարող էր մի կերպ դիմադրել, քաղցի հետ կուել, իսկ ամուսինը պիտի ու-

տէր, որ ուժերը վերանորոգւէին և կարողանար կրկին գործի գնալ: Երեխաներն էլ սովի չէին գիմանալ: Այդ բաւական չէ, նա դեռ գիեցնում էր երեխային:

Նունան գործից չէր փախչում, բայց որ գործ էլ չկար. բոլոր հայ գրացիների հացը նա էր թխում, որի համար հացով էր վարձ ստանում, իսկ շաբաթը մի անգամ սրա-նրա դրանք հաց եփելով՝ ամբողջ տասը հոգուց բաղկացած ընտանիքը խո՛ չէր կարող կերակրել: Խեղճ կինը դեռ մինչև անգամ աղջիկներին էլ սարապ չէր թողնում, Կսման ու Սրման անդադար ծախու գուլպայ էին գործում, բամբակ մանում, մանու փոխ անում, որից էլի քիչ ու միչ բան էր մնում. որով խեղճ աղջիկներն իրանք իրանց համար դարա - խրխա էին կարում: Դեռ լաւ էր, որ երեք սրգիները աշկերա էին և կերակրում էին նոյնպէս իրանց աշխատանքով:

Վայելչութիւններից զրկւած լինելը, աղաների էֆէնդիների աների մէջ կատարւած զեղխութիւնները, շուայութիւնները, Սթամբուլից եկած բարակացաւ, դեղ-նած խանութների փշայած բարքերը՝ նրանք նկատում, զգում և էլի մի կերպ համբերում էին, բայց սովը օրից օր բորբոքում էր Նունայի մաղձը, երեխաների տանջանքները նրան գժւացնում էին: Կսմանն էլ մօր նման մի կերպ գիմադրում էր քաղցին. բայց նա էլ ուրիշ ցաւ ունէր. նա իր գարունքի մէջն էր, նրա համար ամեն առարկայ ուրիշ գոյնով էր երևում, նա տենչում էր միայն իր գրացի ընկերուհիների նման դարա - խրխայից ազատուել, եթէ ոչ խառա - խրխա, գո-նէ չիթ, կամ շալ խրխա ունենալ, իսկ այդ իղձն էլ սովի տարին գլուխ բերելու լոյս չունէր: Սրման ան -

դադար ներս ու դուրս էր անում, հօր ճանապարհը
գիտում. Զէլիսան մօր դարա - խրխալից բռնած՝ պոչից
ման էր գալիս ու քաղցած եմ փնթփնթում, խկ բա-
լուլի աղջիկը լալիս նփում էր . . .

Բ

Մամօն նոյն իրիկունը մթանը հազիւ տուն ե-
կաւ, միայն մէկ հօրսա հացով: Նունան խկոյն սեղանը
գրեց և բոլորեցին ճաշելու, կամ աւելի լաւ է ասել
ընթրելու: Տխուր էր Մամօն էլ, թէև շատ համեղ էր
դաւուրմով եղինճը, բայց ամեն բան նրան անախորժ
էր թւում, քանի որ մտածում էր, թէ ինչպէս պիտի
կշտանային վեց - եօթը հոգին միայն մի հօրսա հացով:
Կիսակուշտ սեղանից բարձրացան, երեխաներն ընկան
քնեցին և ուշ ժամանակ որդիքն էլ եկան, յոգնած
տարածելու պէս մռափեցին: Միայն Կոման արթուն էր
և խոհանոցում ամանները լւանալով էր պարապած:

— Ել պառկի՛ր, դադրած ես երևում, քունդ
տանում է, ասաց Նունան Մամօին, աշխատելով մի-
անգամայն, որքան որ կարող էր, ժպտալի գէմք ընդու-
նել: Մամօն լուռ, անմոռնչ մտածում էր: Ամուսնի
մտտաանջութիւնը թէև սոսկալի կերպով քրքռում էր
Նունայի սիրտը, բայց խեղճ կինը բոլոր կրքերը զսպած
աշխատում էր մի կերպ նրան մխիթարել, նրա երե-
սից տխրութեան քօղը հեռացնել:

— Այս ի՞նչ գէշ տեղը մի՞նեց, քօան տարի է,

ես քաղաքումն եմ ապրում, մօտ քսան տարի է մեր կարգւելը, մենք այսպիսի նեղ օրերի չէինք պատահել, սոսց հառաչելով Մամօն:

— Ա՛յ մարդ, մենակ մենք ենք, թէ աշխարհքով է: Դրա համար ինչ ես մտածում, ինչ ես ախու վախ քաշում:

— Ամբողջ օրը քաղաքն երեք սալլ փայտ մըտաւ, լաւ էր, որ դերձիկ Գոգորը հին ծանօթ էր ու ինձի տւեց կոտրելու, թէ չէ, ողջ օրը սոված կոտորւելուց լետոյ, գիշերս էլ քաղցած էինք պառկելու:

— Գիւղացին ցանքսը վերջացրեց, էս օրերս էսքան փայտ կըբերեն, որ դու ինքդ էլ լոգնիս: Եդ հէշտ է, դուն էն ասա, որ ինչի քսան երեսուն հոգի չէք ժողովում, չէք գնում փաշալին խնդիրք տալիս, որ փոնչիներին սաստէ, որպէս զի հացը շնորհքով թխեն, էդ ինչ խմոր հաց էր իրիկունս բերածդ:

— Թող, հոգիդ սիրես: Մեր քաղաքում ո՛չ օրէնք է մնացել, ո՛չ խիղճ, ո՛չ հաւատք, ո՛չ էլ արդար դատաստան: Երբ դատաւորներն ընկեր գառնան փրօնչիների, դասարների ու մէլխանաչիների (գինետնատերերի հետ), ում մօտ գանգաթի երթանք: Ասում են փոնչի Ալէքի տղան իրան գործարանում ցորենից արաղ է քաշում: Բոլոր փոնչիները կապւել են Հաջի - Արգալի հետ, էլ ում գնաս գանգաթի:

— Հասպա ինչ էք մտածում, էդպէս ձեռքերդ ծալէք ու գաք տունը գանգատներ անէք. դադիի, միւֆթիի մօտ ինչի չէք գնւմ, ինչի դրանց առաջներդ խառնած չէք տանում փաշալի մօտ:

— Ա՛յ կնիկ, նրանք հիմա մկի պէս Ալի էֆէն-

դիւի ու Քիւքչի բաշու ձեռքը խաղալիք են դարձել, Փաշայի տեղ հիմի էրզրումի վալին՝ Ալի էֆէնդին է, որի խօսքով եթէ չըշարժուի փաշան, մէկ շարաթ լեռու քաղաքից հեռացնել կտայ: Հաջի Աբդալն էլ աշխարհք գիտէ, որ Ալի էֆէնդիի նախկին ծառան ու այժմ ընկերն է: Գէհ գնա տեսնեմ, ուր կերթաս:

— Եղաւ, գնաց, ուրեմն էլ ճար ու ճամպալ չըկալ:

— Ասն, տեսնեմ ուր երթանք . . .

— Ախ, թէ իմ գլխին լաչակ կապած չէր լինիլ, թէ էս թևերս ու երեսս էհրամով (չարսաւ ծածկոց իսլամական) ծածկած չէր լինիլ, դուք կըտեսնէիք, թէ նու՛նան ուր կերթար: Նու՛նան ձեզ պէս չէր անճրկիլ:

Այս միջոցին վազ է վազ ներս մտաւ Էսման գոռալով.

— Նու՛նա ջան, Մամօ ջան:

Աղջիկ ինչ եղաւ, ինչ պատահեց.

— Բակու՛մ . . . ասաց կակաղելով Էսման ու մաւր գուրս ուղղելով ցոյց էր տալիս գողգողալով: Խեղճի լեզուն բռնուել էր: Մամօն իսկույն գուրս թռաւ:

— Քոզ կալ, ինչ է, մի վախենալ, սիրտդ ամուր պահէ, ասաց նու՛նան ամուսնին հետեւելով:

Երբ գորգաւորով որպէս գէնք՝ անբաժան կացինը ձեռքը գուրս եկաւ փալտահատը, մի երխտասարգ թռաւ ձիւ վրայ և մտրակելով խոյս տուց: Մամօն նրան հետեւեց, բայց մի՛նու՛մը ոչինչ չը նկատեց. չըկարողացաւ ճանաչել փախչողին:

Տուն - գուռ ճրագով լաւ քննելուց լեռու, ներս

եկան այր և կին: Այդ միջնագէտն աւելի բոր-
բոքեց Նունայի գայրութը: Այնչով չէր կարողանում
բացատրել այդ անակնկալ այցելութիւնը, համոզւած
էր, որ իրան տունը զող չէր գալ, թշնամի չունէր. . . :
Բացի Էսմայից, աշխարհի աչքով, ուրիշ հարստութիւն
չա կասկածում էր, որ Էսմայի համար էր սու-
նը մտել այդ աւագակը: Մինչ այդ Էսման մաւամբ
հանգստացել էր: Մայրը հանգարտութեամբ նրան մօ-
տեցաւ ու սոսց .

— Ո՞վ էր, նրա երեսը տեսար:

— Այնչ, ոչինչ չէտեսայ: Թեւ զրան գլխից
ներս կոխեց, որ ախը բանայ, ես զրան շրխկոցի ձալ-
նից ձեռքը տեսնելուն պէս իսկոյն թողի, ներս փախայ:

— Ի՞նչ էր հազած:

— Չըտեսայ, ես ինչ գիտեմ, սոսց տխուր թըշ-
ւառ աղջիկը:

— Այսօր մեր դռներով մարդ անցել է, խո՛ էն
պէս մէկին չե՞ս տեսնել:

— Չէ:

— Առաւօտը զրանը, որ կանգնած էիր, ո՞վ
անցաւ, ում էիր գիտում:

— Ո՛չ ոք, մարդ չ'անցաւ: Հաջի Արդալենց ջար-
դեահներն էին գնում, նրանց էի մտիկ տալիս: Այն-
պէս գեղեցիկ խառա-խրխաներ էին հազած պղտի աղ-
ջիկները. . .

— Ջարդեահի հետ ո՞վ կար:

— Ո՞վ պիտի լինէր, սալլորդները:

— Աւրիշ:

— Աւրիշ մարդ չըկար:

— Տղամարդ չըկ՞որ :

— Հա՛. մի ձիաւոր. կարծեմ Հաջի Աբղալի տղան էր, երկու - երեք անգամ ետ ու առաջ գնաց, եկաւ :

— Ու դուն էլ դռան սէօվին կպած նրան էիր մտիկ տալիս, ո՛չուփուչ :

— Ես նրան ինչի պիտի մտիկ անէի :

— Հազար անգամ ասել եմ, դռնից դուրս մի գալ :

Նունայի մտատանջութիւնը կրկնապատկեց. հացի համար նեղութիւն քաշելը բաւական չէր, աղջկայ մասին էլ պէտք էր հսկողութիւններ կատարել: Գիշեր, ցերեկ նո՛ հեռուում էր, ո՛չ հանգստութիւն ունէր, ո՛չ էլ բուն: Սոփն աստիճանաբար սաստկանում էր, հացի գինը թանգանում: Օր՝ կուշտ, օր անօթի անց էին կացնում շարաթնները և եթէ՛ նունան դրացիների բանին, գործին չըհասնէր, նրանցից փոխարէնն ուտելիքներով օգնութիւն չստանար, դուցէ՛ բոլորովին սովից կը կոտորւէին: Հաջի Աբղալի որդին մի քանի անգամ դարձեալ ցերեկով թէ գիշերներով իրան շնորհքը ցոյց տւեց, այնպէս որ նունան հաստատապէս ծանօթացաւ անկոչ այցելուի հետ, որին միշտ փողոցից, կամ բակի դռնից, կամ վանդուում էր, կամ ետ էր փախցնում: Էսման էլ համոզւեց, որ իրան էր հեռուում այդ աշարի միւլթագիմի (որպարերութեան տասնորդական հարկերը կապալով վեր առնող) որդին և սկսեց երազել զար - խաւա - խըրխանների և դրան վալել զարդազանքների մասին :

Բայց բանն այն էր, որ Հաջի Աբղալի որդին քսան տարեկան հազիւ կար, երկու, երեք տարի առաջ

ամուսնացած էր Ալի էֆէնդիի աղջկայ վրայ և երբէք չէր կարող զուժա (երկրորդ կին) տանել: Այդ բանի մասին գեռ որոշ գալափար չունէր Եսման, իսկ Նունան քաղաքացի ամուսինների մեղկ կեանքի հետ ծանօթ լինելով՝ գեռ քսան տարի առաջ ամուսնացել էր գիւղացի՝ փայտահատ Մամօնի հետ, որին ըմբշամարտութեան մէջ տեսել, հաւանել ու սիրով առել էր, այժմ մեթէ կարող էր համաձայնել, որ իր աղջիկը զուժա գնար մի տուն, որտեղ գուցէ և դրան շան չափ էլ պատիւ չըպիտի կարողանար վայելել:

Այս պատճառով Նունան խելքը, միտքը մի փեսայ գտնելու վրա դարձրեց, որ մի կերպ Եսմային ամուսնացնի ու ազատի այդ հողսերից, բայց այնպէս ժամանակ էր, որ արհեստաւոր, օրականով ապրող մարդիկ ուտելու հաց չէին գտնում, ո՞վ էր մշածում ամուսնութեան մասին. իսկ կարողութեան տէրերը Եսմայի զարա - խրխան հանելով՝ խառս - խրխա խօ չէին հագցնել ու հարստացնել:

Հաջի Արդալենք Իլիջա երկար չըկարողացան մնալ, գիւղացիներ իրանց տեղի, անտեղի հայհոյանքներով, նախատինքներով ու սպառնալիքներով նրանց կրկին փախցրին քաղաք:

Այդ օրերը Նունան գնաց բաղնիս: Թէև քաղաքացիք շատ նեղութեան մէջ էին, բայց իսլամահները առանց բաղնիսի չեն կարող ապրել, նամանաւանդ որ նրանց հալացքով լողանալը, բացի Ֆիզիբական մաքրութիւնից, կրօնաճիսական պարտականութիւն է: Բաղնիսը լիքն էր բազմութիւնով, զուրնաները (նոմեր) բռնել էին փաշայի, էֆէնդիների և հայ հարուստների

կանայք, իսկ Քէօրէզումն (միջին - ընդհանրական մաս) էլ ասեղ գցելու տեղ չըկար: Ջրի համար իրար գլուխ էին կոտորում, նախընտրել (կին գալլաքներ) հայհոյել - լով ետ էին մղում աղքատ դասակարգին և ջուրը հասցնում գլխաւորապէս Նրանց, որոնցից լոյս ունէին առատ նւէրներ ստանալ:

Նունան գետ լողանալու չըմտած՝ սաստիկ զայրացել էր զափուջիի (գոնապանուհի) վրայ, որը իրան տեղ էր առաջարկել դրսի դրան մօտ, որտեղից անց ու գարձ անողների պատճառով, միշտ դուռը բաց էր լինում և, ցուրտ քամին փչում:

— Ախար ուրիշ տեղ չըկալ, Նունայի այս հարցին ու ակնարկին, նա պատասխանել էր զայրացած երկար ու բարակ.

— Ինչ անեմ, խո քեզ համար նոր տեղ չեմ կարող ստեղծել: Թէ կուգես, որ տանեմ Հաջի Աբգալի, Ալի էֆէնդիի և վայի փաշայի կնկալ խալիչաների մօտ փռեմ քո խօրդ.

— Ար տանես փռես, ինչ վնաս ունի, նրանք երկնքից իջած խօ չեն, թէ մենք Հիւմէթի - Մէհմէդ (Մուհամէդի հաւատացեալ) չէնք: Բաղնիսի փարձը ինչ որ նրանք են տալի, էն էլ մենք ենք տալու: Այստեղ ոտքի տակ թափենք մեր շորերը:

— Թէ որ ոտքի տակ մնալ, ինչ կորուստ կունենաք, թէ զար - խառա - խրխաներդ կըփչանան:

— Աարա - խրխաս, քանի որ չես ճակատիս արգար բրտինքով եմ ձեռ բերել, նրանց աղքատին արտասուեցնելով լափշտակւած խառա - խրխալից թանկ եմ գնահատում: Իրանց մօտ բաց տեղ կալ, ես կերթամ,

թէ գու կարող ես, ինչ մի թողնիլ, ասելով խտրը վեր-
ցրեց և ահագին տհաճութիւն և սրտազոզութիւն պատ-
ճառելով Կսմային՝ զնաց և էֆէնդիների կանաց դա-
սում զետեղելով՝ հանւեց: Դեռ վալիի և Ալի էֆէն-
դիի կանայք չէին եկել, միայն նրանց հարճերն ու ա-
ղախները կանուխ տեղ էին բռնել: Ոչ ոք չըլանդո-
նեց Նունայի առաջն առնել: Պէտք է իմանալ, որ տե-
ղական սովորութիւնների համաձայն բաղնիսը հասարա-
կական տուն է, վեր վար չունի, բացի այդ՝ ով վաղ
մտաւ, նա իրաւունք ունի ամենալաւ տեղը գրաւելու:
Այս պատճառով բաղնիսի բոլոր ծառայողուհիները ո-
խակալւեցին Նունայի գէմ, քթերի տակ միմխում էին
ամէնքը:

Քէօբագում լողանալու ջուր ունենալու համար
հարկաւոր էր պղնձի մեծ լագեան (կաթսայ), որից
գուրկ էր Նունան՝ նա մի փոքր լագան ունէր և
մի քուղա, իսկ գրանք բաւահանութիւն չէին
տալ չորս աղջիկներին և իրան: Անդադար Կսման մօ-
տենում էր ծորակներին, բայց նրան հերթ չէին տա-
լիս: Մի քանի անգամ Նունան ինքը բարձրացաւ և
լցրեց ամանները, նախատելով աղջկան անճարակութեան
համար: Բայց ինչ մեղաւոր էր թշուառը, նա չէր լան-
դգնում հասակաւորներին, բարձր գիրք ունեցողներին
գիմադրել, իսկ այնտեղ ամեն մարդ շտապում էր մի
ժամ առաջ առատ ջրով լողանալ, դուրս գալ, առանց
մտածելու, որ պէտք էր հերթ տալ և անճարակներին:
որոնք իրանց հետ հաւասար վճարում էին բաղնիսպա-
նին ջրի վարձ: Նունան փոքր երեխաներին լողացնելուց
լետոյ, դուրս տարաւ, Հագցրեց, վերադարձաւ. որ Կսմայի

Հեա ինքն էլ լողանալ ու դուրս գալ: Այդքան միջոցում խեղճ աղջիկը չէր կարողացել ամանները լցնել: Նունան ներս գալու պէս մօտեցաւ ծորակին և ամաններն աղջկա ձեռքից առաւ ու մէկ կողմը հրելով երկու-երեք աղաների ու հարուստների կանանց, սկսեց լցնել: Մի քանի տեղից խանութներն աղմկելով սկսեցին արտնջալ ու նախրներին կանչել: Հաջի Աբգալի կինը դռուսմ էր.

— Էս բոշան ով է, քուզան ձեռքը...

Հերթ չի տալիս, որ ջուր առնէ: Նախրներն ուր կորան...

— Զեղնից լաւ բոշա չըկալ, անամօթներ, երկու ժամ է անլեզու խեղճ աղջիկը կանգնած է, դուք էլ նրան հերթ աւելիք, թէ մենք կեղծ փող ենք վճարելու բաղնիսպանին.

— Ելի լիբբ դու ես, մէջ մտաւ մի նախրը, կըրակն ընկանք քու ձեռքդ, քու տալիք քառասուն փարան ես կըտամ բաղնիսպանին, հեռացիր ծորակից, ասելով մօտեցաւ նունային և ուզեց ձեռքից քուզան քաշել և նրան հեռացնել:

— Խնչի, աղքատները լողանալու էլ իրաւունք չունին:

— Հեռու գնա, անպարկեշտ, անտոակ, ձայնդ...

— Անտոակը, անպարկեշտը դու ես, որ օր գիշեր բաղնիս եկողներին ես ծառայում, ասելով աջ ձեռքով մի քանի հարւածներ տուեց նախրի գլխին ու կրունկին և ձախ ձեռքով քուզան Էսմանին տալով սկսեց լազանը լցնել:

Ծեծ ուտող նախրը սկսեց մի քանի խանութներ

երի հետ գորգուալ: Բոլոր նախնիները և բաղնիսի ծառայողուհիները ներս մտան և թափուեցին Նունայի վրայ, որն խկոյն պաշտպանողական գիրք բռնեց, թասը գոգնոցի մէջ գցելով: Այդ նշանը թէև աւելի զայրացրեց ծառայողուհիներին, որոնք նոյնպէս պաշտպանողական գիրք բռնեցին և սկսեցի գորգոռալ, բայց նրանցից ոչ ոք սիրտ չարաւ չարձակելու: Սրա վրա բոլոր բաղնիսի աղքատ կանայքն էլ գորգուալով առաջ եկան Նունային պաշտպանելու: Ծեծ ուտող նախնիները կատաղած մի քանի թեթև հարւածներ տուեց Նունային, որը քուղան վայր գրեց և փոխադարձաբար նրա վրայ չարձակելով՝ մազերից բռնեց, տակը գցեց ու սկսեց հարւածել: Կանանց ճիչն ու աղմուկը սարսափելի էր, ոչինչ չէր լսուի: Նախնիները մէջ մտան բաժանելու, մի քանի խեղճ կանայք մօտեցան Նունային, որ տանեն իրանց մօտ հանգստացնեն:

— Էս ամեն տեղ մեզ են զրկել էս անիծւածները, բորբոքւած գոռում էր Նունան: Աւժով գալ և իմ ամանս ծորակի տակից քաշէ, հանէ, գեաւուր Ալէքի ու անխիղճ Արգալի կանանց ամանները լցնէ: Փող չունենալով միթէ անառակ ու անպարկեշտ եղանք, էն էլ քառասուն գրան լսկով սնւած նախնիների ու քառասուն մարդու հետ կարգւած ու թողւած խանութների համար:

Գ

Էօմերը սիրահարուել էր Էսմայի վրայ, նրա հանգիստն ու գաղարուժը կտրուել էր: Երկու-երեք անգամ միջնորդ էր ուղարկել Նունայի մօտ, բայց սա նրանց նախատելով տանից դուրս էր արել: Էսման էլ մի քանի անգամ երիտասարդի բարձր հասակը, ու ժեղ կաղմուած քը տնտղելուց ու տեսնելուց յետոյ, կակղել էր, այնպէս որ եթէ մի ճարպիկ փորձ ևս կատարէր Էօմէրը, աղջիկը կը փախչեր նրա հետ, բայց Մամօի կացնի առաջ գլուխ ցոյց տալը, նամանաւանդ Նունայի ճանկերից աղջիկ փախցնել հեշտ չէր: Էսման գալարուժ էր, տանջուժ, երբ Նունան նախատելով ու անարգելով արտաքսուժ էր միջնորդներին:

Մէկ երկու անգամ կարողացել էր Էօմէրը մօտենալ Էսմային և մի քանի խօսք ասել, բայց թշուառ աղջիկը երկիւղից ու ամօթից ներս էր փախել առանց մի որոշ պատասխան տալու: Քանի քանի անգամ, գիշեր թէ ցերեկ փողոցից, տանիքից Էօմէրը զննուժ էր Էսմային, տեսնուժ էր նրան համեստ դարա-խրխան հագին բանի-գործի մէջ և յաճախ տխուր և սրտառուչ երգելիս: Այս բոլորը այն աստիճանի բորբոքեց Էօմէրի սիրտը, որ բոլորովին մոռացաւ իր կնոջը, այնպէս որ երկու, երեք օրով նորա երեսը չէր տեսնուժ: Երբ սև ու դեղնած կինը՝ Ալի էֆէնդիի աղջիկը դէմն էր գալիս, իր զառ խառա-խրխաներով, պաճուճանքներով, նա

զղւանքից երեսը շուռ էր տալիս ու դուրս փախչում
տանից :

Էօմէրի կինը մարդուց չըսիրւելը վաղուց գիտէր,
իսկ այդ աստիճանի ատուելուց լետոյ, թողեց գնաց Տօ-
բանց տունը, ծնողների մօտ լալու իր անբախտ գլու-
խը: Բայց նախանձից ու խանդից ստիպւած հետեւում
էր ամուսնին լրտեսներով: Վերջապէ՞ մի օր լրտես-
ները տեղեկութիւն բերին, որ փայտահատ Մամօի և
հացթուխ Նունայի աղջիկն է գրաւել իր ամուսնին և
որ նրանց տունն է մտնել Էօմէրը: Այդ ժամին կատաղու-
թիւնից բորբոքւած սկսեց մագերը փետրել և դիմեց
Նունայի տունը տեսնելու իր ախուլեանին:

Առաջի անգամ էր մտել Էօմէրը Նունայեանց
տունը, որտաղող և ալլալլւած: Էսման մօր ահից գնա-
ցել մտել էր մարաքը և թագնւել լւացքի տաշտի ետեւը:
Նունան զայլալի դիմաւորել էր նրան գողալով:

— Խնչ ունիս դու իմ գրանս, դուրս, դուրս
կորի, անխիղճ անօրէնի որդի. քանի ձայնս աշխարհք
չէ իմացել, թէ չէ հիմի այնպէս կը դորդում, որ դուռ
դրացի բոլորը ներս կը թափւին, և էնպէս կը խախտ-
ուակեմ քեզ, որ չաւիտեան էլ մարդու երեսի չըկա-
րողանաս դուրս գալ:

— Նունա բաջի, խիղճ ունեցիր, գութ ունե-
ցիր, կուզես առ կացինը, մէկ անգամ զարկ սպանէ:
Թող երկու խօսք տեսմ, երկու խօսք: Վ. Ալլահա (Աստ-
ւած վկայ) կը դժուեմ, գլուխս կը սպանեմ, թէ Էսմա-
լին ինձ չըտաս . . .

— Գուրս կորի, ասում եմ, դուրս, ես աղջիկ
չ'ունիմ, որ դու՛մ (երկրորդ կին) տամ, զնո՛ս, իմ աղ-

ջիկս ձեր դռներից ներս չի մտնիլ: Կուք քառասուն
դուռ ունիք, քառասուն շուն ու գալլ է
մըտնում ձեր տունը: Մենք խրճիթում ենք մեծացել
և մեր միակ փոքր դռնից աղաներ ու բէգեր չեն կա-
րող ներս սողալ:

— Նունա բաջի, ահա քսակս, ինչ որ ուզում
ես կաթիլից վարձ՝ ստացիր ու խզնա ինձ վրայ. վեց ա-
միս է՝ ես հալւեցի մաշւեցի, տուր ինձ աղջկադ:

— Կորիր, անօրէն, ինձ պէտք չեն էն փողերը,
որ քու հայրդ ողջ երկիրը քաղցած, սոված լացում,
սգում թողնելով է դիզել: Տար ալդ ոսկիները, հալե-
ցուր, լից հօրդ կոկորդը, թող կշտանալ: Բաւական է,
դուրս:

— Նունա, Ալլահ, Ալի էֆէնդիի աղջկան ար-
ձակել եմ, շուտով նիքեահն (ապահարզան) էլ կըտամ,
հօրս տունն էլ կըթողնեմ, միայն թէ մի մերժիլ, մի
ինձ խելագարւած դուրս վանիլ քու լարկի տակից:

— Այ թէ աղջիկս, քառասուն շան կուտալ էլ
որ ունենալի, մէկը քեզ չէի տալ: Անխղճի զաւակ,
անգուժ, դահիճ, կինը հալաւ է, փոխնօրդ է, Ալի է-
ֆէնդու աղջիկը շապիկ է, որ նորան, դեռ երեք տարի չըկալ
կարգւելը, շարտել ես: Նորն ես ուզում ձեռք գցել:
Ինչպէս հաւատամ, որ երեք ամիս լետոյ էլ նոր առած
կնկադ չես դուրս անելու:

— Ես նրան չեմ առել, Նունա - բաջի, ինձ նրա
վրա ծախել է հայրս, ես զգում եմ նրանից, ես . . .

— Աւրիշ դուռ գնա, էֆէնդիների, աղաների,
բէգերի տների մէջ փնտրիր քեզ ընկեր: Փայտահատի
աղջիկը, իր եղբայրների արիւնքի գնով գընւած զար

խառա - խրխաներ հագնելու սովոր չէ: Գուրս, գնա՛,
հերիք է . . .

Թէև ասու՛մ էր Նուենան, բայց չէր կարողանում
բռնի, կամ մեծ ազմուկով դուրս անել տնից Էօմէրին.
Վախենալով որ չըլիինի թէ՛ իր ձայնը լսեն գրացիները
և բամբասանքի ենթարկեն: Աղքատութիւնն ինքն ըստ
ինքեան բաւական պատճառ է անթիւ կասկածանքների և
ամէն լանցանքով աներկիւղ կարելի է գրպարտել չքա-
ւորին:

Եւ լանկարծ ալդ տատանման ժամանակ բակի
դուռը բացեց և մի աղախնի հետ ներս մտաւ Ալի
էֆէնդիի աղջիկը՝ Էօմէրի կինը գոռալով.

— Անառակներ, պոռնիկներ, միթէ չէք ամա-
չում, որ ամուսնացած մարդուս խելքից հանել էք,
գրաւել էք ու գիշեր - ցերեկ ձեր խրճիթից դուրս չէք
թողնում:

Նուենան խկոյն նրա առաջը կտրեց, չըթողեց,
որ ներս մտնի ասելով.

— Անառակն էլ, անպարկեշտն էլ, պոռնիկն էլ
դու ես, որ ապրում ես էն մարդու հետ, որ քեզ չէ
սիրում և առանց ամաչելու, փոխանակ գետնի տակ
մտնելու, եկել ես ինձ վրայ կուռի:

— Էօմէրը մի կողմը քաշւած՝ պատի տակ
կանգնած էր կատաղութիւնից գողդղալով:

— Լիրբ, անզգամ, բաւական չէ, որ դիւթել,
թալիսմել էք մարդուս, առաջս էլ կտրում ես, ճանա
պարհս էլ բռնում ես, որ ներս չըմտնեմ և չըխայտա-
ռակեմ երկուսիդ էլ . . .

Էլ չըկարողացաւ համբերել, առաջ եկաւ Էօ -

մէրը և կնոջ թևից բռնելով դուրս շարտեց: Կինն երկիւղեց, բարկութիւնից և կատաղութիւնից ուշքը կորցրեց: Եօմէրը թողեց հեռացաւ, մրմնջալով.

— Օձի ծնունդը կեանքս թոււնաւորել է . . .

Պատաւ ազատիները ջուր սրսկելով, տրորելով մի կերպ սթափեցրեց իր տիկնոջը: Ալի էֆէնդիի աղջիկը գողգողալով, բազան անիծելով հազիւ տուն հասաւ.

Այս տեսարանից լետոյ այնպէս բորբոքեց նունան, որ չէր իմանում, ինչ էր շինում: Էսմային բոլորովին արգելեց տանից դուրս գալ, շատ անգամ գրացիները գործի կանչելիս՝ մերժում էր, եթէ աղջկան էլ գնացած տեղը հետը չէր կարող տանել:

Իսկ սոյն աստիճանարար սաստկանում էր, ամէն կին իր տան գործն ինքն անձամբ էր կատարում, որպէսզի պարտաւորւած չլինի իր զաւակների պատար բաժանել շունևոր բանանաղների հետ:

Նունայի գործերը, որ կիսւած էին, վերջերքը համարեա թէ սպառւեցին: Գործ չուներ նոյնպէս Մաման, երկու - երեք օրը հազիւ մի սալ փայտ էր պատահում կտարելու: Սոյն այն աստիճան սաստկացաւ, որ սարի կանաչները արմատներով կերան ու լափեցին աղբատները, այնպէս որ առաւօտները խումբ խումբ կանայք գնում էին գաշտերը, իրիկունները վերադառնում: Թագերումը հաւ, գառ, հորթ չըմնաց՝ բռնեցին և մօրթեցին. ով ինչ ճանկում էր, էլ չէր մտածում, իրանն է թէ ուրիշինը, իսկոյն քերթելու և եփելու պատրաստութիւն էր տեսնում: Նա առ անգամ խումբ խումբ կանայք այնքան էին հեռանում քաղաքի սահմանից, որ պատահում էին գիւղական հովիւներին, խըն-

գիրքով կամ բռնի կլթում էին նրանց անասուններին ու յագեցնում իրանց քաղցը :

Նուենան այս բոլոր միջոցներից էլ զրկւած էր , ոչ կարող էր գրացիների մօտ բանի գնալ . ոչ էլ դաշտ գուրս գալ , նա վախենում էր անակնկալ յարձակումից , իսկ զաւակներն անդադար գոռում էին .

— Մայրիկ , սովանձ եմք , մայրիկ հաց . . .

Չէր իմանում թշւառ կինն ինչ ելքի դիմել : Մամօն առաւօտը վաղ՝ դեռ երեխաները քնած հեռանում էր տանից , իրիկունները եթէ հաց գտնում էր՝ շուտ տուն էր վերադառնում , հակառակ դէպքում՝ մէջ գիշերին մի կերպ ներս էր սողում և արշալոյսին կրկին աներևոյթանում .

Ամբողջ օրը , բազարում , բաց օդում , արեւի ու անձրեւի տակ սրա - նրա դրանք տանջւելուց լետոյ , գիշերը հանգիստ քուն էլ չէր գտնում թշւառ մարդը : Մինչև լոյս մրմնջում ու հառաչում էր Նուենան , հալում ու մաշում իր հետ դարաքաշ մարդուն : Էլ համբերութիւնը կտրւել էր , նա ազատ յարձակում էր Մամօի վրայ , նախատում էր և անարգում նրա անճարակութիւնը . . .

— Այլ մարդ , սովորականի նման ասաց Նուենան մի գիշեր անկողնում Մամօին , էսպէս չէ կարելի , երեխաներս հալւեցին ու մաշւեցին , ծծիս աղջիկը երեք օր է՝ տանջւում է , պէտք է ճար անել , մի ջլալ ալիւր գտնել . . . Գնա՛ պարտք վերցուր , փոխ առ , մի բան արա :

— Նուենա , ես ում դուռն երթամ , հիմի ամեն մարդ իր գլուխն է մոռացել , հաց ու ալիւր ունեցողնե-

քի սրնում էլ ոչ խիզն է մնացել, ոչ գուժ: Երեք հարիւր դուրս: կանխիկ փող է պահանջում Հաջի Արգալը, երեք սփիլ լունեմ, երեք փայլուն ոսկին եւ սրանցից դանեմ . . .

— Անձ հասկանում, թէ էդ դուք ինչպէս մարդ էք, աղամարդու շնորհք չըկան ձեր մէջ, դուք հոգի լունեք: Դուն ինչպէս դարդակ տուն դարձար գիշերս, ջանի որ գիտէիր, թէ երեսաներդ էրէկ իրիկւանից ջաղջած են շնել: Ամբողջ օրը ինձ քցցեցին — քաղցած ենք — գոռալով:

— Մի, սասց սրտի խորքերից հառաչելով Մամօն:

— Յիսկ: շեն կշտանում երեսաները, սիլ մարդ, զնա գլուխդ ծախէ, նարէ, գտիր . . .

Մամօն անմտունչ հառաչում էր, լեզուն չէր շարժոււմ, որ պատասխանէր: Նունայի ծծի երեսան մինչև լոյս անդադար նփում էր և երբեմն երբեմն տարօրինակ ձայներ հանում: Երեսայի տանջանքը մայրը նկատելով բարձրացաւ, որբան աշխատեց ծիծ տալ, հնար չեղաւ: Լուսադէմին նփաց, նփաց ու հանգեցաւ: Նունան կատաղութիւնից չէր իմանում ինչ անել: Նա չէր արտասոււմ, նրա աչքերը կարմրել, արիւնով էին լցուել: Այդ նկատելով Մամօն՝ բոլորսովին մոլորեց: Էսման ծնոյնների հետ վեր էր կացել ու սկսել սովորականի նման տուն, դուռ մաքրել: Յանկարծ, ներս մտախեղջ աղջիկը մի քսակ ձեռքին: Նունան իսկոյն ճանաչեց էսմէրի քսակը ու գոռաց .

— Մայրիկ, բակումը գցած էր, աւիլելիս գտալ:

— Սուտ ես ասում, կատաղած գէմքի մկան:

ները ծրմոելով վրայ հասաւ Նունան և Կամայի ձեռքից առաւ քսակը :

— Ա. Ա. Ա. հա, մալրիկ էնտեղ ընկած էր, ասաց թշուառ աղջիկը լոցակումս :

Մինչև որ Նունան կըմտածէր, որ քսակը Կամէրը նպատակով կարող էր ձգած լինել՝ ամուսինը վերայ պրծաւ, քսակը կնոջ ձեռքից առաւ. բերանը բացեց ու միջի սկի լիրաները դարդակեց բուռը : Այս աղմուկից զարթեցաւ Սուլօն ու սկսեց լալ, կանչել :

— Մալրիկ քաղցած եմ, Նունա սոված եմ . . .

Մամօն իսկոյն մի կէս սկիւանոց առաւ, մնացեալը քսակը լքցնելով՝ վայր ձգեց կնոջ ոտների տակ ու վազեց դէպի փուռը : Բակից անցնելիս անզգալի կերպով անբաժան կացինն առաւ ուսը, այնպէս դուրս եկաւ տանից :

Այդ օրերը մէկ-երկու փուռի հացը մի քանի անգամ սոված ամբօխը աւարի տւած լինելով, բոլոր փունջիներն էլ բաց չէին թողնում իրանց փուռերի մեծ մեծ փեղկերը և դռները, այլ շինել էին տւել այդ փեղկերի վրայ մարդու գլուխ մտնելու չափ փեղկիկներ, որտեղից, ստանում էին նախ փողը և ասիս հացը դուրս էին տալիս : Փուռերի մեծ մասի տէրերը այլևս չ'ուռնէին, բայց և Հաջի-Արգալի առաջարկած պայմաններն էլ լամտած չէին ընդունել և փուռերը փակւել էին, այնպէս որ մնացեալ փուռերը գիշեր ցերեկ հաց եփելով՝ դարձեալ բաւականութիւն չէին կարողանում տալ ժողովրդի պահանջին : Ամեն ժամանակ ահագին բազմութիւն հաւաքւած էր լինում փուռերի դրան առաջ, և կանխիկ փողերը ձեռքերում հերթով,

կուռով, զորգոռալով հաղիւ կարողանում էին գնել ամե-
նօրեայ հացը :

Մամօն ժողովրդին հրելով, հրմշտկելով հաղիւ
մօտեցաւ փոխ փեղկին ու կէս ոսկին երկընցնելով ա-
սաց .

— Աւստան, շտապիր, հինգ հոխա հաց տուր,
տանն երեխաներս սոված կտորուցցին :

— Ա՛յ տղա, այս ոսկին կեղծ կըլինի, ասաց
փոնչին փայտահատի դէմքը մի լաւ գննելով : Գու մի
քիչ համբերէ, թող մեծ ուստան փողդ կշռէ և քննէ :
Տւէք, տւէք :

— Աւստա մի հոխա հաց, — և մի ուրիշը թաշ-
կինակը երկնցուց հացազործին, որը թաշկինակի ծայրը
բանալով՝ փողերը համբեց ու ասաց .

— Ա՛յ մարդ, այստեղ երկու զուրուշ միայն
կայ, հիմի հոխան իննսուն փարա է, տասը փարա էլ
տուր :

— Աւստան շունեմ, քիչ պակաս տուր :

— Հիմի ես հացն ինչպէս կտրեմ, ինչպէս կըշ-
ռեմ, առ փողերդ :

— Տւէք, տւէք :

— Ախար, ուստան, քեզ ասի տանը սոված կո-
տորում են երեխաներս, այս մարդու տասը փարան
էլ իմ հաշուից ստացիր, միայն շուտ արա, շուտ արա,
տուր :

— Ա՛յ մարդ, քիչ սպասէ, ուստան հիմի վայր
կըգայ ու կըկշռէ քու ոսկին : Տւէք, տւէք :

Անդադար փոնչին առնում էր թաշկինակնե-
րը և հացերը մէջը գնելով՝ դարձնում տէրերին : Կի-

սատ փող ունեցողները պարտաւորւած էին սպասելու
և անդադար գոռում, գոչում էին — Աւստա, Հացը,
ուստա Հացը:

Փոնչին առանց ուշադրութիւն դարձնելու կըր-
կնում էր — տէք, տէք . . .

— Աւստան, գոռած կատաղած Մամօն, ուստա,
կէս ոսկիս, Հացս, շուտ արա, տանն երեխաներս կո-
տորւեցին . . .

— Սպասէ, քիչ էլ սպասէ, տէք, տէք . . .

— Գեաւո՞ւր, որքան պիտի սպասեմ, անհաւատ,
շուտ արա, երեխաներս կոտորւեցին:

— Ես անհաւատ չեմ, ասաց ներսից փոնչին,
քու ոսկիդ կտակածելի է. թէ չես ուզում սպասել, ետ
առ, գնա՛: Տէք, տէք:

— Անօրէն, ալդ փողին ինչ է եղել, որ պատ-
ճառ ես բռնում.

— Աւստա, Հացս տուր, տասը փարայի պակաս
տուր՝ երթամ:

— Կշռելու ժամանակ չունիմ, կուզես տուր
ամբողջ Հոխայի գինը, թէ չէ՛ չկալ, ետ առ փողդ:
Տէք, տէք.

— Տեսնում էք ալս անհաւատներին, ինչպէս
են տանջում մեզ, ալս ինչ օրը մնաց Իսլամը, ասաց
մի ծերունի կատաղած:

— Աւստան, կէս ոսկին, Հացս, գեաւուր չէս ի-
մանում:

— Աւել պակաս խօսել պէտք չէ . . . Տէք,
տէք:

— Քու օրէնքդ, քու հաւատդ . . . քեզ կոնակ

եղող աղաների, էֆէնդինների . . . գոռգոռալով, հայհոյելով փայտահատը սկսեց կացնով ջարդել փոխ փեղկերը: Մի ակնթարթում բոլոր տախտակները փշրեց, ժողովուրդը ներս խուժեց և ինչքան որ հաց կար՝ ցրեց: Մամօն կատաղած մի քանի հարւածներ էլ իջեցրեց փռնչիներին, որոնք երկիւղից ներս մտան, ալիւրի ամբարի տակ թագնւեցին, և մի գիրկ հաց շալակած վազեց տուն:

Մամօի օրինակին հետևեց ամբոխը և մինչև ստիկանութեան միջամտելը, մինչև փաշայի, էֆէնդինների և Հաջի Աբդալի օգնութեան հասնելն՝ այդ օրն հինգ-տաս փոխ փեղկերը փշրեցին և հացերը ցրուեցին:

Ալի էֆէնդու և Հաջի Աբդալի թախանձանքների համաձայն՝ փաշան իսկոյն քննութիւն նշանակելու և այդ իրիկուն բանտարկեցին փուռերի աւարի աւաղանեցից մօտ հարիւր լիսուն մարդ, դրանց թւում և Մամօին:

Դ

Մամօին չէին թողել տուն, մինչև անգամ աղջիկը թաղելու. շքնալելով որ դրա համար Սարալ էր գնացել թաղի իմամն (երէցը) ու Մուխտարը (թաղապետը): Մամօի մեծ որդին իմամի հետ թաղել էր քը-

բոջ: Նունան բորբոքել էր, բաւական չէր որ նրա խիղճը տանջում էր, — նա զգում էր, որ իր աղջիկը քաղցին էր գոհ գնացել, — մարդու բանտարկութիւնը նրան բոլորովին յուսահատեցրել էր: Մամօի, բացակայութիւնը մահ էր սպառնում և միւս զաւակներին: Նունան չկարողացաւ կրքերը զսպել, լետնիքի (վերջալուսին) մի աման կերակուր եփեց և մի կտոր հաց էլ վեր առնելով՝ գիմեց գէպի Արխա-Ղուլուղի բանտը: Այնտեղ հաւաքւել էին մօտ լիսուն - վաթսուն կին, որոնցից ամեն մէկի ամուսինը, եղբայրը, որդին այդ օրւա փուռերի դռներում պատահած աւարառութեան համար բանտարկւել, նրանցից որը լաց էր լինում, որը աղերսում, որը գորգում և սպառնում էր ոստիկաններին: Իրանց մեծագոյն մասը սոված էին և զարգակ էլ եկել էին իրանց բանտարկեալների մօտ, մնացեալներն էլ այնքան քիչ էին բերել, որ իրանց հարազատներին էլ չէր կշտացնիլ: Մինչև իրիկուն այդ կիները խմբւած իրար հետ խօսեցին, խորհրդակցեցին, խոհեցին և շ մի հնար չը գտնելով՝ միմանը անիծելով ու հայհոյելով ցրեցին իրանց տները:

Նունան ետ դառնալիս իրան հետ տուն հրաւիրեց երեք չորս կին, որոնց հետ Եօմէրի թողած քսակը վեր առած դուրս եկաւ և նոյն գիշերը բաժանեց այն փողը մօտ երկու-երեք հարիւր ամենաչքաւոր ընտանիքների, տան գլուխ մօտաւորապէս մի արծաթ մէջիդ (2 ու. մօտ) որով կարելի էր երկու կամ երեք օրւայ պաշար գնել:

Երկու օր շարունակ վաթսուն եօթանասուն կին լցում էին Սարայ, Ալալ-բէգի (քաղաքապետի) և ու-

րիչ պաշտօնականներին ներկայանում, խնդրում, աղաչում և աղերսում, որ բաց թողնեն իրանց ամուսիններին, որպէսզի ընտանիքով սոված չըկատրւին, բայց հնար չըգտան: Նրանց անվերջ թախանձանքներէջ ստիպեալ պատասխանում էին .

— Սպասեցէք, մինչև Իդարէ Մէջլիսը (նահանգի վարչական ժողովը) հաւաքւի և իր զեկուցումը տայ:

Իսկ վարչական ժողովի անդամները չէին գալիս ատեան:

— Քոյրեր, ասաց Նուենան իրիկւան գէմ բանտի բազում խոնւած կատաղի կիներին: Ինչ բարիք էք սպասում Իդարէի Մէջլիսից, էնտեղ ո՞վքեր են նստած: Փաշան եթէ մեզ բարիք էլ ցանկանայ, ո՞վ կըլսէ նրան, Մէջլիսները, Ալի էֆէնդին, Քիւրքչի-բանչին, թէ փոնչի Ալէքը, — ախար չէ որ փուռերի հացն ու ալիւրը դրանցն է, չէ որ դրանք են փոնչիների պաշտպանները, մեր մարդիկներին բանտարկել տւողները.

— Ինչ անենք Նուենա բաջի, ում գուռն երթանք.

— Ես գիտեմ, ես որ իմանայի, խօ վաղուց կերթայի և ազատել կըտայի բոլորին, բայց ես ոչոքից լուս չունիմ... էտեղ զուր մի սպասէք, մեղք էք, ձեր երեխաները տանը սոված կոտորուեցին, տուն դարձէք և ամէն մէկդ առաջ մի կտոր հաց ճարեցէք քաղցածների համար, յետոյ մտածեցէք բանտարկւածների մասին:

— Բայց բանտարկւածներն էլ սոված են...

— Ոչինչ, նրանք կըդիմանան, բայց երեխաները չեն կարող: Մեր պարտքն է անմիջապէս ամենից ա-

առջ մանուկներին կերակրել: Գնանք, գնանք և ցր-
ւենք:

— Աւելի լաւ է մենք էլ էս տեղ բանտարկւենք
մեր ամուսինների մօտ, ասաց մի կին, քան թէ տուն
դառնանք և մեր մատղաշների սովամահը տեսնենք:

— Ո՛րտեղից պիտի կարողանանք հաց գտնել, ո՞վ
կ'օգնէ մեզ, ասաց մի ուրիշը:

— Էստեղ մնալով էլ հաց չէք գտնիլ: Գնանք,
մեղք են անմեղ երեխաները: Գնանք ճար անենք, մէկ-
կերպ գիշերս էլ քնենք, յետոյ խորհենք էգուցւայ մա-
սին:

— Նունան լաւ է ասում. գնանք, գնանք, մէջ
մտան մի քանի հասակաւոր կիներ և առաջ ընգան.

Հայհոյելով, անիծելով, գողալով ու գողելով՝
վերադարձան տուն, յուսահատութիւնից կատաղած:

Միւս օրը՝ արշալոյսին, միմնաշողին խուճը խուճը
հաւաքւած մօտ երկու երեք հազար կին, երեխայ,
աղջիկ յարձակեցին Հաջի Արգալի և ընկերութեան ամ-
բարների և Ալէքի աղի ալքօհօլի գործարանի վրայ:
Անմիջապէս ահագին քարեր խփելով՝ փշրեցին դռները
լուսամուտների երկաթի ճաղերը. մինչև արևի ծագելը
բոլոր ալիւրը, ցօրենը, կորկոտը, բլղուրը հաճարը-բո-
լորը ցրեցին: Հայ-թուրք, կին, երեխայ, աղջիկ ամեն
մէկը մի մի տոպրակ շալակած՝ տուն էր վազում և
դարդակելուց յետոյ, կրկին վերադառնում աւարի տեղը:
Մէկ-երկու ժամի ընթացքում մօտ հինգ հազար սոմար
ցօրեն դարդակեցան: Ոստիկանները և գիշերապահ զին-
ւորները իրանք էլ էին օգնում թշուառներին, իրանց
տներն էլ որոշ մաս էին տանում: Արևը դեռ չբողացած

երբ արդէն շտեմարանները բոլորովին խտակած էին, կրակ աւին ամբարներն ու գործարանը բոցերի մատնեցին :

— Թո՛ղ էլի շինեն ամբարներ, արագի գործարաններ, գոռում էին պառուները, թո՛ղ էլի հացը թանկացնեն, անհոգի անխիղճները :

— Արեգակից առաջ մենք լուսաւորեցինք քաղաքը, գոռում էր մի ուրիշը :

— Թո՛ղ էլի զար - խառա խրխա հագցնեն իրանց աղջիկներին, հարճերին ու աղախիններին, գոռում էր նուեան :

Մինչև Հաջի Արգալի, Ալէքի և Ալի էֆէնդիի հրդեհավայրը հասնելը, կրակն արծարծւել էր և ոստիկանութիւնը չունենալով հրշէջ մեքենաներ՝ չլկարողացաւ հրդեհի առաջն առնել: Եինութիւնները մինչև հիմունքը այրւեցան, մոխիր դարձան :

Այդ միջոցին փուլ եկող ամբարների կրակակոտերի մօտ չորս - հինգ հարիւր կին շրջապատեցին Ալի էֆէնդիին ու սկսեցին սպառնալով պահանջել իրանց բանտարկած ամուսիններին, իրանց որդիներին, եղբայրներին: Հաջի - Արգալն ու Ալէքը երկիւղից թողին, փախան: Միայն Ալի էֆէնդին էր, որ մնում էր այդտեղ: Գունատւած կանանց սպառնալիքներից վախենալով, որ չլինի թէ՛ սոված ամբոխը կատաղութիւնից իր տան վրայ էլ լարձակւի, նա չըզիտէր, թէ ինչ անի: Նա արդէն մոռացել էր իր գործարանը, իր շտեմարանները, նա միայն մտածում էր իրան և իր ընտանիքին սպառնացող վտանգի մասին: Յանկարծ նրա աչքերի մէջ վճռականութեան կայծ երևաց, նա գտաւ խորաման -

կութեամբ ելք: Մի բոպէ չանցած՝ նա տանում էր
այդ հարիւրաւոր կանանց իր ետեւից Սարայ՝ փաշայի
մօտ, նա սլաշտողան էր հանդիսացել այդ ամբոխին և
առաջն ընկած գնում էր կառավարութեանը համոզելու,
որ արձակէ բանտարկւածներին:

Փաշան կանգնած էր դրան առաջ, գրգռւած
կանանց ձայները լսելով, նա զգում էր, որ գեռ ուրիշ
չարիքներ են սպասում քաղաքին, և իսկոյն լսելով Ալի
էֆէնդիին հրամայեց անմիջապէս արձակել բանտարկ-
ւածներին:

Բայց կրած վնասներից զայրոյթով լցւել էր Ալի
էֆէնդիի սիրտը. չըկարողանալով իր կատաղութիւնը
թափել փոնչիների և ուսմիկ ժողովրդի վրայ, բոլորի
վրէժը նա առաւ Հաջի Աբգալից, որի դէմ արգէն գր-
գռւած էր Էօմէրի պատճառով: Որպէս պաշտօնական,
որպէս նահանգական վարչութեան անգամ, Ալի էֆէն-
դին իրաւունք չունէր ընկերական պայման կապել Հաջի
Աբգալի հետ՝ այլերները գնելու և ցորեններն ամբար-
ելու: Նա ապահովութեան համար որոշ գումարների
մուրհակ էր առել Հաջի Աբգալից: Դեռ ամբարների
մոխրի տակ չէին հանգել կայծերը, նա փոխանակ վը-
նասներն ընկերոջ հետ բաժանելու, այդ մուրհակներով
փողերը պահանջեց և գրաւեց Հաջի Աբգալի բոլոր շար-
ժական և անշարժ կայքերը: Այս կորստի ցաւին չը-
դիմացաւ Հաջի Աբգալը. ճգմւեց Ալի էֆէնդիի մեքե-
նալութիւնների մէջ, մերկ ման էր գալիս փողոցներում
ու կրկնում:

— Մերկ ծնալ, տկլոր էլ պիտի մեռնիմ:

Նրա կինը վշտից, կսկիծից շատ շուտով մեռաւ:

Լաբճերը կարգւեցին. նոր նոր տուն մտան. թոյ կո-
մէքն երկու փոքրահասակ քույրերի հետ զնաց, պապից
մնացած անակը մտաւ և սկսեց մշակութիւնով օրական
մի կտոր հաց տանել սրբերին :

Քարեկից և առատ դարձաւ այդ տարին : Նու-
նան, նկատելով Էօմէրի հաստատ սէրը՝ Էսմային նրա
հետ կարգեց : Մաման մի կսցին էլ շինել աւելց Էօմէ-
րի համար և նրանք երկուսով սկսեցին միասին փայտ
կտրել :

Մաման դարձեալ շորժանապաւ զար-խառա-
խրխալի. նա միշտ կրկնում էր ձօրը կիսածիծաղ

— Սրբ հարուստ էր Էօմէրը, ինչ նրան չըտւիր,
որ զնալի և մի զար-խառա-խրխա հագնէի . . .

ԾՊՏԵԱԼ - ՍՈՒԼԹԱՆ

ԱՐՏԱՏՊԻԱԾԷ

- Ազգիւր - Հանդիսի № 5 - 8 1898 թ.

ԾՊՏԵԱԼ ՍՈՒԼԹԱՆ

(ԲՐԱԸԾ)

Հարիւր ու քանի մի տարի սրանից առաջ, երբ
ենիւերիններն և կղերի ձեռքով գահ ընտրեցաւ սաստ-
ատոյ Սէլիմ Գ. սուլթանը, նախորդների սովորութեան
համաձայն իր փարձագեւ Խոջայի հետ ծագած դուրս
եկաւ Էսքի-Սարայ ապարաքից մարաքազաքը շրջելու
և հասարակութեան գանդառները կամ զոհունակու-
թիւնները անձամբ լրտեսելու: Նա հազել էր թէ քէ քէ
դէրուիշի աղքատիկ հագուստ և գլխին ծածկել թագի քի
երկար նարնջագոյն գտակ, այնպէս որ ոչ ոք չէր կարող
երբէք նրան հասարակ դէրուիշից գանազանել: Սուլթա-
նին առաջնորդող Խոջան էլ թէև մոլլայի կապույտ ջիւր-
բէ ունէր հագին և սպիտակ ալարօշ գլխին, բայց
սա էլ իր տիրոջ՝ սուլթանի նման շատ համեստ էր հագ-
նուած և երկուսն էլ երկար համրիչները ձեռքերին՝ ծա-
նըր քալլերով և մեղմ խոսակցութեամբ Գիւլ-Խանէի նա-
ւամատուցից նաւակ նստան և ծովի երեսին քիչ պատյո
անելուց լեռայ, որպէս հասարակ քաղաքացիներ դուրս
եկան Պալլ-Խանէի նաւամատուցը:

Դեռ չէին մօտեցել ծայտեալները նաւամատուցին, երբ հեռւից մի գեղեցիկ հագնւած երիտասարդ նկատեցին, որ հսկայ քայլերով նեղ փողոցից գուրս գալով հասաւ նաւամատուց և մենակ մի նաւակ վարձեց, որ նրան անցկացնէ Ոսկեղջիւրի վրայից դիմացը՝ Ղալաթիա։ Այնքան կոկիկ էր այդ երիտասարդի սև սաթի նման փայլող ջիւրքէն, այնքան նուրբ Բուխարայի մորթից էր կարւած զալփաղը (գդակ), այնպէս կուրծք ու մէջքին քիփ փաթաթուած էր նրա սև քիշմիրէ էնթարին և սև գօտին, որ ահագին բազմութեան մէջ նա նկատելի էր, ո՛չ միայն իր մաքուր ու վայելուչ հագուստով, այլ մանաւանդ բարձ հասակով, վայելուչ դէմքով, լայն կրծքովն ու ուսերով և կտրիճ շարժմունքով, շագիւ քսան մէկ, կամ քսան տարւան լինէր երիտասարդը, կզակի նօսր մազերը հազիւ մէկ, երկու անգամ ածիլած լինէին, իսկ սև ու կարճ պիտերը դեռ մատ բռնելու չափ չէր երկարել։

Երիտասարդը երկար ժամանակ իր վրայ լառելու եց ծայտածների խոժոռ աչքերը, որոնք ուզում էին սլաքի նման թափանցել նրա սիրտը և ծակել, բայց բազմաչարչար հայի զաւակը ո՛չ մի զանցառութիւն չէր արել։ Բոլոր հագուստը, կապուստը, կօշիկները, կապերն ու կոճակներն անգամ թուխ, սև գոյն էին կրում և հայից անբաժան սուգն արտայայտում։

— Տեսէք, լաւ դիտեցէք, մատաղղ լինիմ, ասաց Խոջան սուլթանին, տեսէք թէ որքան ընտիր ընտիր կերպասներով և թանկագին կտորներով է զարդարւել քեաֆիրը (անհաւատ)։ Սև են հագնւում, իբր թէ օրինազանցութիւն չեն անում, բայց այդ քնքով զործ-

ւածները միթէ վայել է այդ գիմմիին (գոլքով, կեանքով պարտական), կարծես պէճեր է թափուում գլխից ու վրայից :

— Աւղիղ է ասածդ, պատասխանեց սուլթանը, բայց բան չի կարելի ասել. ոտից մինչև գլուխ բոլորը սև սև կտորներով է ծածկւած : Յրինագանց չէ անօրէնք :

— Այդ անհաւատները կողոպտում են, կեղեքում են ժողովրդիդ և ահագին գանձեր են գրիզում : Դրանց բոլորովին խնայելու չէ . . .

— Առանց դրանց էլ մենք բոլորովին կ'աղքատանանք, կըլծւառանաք : Մեր հասարակական գանձարանը դրանք են լցնողը և Ալլահը դրանց մեզ շնորհել է, որ մեր մարմնաւոր վայելքների համար աշխատին : Թո՛ղ լցնեն մեր գանձարանը, թո՛ղ բաւարարու՞թիւն տան իսլամին, աւելացած փշրանքով էլ իրանք ապրին, ասաց սուլթանը և գուրս եկաւ նաւակից :

Նրանք անցկացան նեղ նեղ փողոցներով և ճանապարհին Լիմոն-Խսկէլէի մօտ մի գեներտան առաջից անչկացան : Մտտեալները նկատեցին որ ներսը՝ գինետան մէջ լսյները հարբել, երգում էին, նւագում ու պարում, որոնց բարձրացրած աղմուկն ու ժխորը տարածւել էր մինչև անգամ մօտակալ բոլոր փողոցները : Սուլթանը ուշի ուշով լսում էր Խոջայի բոլոր նկատողութիւնները, որ երբէք չէր դադարում իր կրօնական պարտականութիւնները կատարած լինելու համար, լայտնել անհաւատների բոլոր պակասութիւնները ամենախիտ գոչներով և ամենակծու ոճերով ու բառերով : Նրանք անցան Աւզուն Չարշիից, բարձրացան ահագին զարիվերը և մըտան Բէզէզթան :

— Ահա իրար ետևից և մեր քաղաքի բոլոր ապականած վայրերը, հառաչելով ասաց Խոջան և մի քիչ խորհրդաւոր կերպով լռելուց լեռու աւերացրեց.

— Գինետան գարշելի ձայները դեռ չեն հեռանում ականջիս միջից, հարբած լուների պատկերները չեն ջնջւում աչքիս առաջից :

— Գարշելի ու նողկալի տեսարան : Գրանց առաջն առնելու է, ասաց սուլթանը մտախոհ քայլերը ուղղելով Բէզէզլիթանից դէպի Սուլթան - Բալագէթ :

— Այդ անօրէն մուրտարները իրանց գինիով ապականում են բոլոր փողոցները, փչացնում օդն ու ջուրը և խլամի բարեշնորհ հաւատացեալների կեանքը դառնացնում : Փողոցներում ամէն մի խլամ անօրէն հարբածներին պատահելիս, շունչը շնչում է, հագուստը փախսներին դիպչելով՝ պարտաւորում է բաղանիս գնալ, մաքրւելու համար, գոնէ կրկին տնգամ լւացւելու, որ կարողանայ մաքուր սրտով, խաղաղ խղճով աղօթել : Ինչպէս մզկէթներում, կամ իրանց խանութներում հանգիստ սրտով աղօթեն հաւատացեալները, երբ փողոցներում և գինետներում հարբած անհաւատները խոզի սոսկալի աղաղակներ են բարձրացնում

Խլամի նախանձախնդիր աշակերտը՝ Խոջան իր անվերջ շարախօսութիւններով խլացնում էր իր գահակալ աշակերտին և նրա սիրտը լցնում ատելութեան սոսկալի թոյնով : Սուլթանը մտածում էր, թէ ինչ գիրք բռնէ : Նա գինետները չէր կարող փակել, քանի որ նրանք անհագին հարկ էին տալիս խլամի հասարակական գանձարանին, մանաւանդ որ այն ժամանակ քրիստոնեաները

առանց այդ հարկը վճարելու՝ էլի կարող էին գաղտնապէս իրանց տներում կարևոր գինին և ուրիշ խմիչքները պատրաստել և հարբել: Նրանք լռելեայն անցան Սուլթան-Բալագէթի հրապարակից դէպի Յաթիհ-Սուլթան-Մէհմէդ և այնտեղից ուղղակի բռնեցին Ելուրի ճանապարհը: Երկար էին փողոցները և ամալի, հարիւր քալին մի մարգու, մի խափշիկ ազախնի հազիւ էին պատահում, իսկ Խոջան ճարտարախօս էր: Նա անդադար, ջրվէժի նման սահում պատմում էր Սուլթանին առօրեայ հարցերից, կատարած գէպքերից և անցեալ պատմութիւնից:

Նրանք մտան մի նեղ փողոց, որտեղ ոչ խանութ կար, ոչ էլ արհեստանոց, բոլորն էլ միւսլիմ ժողովուրդի բնակարաններն էին այժմէ ձախ: Հեռուից նկատեցին մի սիմիտ (ՅՄԵԼԻԿԵ) ծախող բոշնակ, որ ծանրաքալ առաջ էր գնում և խզխզոտ ձայնով կանչում.
— Սիմիտ, Սիմիտ:

Բոսնիացին առանց կասկած տանելու, որ իւր խզխզան ձայնը կարող էր անախորժ հնչել ծպտեալների ականջներին, վաճառքին լաճախորդ գտնելու տենջով, անդադար կրկնում էր. — Սիմիտ, սիմիտ. — որպէս զի տների խորքերում գործի հետ եզոզ տրկինների ականջներին հասցնի իւր խռպոտ ձայնը և անախորժ եղանակը, որ նրանք լսեն, դուրս գան դէպի լուսամուտները սիմիտ գնելու: Ծպտեալները հեռուից գիտում էին բոշնակի բոլոր շարժումները:

Յանկարձ սիմիտչին կանգնեց, ուսից վար դրեց եռոտանին, գլխից իջեցրեց տէփուրը ու դրեց եռոտանու վրա: Թրքուհին բարձրացրեց լուսամուտի փայտի

մատներէց չիւսւած խիտ վանդակը, կիսով չափ կախ-
ւեց լուսամուտից և փղոսկրի նման ողորկ և փալլուն,
ձիւնի նման սպտակ և շողշողուն մերկ բազուկը տարա-
ծեց, ձգւեց և բռնակի ձեռքից աւաւ երկու սիմիտ,
լսնանելով սիմիտչիին երկու փարա: Այս առուտուրը
այնպէս բորբոքեց մոլլաի նախանձը, այնքան «տելու-
թիւն անեցաւ նրա սրտում, որ նա չը կարողացաւ կըր-
քերը գտել ու ասաց կատաղաբար:

— Ի՞նչ տեսաք, աչքով տեսաք, մատաղջ լինիմ,
թէ քնչպէս անհաւատը ներքեւից դիտում էր ու չըր-
նւում: Ի՞նչ ազտեղի աչքերով, գարշելի սրտով ձգտում
էր այս անհաւատը լարաբերութեան մէջ մտնել իօլամի
հարէմի անարատ կնոջ հետ: Որքան խաղերով ու նա-
զանքով էր տարածում սիմիտը ու տանջում թշուա
կնոջը:

— Կասկածը լաւ բան չէ, Խօջա՛, իսլամին չի
վախել ենթադրութիւններով խօսիլ, գուցէ և բամբա-
ւել մի բոլորովին անմեղ կնոջ:

— Ներեցէք, ասաց խոջան զգալով իւր սխալը,
ներեցէք տէրիմ, «բ կրօնական նախանձախնդրութիւնս
ինձ չափազանց կուրացրեց, ես մեղքի տակ ընկայ, են-
թադրական բամբասանքով: Բայց և այնպէս սիրտս ծակ-
ւեց, կարծես մի նիզակ մխեցին այնտեղ, երբ նկատե-
ցի՝ որ աչքի անմերձենալի հարէմի տիկինը, այնքան
լուսամուտից ցած կրացաւ կէս մարմնով, բաց գէմքով,
կըծքով ու բազուկներով մերկացաւ անօրէնի աչքերին:
Սա էլ ֆոխանակ գէմքը ծռելու, գիտին նայելու, ըզ-
մալլած նրա գեղով, քիչ էր մնում պատից վեր թռչի:
Նրանք առաջանալով մօտեցան բոսնիացուն, որը

ստացած փողը քսակը զետեղելուց լետոյ, տէփուրը կրկին գլխին դրեց, եռոտանին ուսերին և շարունակելով ճանապարհը, կրկնեց նոյն խռպոտ ձայնով ու եղանակով— Սիմիտ, սիմիտ, սիմիտ :

Սուլթանը կրկին ոտից մինչև գլուխ զննեց բռնակին. բայց ամէն բան օրինական գտաւ, բոլոր շորերը սև, բոլոր հագուստը մթին, թշւառի տանջանքն ու սուգն էին արտայայտում :

Ծպտեալները առաջանալով շարունակեցին իրանց քայլերը դէպի էլուր և որովհետև սաստիկ լոգնած էին, մտան մի զայֆէխանայ (սրճարան). թէ հանգստանալու և թէ ժողովրդի կարծիքները լսելու : Սրճարանատէրը այս անձանօթ լաճախորդներին իսկոյն ակոռ տըւեց, վազեց սառն ջուր բերեց, մօտերը դրեց, որ ծարաւները լագեցնեն և ինքը մօտեցաւ օջախին սուրճ պատրաստելու : Սրճատանը մեծ բազմութիւն կար. մուլաներ, արհեստաւորներ, կալածատէրեր, թաղական պաշտօնականներ, ենիչէրիներ և բոլորն էլ անտարբեր զբաղւած էին իրանց զբօսանքով, ծխում էին չիրուխ, կամ նարգիլէ, խմում էին սուրճ, կամ օշարակ, խաղում էին նարգի, դամա, կամ թուղթ և շատերն էլ ընտանեկան խօսակցութեամբ էին զբաղւած և քննադատում էին առօրեայ հարցեր :

— Ահա երեք օր է, ասաց մի կալածատէր իրան լսողներին, մեր սուլթանի գահ բարձրանալը, (Ալլահը երկալացնէ նրա կեանքը,) բայց ո՛չ մի ձայն չըլուեց, ո՛չ մի գործ չըտեսաւ :

— Երէկ իր'կուն Թոփ-Քափու մի սրճարանում նրան տեսնողներ եղել են . . .

— Է՛հ, ասաց սրճարանատէրը օջախի մօտից, դատարկահոսներ էք, ուրիշ ոչինչ: Թողէք մի հանգստանայ, ծանօթանայ գործերի հետ... Երեք օրւայ մէջ ինչ կարող էր անել...

— Ժրագլուխ և եռանդոտ մարդը հէնց առջի օրից կարող էր իր շնորհքը ցոյց տալ, ասաց մի ենիշէրի խաղը ընդմիջելով: Մի՛թէ քիչ գործեր կան մեր քաղաքում: Ահա քանի ամիս է, որ մեզ ուղտի նման խմոր են ուտացնում փոնչիները. այն էլ ինչ խմոր, գարի է թէ հաճար՝ Ալլահն է խաբար:

— Այդ բոլորը կարգի կըմտնի, ասաց մի մօլլա. եթէ մեր կաշառակեր իւլէմներին (կղեր) ու գաղիններին դատաւոր կրօնական կարողանայ զսպել:

— Ինչ անեն իւլէմներն ու գաղինները, երբ ընդհանրապէս այնպիսի շուսլութիւն ու փարթամութիւն է տիրում մեր աւագանիի ապարանքներում: Երկիրը կողոպտում են, ժողովուրդը, կեղեքում, կաշիներ են պոկում, սրբին ու սլրուն տանջում. գրկում, որ ինչ է, իբանց հարէմները հարձակ, ընդունարանները մանկրուիկներով լցնեն: Ամեն մի աչքի լնկնող պաշտանտկանի տունը եթէ օրական լիսուն — ութսուն ոչխար է մանում, էլ մեզ նման աղքատն ու տնանկը սրտեղից մի կտոր լէշ գանի, որ մանր ու խոշորին կերակրէ:

Ամէն կողմից վարչութեան դէմ տլտունջներն ու զանգաաններն անպակաս էին, այնպէս որ մինչև սուրճ խմելն ու հանգստանայլ սրճատան լաճախորդները ապրուստի ամէն մի նիւթի մասին իբանց նեղ վիճակն արտաբայտեցին, նախատելով վաշ-

խառու դատաւորներին և անարժան պաշտօնակալներին: Երբ ծափեալները պատրաստուած էին հեռանալու, նարդի խաղացողներից մէկը խաղն աւարտելով վեր կացաւ ու հարցրեց հանդիսականներին .

— Նոր բան իմացել էք .

— Ի՞նչ, ասացին ամէն կողմից և հալացքներն ուղղեցին :

— Բախալները իրանց դատը տարել են, և դարձեալ թթու ծախելու արտօնութիւն են ձեռք բերել:

— Ինչպէս, կրկնեցին նորից հանդիսականները ուշադրութեամբ նորութիւնը լսելով:

— Չէ որ Իսթամբուլ զադին երեք հազար դուրուշ թթու ծախողներից առնելով, վճիռ էր աւել, որ այլևս բախալները թթու չըծախեն:

— Այդ յայտնի է, երեք-չորս ամուսն պատմութիւն է, նորն ասա՛ Յետո՛յ:

— Բախալները հաւաքուած են և հինգ հազար դուրուշ գումարելով, գիծում են նոյն զադուն, որ իրանց կրկին թող տալ թթու ծախելու: Այդ գումարով զադին գրաւուած է և բախալների առաջնորդին սովրեցնում է, որ գնամի քանի լղի կանայք ուղարկէ իրան՝ զադիի մօտ գանգատելու: Բախալները հինգ-տաս լղի կանանց սովորեցնում են, որ գնան զադիի մօտ գանգատին, թէ իրանք պատճառաւոր են և յաճախ գիշերուայ մէջ սրտերը ալ և ալլ թթու է ուզում: Թթու ծախ ամէն թաղում չըլինելով, եղածներն էլ սաստիկ հեռու լինելով, նրանք վնասուած են, ուշքերն անցնում է և կարող են աւելի մեծ վտանգի ենթարկուել, եթէ զադին իր ապօրինի կարգադրութիւնը չըվերցնէ և թող-

տուժիւն չըտայ, որ բախարներն էլ թթու ծախեն: Ղա. դին այդ գանգատաւոր կանանց խնդիրքի համաձայն, նորից վճիռ է արձակում, որ բախարներն էլ թթու են ծախելու, քանի որ բնակարանների մօտ թթու չըլինելու պատճառով կարող են վնասուել լղի կանայքն ու նրանց մանուկները:

Սուլթանն այդ պատմութիւնը լսելով զայրացած դուրս եկաւ սրճատնից և Խոջայի հետ ուղղեցին դէպի պալատ: Դեռ շատ չէին հեռացել Էլուրից և նոր էին մտել կենտրոնական քաղաքամասը, որ պատահեցին նոյն սիմիտչի բոշնակի, որն առանց մտածելու անգամ, թէ իր խոստ ձայնը կարող է աշխարհում մի որ և է անհատի զայրացնել, կանչում էր անվերջ — Սիմիտ, սիմիտ սիմիտ... Քանի կանչում էր բոշնակը, ամբողջ մարմնով դողում էր սուլթանը և երբ մօտեցան իրար՝ Սուլթանն ուշի ուշով քննեց դրա հագուստն ու կապուստը և նկատելով սիմիտչի չստերի վրայ մի կտոր գեղնոտ տեղ, նա ասաց զայրացած.

— Անօրէն, միթէ քեզ յայտնի չէ, որ զիմմիներդ իրաւունք չունիք ուրիշ գոյներով զարդարելու: Ինչի՞ իսլամի կղերին յատուկ գեղին չստեր ես հագել:

— Խնայիր ինձ, մեղաւոր եմ, դէրւիշ բարս, ասաց գողգողալով բոշնակը: Աղքատութիւնից ստիպւած հին կօշիկներ գնեցի ու անձամբ ներկեցի — սևացրի: Տեսէք, տեսէք, ասաց բոշնակը կօշիկները հանելով, արդէն բոլորովին սև է, միայն այս մատիս բռնած տեղը բաց է մնացել, չեմ նկատել, չէ սևացել... .

— Զայնդ, անօրէն, դեռ արդարանալ ես ուզում, ասաց ու ետ նայելով ծպտեալ սուլթանը՝ նշան տւեց

հետևից հետևող ենիշերիններին ու առաջ գնաց Խոջալի հետ :

Ենիշերինները իրանց տիրոջ ակնարկը նկատելուն պէս, վրայ հասան, բռնեցին սիմիտշիին, ցրեցին նրա սիմիտները, ոչխարի նման գետնին գլորեցին, պառկեցրին թշուառին, գլուխը կտրելով սիմիտի տէփուրի վրայ գրին, ծածկեցին մի փալասով և հետևեցին իրանց տիրոջը :

Ծպտեալները առանց ետ նայելու շարունակեցին իրանց ճանապարհը, ոլոր-մոլոր, նեղ ու կեղտոտ փողոցներով, մինչև հասան կրկին Լիմոն Իսկէլէն : Այդ տեղ նոյն գինետնից դարձեալ գալիս էին երգի ու նըւազարանի խառնաշփոթ ձայները, էլի աղմուկն ու գորգուցը տարածել էր ամէն կողմն : Երբ ծպտեալները աչքերն լառած գինետան դռան կողմը մօտենում էին, մի բարձրահասակ, լիք լիք լոյն, ալբանական ծալովի ֆէսը գլխին՝ դուրս եկաւ փողոց և հսկայ բալլերով գիմեց ծպտեալների կողմը : Նեղ մայթից առաջ գալիս լոյնին գիմաւորեց մի մոլլա, որին լոյնը ճանապարհ չբռնեց. չիջաւ մայթից փողոց : Անցորդ խլամ հոգևորականը գիպշելով լոյնին՝ կատաղեց և աղտեղի փողոցային հայհոյանքներով հրամայեց ռայալին ցած գալ մայթից և իր արբեցողի գարշահոտ շնչառութեամբ, գինով ապականուած փալասներով չապականել նրա անպական մարմինն ու հագուստը :

Յոյնը թէև գինու ազգեցութեան տակն էր, բայց լինելով Արշիպելաքի կղզիներից և ծովի ազատ որդիներից, չըզիջաւ, չուզեց լսել մոլլաին : Մոլլան չապականելու համար անճարացած ինքն իջաւ մայթից

և սկսեց հրատարակապէս դուռ ալ, գրգռել ու բորբոքել
խաբամ ամբոխին, զանդատելով որ անհաւատք անարգել
էր իբր արժանապատուութիւնը: Մպտեալները անցքին ա-
կանաաեսս լինելով, սուլթանը կրկին ետ դարձաւ և
պատշաճաւ որ նշանը տւեց իրան հետևող ենիչարինե-
րին, որոնք լոյնին բանեցին և քաշէ քաշ հրելով ու
ծեծելով տարան Պալլը - խանա: Այդ տեղ ծովից դուրս
բերւած ձկի նման տարածեցին թշուառ կողեցուն կոճ-
ղի վրայ: Լոյն-բերան կացնով մարմնից գլուխն անշա-
տեցին:

Գեռ լոյնի գլուխը չէին վերցրել լատակից, դեռ
նրա լեզուն լիլիվում էր բերանում և արիւնը շատր-
ւանի նման ցայտում վզից, երբ ծպտեալները հասան
Պալլը - խանէի նաւամատուցը և նշան տւին, որ իրանց
նաւակը մտանալ: Այդ միջոցին Աալաթիւից նաւակը
ետ բերեց այն կողիկ և վայելուչ հագնւած հայ երի-
տասարդին, որին պատահել էին առաւօտը նոյն նաւա-
մատուցի վրայ: Գարձեալ նոյն կալառ շարժումները,
նոյն շալկերը և նոյն շոալլ ծախսը, նա մենակ մի նա-
ւակ էր գարձել և ետ էր դառնում: Կատաղութիւնից
աքիւնով էր լցւել սուլթանի աչքերը և նա կիրքը չը-
կարողանալով զսոյել, մօտ կանչեց երիտասարդին և
զմեծելով նրա հագուստի երեսն ու առտառը, ներքինն
ու արտաքինը, հրամայեց ոտքից սև կօշիկները հանել:
Այդ ժամանակ սովորութիւն էր Կ. Պոլսում հիմիկալ
կրկնակօշիկի փոխարէն սև կօշիկներ հագնել և տուն
մանելիս ալ կօշիկները նախասենեակներում թողնելով,
ներքին մաշիկներով ներս մտնել թանգագին գորգերով
և մետաքսէ թաւիչներով փուած, զարդարւած սեն-

եակները :

Երիտասարդը այդ հրամանը լսելու պէս՝ գունատեց, ուշքը կորցրեց. բայց բռնութեամբ նրա կոշիկը հանեց մի նաւասախ: Երբ ծպտեալները տեսան կարմիր մաշիկը, սուլթանը զայրալի ասաց.

— Անօրէն, քեզ ո՞վ իրաւունք տւեց իւրամի բէգերին ու ամիրներին լատուկ մաշիկներով զարդարելու և ետ դառնալով երրորդ ակնարկին ուղղեց հետեւող զահիճներին ու մտաւ նաւակ, Խոջալի հետ հեռացան:

Գեռ ծպտեալների նաւակը շէր մօտեցել Սարայ - Բուրնու պալատական նաւամատոցին, երբ ենիշէրիները - զահիճները մտան Գիւլխանէի դռնով պալատի այգին, արքունիքի Բօստանչի - Բաշիի առաջ գնելով բօշնակի տէփուրը, բացին ծածկոցը և երեք անմեղ քրիստոնեաների գլուխը լանձնելով պալատի զօրքերի - պահապանների առաջնորդին, ստացան իրանց վարձքը՝ իննը խթանպօլ - սկի ու հեռացան:

Նիշտ տասն և ութ տարի յետոյ, 1808 թ., երբ վէզիր Մուսթաֆա փաշան մի օրւայ մէջ, պալատի նոյն պարտիզում խողխողել տւեց երկու սուլթաններին՝ Սէլիմ Գ - ին և Մուսթաֆա Գ. - ին, թուրք պատմիչը լիշեղով անցեալը՝ աւելացնում է. — Ինչպէս ինքը Սէլիմ Գ. ը անգութ վարեց զահակալութեան օրերում՝ անմեղ երեք քրիստոնեայի արիւնը հեղեղելով, նոյնպիսի անողորմ զահիճների ձեռքով թափւեցաւ իր և իր եղբոր որդւ արիւնը մի և նոյն պարտիզում . . .

1 Յունւարի 1898 թ.

Կ ար ս .

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ

Վ Ի Պ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԸԼՄԸՅՏ	Թրքահայերի կեանքից գինն է	2 ռ.	10 ղա.
Խեթ - ԿԸԲԸՊԵՏ .	-	1 ռ.	5 "
ՀՅԹ - ԵՂԻՎ	-	30 կ.	30 շճ.
ՅԽՆՅՏ	-	30 կ.	30 շճ.
ՓԵԹԸՆԳՆԵՐ	-	30 կ.	30 շճ.
ԲԷՄԸԸ ԸԹԸՂԷԼԸ	-	25 կ.	25 "
ԽՅԹԻ ԽՄԲԸՂԵՆԵՐ	-	10 կ.	10 "
ՊԸՏՆԵՐՆԵՐ Թրքահայերի կեանքից	-	1 ռ.	5 ղա.
ՎԻՃԵՐԼԸՏԻ ԳԸՂՏՆԻՋԸ	-	1 ռ.	5 "
ՈՂՐԵՐԳԱԿԱՆ			
ՅԻՃԸՆ Ողբերգութիւն	-	1 ռ.	5 ղա.
ԸԸԲԸԹ	-	30 կ.	30 շճ.
ԽԸԼԻՓԸԹ	Պատմական տեսութիւն :	30 կ.	30 "

Գինն թիլիսի կենտրոնական և Գուտտէմբէրգ Գրա-
 վաճառանոցները և Կովկասի քաղաքների հայ գրա-
 վաճառներին :

Գրավաճառները կարող են ղիմել նոյնպէս.

TAURIS (Perse) ATRPET

որոնց կը լինի սովորական 20 ° գիշումն :

4 6 2 - 6 6 2 0

ԱՐՏԱՏՊԻԱԾԷ

« Տարազի » № № 17 - 18 1893 թ .

Կ Ա Ղ - Ն Ա Ջ Օ

Ա

— Նագճ, վարդապետն ու բէխը (տանուտէր) համաձայն չեն, Ծիրնկատար զօզան (եալլա) երթալու հրաման չեն տալ, ասաց Օղունցի (Մշու դաշտում) Թումասը իր մօրը խոհուն դէմքով:

— Եղոր համար էին քեզ կանչել ժամատուն: Իրենց համար են ասել, ես կերթամ, թող զան՝ իմ կուսըս բռնեն: Գու, Մինաս ու Սաքօն հօտաղներու հետ գնացէք Ծղակ (գիւղ) փայտի, ես մեծ հարսին տունը կըլծողնեմ, երկու պստկին, Մրտօի ու թոռներին հետս կառնեմ կերթամ: Կթանս ինչ անեմ, ոչխարս ո՞ր ջուրը թափեմ, եթէ զօզան (եալլա) չերթամ: Չմեռը գոխ ու ժախով թոնրի մէջ պիտի պահեմ քիւլֆաթս (ընտանիքս):

— Բէխն ասաց, թէ փաշան է հրամայել, որ էլ մեր գեղը չելնի եալլա:

— Եդ սուտ է, իրենք են հնարել: Փաշան մեր պապական, էլ օխտը պորտից մնացած միւլքն իմ ձեռ-

քից պիտի խլէ: Թէ կուզէր խլել, ինչի՞ Ստամպոլու
էլի նոր քօշան (կալւածագիր) բերել տւեց մեզ հա-
մար: Քրդերն էլ էդ կուզեն, մի տարի, երկու, չըզնա-
ցիր, կըտիրեն, կըպրծնին: Էն ժամանակ դու հեռւից
աչէ ու մաշէ: Էն զօզանի (եալլի) մէջն են իրենց
արիւնը թափել քու աղբէրն, քու պապն, իմ պապն
ու աղբէրն, իմ պապու պապ. էնտեղ են թաղւել, էն-
տեղն իրենց արնովն են ներկել, մեզի միւլք թողել,
որ մանր ու խոշորով ուտենք ու օրհնենք էնոնց լի-
շատակ, հիմի դու կուզես, որ բէխի ու էն Ստամպոլու
եկած վախկոտ վարդապետի խօսքով թողնես քրդերուն
մեր ճժերի հացն: Առաջ ինձ եալլի մէջ իմ մարդու
կուշար թաղէ, ետեւ, երբ քու կնիկը տունը կըկառա-
վարէ, էլ եալլա մի երթաք: Իմ սիրտս չի գիմանալ,
որ իմ գրկիցի տղերքն մեղր ու կարագ ուտեն, կանանչ
կարմիր հագնին, իմ ճժերու աչք նրանց վրայ մնայ:
Պառաւը կատաղութիւնից հետզհետէ այրւում էր աչ-
քերը ցոլում էին անդադար:

—Ո՛վ ասաց, թէ մի՛ երթալ, ո՛վ քեզ արգելեց: Ի՞նչ
որ ասին, եկայ իմացուցի, որ խորհուրդ անենք: Ես
նրանց ասի, որ իմ մալրը առանց զօզանի (եալլի) չի
ապրի, ես խօսք չեմ կարող հասկցնի: Մէկ էլ որ, ասի,
այնքան կթանը ես ինչ անեմ:

—Լաւ ես ասել, էդպէս էլ էր պէտք:

—Իրանք ասին, թէ դուք երթաք, ձեզ կ'աշեն
ուրիշներն էլ կը գան:

—Կուզեն գան, կուզեն թող չըրգան: Ի՞նչ գնա
սարքդ - սուրքդ տես:

Պառաւ նազօն մեծ որդուն՝ Թումասին ճանա-

պարհ գցելուց լետոյ կաղալով մտաւ առն ու ասաց .

— Գարան, Նուշան, գնացէք ձեր շէյ շալաք ժողովեցէք, առաւօտ պիտի զօզան երթանք : Չանտն, գնա ձձումը (խնոցին), տաշտերը դուրս բեր, լւն, ողւէ, պղինձներն իստկէ, որ սէլի վրայ շէլերը չըմը-րօտէ :

Յետոյ Մրօյի հետ երկու ջլալ ցորեն ուղարեց ջաղացքը, որ աղալ ու պատրաստէ եալլի համար : Ինքն էլ գօսացած ձախ թիւը կէս բարձրացնելով, ձախ ոտքն էլ քաշ տալով այս ու այն կաթնատնտեսական և ոստայնական գործիքներն էր կարգի դնում : Նազօն լիսուն տարեկանից աւելի կար . ինքը բարձրահասակ չէր, բայց թիւն ու ազգըը գօսանալուց լետոյ, առաւել կարճացել էր : Գէմքով թէև գեղեցիկ չէր, բայց ալլանդակութիւն էլ չունէր . սև ու խոշոր աչքերը, երկար թարթիչներն ու թաւ ունքերը ցոյց էին տալիս, որ ժամանակով գեղանի էր եղել : Թէև արևը այրել էր, սևացրել նրա դէմքը և մորթը, բայց այտերի վրայ կարմրութեան հետքը գեռ բոլորովին չէր ջնջւել : Երևում էր, որ նա էլ ժամանակին Նազենի է եղել, բայց կծկթելով, կծկը-թելով Նազօ է դարձել . . .

Նազօյենց տան իրարանցումը նկատել էին հարևան պառաւները, որոնք մէկ մէկ մօտենում էին նըրան ու մի մի չոր չոր պատասխան ստանալով հեռանում :

— Հն. զօզան պիտի երթամ, ձեզ ինչ, կուզէք, դուք էլ արիք, չէք ուզեր՝ ձեր քելֆն է :

Այս պատասխանները գրգռեցին շատերին . շատ չանցաւ, գեղը ողջ իմացաւ, որ Նազօն եալլա է գնալու :

Նագոյի օրինակին հետեւեցին շատերը, ալնպէս որ զգիրը չէր իմանում, որ կողմը հասնի, որ բաւականութիւն տալ բէխին ու վարդապետին :

Բ

— Ելի ինչ ես իմացել, ալ քաւթար, ասաց Վ. Պարսեցի վարդապետը. քեզ խաբար չըբերեց Թումասը, որ տեղից չըշարժուի :

— Նմեռը դու իմ աղերքը կըկերակրես, կըհազցնես, որ զոգսն երթալս չես ուզում: Աշխարհ արարած գնում է, ես ինչի չեմթամ, էս կարգն էլ քու օրով պիտի հաստատես :

— Ախար անցեալ տարի էլ լամառեցար, գնացիր, քու ետեկց գեղն էլ տարիր ու երեք-չորս աղի աբիւնքը մտար: Այս տարի էլ կուզես փորձանք դառնալ մեր գլխին :

— Մեռնողներն իրենք են մեղաւոր: Քրդերու մէջ ոչխար են տանում արածելու, գիշերը հեաները թւանք չեն առնում: Իմ Մրտօն էլ նրանց հեա չէր, ինչի իմ կիթանի քովից անգամ չըկարողացան անցնել :

— Գծօխքի գործիքով մարդասպանութեան երթան... Գու չես վախնես: Աւտծու ահեղ դատաստանից, ինչ պատասխան պիտի տաս մեռնող և մեռցնող հոգիների համար :

— Ինչի պիտի վախենամ... ինչ եմ արել, ինչ մեղքի պատճառ եմ դարձել: Ինձ սպանել ուզողին վի-

զըս երկնցնեմ, էգ որ գրքի կողին է գրած:

— Պեղից մարդ չէ գնալու, դու մեկնակ հարս-
ներիդ հետ, մէկ տղիդ լոյսով ուր ես գնում էն քըր-
դերի ու գայլերի մէջ...

— Մեր գեղից, որ չեն գալ, ամբողջ դաշտը էս
տարի առանց եսլլի է մնալու: Աչ մի հալ բրիստոնեալ
սար չի բարձրանալու:

— Հերեաթիկոսների հետ սարի գլխին, առանց
ժամի, առանց սրտարագի ու խոստովանքի... Տեզն
ու տեղ դժոխքի կոճղ ես դու, դժոխք...

— Լսու, շատ մի վրայ տալ ինչ է, Ասուած,
արքայութիւնը մեկնակ երկուս ու կէս ծառոտ ֆրանկ-
ներու *) համար է պատրաստել ու էս արար աշխարհ
իր ստեղծած հալ-հերեաթիկոսների համար դժոխք: Նը-
րանք թէ դուրս են էգ արքայութիւնից, ես էլ նրանց
հետ:

— Աէնդ, մի հալհոլի, մեղալ, ասն, մեղալ...
թէ չէ էլ արձակում չես ստանալ:

— Քնն քու բանդ, գնն, վարդապետ, էգ քու
կարգացած գիրքն, ես էլ եմ կարգացել: Քու խո լաւ
գիտես, որ ես Տէր-Մասոյի աղջիկն եմ, որի ծխերն
եկար կուլ տւիր: Քնն պատուովդ, դուրս գնն, ես իմ
գործը գիտեմ:

— Ուզիդ, որ ջագու պառաւ, ժողովուրդը դուր
անուն չէ գնում, ասաց վարդապետը կատաղած:

Ալ քաֆթար, ալ ջագու պառաւ, ասաց ներս

*) Մշու գաշտում երկուս ու կէս գեղ կայ հայ-կա-
թոյիկ. Նորչէն, Ասինջ և Օղունք (խառն):

մտնելով ընդ սրբի, էլի ինչ ես ձևումը (խնոցի) ձի շինել, զբէն նստել, ոձն էլ խամշու (մարակի), միշտ պիտի կրակ զցնս զեղացու սիրտը:

— Ինչի էդպէս շուտ մեռար, Մուքօ, որ զգիր Մլեմի տղէն քու տեղը ընդ զառնար, զար քու զուռը ու քու կնկան աւել պակաս խօսք ասէր:

— Ահ զուն, լեզուն տես, կը լուր, ասաց ընդ ըստ ձեռնարկի:

— Զարկ, զարկ, ինչի շես զարկում: Մի ամ շնայ, գլխիս լուսակը կը բանամ, ծամերս էլ կը խուզեմ: Անլ էն շէնլիքի (շինականութեան) գըլխին, որ սթամբուլիցի հաւու սրտոտը ու մահակի տակ տղկած զգրի տղէն պիտի կառավարեն:

— Աւելի հեշտ է Սիփանը Սասուն տանել, քան թէ ալ պատուի կամքը կոտրել: Յամառ, իսկական հայի ինադ (լամառութիւն), ասաց վարդապետը շարած:

— Ուր ես Տէր-Մոսօ, մի ել, ել գերեզմանից, հեծիր ալ ձիգ, նեզակգ ձեռքդ առ ճերմակ միրուքդ զմբդմբացնելով ընկիր ոչխարիդ առաջ, տար Շերընկատար, տար, որ սրանք տեսնին ու սենան: Տէր-Մոսօյի գաւազանի ծերն ոձ կար, վարդապետ, թունաւոր ոձ, որ խալթում էր քուրդին, թէ որ նա զօզանի ճապան կտրէր շէնլիքի առաջ:

— Այն ժամանակներն անցան:

— Այ, էն մարդիկն անցան... էն քեզի պէս չէր գողողայ, էն քեզի պէս տաք օդախում չէր պառկում, ուտում, խմում, քնում: Նա մի հաւկիթ ուտելիս, մտածում էր, որ իր շորս դրկիցների հետ բաժնի: Այդ

եալի համար նա մենակ լիսուն անգամ քրդերու հետ
կուել է, նրանց արիւնն է քամել, վերջը ինքն էլ
էնտեղ է գոհւել: Ես իմ տղերքը կառնեմ, կերթամ,
նրա գերեզմանը մեզ պահպան է: Էնտեղ մենք կաղօ-
թենք, մեր մատաղը կանենք, Ասուած մեզ կը պահէ...
Գուք մի գաք:

— Հեռու, սրա սրտում սատանան ըուն է գրել:

Գ

Նազօն գնաց զօզան, նրան հետևեցին քսանի
չափ ընտանիք, մեծ մասամբ լուսաւորչականներ: Գը-
նացողները իրենց հետ տարել էին ևս հարևաների կը-
թանները դամնով * (կտրւածքով): Մի ամսու մէջ Նա-
զօն երեք անգամ եղ ու պանիր էր ուղարկել քաղաք-
ծախելու: Այդ տարին անձրևները առատութեամբ գա-
լիս էին և սարերը ծածկւած էին երկար ժամանակ
թարմ գալարներով: Եալլա գնացողների գործը շատ
լաջող էր, քրդերն էլ խոտի նւազութիւն չըզգալով, ոչ
մի լարձակում չըգործեցին հայերի վրայ: Վարդապետի
և րէխի խօսքով շարժւող վախկոտ գեղացիք բորբոք-
ւում էին, մանաւանդ դամնով կթան տուողները, ի-
րենց հարս ու աղջիկները տանը պարապ, կամ աթար

*) Վամնով — գիւղացիք տալիս են իրենց կթաննե-
րը եալլա գնացողներին և փոխարէնը առնում են որոշ բանա-
կութեամբ իւր կամ պանիր:

շինելով էին գրադաճ, իսկ իրենց կթաններէց ուրիշներն էին օգտուում:

— Տղայ, Քէւօ, ասու՛մ էր գեղացիներից մէկը իր հարեանին, այս քանի անգամ է, որ Նազօի տղերքը քաղաքը թացան (եղ, պանիր, լոռ, կաթնալին բերքեր) են տանում: Ե՛հ, մենք էլ եղանք մարդ, նա իր կնիկ տեղովը, այն էլ կազ, գօս, կիսամարդ հալովը զօզան երթալ, մենք գեղից դուրս չըթողնենք մատակի պէս ուռած ու փքւած հարսներիս:

— Ե՛հ, այս տարի մենք ըէիսի ու վարդապետի ջրով խաշւեցանք: Պլիններիս կրակ թափեցին — մի երթաք, անցած տարւալ կօտորածն, էլ չըգիտեմ ինչ, գիտես թէ ամեն տարի պիտի քըրդերն գան, մեր տը դերքն սպանեն:

— Այանեն, տօ՛, թող սպանեն մէկ անգամ, ամբողջ տարին պարտքի ու խարջի տակ սպանւելուց գէշ խո՛ չէ սարի գլխին քրդու դէմ կուելը: Ե՛հ զուր խօսք է. ես ու իմ Աստուած, այս տարի ես Թուճասին ըէիսուճեան ձէն պիտի տամ, մարդը ամէն գործի հասից կըզայ: Ղորդ է ասած, «կանդնած եզը պառկած եզի գլխին կըթրքէ»: Մարդը հանգստութիւն չունի, ինչ մէրը Ծերնկատար է գնացել, նա դաշտից տուն չէ եկել, մենակ քառասուն օրավար հող իրեն համար է հերկել, մէկ այդքան էլ ուրիշի: Երկու տղէրն էլ մածերը ձեռքերը դուրանը բաց հող չըթողին, տակ ու վրայ արին:

— Ես էլ քեզ հետ, Թուճասը արժան է ու կալ: Մարդը իր ճակտի քրտինքով ու խելքով է վաստակել կարողութիւնը: Այս Մլէմի տղէն քիչ կըմնալ, որ մեզի

գաշաը հնձի էլ չըթողնէ: Մէկ գնահ, նազօենց արտերը տես, մարդ մէջը կըկորի: Հողի հետ կուող մարդու աշխատանքը չի կորչի:

Անցաւ մայիս - լունիսը, հերկից պրծան, խոտը հնձեցին, կրեցին, գէգերը զարկին: Ոսկեհատ արտերը հասան, կարմրեցին, գիւղացիք գերանդիներն սկսեցին սարքի-կարգի բերել, ինչպէս գաշաուժ, այնպէս սարերի գալարը հետզհետէ գեղնեց, չորացաւ և քրդու լամուկներն իրենց ոչխարն ու կըթանը սկսեցին գիշերները արածացնել հայերի եայլաների սահմանների մէջ: Մրտօն մի քանի գիշեր իրար վրայ քրդերը փախցրեց՝ դուրս բռնեց իրենց սինօրից (սահման):

Մի գիշեր մեծ ուժով քուրդ հովիւները իրենց աղի տղի՝ Ջազօի հետ լարձակեցին հայ հովիւների վըրայ: Մրտօյի ընկերները չըղիմացան, անցեալ տարւայ կստորածը մտքերն ընկաւ, թողին փախան: Գրանցից որը հեռու էր կուլից, կարողացաւ իր կթանը փախցնել, որն էլ թողեց քրդերու ձեռքին: Մրտօն մինչև վերջը կուլեց: Քրդերից մի մասը հայերի ոչխարները տարին, մի մասն էլ՝ չորս հօգի ընկան Մրտօյի ետևից: Մրտօն անցաւ մի քարի ետև ու սկսեց կրակել: Կէս ժամ չանցաւ՝ երկուսին սպանեց, երրորդին վիրաւորեց, չորրորդն էլ գլուխն առաւ փախաւ: Մրտօն իրենց ոչխարն սկսեց հաւաքել. հեռուից մի գընդակ եկաւ նրա ազգրը ծակեց:

— Այդ քու բաժինը, գոռաց Ջազօն ու հեռացաւ: Մրտօն նրան ձայնից ճանաչեց:

Մինչ այդ լուր էր տարել զօգան Մրտօյի եղբոր՝ Բուժասի տղան իրեն մամին՝ նազօյին, որը անմիջապէս

հրացանը վեր առաւ և ուրիշ դրացիներէ հետ կաղալով
հասաւ որդուն: Եայլաւորներն իրենց որդիքը նախատե-
լով, հայհոյելով ընկան քրդելի ետև, բայց իրենց կը-
թանն էլ չըկարողացան ետ բերել:

Նազօն լուսնիակի լուսով երբ նկատեց որդուն
թւանքը ուսին, շների հետ կթանի շուրջը բոլորեցին
մէկ ուրախացաւ, բայց երբ մօտեցաւ և տեսաւ, որ նա
մահակին կրթնած հազիւ էր շարժուում, սոսկաց ու
ասաց.

— Ա՛յ տղայ, հան, քեզ ինչ է եղել:

— Բան չըկայ, Նազօ, բան չըկայ, Ջազօն իմ
կթանի կշտովն էլ չանցաւ:

Մօր աչքերը իսկոյն նկատեցին գետնի վրայ
արիւնի հետքերը:

Դ

Մրտօն արիւնաքամ եղաւ և նոյն օրը մեռաւ:
Մինչև լոյս՝ լուրը արդէն հասել էր դաշտ. « չար խա-
բարը շուտ է հասնում » և Թումասը Մինասին դաշտում
մշակների մէջ թողնելով ազապ եղբօր՝ Սագօյի հետ եկան
եայլա, բայց Մրտօյի դիակը միայն գրկեցին: Պառաւը
ապառաժ քարի պէս լուռ, մունջ պտտուում էր մեռելի
շուրջը, նրա աչքերից մի կաթիլ արտասուք անգամ
չըհոսեց, միայն երբեմն երբեմն հառաշում էր— Ջազօ
կրկնելով և աչքերը դէպի Ծիբնկատար սարի գլուխը
տնկում: Եռշանը կաթնատնում մի կողմ առանձնացած

անմոռունչ արտասուում էր: Այ՛ տք չէր համարձակոււմ նազօյի առաջ լալու, կամ դժգոհանալու, ամենքը լուռ անշշուկ կամ նստում, կամ ման էին գալիս: Միայն Սազօն սիրտ առաւ չոքել ու համբուրել եղբօր ճակատը: Դրացի պառաւները և հասակաւոր կիները ներս էին մտնում. մօտենում էին անմոռունչ նազօյին՝ ձեռքն առնում, քիչ նստում, տրտում, տխուր և դուրս էին գալիս:

— Եղածն եղաւ, պրծաւ, որդի, մի մտածի, էլ առաջը չենք կարող առնել: Գնա՛ Վարդանի տունը, չարչուց մի թոփ կտաւ բեր, պատանքեմ, տանենք, թաղենք: Տէր-Մովսէսը, իր հայրը՝ իրենց քովը տարին: Սազօ, դուն էլ գնա՛ տղոցը ցոյց տուր, թո՛ղ գերեզմանը փորեն. հօրդ ու տէրտէրի գերեզմանի մէջ: Էնպէս արա, որ ինձ էլ տէղ մնալ երկուսի մէջ:

Տղերքն երկուսն էլ հեռացան: Դրացիները մոլորած չէին իմանում, ինչ խօսէին, քիչ էր մնում, որ նազօն նրանց մխիթարէր: Բայց ինչե՛ր չէր պտոյտ գալի այդ բոպէին նրա գլխում, ինչ պատկերներ չէր առաջ գալիս նրա աչքի առաջ: Ահա, տեսնում էր իր ամուսնուն Մքօյին, դարձեալ տարածւած որդու տեղը, նրա բօյով, նրա կազմւածքով, նրա դէմքով՝ միայն աւելի հասակաւոր: Նա էլ զարկել էր համարեա միւսնոյն տեղից, նա էլ արիւնաքամ էր եղել իր կթանների և նրանց արօտատեղի համար: Որքան էր սիրում նա իր Մրտօյին, ինչքան պիտի կսկծար, եթէ ողջ լինէր մօր նման և կանգնած մեռած որդու կողքին: Նա տեսնում էր իր եղբայրներին, որոնք անյիշատակ, դեռ մանուկ մատաղ զոհ էին գնացել դարձեալ միւսնոյն զօզանի

Համար: Յիշում էր, թէ ինչպէս իր մայրը՝ տէրտէրակինը
 գլխի մազերն էր սրկում. մարում, մազկտում, սղրում
 էր զուակները և չէր մխիթարուում: Առաջը կանգնած
 էր իր լազթանդամ հայր՝ Տէր-Մասն, իրեն փառաւոր
 միրուքով, մոսլլ, բայց կրքերը զսպած, մխիթարում էր
 իրիցկնոջը և նախատում նրա թուլարութիւնը:
 Արծես կրկնում էր նա իր խօսքերը նազօյի ականջ-
 ներում. — Մի լուսահատուիք, ծնածը մեռնելու է,
 սեբախտիք, որ քու ծնածը քրդին կեր չըղանալու
 համար է զոհուել: Տղալ էլի ունինք, էլի կունենանք,
 այդ մեծ շնորհք չէ, քաջութիւնը մեր պատերից մը-
 նացած այս փշուր հողը ձեռքից բաց չըթողնելու մէջն
 է: Քուրդը այս հողը զաւթելուց լ'տոյ՝ մէկ է, տղերքդ
 սոքած են կտորուելու: Համբերութիւն ունեցիր, դու
 ուրիշներին օրինակ ես դառնալու:

Այդտեղ նազօն լիչեց այն կակիծները, որ կրել
 էր թեից և ազգրից անցած զնդակների ցաւից և այն-
 պէս մորմոքեց սիրաշ, որ կարծես նորոգւած լինէին
 վէրքերն: Միտքն ընկաւ առոյգ տարիները, նստած
 ձիերը, կրած նիդակները, հրացանները և թուլացած
 տքն ու ձեռքը ընկաւ, չոքեց որդու կողքին, կրկին
 ու կրկին հառաչելով սպասեց Թուժասի վերադարձին:

Թուժասը բերեց կտաւը: Պառաւը մեծ ասեղը
 թէլ անցկացրեց և իր ձեռքով կարեց, պատանքը: Մի
 քանի պառաւներ փորձեցին ձեռքից առնել, բայց զուր,
 նա ուզում էր դառնութեան բաժակը ամբողջապէս
 կուլ տալ: Թուժասը երկու պարօրից չւանով մի նաշփէտ
 (դաշաշի նման բան) շինեց և էրկի մարդ, կնիկ մարդ,
 ազալ խաւն՝ առանց քահանայի՝ տարին թաղեցին: Երբ

տանից բաւական հեռացան, նուշանը հագիւ սիրտ արաւ
և հեկեկալով լացեց: Թշուա կնոջ պսակի տարին գեռ
չէր լրացել և գեռ նոր էր ճանաչում իր պաշտելի և
արիասիրտ ամուսնին:

Կեռ թաղելու հանդէսը չաւարտած՝ երկու
երիտասարդ հովիւներ եկան իրենց ընկերոջը մօտեցան,
համբուրեցին և ասին Թուժասին .

— Զաֆար աղի տղէն՝ Զազօն իրենց հովիւների
հետ եկաւ սատակները տարաւ ու ասաց. — Խա-
րար տարէք ձեր զօզան. թէ է ինքն է սպանել Մրտօյին,
ու ով որ Աղուճցիներից իր ոչխարի գէժ կենայ, այդ
օրն է ընկնելու:

Ամէնքը լռեցին, ամէնքը լուռ, ախուր հեռա-
ցան:

Զօզանւորները մտածում էին դաշտ վերադառնալ:
Նազօն լամսոտեցաւ ու ասաց, որ մինչև կալը չըվեր-
ջանայ, տեղից ժամ գալու չէ: Թուժասը գնաց հնձելու,
Սազօն վերցրեց Մրտօյի մահակը, հրացանը ու բռնեց
կղբօր տեղը:

Թէև սգի շորեր չէճագան, թէև սգի սենեակ-
ներում չըփակեցան, թէև աշխարհից չառանձնացան,
բայց լուռ ու մտալ շարունակեցին իրանց սև օրը՝ Նա-
զօն ու իրեն որդիքը:

— Աչք գիպաւ, սչք սոսան, մրմնշացին չար
լեզուները:

Ե

Նազօն շնորհքով ո՛չ ուտում էր, ո՛չ խմում, ո՛չ էլ ապրում: Աշխարհը նրա համար մթնկալել էր: Կեանքում շատ վիշտ, շատ ցուտ տարել էր, բայց ո՛չ մէկը այնքան ազդեցութիւն չէր ունեցել նրա վրայ, ինչ որ Մրտայի կորուստը: Քանի Նուշանի ծուռ վիզը տեսնում էր, քանի նրա հառաչանքը լսում էր, այնքան սաստկանում էր Նազօնի վիշտը: Չէր խօսում, չէր լալիս, բայց ներսից հարում, մաշում էր: Այդ բանն աւելի նկատելի էր Սազօնին, որը ամէն օր կթան տուն բերելիս մասնաւորապէս քննում էր, թէ ինչ արդու թեամբ քրքրում էր մայրը: Ինչպէս յօր վշտին անտարբեր չէր Սազօն, նոյնպէս անտարբեր չէր կարող դառնալ Նուշանի վշտին, որը կտրւած ծաղկի նման՝ արեգակի ջերմութեան տակ՝ ծանր վշտից թառամում էր: Երկու թշուառների վիճակը հաւասարապէս տանջում էր պատանի հօգիւն:

Քանի քանի անգամ Սազօն լսել էր, որ Նուշանը լալով ողբում էր սէրը, ողբում էր իր սիրեկանը՝ Մրտան ու անիծում Զազօն: Նազօն էլ հառաչելիս չէր մտածում կրկնել — օխ Մրտա, վախ Զազօ: Քանի քանի անգամ նա մտեցել էր մի իմարեւու յօրը, հարսին, թախանձել էր մտածալ, հանգստանալ, բայց միշտ լուսահատ հեռացել էր նրանց մօտից: Նազօն ծածկում էր վիշտը, ուրանում, թազում էր, իսկ Նուշանը միայն

հառաչում. . . Թշուառ կինը հարսնութիւն էր անում Սազօլի հետ, ամուսնի մահից լիտոյ էլ և տան մէջ խօսում միայն ներքի՝ Գարանի հետ:

Զգում էր Սազօն, թէ որքան որ ապրէր այդ արիւնարբու գազանը՝ Զազօն, ո՛չ մայրն էր մխիթարւելու, ո՛չ Շուշանն էր մոռանալու Մրտօլին, ո՛չ էլ ինքն էր հանգստութիւն վայելելու. բայց ինչ կարող էր անել, Մրտօն երեքին էր զոհել, այնպէս մեռել, ինքն էլ խօ՛չէր կարող մտնել քրդերի սահմանը:

Բայց և այնպէս քրդերն էլ չէին մոռացել իրենց կորուստը: Զազօի հօրքուրի տղին, քեռին ու մի գեռահաս հովիւ էր զոհել Մրտօն, նրանց վրէժը մտածում էին առնել: Երեք անգամ վրայ տին քրդերը, բայց հալ հովիւները կարողացան պաշտպանւել և առանց կորուստի հեռացրին աւազակներին: Սազօլի քաջարտութիւնը և խրախօյսը արիացրել էր հասակաւորներին և բոլորը մէկ ուժ գիմադրել էին թշնամուն: Փամանակը հասաւ, ցրտերն ընկան, զօզանաւորը ետ դարձաւ, բայց Զազօն իր պարտութիւնը չբժուացաւ: Զազօլի հայրը, հասակաւոր քրդերը, շէլխերը նախատում էին իրենց երիտասարդների անճարակութիւնը և զրգուում Ողունցոց գէմ: Երկու անգամ էլ լարձակւեցին Ողունի վրայ, բայց գիւղացիք լաւ էին զինւած՝ գիմադրեցին: Բէխին անդադար քաղաք էին կանչում, նախատում սպառնում, որ ժողովրդից զէնքերը խլէ, վարդապետը եկեղեցու բէմից անիծում էր հրացան կրողներին, բայց հնար չէին գտնում, գեղացիք իրենց պարտէզներում, մարաքներում, խոտերի գէզերում էլի թագցնում էին իրենց զէնքերը:

Բէխը որ միանգամայն նախանձոււմ էր Թուժա-
սի լաջողութեան վրայ և տեսնուժ էր որ գիւղացիք
նրան իր պաշտօնին թեկնածու էին նշանակել, աչքը
անկեց նրա կարողութեան վրայ էլ: Երկու անգամ
մարդ ուղարկեց և Նուշանին ուղեց իր ազապ տղի
համար: Թուժասն ու Նազօն թէև հասկացան նրա
միտքը, բայց չուղեցին բըռնարարել Նուշանի կամքը,
նրան առաջարկեցին բէխի տղան: Երբ Նուշանը հաս-
տատապէս մերժեց, նրան ուղարկեցին հէրանց տունը
իւր ծնողների մօտ և վարդապետին կանչել տւին, որտեղ
Նուշանը բոլորովին հեռացրեց իրենից այդ առաջար-
կութիւնը և կրկին վերադարձու սկստանց տունը:
Այս անգամ բէխը բոլորովին կատաղեց:

Հետեւեալ տարին դարձեալ Նազօն գնաց զօզան:
Քիչի մեծագոյն մասը, կթան ունեցողները բոլորը
նրա հետ գնացին: Վարդապետն այս անգամ այդ հարցին
մինչև անգամ չըմիջամտեց: Հովիւները ամենքը զինուած
էին: Զափար լաղի տղէն իւր ձիաւորներով քանի ազամ
մօտեցան հովիւներին, լարձակումներ գործեցին, միշտ
հարածուցին: Քիչացիներէ իրեն հետեւիլը, հովիւների
միութիւնը, բրդերի փախուստը թէև ուրախութիւն
էր պատճառուժ նազօյին, բայց երբ նկատուժ էր
հարսին, կէնա լծի տակ՝ եզի նման գլուխը քաշ արած,
լուսահատ, տխուր, դարձեալ նորուժուժ էին վերքերը,
դարձեալ մուսլուժ և խորատուժուժ էր դառն մտքերի
մէջ:

Մէկ երկու կողմնակի ուցողներ եզան Նուշանին,
Նազօն Գարանի և ուրիշ բարեկամների միջոցով իմա-
ցրեց, բայց զուր, բոլորին էլ մերժեց թշուա կինը:

Մրտօյի նման առիւծ էլ երբ կը գտնուէր, որ նրա սիրտը գրաւէր :

Նազօն էլ խո՛ սրտով չէր առաջարկու՛մ. նրա հօգին այնպիսի շղթաներով կապուած էր Շուշանի հետ. որ եօթը տարի տասնեակ վարդապետ աշխատէին, չէին կարող քակել: Մրտօյի լիշատակը նորա մէջ անփոփուած էր. Նազօյի համար: Շուշանի սիրան էլ պինդ էր կպել զօզանի վըալ, Մրտօյի թափած արիւնով: Ալդտեղ ոչ-խարները, մացառները, արօտները, ամարանոցի քոխերը հովւական սրինգն ու մահակը, թւանքն ու դանակը, կովկիթն ու քուլակը, բոլորը նւիրական էին դարձել Շուշանի համար, բոլորը լիշեցնում էին Շուշանին նրա կորցրած առիւծասիրտ Մրտօյին: Ինչպէս որ Նազօյի համար առանց զօզանի կեանք չրկար, այնպէս էլ Շուշանը դարնան հոտը բուրելու պէս՝ թռչում էր և թռչելու էր յաւիտեան գէպի նւիրական Ծիրնկատար...

2

Մի գիշեր յանկարծ Ջազօն երեք ընկերով յարձակեց Սազօյի վրայ: Հովիւները հեռու էին, ինքն էլ բնակութիւնից շատ էր հեռացել: Գրութիւնը դժւար էր, բայց Սազօյի համար երկիւղ չըկար: Նա լուսնի լուսով Ջազօյին ճանաչեց, նրա սպիտակ ձիւղ և մի քարի ետև անցնելով՝ հրացանն ուղղակի կրծքին ուղղեց: Պամբռները արդէն շրջապատել էին աւազակներին, որոնք դրանց հետ զբաղւած ժամանակը, Սազօյի գն-

դակը Ջագօյին գլորեց ձիուց: Ջագօյի ընկերները ընկրկեցան, բայց մի քիչ լետոյ (ետ դարձան, [Տրացանները դարդկեցին և ձիերը ուղղակի քշեցին Սագօյի վերայ: Մինչ այդ Սագօն նորից լցրեց իր [Տրացանը և ուղղեց եկողներից երկրորդի կրծքին: Սա էլ գլորեց, իսկ երրորդը ձին մտրակեց ու հեռացաւ:

Նրացանի ձայնը հասել էր ոչ միայն հովիւներին, այլ և բնակութիւններին: Կէս ժամ չանցած՝ Թուժասի տղերքը շրջապատեցին իրենց հօրեղբորը, որը ոչխարը նրանց լանձնելով, Ջագօյի գլուխը կտրեց և քեանքիւլից (գաղաթի մագ) բռնած վագեց գէպի տուն: Նագօն, որ նոյնպէս դիմել էր արօտատեղը, Սագօյին գիժաւորելու, ճանապարհին նրան չբախտահեց և երբ թոռները նրան իմացրին, թէ Սագօն տուն տարաւ Ջագօյի գլուխը, նա առանց ականջներին հաւատալու՝ կաղալով ետ վագեց, որդուն գրկելու:

Սագօն տուն մտնելու պէս՝ Ջագօի գլուխը գրեց Նուշանի սոքերի տակ՝ ասելով.

— Է՛լ մի հառաչիլ, Մրտօյի վրէժը լուծւած է:

Նուշանը գրկելով համբուրեց Սագօյին ու գողգողալով ասաց.

— Գուրս գցէ, մի կեզտոտիլ այդ մուռտարի արիւնով քու մատներդ: Գուրս գցի՛ր դրան, հեռացրու աչքիս առաջից:

Մի տարի լետոյ, Նուշանը Ծիրնկատարի լանջերում, իրենց զօզանում կթում էր դարձեալ Նագօյինց ոչխարները: Նրանից հեռացել էր տխրութեան քօղը.

ուրախ զւարթ կատակներ էր անուժ Սագօյի հետ: Նա տւել էր Սագօյին մի որդի, որին մամը՝ Նագօն Մրտօ էր անւանել և գիշեր ցերեկ օրօրօցի քովից չէր հեռանում ու անդադար երգում երեսին զօզանի համար զոհւած սիրելիների պատմութիւնը: Վարդապետը Սագօյին ու Շուշանին չէր պսակել, բայց Նագօն տարել էր Սասուն, Սպիղանքցի ծերունի տէր Վանէսին պսակել էր տւել:

— Որդի, ասում էր պառաւը Սագօին, հիմի էլ դարդ չունիմ: Մրտօյի տեղը Մրտօ էլ ունիմ, զօզանիս քովն էլ մարդ չի մօտենալ: Թումասը արգէն Օղունի բէիս էր ընտրւել, վարդապետի կամքի հակառակ, գեղում վարժապետ էր բերել, վարժատուն բացել:

Նախկին բէիսը անդադար կրկնում էր վարդապետին.

— Դժոխքից փախած էս ջադու պառաւը քանի որ կապրի, մեր գեղում երկնքի ագարակի գործն առաջ չի երթալ:

— Բայց ինչպէս անենք, պատասխանում էր յուսահատ պրօպագանդայի աշակերտը, քանի որ այդ ջադիների թիւը չի պակասում Տարօնից:

27 Ապրելի 1893 թ.

Թիֆլիս

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ

Վ Ի Պ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԸԼՄԸՍՑ	Թրքահայերի կեանքից	գինն է	2 ռ.	10 զա.
Խեի - ԿԸԸԸՊԵՏ .	-	-	1 ռ.	5 "
ՔՈՒ - ԵՂԻԿ	-	-	30 կ.	30 շճ.
ՃԻՆՈՑ	-	-	30 կ.	30 շճ.
ԺՐԻՐՆՔՆԵՐ	-	-	30 կ.	30 շճ.
ԲԷՐԱՇ ԸՌՇՔԷԼԸ	-	-	25 կ.	25 "
ԹՈՒԹԻ ՍԻՄՐԻՂՆԵՐ	-	-	10 կ.	10 "
ՊԸՏԿԵՐՆԵՐ	Թրքահայերի կեանքից		1 ռ.	5 զա.
ՎԻՆՔԵՐԸՆԻՑՆԻ ՊԸՂՏՆԻՔԸ	-	-	1 ռ.	5 "

ՈՎ Բ Ե Ր Պ Ա Կ Ա Ն

ՃՈՒՅՐՆ ԵՐԵՔ արարած.	Թրքահայ կեանք.	1 ռ.	5 զա.
ՍԸՐԸՔ շինգ	-	30 կ.	30 շճ.
ԽԸԼԻՓԸԹ Պատմական տեսութիւն.		30 կ.	30 "

Իմել Թիլիսի Կենտրոնական և Գուտաէմբլերգ Պրա-
վաճառանոցները և Կովկասի քաղաքների հայ գրա-
վաճառներին :

Պրավաճառները կարող են զիմել նոյնպէս.

TAURIS (Perse), ATRPET

որոնց կը լինի սոփորական 20 ° գիջումն :

2

Q. U. T. H.

ԱՐՏԱՏՊԻԱԾ Է

- Մշակիչ- իրադրի №-70 — 71 1903 թ.

Ղ Ա Դ Ի

(20788)

—Դռներուն լաւ հսկիր, Դուրսուն, եթէ կասկածելի մէկը անցնի՝ հետևիր և տես, ուր կը մտնի: Աչքդ բաց- քննիր, մի քնիր...

—Անհոգ կացէք, էֆէնդիս, ձեր ծառան շան հոտառութիւն ունի, երկնքից թռչող թռչունն անգամ չէ կարող իմ քննութիւններից զերծ մնալ:

—Քեզի տեսնեմ, տեղն ու տեղդ աչք ու ականջ եղիր և օգի մէջ թռչող արլի ձայնին էլ հետևիր: Մի քանի օր էլ համբերիր, գործդ առաջ տար, ես քեզ չբաղ կանեմ, վաթան կը ճամբեմ, մեծ մեծ խոստումներ տալով դուրս եկաւ Անատոլու Ղազասքար Արդի-էֆէնդին իրանց բակից: Իւսկիւղարի խորքերում, այգեստանների մէջ մի անմարդաբնակ փողոցում էր ապրում Արդի-էֆէնդին: Աչքերը չորս կողմը չռելով Դուրսունը բաւական ժամանակ զիտեց նրա ընթացքը և երբ ձայնը չը հասնելու չափ հեռացաւ, գլուխը շարժելով ասաց. —Ցաննութը տարի է, որ ասում ես, չբաղ կանեմ, չբաղ կանեմ, դեռ պիտի անես: Մագերս քո գրանը ճերմակցուցի, երեսիս վրա քո տուած չարչարանքները

խորշումներ բացին, մէջքս քս բեռների տակ կորացաւ, առանց սոճիկի, առանց կուշտ փոր հացի, առանց աշորի անցկացրի օրերս... Դեռ այդ բոլորը բաւական չէին՝ ծաղրում էլ ես...: Բայց ինչ կարող եմ անել, սե՛ն իրա կողմն է, ... Դուքսունը տանջուի, որ Արդին քէն անի: Ա՛խ թէ մէկ...:

Երկար անշարժ, աչքերը սղլած դիտելուց լիտայ սրտի խորքից մի դասն հոգոց քաշեց և տուն դարձաւ: Դուքսունը մտախոհ իր որջում անկողնի վրայ թէք ընկած երեւակայում էր, երբ զուռը բաղխեցին: Իսկոյն թռաւ և բաց արեց: Դուքսունն երբ սրահայաց աշխատում էր լիշեւ աշգ անձանօթին, Արդին թեւից քաշեց և ստեց:

— Դուքսը կազնիր և եթէ մարդ չհարցնէ թէ, որ կողմը գնացին երկու անցորդները — աստ, Վալիդէ Սուլթան ջամի (մզկիթ) կողմն անցան:

— Հասկանում եմ, գլխիս վրա, էֆէնդի... ասելով Դուքսունը լօնքերը կիտած դուրսէլաւ, մտքումը շարանալով, որ չէր կարողանում այդ ծանօթ զէմքը լիշեւ: Երբ անձանօթի տիպարը մտքում պատկերացրած, դրան կողքի քարի վրա նստած՝ մտմտում էր, փողոցի ծայրից երկու ենիշէրի երեւեցան, նրանք իր կողմը էին գալիս: Դուքսունը սովորական վախկոտներից չէր, բայց սուտ խօսելու պատրաստ ելլէ, և ենիշէրների փայլուն գէնքերը նրան շլարեցրին: Սա մտածում էր թէ՛ ինչ կը լինէր իր վերջը, եթէ ենիշէրիները մտնէին տուն որոնելու տիրջն ու անձանօթ հիւրին: Վերջապէս մտեցան ենիշէրիները և բարեւելով ասին:

— Հրեշտակային սղջոյն:

— Հրեշտակակերպ խալամներին, հաւատացեալ-ներին խաղաղութիւն:

— Այս ճանապարհով երկու մարդ օր կողմը գնացին, ասաց ենիչէրիներից մէկը:

— Վալիդէ Սուլթան ջամիի կողմն իջան:

— Զը ճանչցար, ովքեր էին:

— Օմարիաբ ուշք չը դարձրի:

— Անպատճառ սոֆիթաները թագցրած կը լինին անիծածին: Վազիր հասնենք, քանի գեռ նրան չեն աներևոյթացրել, ասելով շարունակեցին ճանապարհը:

— Հաստատ « դժոխքի » մուրէ » անիծածը, ինչ լաւ մտածել են — Արա-ձէհէնէմ, պատասխանեց ընկերը հետեւելով:

— Թօսելու ժամանակը չէ, հասնենք:

Դուրսունը « Արա - ձէհէնէմը » լսելու պէս, շրթունքները այնպէս ուռցրեց, որ քիչ մնաց տրաքւէին: Իսկոյն մտաբերեց կասկածելի հիւրի գէմքը, ստակաց և այնպէս մոլորւած մնաց, որ չէր իմանում ինչ ընթացք բռնէր: Երկու օր առաջ մունեաթիկով Կ. Պօլսի բոլոր թաղերում նորընտիր ենիչէրի հիւսէին Աուլքէթիու գասի աղան, մի խմբով ման էր եկել և սպանացել, որով որ Արա-ձէհէնէմին տեսնէր և չիմացնէր ժամանակին ենիչէրի օջախին, անով տեղով պիտի այլուէր: Իսկ իր անխոհեմ տէրը օր ցերեկով հիւրնկալում էր իր տանը այդպիսի վտանգաւոր մարդու: Բիչ մտածելուց լետոյ, Դուրսունը մտքումը ուրախացած, ներս մտաւ, դռները պնդացրեց և մօտեցաւ, ընդունարանի դռներին՝ նրանց խօսակցութիւնները լսելու: Հիւրը աներևոյթացել էր, իսկ տէրը անհանգիստ մի սենեակից միւսն էր մտնում:

Գոնասպանին բակում տեսնելով, Աբգի էֆէնդին հարցրեց:

— Գու ինչի ներս երկար:

— Երկու ենիչէրի անցանե հարցին Ղարա-ձէհէն:

նէմին:

— Սուս, լոխր, ձայնդ...:

— Ինչի էք նեղանում, ես նրանց ուղակեցի գէպի ցած:

— Գնա՛, գրանը սպասիր և եթէ մի անակնկալ գէպք պատահի՛՝ գանդակի չւանը քաշիր: Ախար... ան... երբ պիտի դու մարդ գառնաս, բան հասկանաս: Այս փորձանքն էլ որ անցկացնենք, ես քեզ չբող պիտի անեմ:

— Էֆէնդի, ես էլ չեմ կարող մնալ այս տանը, վախենում եմ, ենիչէրիները ինձ սպառնացին: «Ղարա-ձէհէննէմի» անունը որ տուին, ես սոսկացի Ես կը վերագառնամ:

— Եթեմար, գնա՛ գործիդ, քեզ ինչ պիտի անեն, ես կը թողնեմ, որ քու մի մաղին դիպչեն:

— Եթէ դուք նրանց տեսած լինէիք, այդպէս հեշտ հեշտ չէիք խօսի. Ղարա-ձէհէննէմի համար կը վառեն ձեզ տնով տեղով...:

— Գնա՛, որդի, գնա՛, գրանը սպասէ, ես ինչ որ քեզ ասում եմ, լսէ...: Երկու օրս էլ սպասէ, չբող կանեմ, ինչքան որ փող ուզես, կը տամ, կուղարկեմ հայրենիք:

— Պեանքը, էֆէնդի, քաղցր բան է, վախը ինձ սոսկացնում է, ես չեմ կարող մի վարկեան էլի մնալ ձեր օջախը, հալալ արէք կերած հացս՝ օրհնեցէք ինձ, ասելով դուրս եկաւ բակից Գուքսունը:

Բայց այս գէպքում երկիւղը տիրեց Աբգի էֆէնդիին, նրա մտքից մի անկնթարթում հազար ու մի բան անցաւ:

Նա կասկածում էր թէ խորամանկ ծառան կարող էր, զնալ
և իրան մատնել: Բաւական էր, որ իմացնէր թէ՛ Ար-
գին հէւրընկալել էր Ղարա-ձէհէննէմին: Այս միտքը
սաստիկ ազդեց Անատուլու-Ղազարէրի վրա, որ նա գուրս
թռաւ և սկսեց կանչել.

— Դուրսուն, Դուրսուն, Դուրսուն:

— Հրամեցէք, էֆէնգիս, ասեց հեռւից ետ դառ-
նալով դանապանը:

— Եկ, եկ, ծառայութեանդ վարձը տամ, եկ, դու
էլ հալալ արա ինձ քո աշխատութիւնը, յետոյ գնա:

Դուրսունը կամաց կամաց քայլերը ետ դարձրեց
տան կողմը: Տասնութը տարւայ աշխատանքի ընթաց-
քում այս առջին անգամն էր, որ տէրը խոնարհում էր,
այս առաջին անգամն էր, որ բանակալ Արգին
ընկել էր իր ճանկերում:

— Ախար, այդպէս հեռանալ չի լինի, ուզում ես
զնալ, վախենում ես, Ասուած քեզ հետ: Բայց այնպէս
արա, որ այն աշխարհում ես քեզ պարտաւոր չը մնամ:
Ես քու ծառայութիւնից այնքան գոհ էի, որ տասնութ
տարի է քեզ բաց չը թողի: Բեզ պէս հաւատարիմ,
ո՞վ է իմանում, էլ կարող եմ գտնել, թէ ոչ: Ասո՛, ինչ որ
խնդրես, մերժում չես ստանալ: Բո այնքան աշխատանքի
վարձ ես պատրաստ եմ բոլոր ցանկութիւններդ կատարել:

— Չեր առողջութիւնը և հոգանաւորութիւնն
եմ ցանկանում, ձեր շքի տակ որ լինեմ, էլ ինձ ինչ
կը պակասի:

— Այլա՛հի անունով երդւում եմ, ուզիր և վս-
տահ՛ եղիր, որ կը ստանաս ցանկացածդ:

— Բացի քու փառաւորութիւնից, ոչ մի ցան-

կութիւն չունիմ, էֆէնդի:

— Ասա, հայրենիք ես գնում, ազարակ, ալդի, անտառ, կայք, փող, ինչ որ ցանկանում ես, գիտես, որ կարող եմ սուլթանի հրովարտակով քեզ վրա հաստատել տալ . . . :

— Ոչինչ պէտք չէ, բացի ձեր հովանաւորութիւնը և եթէ կը բարեհաճէք, նշանակեցէք ինձ ձեր իշխանութեան տակ գտնուած Անատոլի-աշխարհի մի անկիւնում՝ իմ ծննդավայր—Մուշ քաղքում՝ զաղի . . . :

— Ախար դու գրել, կարդալ չը գիգես, ես քեզ ինչպէս զաղի նշանակել տամ . . . :

— Որ ուզենաք, կարող էք, մի բան կանեմ, եօլա կը տանեմ: Այնքան թուղթ մրտողներ կան, որ նրանցից մէկին կը գիմեմ . . . :

— Այ մարդ, այնպէս բան ես խնդրում, որ ես չը գիգեմ ինչ պատասխանեմ: Պատրաստ եմ երգումս պահպանելու համար, ցանկութիւնդ կատարել, բայց . . . :

— Մի վախենաք, վստահ եղէք ինձ վրա, ես չեմ թող տալ, որ իմ պատճառով ողորմած տէրս կարմրի:

— Էլ ճարս ինչ, լաւ, ես քեզ էգուց կը բերեմ Ծէլիս-իւլ-Ռսլամից բէրաթը, ճանապարհ կը ձգեմ:

— Աստուած հաստատ պահէ:

Այս խօսակցութիւնից մի ամիս չանցած Դուրսունը Առդի-էֆէնդի դարձած՝ եկաւ Մուշ: Նրա նախկին լնկերները և բարեկամները, որոնց մօտ-մէկ երկու օր առաջ տեղեկատու էր եկել, ձեռնորում գիմաւորեցին քաղաքից երեք չորս ժամ հեռու և մեծ հանդիսով բնդունեցին: Արդի-էֆէնդին իր աղախիններից մէկի

հետ էլ ամուսնացրել էր Դուրսունին և բաւականաչափ փող տալով՝ ճանապարհ էր գցել:

Դուրսունը բացի տան կահ-կարասիներից և յինոջ սնգուկներից, իր հետ բերում էր ութ-տասը ջլալ ապրանք, որը շատ լաւ հսկում և անձրևից ու խոնաւութիւնից պաշտպանում էր: Իսկ տուն իջնելիս այդ ջլալները զգուշութեամբ զետեղեց մի առանձին սենեակում, որի բանալին կնոջն անգամ չէր հաւատում:

Բարեբաղդաբար նախորդ դագին, Կ. Պօլսից վաղօրօք հրաման ստացած լինելով՝ առանց սպասելու յաջորդին՝ Ղալսերի էր գնացել և Դուրսունը հասնելուն պէս, առանց ձևականութեան ստանձնել էր պաշտօնը: Այն ժամանակները դատարաններում ոչ անդամներ կային և ոչ էլ գրագիր, քարտուղար: Ղագին թէ վճռում էր, թէ բանտարկում էր, թէ սաստում էր, թէ ծեծել էր տալիս, մի խօսքով բացարձակ տէր էր իր վիճակին և հրամանները կատարելու համար ձեռքի տակ պատրաստ ունէր մի քանի տասնեակ ենիչէրի: Մուշի փաշան թէև գոյութիւն ունէր, բայց նա էլ բացարձակապէս հնազանդւում էր «երկնատուր շէրիաթի» վարդապետի պատգամների առաջ: Դուրսունի սուրը կտրում էր աջից էլ, ձախից էլ, բաւական էր, որ մի մարդ մեռնէր, նա որպէս զատիմ (բաժանարար), մտնում էր հանգուցեայի տունը և յայտնի բան է, ժառանգութեան ամենամեծ մասն ընդունելով՝ հեռանում: Վայ թէ մէկը գժւէր և գանդատի մտնէր մէհքէմէի (դատարան) գանից, տունը-տեղը, կայքը-կարողութիւնը թէ ծախեր դարձեալ չէր ազատվի Դուրսունի ճանկից: Ահագին եկամուտ ունէր, այնպէս որ մի ձեռքը սկուռ, արծաթի,

միւսը գոհարի քահուումն էր:

Անցել էր մի ասանակ տարի. Դուբսոււնը ախրացել էր ագարակների, այգիների և ջրաղացների: Շինել էր Մուշում իր համար ընդարձակ տներ, բազարում դուշաններ, խաներ (քարվանսարալ) և կանանոցը զարդարել քառասունից աւելի գեղանի ստրուկներով, աղախիներով: Իր ընտրած ասպարիզում նա չէր սխալուել: Բայց վերջին տարիներուս նրա մուտքը շատ քչացել էր, ամեն մարդ նրա ագահութիւնից զղւած՝ ոչ ոք մի գործով չէր դիմում նրա ատեանը: Աւելի լաւ էին համարում իրանց հարեանից հալածուել, հարստահաւել, գրկանք տանել, քան էթ Դուբսոււնի ճանկն ընկել:

Բայց Մատտենց Մկոն Դուբսոււնից աւելի ագահ եղբորից՝ Ջփէից տանջւած լինելով, գիմեց դադիին գանգատով և Ջփէին գցեց նրա ճանկը: Ջփէն գիտէր, որ Դուբսոււնը իրան լաւ քամելու էր, բայց աւելի լաւ համարեց թուրքին—դադիին ուտեցնել իր մալը, քան թէ հալալ եղբօրը: Դուբսոււնն էլ նկատելով, որ իւզտ տեղն էր ընկել, ուրիշ բան ու գործ էլ չուեննալով, սկսեց ձգձգել երկու եղբօրն էլ, երբեմն մէկի կողմն էր անցնում, երբեմն միւսի: Բայց աւելի Ջփէին էր սլաշտպանում և ամեն անգամ եղբայրներին մէհֆէմէ (տեսան) հրաւիրելիս, տոպրակով փող կաշառք էր ստանում Ջփէից: Եօթը տարի այսպէս տանջեց երկու եղբօրն էլ, առաց մի որոշ եղբակացութան: Ջփէն ոչ միայն նազդ փողից, մալից, այլ նոյնպէս անշարժ կալքերից էլ գրկեց: Այն աստիճանի հասաւ, որ երկու եղբայրները ձանձրացած, չէին ուզում դատարան գնալ և Դուբսոււնի երեսը տեսնել, բայց ինչ օգուտ,

որ դադու ձեռքից չէին ազատուում: Ամեն օր դատարանի սպասաւորները քաշէքաշ նրանց տանում էին: Դուսու-նը երկու եզրօրն էլ լաւ քամելուց լետոյ, երբ նկատեալ էր, որ երկուսի մօտ էլ լուսայի ուրիշ բան չէր մնացել, աչս անգամ նրանցից դատաստանական ծախսերն էր սրահանջում: Գործն աչս աստիճանի հասաւ, որ երկու եզրայրներն էլ ուզում էին հաշտուել և միջնորդներն ալդ բանը աջողեցրին: Վերջապէս երկու եզրայր մի կերպի գէս ու գէն ընկնելուց լետոյ, լիսուն տոկոսով դատն երկու-երեք քիսայ * | ստակ և բերին յանձնեցին, դատասաւորին որ սզատուեն:

— Ըֆէնդի, ասեց Մ'հօն, փողերը յանձնելիս, հաստ փճիւրը:

— Գլխիս վրա, ասեց Դուրսուը, տուէք մի մի ուրարիա ** | երթամ բերեմ:

Օտր ճուր արին, այդ էլ տուին ու Դուրսուը Կ. Պոլսից մեծ գզուշութեամբ բերած ջւալների տակից երկու կտոր գրւած թուղթ բերեց, տուեց երկու եզրօրն ու ճանապարհ դրեց:

Չքէն, որ միջնորդների միջոցով խոտացել էր Մ'հօին մի տուն և մի այդի տալ, այսքան ձգձգւած գործը մի կերպ վերջացելու համար, դադից փճիւրը ստանալուն պէս, գրժեց խոտման գէմ, և չք գիջաւ եզրօրը բաւականութիւն տալու: Մ'հօի քունը կարեց,

* | Հինգ հարիւր զուբուշ, մօտ հիմիկւա փողով
50 բուրլի

** | Հինգ զուբուշ, մօտ հիմիկւա փողով 1 Ը Ը
բլի արժէ:

երբ վերջին անգամ էլ յոյւր յերագործւեց: Սա վճիռը առաւ, գնաց Էրզրում, մի խնդիրք գրող մօլլաի դիմեց և խոստացաւ եղբօրից ստանալիքի կէսը, եթէ իրան օգնէր, որ նպատակին հասցնէր:

Մօլլան գործը տեղեկանալուց յետոյ, յուսադրեց Մկոնն և խոստացաւ եղբօր կարողութեան կէսը իրան դարձնել, բայց երբ սկսեց թուղթը կարգալ, ապշած և զարմացած մնաց:

— Սա, ասաց տարակուսւած մօլլան, սա մի թալաղնամէ «ապասհարգանի» թուղթ է, սրանով Մէհեմէդի որդի Ալին, իր կնոջ Փաթիմէ Նէջէբ ղզին ազատում է և իրաւունք է տալիս ուզած մարդու հետ ամուսնանալու: Սա մի երեսուն տարի առաջ Կ.Պոլսում կատարւած թուղթ է, այն էլ սեւագրութիւն է, այստեղ ձեր գործի վերաբերեալ ոչինչ չը կալ:

— Լաւ կարգացէք, էֆէնդի, այդ թուղթը տըւաւ ինձ զագին:

— Սա սխալուել է այս ուրիշ թուղթ է, գնա նրա մօտ իսկական վճիռը բեր, ես քանդել կը տամ նրա կայացրածը:

Մկոն հազար ու մի անէծք թափելով, երեք օրուայ ճանապարհ նօրից ետ դարձաւ: Եռգնած յագնած մտաւ մէհքէմէ որտեղ ամբողջ Մուշի ծերունի թուրքերը հաւաքւած, մի յափշտակած հալ աղջկանից բռնի ուզում էին կրօնափոխութեան խոստում կորզել:

— Էֆէնդի, ասաց Մկոն, այս թուղթը իմ գործի վճիռը չէ, կնիկ մարդ բաց թողնելու վերաբերեալ թուղթ է: Ունդրում եմ մեր գործի վճիռը տւէք:

— Այ դու գեաւունք, ես տասը ջլալ մէկ-մէկ

բաժնեցի, ոչ ոք գանգատ չարաւ. դու չը հաւնեցար
իմ թղթին: Խոջաներ, խո լսեցիք, սա հայհոյում է մեր
գիւրը, այն գիւրը, որով մեր Ղուբանն է գրւած: Այս տեսակ
հայհոյողի պատիժը, լեզուն վզից հանելն է: Ես ամեն,
բանի կը համբերեմ, բայց կրօնական սրբութեան չեմ
կարող թողել, որ անարգեն, ոտքի տակ գցեն անհա-
ւատները: Ալի բայրախտան, շուտ տար, սրա վզակոթիցը
լեզուն հանէ, բեր, որ այստեղ հաւաքւած ալեզարդ
ծերունիները բոլորը տեսնեն և իմանան գաւուրները,
որ չի կարելի մեր սրբութիւնների դէմ մեղանչել:

Մի քանի բօլէից յետոյ, Ալին ներկայացրեց
գատաւորներին Մկոի լեզուն մի սկուտեղի վրա գրւած:

24 Մայիսի 1892 թ.

Բագու:

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ

Վ Ի Պ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՏՈՒԹՒԻՒՆՆԵՐԸ

ԸԼՄԸՍՏ	Թրքաճայերի կեանքից	գինն է	2 ռ.	10 զա.
Խեի - ԿԸԲԸՊԵՏ .	"	"	1 ռ.	5 "
ՔՈՌ - ԵՂԻԿ	"	"	30 կ.	30 շճ.
ՇԽՆՈՑ	"	"	30 կ.	30 շճ.
ԺԲԲԵՆԳՆԵՐ	"	"	30 կ.	30 շճ.
ԲԷՐՍԸ ԸՌԸՔԷԼԸ	"	"	25 կ.	25 "
ԽՈՍԻ ԱԽՄԲ՝ ԶԻՆԵՐ	"	"	10 կ.	10 "
ՊԸՏԿԵՐՆԵՐ	Թրքաճայերի կեանքից		1 ռ.	5 զա.
ՎԻՔԸՆԸՆԸՅԻ ԳԸՂՏԵՒՔԸ	"	"	1 ռ.	5 "

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՇՈՒՇԸՆ	Երեք արարած.	Թրքաճայ կեան.	1 ռ.	5 զա.
ՍԸՐԸՐՔ	Հինգ	"	30 կ.	30 շճ.
ԽԸԼԻՓԸԽ	Պատմական տեսութիւն :		30 կ.	30 "

Գիմել Թիլիսի Կենտրոնական և Գուտտէմբերգ Գրա-
վաճառանոցները և Կովկասի քաղաքների հայ գրա-
վաճառներին :

Գրավաճառները կարող են ղիմել նոյնպէս.

TAURIS (Perse) ATRPET

որոնց կը լինի սոփորական 20 ° զիջումն :

b

1694 10-29-58

ԱՐՏԱՏՊԻԱԾ Է

- Տարադ - հանդիսի № 10 1903 թ.

ՎԻՇԱՊԻ ԱՌԱՔԱՍՏԸ

ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԸ

Աղջամուղջը հետզհետէ ցրուում էր, խաւարի ճիգն սպառած սլանուում դէպի արևմուտք, աղամի մութը տեղի էր տալիս յոյսին, աստղերի ոսկէ ցուրքերը ցնդում, անհետանում էին, քանի որ արևի գալու աւետիսն էր բերել վարդամատ արշալոյսը: Տժգոյն մարախուղը որքան թանձրացած՝ ծածկում էր Պարխար լեռների գազաթները, մէզի շերտերը, ամպանման քուլարուլա իրար կցւած ու դասաւորւած շարքերը, որլան որ ուզում էին բռնել յոյսը, որ շիջնի, շրտարածւի դաշտերի սարհարթերի, հովիտների և ձորերի խորքերը, բայց արևի աւետարները լուսաւորելով թուխւր, արծաթագօծել էր բամբակի նման մարախուղը և սրանց ծակոտիներից սլացել-իջել, տարածւել էր երկրի ամեն կողմը, սթափեցրել բուսական և կենդանական աշխարհը իրենց թմրութիւնից. բոլորը գլուխ բարձրացած, գլարթադէմ դիմաւորում էին կենսաբեր աբեզակին: Բոպէսական արագութեամբ վարդագգեստ արշալոյսը իր ճառագայթաձև սլացումներով անօսրացած

ցեղեցում ու անհետացնում էր մէզի բիրաւոր քույր-ները, թէև նրանց անբնդհատ յաջորդում էին գետնից, գետից, լճակներից ու ծովից բարձրացող գոլորշիները, որոնք զինուորների նման շարեշար առաջանում էին անհետացածների տեղերը դրաւելու: Պոնտական տփերից քամիի հետ դէպի հարաւ սլացող գոլորշիները Պարխարի բարձունքի դաժան սառնամանքից ցրտահար, որքան որ թանձրանում ու մխիտանում էին լեռնալանջերի մշուշներին, բայց այդ բորբի կազմած վարագոյրը անգոր էր արշալոյսի պայծառ ճաճանշների բնթացքը կապելու. մութը յագթահարւած էր. օդնութիւնների գուր: Արկիճն արդէն պայծառացել էր, մութ կապոյտ-երկնակամարին փոխարինել էր յոս — երկնադոյնը, քնած աշխարհը զարթել էր թարմացած ու զւարթացած, ծտերն ու ծիծտաները սրարշաւ թնշէտում էին բարձունքում, դաւարի վրա մարդարտանման շարւած ցօղբ ցոլում էր շոգակի նման, շէների ծխահաններից ծուխը բարձրանում ու ցրում էր բարձրերում և շարժումը սաստկանում էր: Ճարերքի կոխը անհաւասար սյժերի մէջ էր կատարում, մտտախուզը պարտաւորւած էր զինաթմափ լինել, կորչել, անհետանալ իւր մօր խաւարի հտնից, շանի որ արևն արդէն իւր սպիկգօծ սկաւարակի շուրթը բարձրացրեց: Պարխարի ուսից և յոսաշող ճառագայթները սփռեց դէպի երկիր:

Հովի անբնդհատ հոսող մեղմիկ շոցիներին գետերի, հեղեղաւանների և ջրվեժների քչքչոցին, երկնա-

սլաց թռչունների ճուղղումին ընկերացան անասունների և զազանների աղաղակները, հովւական սրինդները, մաճկալների հոռովելը, քաղաքային ամբօխի ժխորը, որոնք միախմբւած՝ կենդանի համերգ կազմեցին։ Աւ այս բոլորը կարծես թափօրով ընդառաջ էին գնացել ջերմարեր արեգակին և փառարանում նրա կենսարուխ, կենսաբեր և կենսարար շնորհարար խումները։ Արեգակի բոցալի ցոլքերով ճառագայթները ծփում էին երկնքում աստղերի փոխարէն, հորիզօնը կարծես վարդագոյն ու մանիշակագոյն բէհէգով էր ծածկւել, սպիտակ ամպերը շողջողում էին սկիւթել գիպակների նման, գալար գաշտերն և անտաններն իրանց ծփանքով անդրադարձել էին օդի բարձր շերտերում և իրանց ցոլացող հայելու մէջ հիւրընկալել էին երկնքի շողը։ Միծաղ ու ժպիտ էր հաղել ողջ բնութիւնը։ Աօդանջում էին զանգերը՝ զանգակատների զազամներից՝ իրանց որոտալի ձայնով հրակը կարդում աշխարհին, տաճարների անուշահոտ խնկի, կնդրուկի ու գմուռի բուրմունքի, սրտազրաւ մեղեդիների, հոգեպարար օրհներգութիւնների հետ փառարանութիւնները գէպ երկինք համբառնալու՝ լոյսի, ջերմութեան շնորհառաք արեին։ որ իրանց ապտակ էր խաւարից, խոնաութեան մառախուղից, փրկել սառնամանիքի թագաւորութիւնից և վերստին կեանք էր ներշնչել՝ բնութեան բարիքները վայելելու։ Աայտուել էր բոյսը, ցնծում էր ամբողջ բնութիւնը, բերկրել էին մարդիկ, ազատ, ուրախ խայտում էին ամենքը և արեր պաշտւած, փառարանւած և սիրւած՝ վեր-վեր էր բարձրանում

սաստկացնելով իր ջերմութիւնը:

Տօթը] աստիճանաբար սաստկացաւ: Երբեմն շարժւող օդը նման էր հնոցից արտահոսող ջերմութեան: Երկնակամարից վաղ անհատացել էին թռչունները, չէր լսոււմ ոչ մի ճիշ, ոչ մի ճռինչ: Կենդանիները յոգնած ու թուլացած՝ մտել էին շւաքները ծառերի հովանիների տակ պառկել, որոճում, մարսում ու նիհրում էին: Տաքից ճնշւած անասունները ընկած տեղերից շարժւել անզամ չէին ցանկանում: Ջերմութիւնից նեղւել ու շնչասպառ էր եղել արջն էլ, առիւծն էլ, դայյն էլ, աղւէսն էլ, նապաստակն ու սկիւռն անգամ: Կժւար էին շնչում բոլորն էլ. տապ օդը չէր բաւականացնում, չէր գովացնում նրանց թոքը և շոգի ահից ոչ ոք չէր էլ մտածում բնից դուրս գալ, արևահար դառնալ: Ճանճերը, ճճիները, ծառի բնի վրա արածող որդները անզամ չէին իշխում շարժելու. պապակ էին գով քամու, հովը փախել էր, ցուրտ էին խնդրում, սառոյցը շոգիացել էր, խոնաւութիւն էին փնտռում, ջերմութիւնը նրան կլանել էր. ջուրն անզամ, բարձր ձորերից ու հովիտներից հոսող վճիտ ջուրն անզամ, տաքացել, գոլացել, ծարաւը չէր կոտրում: Այրւել, շիկացել էր գետինն էլ, աւաղն էլ, կանն էլ, ապառաժան էլ, արևի ճառագայթները խաշում էին և եթէ կենդանի, մարդ յանդդնում էր դուրս գալ, արևահար գլորւում էին, կամ շնչասպառ ընկնում: Ծառերը, ծաղիկները ու թփերը, բանշարն ու խոտը թուլացել, դալկացել

ամբել էին: Անհետացել էր դալարի մարգարտաշար
ցողը, նրա սիրեկանը, գունատ դեղնել էր, բուսակա-
նութիւնը դեղին տնդով բռնած հիւանդի նման էր:
Երկրի երեսը շորացել, փշրել ու ճեղճեղքել էր և
դրանց արանքից գոլորշի էր բարձրանում ու խա-
շում ամեն մի ծաղիկ ու բերք: Նեղւած շնչաւորները,
ճնշւած հոգիները անվերջ հառաչում ու մռնչում էին:

— Այս նի՛շ գարհուրելի տօթ է, այս որբա՛ն
սպանիչ շող է, մեռանք, տապկւեցանք ու շորացանք:
Իժոխքն էլ, Գեհննն էլ այսքան ջերմութիւն չի կա-
րող բովանդակել:

Բայց ո՛վ էր լսողը, ո՛վ էր ականջ կախողը
միլիոնաւոր հառաչանքներին ու ճիշերին: Արևն անդա-
դար բարձրանում էր ու վերանում, տօթը սաստկանում
ու կիզում, խանձում կենդանութիւնը և երկիրը ա-
ռանց բոցերի, առանց ծխի այրում էր ու տոշոր-
ւում: Բոցափայլ ճառագայթները հայեցնում ու գոլոր-
շիանցում էին մինչև անգամ մշտնջենական սառնամա-
նիքով ծածկւած լեռնագագաթների ձիւները. ձորերի
ու խրամատների սառույցները: Շոգիանում էին սարա-
զլուխներին լճակների պաղած վճիտ ջրերը, Պոնտոսում
թափուող պարզ վտակները, փրփրալի և պղտոր գե-
տերը, որոնց անմիջապէս կլանում էր արևից կիզւած
ջերմ օդը:

— Է՛հ անտանելի է, գոռում էին բորբոքւած
շրթունքներով տոշորւած լեզուները. ամեն բոյս թոռ-
մեց, ամեն կենդանի սփեց, աղբոյրների ակերը

չորացան, լճակները դատարկուեցան, գետերը ցամբեցան և ծովը շերտութիւնից եռ է գալիս: Արեւ ամէն կենդանութիւն կուլ տուեց, անզոյց դիակներ թողեց, ամեն շունչ դադարեցրեց և մնուեալ բնութիւն թողեց, սպառնում է կլանել լճակներին էլ, ծովերին էլ և վերջ տալ երկրային սրանշելի շարժման, կենդանութեան, անապատացնել ամբողջ աշխարհը: Թէև մեղադրող ու բողոքող շրթունքները միլիոնատը էին, բայց բոլորը այնպէս բնկճւած, այնքան թուլացած էին, այնպէս անզոյցացած, մահուան գիրկն բնկած, որ ոչ ոքի վրա թաւալած տեղում շարժելու ոյժ չէր մնացել, ամենքը միայն հողեարքի նման թոյլ ձայնով մբմնջում էին՝ իրենց անվերջ բողոքները, իրենց լացն ու կոծը, իրենց նախատինքն ու ատելութիւնը՝ հանգամ աչքերը երկինք համբառնալով:

— Ահ, եթէ այդպէս պիտի այրէիր ու մրկէիր, բոց ու սէժ գարձնէիր, էլ ի՞նչի մեզ խաւարից դուրս հանեցիր, մառախուղից ու խոնաւութիւնից գերծուցիր, կայծակներից ու սրտաներից ազատեցիր, ստոնածանիջից վրկեցիր, ո՞վ արև: Ի՞նչ յանցանք գործեցին քո զէմ բարերարածներդ, որ այս դժոխային խանձարանին ու հնոցին մատնեցիր, որ նրանց մոխիրը բամբին ու փսթօրիկը ցրիւ տայ, շող տայ աշխարհի շուրջը:

Մտղթանքներ, օրհներգութիւններ և սրտաբուղխամեղեղիներ վեր համբարձնող հողիներէ շրթունքներից միայն անէծք ու հայհոյանք էին տեղում և տառապաւած սրտերից երկինք բարձրացած արտունջներին ու բողոքներին վերջ չբկար:

Աճակներից, վիժող անուշ ջրերը գոյորջիա-
 ցան, շողիացան և միաբանամ՝ սկսան երկինք բար-
 ձրանալ, օծապտոյտ և բազմազուխ վիշապի նման:
 Յամաքից հեռացամ, կենդանութիւնից զբրկւամ վճիտ
 ջրերը թուխ, մուսլ ու վէս ա՛նաւոր մի՞նն ամպեր
 դարձամ ածղա՛նարի նման երկինքը ծամկեցին և շար-
 բան շարան, դիզազէզ քամիների հետ՝ դիմեցին գէշի
 արեւք, գէպի Պարիարի բարձր գազաթնները: Թանձրա-
 ցան ու կուտակեցան և մի՞նեցբին աշխարհը, կտրե-
 ցին արեւ ճառագայթներն ու լոյսը, ցոլաց կայծա-
 կը, մոնշեց սրտը երկնքի բարձունքից, թնդաց եր-
 կիրը և սթափուց ամբողջ մարդկութիւնը, կենդո-
 նութեան հետ: Մուկնամ վիշապարեբան ամպը,
 սրտընդոստ փայլակնամ և հայեացքով, գիւական
 կայծակայքի աշքերով, մարդարտամ ին, գոհարաշաղ,
 ազամանդարեր և շողակայքի արտասունքներով, խափ-
 շիկի վէս ու թուխ գէմքով՝ այնպէս թաւալղար գնում
 էր, որ կարծես կուտական սնարատ սիրով բռնկւած
 լինի նրա գանկը, ուղեղի մէջ անհուն սէրը արծարծ-
 ւած, այնպէս որ եթէ զգաստացնես, եթէ լսօսացնես, նա
 պիտի արտասուի սիրահարւածի նման: Եւ այդ վիշապը
 այնքան սիրում էր կեանքը, որ իր անձը ամբողջու-
 թեամբ արտասուքի վերածեց, անձն դարձաւ, շաղ և-
 կաւ, ցօղեց ու ջրեց երկրի զարդարանք — բոյսն ու
 կեանքը և գնաց միացաւ իր սիրելեանին — կենդանու-
 թեան, ազատ շունչ քաշեց աշխարհը, մարդոց աշ-
 րեցը բացեցան, բոյս ու շնչաւոր ստրի կլան, շար-

ժուժը կրկին թագաւորեց և կենդանութիւնը գիրկը
բացած գրկեց, համբուրեց, արտասուեց, խնդաց և
գրկախառնեւած իր սիրական վիշապի հետ՝ մտաւ
առագաստ:

24 Սեպտեմբերի 1903 թ.

Թաւրիզ:

Է

Փ Ա Շ Ա Ն

Ա Ր Տ Ա Տ Պ Ի Ա Ն Է

Տարազ « Հանդիսի » № 38 1898 թ .

Փ Լ Շ Լ Ն

Արանից մօտ ութսուն տարի տարի առաջ, այն ժամանակները, երբ քրիստոնէի գլուխը սոխի գլխից ածան էր Խալիֆի պետութեան մէջ, երբ Հայի գլուխը Հաւի գլխից աւելի հեշտ էին պոկում ենիշէրինները և արիւնով ողողում յունական թերակղզին ու կղզիները, Երզրումի Միւսէլլէ՛՛՛ թաղի մէջ, սեպհական տանը ապրում էր Աղայիկ աղան, որն Անատօլիի Օսմանեան բոլոր փաշաների, նրանց ձեռքի տակ գտնւած գաւառների և ենիշէրական բանակների սարրաֆների պետն էր: Արհաւիրքի սոսկալի շրջանում, երբ Հայը վայրենի գրաստից անտարբեր չէր միւսլիմի համար, երբ ամէն մի միւսլիմանի աչքում գարշելի գազաններից չէր տարբերում և այդ անասնակերպ էակի գոյութիւնը՝ միայն ստրկական ստոր ծառայութիւններ կատարելու համար էր խնայւած, այդ հայը՝ Աղայիկ աղան իր խորագիտութեամբ ու հեռատեսութեամբ՝ ոչ միայն նախանձելի վիճակ էր ստեղծել իրան շրջապատող ազգակիցների համար, այլ իր հովանաւորութեան տակ քառասուն սարրաֆ ունէր, որոնք սփռւած Տրապիզոնից մինչև Բաղդադ, ոչ միայն կատարում էին պետական ծանր ու վտանգաւոր ծառայութիւնը, գանձելով և ծախսելով երկրի ել ու մուտը, այլ ամէն կողմ թշ-

ւառ ժողովրդին հովանաւորում էին կեղեքիչ բռնաւորներին, սոնձարձակ ենիչէրինների և անգուսպ բաշիրագուկների գէմ:

Աղալիկ-աղալի հարստութեան և ճոխութեան մասին այնպիսի առասպէլական արկածներ էին պատմում, որ լսողը չէր կարող հաւատալ: Ասում էին, որ նրա մառաններում ոսկին դիզած՝ թիակներով էին խառնում, խկ մարգարիտն ու գոհարը ջւալներով էին դարուած: Բայց ամենայն գէպս, թէև սրանք առասպէլներ էին, բայց Աղալիկ աղան անբաւ կարողութեան տէր մարդ էր: Այդպէս էլ լինելու էր, քանի որ ահաւոր երկրների, աշխարհների հասոյթը նրանց ձեռքից էր անցնում և նրանց միջոցով ծախուում: Բայց այդ գանձը նրանց մօտ հիմք չէր բռնում, ամեն մի անակնկալ դէպքում այդ գանձերը լանձնւում էին վէզիրներին, կամ ներքինիներին:

Թէև մի արտաքուստ շքեղ տուն չունէր Աղալիկ աղան, բայց ներքուստ բաւական զարդարւած էր նրա բնակարանը և նրա միակ շռայլութիւնը անթիւ մատակներն էին, որ նա պահում էր ախոռում: Այն ժամանակները երբ հայը իրաւունք չ'ունէր ձիով քաղաք, կամ գիւղ մտնել, միւսլիմանի ներկայութեամբ ձի աշտանակել, Աղալիկ աղան երկու-երեք եղակ ձի զարդարած, առաջը խառնած դուրս էր գալիս փառահեղ մատեան նստած և գնում փաշայի սարայլը: Այդ գեւուրն այնքան արժանացած էր մեծամեծների յարգանքին, որ այդ եղակ զարդարւած ձիերի հետ, նրա առաջից գնում էին մի տասնեակից աւել զարդարւած թուրք ծառաներ, որոնք առջնորդում էին սարբաֆին գէպի

սարայ, կամ ուրիշ տեղ:

Մի առաւօտ վաղ, երբ անկողնից նոր էր բարձրացել Աղայիկ աղան և սուրճն էր խմում, նրանց դրսի դուռը բաղխեցին: Ծառան վերևի գաղտնի լուսամուտից դուրս նայելով՝ տեղեկութիւն բերեց, թէ եկողը փաշայի չիպուխչին էր. մի ենիչերիի հետ: Այս լուրը սարսափեցրեց սարաֆների պետին, նա երկիւղից ալլաղունեց և նշան արաւ, որ խկոյն դուռը բաց անեն, խկ ինքը մտաւ առանձնասենեակը, պատւիրելով հիւրասիրել անկոչ հիւրերին ընդունարանում: Աղայիկ աղան անմիջապէս կնոջը իր մօտ կանչելով՝ կարևոր հրամանները տւեց, ալլեալլ բանալիներ լանձնեց և գաղտնիքները ծածկաբար ականջում փորտալով, նստեց խորհելու:

Ենիչերին ու չիբուխչին մտան ընդունարան, սուրճ խմեցին, ծխեցին ու լափեցին աղանդերը, ավեղցփեղ խօսակցութիւնները շարունակելով: Երբ արդէն քէլֆերը լրացրած էին այդ սլաշտօնականները, ներս մտաւ Աղայիկ աղան և չօքեց սոյնորութեան համաձայն բաղմոցի ցած կողմը: Ծառայողները պատշաճական բարեւները տալուց լետոյ, չիբուխչին լարեց.

— Աղայիկ չօրբաջի, (այն ժամանակ միւսլիմները ոչ մի քրիստոնէի՝ աղա կամ ուրիշ պատուաւոր տիտղոս չէին կարող տալ) փաշան անմիջապէս քեզ կանչում է:

— Պիսիս վրայ, աչքիս վրայ, հենց այս բոպէիս պատրաստ եմ ձեզ հետևել:

— Քու խաթէր համար, մենք քեզ բաւական ժամանակ տւինք, . . . ասաց կակաղելով չիբուխչին, որով

ուզում էր ասել, մեր վարձքը, նւէրը տուր:

— Ինչպէս որ հրամայում էք, ասաց Աղայիկ աղան գլուխը խոնարհելով և ձեռքերով, ուսերով պատրաստականութիւն արտայայտելով, — Բայց . . . աւելացրեց նա խորհրաւոր ձայնով, ուզելով մի բան հասկանալ, հալոցքը ծառայողների գէմքի վրայ ուղղելով — պարապ գնալն ու դառնալը ամօթ է և անհաճոյ փաշալի համար: Արդեօք ինչ բանի կարիք ունի, փոյզ է պէտք, գիշերս նոր սուրհանդակ եկաւ, նոր ծանապարհորդների խո՛չէ սպասում:

— Միայն ձեզ կանչեց, ասաց չիբուխչին շւարած, առանց կարողանալու մի բացատրութիւն տալ կոչին:

— Զիբուխչին չէր սոսկացնում Աղայիկ աղային, վերջինս մտածում էր, թէ ինչ սոսկալի արկած պիտի հանդիպած լինէր. որ սարրաֆի ետեւից չիբուխչիի հետ՝ ուղարկել էր փաշան և ենիչէրի: Նրանք դուրս եկան տանից, իսկ Աղայիկ աղան ենիչէրիին և չիբուխչիին գրաւելու համար՝ մի մի բուռ զազի (ոսկի) տւեց, որպէսզի դրանց սրտերը շահէ և անակնկալ գիպւածում գոնէ կարեկցութեան արժանանայ:

Մինչ մեղմ քայլերով սրանք բարձրանում էին Բէգէզթէնից, Աղայիկ աղան նկատեց, որ մի քանի լայտնի աղաների ևս առաջնորդում էին ուրիշ չիբուխչիներ, կամ ենիչէրիներ, որոնք իրար նկատելով՝ թէև քիչ քաջալերեցան, բայց մորթւելու գնացող ոչխարների նման՝ մոլորւած էին բոլորն էլ: Իրար ետեւից քսանի չափ աղաներ հաւաքւեցին սարալի դուռը, մինչևոր փաշան կանանցից դուրս եկաւ և ընդունարան մտնելով, իր ներկայութեան հրաւիրեց աղաներին: Ապշեցին բո-

դրն էլ այդ արտասովոր ընդունելութեան, համար և երբ գլխները կախած, կանգնած սպասում էին Միւֆթի-փաշայի հրամանին, փաշան իր բազմոցի վրայ ծալապատիկ նստած և ձեռքերով նշան տալով ասաց.

— Չորբաջիներ, նստեցէք, նստէք, ես ձեզ հետ խօսելիք ունիմ, գործ ունիմ . . .

Թէև ազաները զարմանքի եկած, կշտէ-կուշտ իրար նայելով չէին լանդզնում նստելու խալիֆի լիազօրի առաջ, բայց Միւֆթի փաշան կրկին հրամայեց և նստեցրեց բոլորին: Երկու կողմը պատերի տակ կարգով չօքեցան ու շարուեցան աղաները, այնպէս դժգունած, այնպէս սրտատրոփ, որ կարծես մահւան քրտնքում լինէին: Հերիք չէր նրանց այդ ճգնաժամը, փաշան հրամայեց ծառաներին, որ չորբաջիներին չիբուխ տան ծխելու, շէրէթ (օշարակ) խմելու և սուրճ հրամցնեն: Աղաները կարծում էին, թէ այդ օշարակով, կամ զայֆով իրանց թունաւորելու էր փաշան, բայց ինչպէս լանդզնէին ու մերժէին առաջարկւած բաժակը: Ըարահատեալ ամենքն էլ ծխեցին, խմեցին և ոչ մի վնասակար բան չընկատեցին: Մինչ այս՝ փաշան Աղայիկ աղայի հետ խօսում էր առօրեայ հարցերի մասին, իսկ բոլոր աղաների հայեացքն ուղղւած էր փաշայի ու սարրաֆի դէմքի վրայ և չէին կարողանում մի բան գուշակել, թէ առաւօտ վաղ ինչն էր ստիպել փաշային իրանց հրաւիրելու: Երբ զայֆի ֆինջանները ետ տարան, փաշան իր հայեացքը չիբուխի բաշի կողմն ուղղելով ասաց.

— Ներս մտիր, քսան հատ ընտիր թաղա շալ բեր, չորբաջիների գլխներին կապիր, քսան էլ լահոր

շալ բեր մէջքերին կապիր և մէկ-մէկ էլ խալած հագ-
ցրու։

Այս բոլորը սաստկացնում էր աղաների զարմանքը
և ամէն մէկը առանց ծպտուն հանելու՝ ազուշ ապուշ
իրար երեսն էին դիտում։ Երբ այդ հանդէսն էլ վեր-
ջացաւ և ամենքը զարդարւեցան խալիֆի փոխանորդի
պահարանից, փաշան զւարթադէմ նրանց զննելով ա-
սաց ժպտալի։

— Ինչպէս սագեց, որքան յարմարեց, կարծես
թէ բոլորդ էլ Ձէհէննէթի, Եդեմի համար ծնւած
լինիք։ Չորբաջիներ, ես գիշերս երազումս տեսայ, որ
դուք, այս 20 հազիդ այսպէս զարդարւած դուռս էիք
եկել և խալած դաւանել։ Ես էլ ձեզ այդպէս զարդա-
րելով բաղնիս ուղարկեցի թլփատելու։ Ես հաւատացած
եմ, որ այս երազս իսկոյն կ'իրականացնէք, որովհետև
դա երազ չէր, տեսիլք էր։ Մանաւանդոր երբ դուք
բաղնիսից ետ էիք գալիս, այո՛, տեսիլքիս մէջ մեր
Մարգարէն ինձ երևեցաւ, ժլպտած և ճակատս համ-
բուրելով երկինք բարձրացաւ։ Այժմ ես հաւատացած
եմ, որ դուք իմ տեսիլս կը փառաւորէք, անմիջապէս
խալմի դաւանանքը ընդունելով և ինձ հետ բաղնիս
կը դաք թլփատելու։ Հակառակ դէպքում...

Լոեց Միւֆթի փաշան, լուծ էին աղաներն էլ
և մեռելալին անշարժութեամբ հայացքներն իրար ուղ-
ղած՝ մնացել էին գրեթէ շնչասպառ։ Փաշաի առաջարկը
մերժելը՝ կախաղան բարձրանալու պատրաստականու-
թիւն լալտնել էր, իսկ իսլամն ինչպէս ընդունէին...

— Չորբաջիներ, արդէն նկատում եմ, որ դուք
այդ համեստ լուծեամբ ձեր համաձայնութիւնն էք

արտայայտում, աւելացրեց Միւֆթի փաշան: Ես անչնփ ուրախ եմ, որ տեսիլս կատարւեց և դուք մտաք լոյս հաւատի շաւիղը: Չորբաջիներին շէրբէթ բերէք: Յոյս ունիմ, որ բոլոր հայերը իրանց մեծամեծների օրինակին կըհետևեն, յօժարակամ կըմտնեն այն ճանապարհը, որի ծայրն է լաւիտեանական երանութիւնը:

Աղաները չորացան, քարացան ու մնացին, միայն մի քանիսները աչքի թերթիչների և ունքերի շարժումներով հասկացրին Աղայիկ աղային, որ մի բան պատասխանէ փաշային և իրանց այդ անել կացութիւնից ազատէ: Աղայիկ աղան որպէս փորձած մարդ, թրքական քաղաքականութեան ոճով ուզեց ժամանակ վաստակել, մինչև գործը կարգի բերեյն ու ասաց արևելքցու լատուկ ոճով.

— Կեցցէ մեր խալիֆը, կեցցէ մեր փաշան. մենք բոլորս էլ ձեր ստրուկներն ենք, պատրաստ, ո՛չ միայն ձեր բարձր և վսեմ առաջարկն ընդունելու, այլ ամենաստոր ծառայութիւններդ կատարելու ճըշտութեամբ: Բայց մեր, այս քսան զառամեալ ու փրտածների խլամը դաւանելուց ի՞նչ օգուտ փաշային, փաղիշահին ու պետութեան, միթէ քիչ կան մեզ նըման անպէտք ստրուկներ ձեր գերիների թուում: Ես հասկանում եմ փաշայիս ցանկութիւնը, ըմբռնում կամքը, ուստի եթէ փաշան կըբարեհաճի, եթէ թո՛ւ կտայ խօսելու և եթէ գաղտնի կըմնայ այս անցքը մեր բոլորի մէջ, ես կարծում եմ, որ աւելի լաւ կը լինի, փաշան մեզ մի ամիս ժամանակ շնորհի, մենք գնանք, մեր մէջ խորհուրդի նստենք, դուռ, դրացի, այլ թէ կին՝ բոլորին հաւաքենք, համոզենք և ամ-

բողջ քաղաքի ու գաւառի ազգաբնակուածեան հետ միասին ընդունենք իսլամի լուսաշաւիղ դաւանանքը:

— Ապրիս, ապրիս, չորբաջի, այդ լաւ ասիր, լաւ մտածեցիր, ճիշտ սրտիս միջից խօսեցար, ասաց փաշան ուրախացած: Շուտ սարրաֆին մի թաղա շալ էլի բերէք, որ իմ կողմից իր խաթունին ընծայ տանի, որպէսզի նա էլ կանանց մէջ սկսի քարոզել ու համոզել: Բայց մի ամիս, ոչ աւելի ուշ, ասաց խորհելով փաշան: Այսօր ճիշտ լուսնի մէկն է, աստղաբաշխս հեռագիտակը ձեռքին քննում է, ճիշտ միւս ամսի՝ Նարանի մէկին, եթէ բոյորգ միասին չըհաւաքէք, չըգաք դաւանութիւնն ընդունելու, գիտցէք, որ նոյն օրը առանց ետացնելու՝ ձեզ կախաղան բարձրացնել կըտամ, կայքերդ արքունիք կըզբաւեմ, ձեր աղջիկներն ու կանայք հարճ կըբաժանեմ ենիչէրիների մէջ...

Շնչասպառ և դալկացած, մեռելային դէմքով տուն դարձան աղաները, երկիւղից չըկարողանալով ոչ միայն խօսել, այլ չորս բոյորները նայել: Ամենքն էլ մոլորուել էին, չըգիտէին թէ ինչպէս պիտի գիմաւորէին այդ սոսկալի վախճանին: Երբ թրթռում էր շատերի սիրտը մահուան տագնապով, երբ շատերը իրանց կտակներն էին կատարում, Աղայիկ աղայի սպասաւորը նըրանցից իւրաքանչիւրի տունը մտաւ և հրաւիրեց Աղայիկ աղայենց տուն խորհրդի: Նայն օրն իսկ նրա՛ք իրանց գաղանի վճիռը կայացրին և գործադրեցին:

Իսկ Միւրթի փաշան բոլորովին համոզւած, որ չորբաջիները պատրաստուում էին իրանց ազգակիցներին հետ ամբողջապէս միացած իսլամն ընդունել, նա վա-

գորօք իր պատրաստութիւններն էր տեսնում: Այդ գործով նա, որպէս ջերմեռանդ իսլամ, ոչ միայն իր կրօնական-նւիրական պարտականութիւնն էր կատարում, այլ յոյս ունէր, որ մի այդպիսի օգտակար արարքով պիտի սուլթանի սիրտը բոլորովին գրաւէր և բարձրանար մեծ վէզիրի բազմոցը: Այդ իսկ պատճառով փոզէր հաւաքում, մոլլաների էր հրաւիրում և նրանց աջակցութիւնը խնդրում, իսլամ մեծամեծներին յորդորում, որ զոհարերութիւններ անեն, փառահեղ կատարելու այդ նորադարձների թլպատութեան հանդէսը:

Հակառակի նման սաստիկ զանդաղ էին անցնում օրերը, որից տանջւում էր և ինքը փաշան, բայց նրա խոջան արքան յորդորներ էր կարգում, արնպէս միութարութիւններ էր տալիս, լաւիտենական կեանքում փաշայի վայելելիք կեանքը արնպիսի վառ գոյներով էր նկարագրում, որ համարեա թէ փաշան վերացական երևակայութիւնների մէջ էր մթնացնում օրերը: Որպէս զի հանդէսը կատարեալ լինէր և ինքն էլ՝ փաշան սուլթանական մի մեծ շնորհարարութեան արժանանար, իր կատարելիք այդ հսկայական գործի համար, Միւֆթի փաշան ժամանակին իր Կ. Պոլսի գործակալի միջոցով իմացրել էր հանգամանքները խալիֆին և օրից օր սպասում էր պատասխանի:

Օրերն էլ եկան լրացան: Աղայիկ աղան կիսատ պռատ պատասխաններով, փաշին իմացնում էր, որ նրանք պատրաստուում են խոստացած օրը կատարել իրանց որոշումը: Յանկարծ, ամսի վերջի երեկոյան՝ փաշային իմացրին, որ Կ. Պոլսից՝ արքունիքից առանձնապէս յատուկ պաշտօնեայ է եկել բարձրագոյն հրօ-

վարտակով: Աւրախուժիւնից վեր վեր էր ցատկըտում Միւֆթի փաշան: Նա հրամայեց, որ իսկոյն հրաւիրեն Էրզրումի Միւֆթիին (գենպետ), ղաղիին (գատաւոր), Մեծամեծները ենիչէրները մի ժամ չանցած՝ հաւաքեցան փաշայի սարայի գահլիճը, ուր պալատից ուղարկւած պաշտօնականը առաջարկեց Միւֆթի փաշային՝ համբուրել խայիֆի հրովարտակի կնիքը: Յետոյ բաց անելով կարգաց հրովարտակը, որով հրամայւած էր Միւֆթի-փաշային, անմիջապէս, հրովարտակը կարգալուց առանց մի ժամ ուշանալու՝ թողնել Էրզրումը և ճանապարհ ընկնել ղէպի Ղայսերի, նոյն պաշտօնով, վիճակը լանձնեիով հրովարտակը ներկայացնող պաշտօնականին, որին գրուած էին հայերը Կ. Պոլսում:

Այս լանկարծակի հրովարտակից ապուշ կտրած՝ նոյն գիշերն իսկ քաղաքից դուրս եկաւ Միւֆթի-փաշան և առանց իր երազի կատարածին հասնելու, ուղղեց ղէպի Ղայսերի, կասկածը սրտում, վրէժխնդրութեամբ բորբոքւած: Ինչպէս գուշակել էր Միւֆթի-փաշան, նոյնպէս գրել ու իմացրել էր Կ. Պոլսի գործակալը, թէ այդ պաշտօնափոխութեան խաղը խաղացել էին նրա գլխին Էրզրումի հայերը: Այս բանից աւելի սրտմտած ու բորբոքւած Միւֆթի փաշան՝ ամբողջ կարողութիւնը, ոյժն ու ազդեցութիւնը գործ զնելով, ներքինապետների միջնորդութեամբ, երեք տարուց լետոյ նորից նշանակեց Էրզրումի այսպիսի վալի փաշա: Նա սխալուած, թունալի սրտով ճանապարհ ընկաւ ղէպի Էրզրում, մտքումը հաստատապէս զրոշելով այնպիսի մամ կամ իսլամացնել այդ անօրէններին և կամ կախողանի վրայ ճենճրտացնել:

Բայց հայ աղաներն էլ ձեռքերը ծալած չէին նստած, նրանք իրանց գոյքը, վաստակը, ժողովածը արժանաւոր տեղ գործածելու վարժած էին: Մինչ Միւֆթի փաշան հրճուալի մօտենում էր Երզուրումին, մինչ երազում էր ամբողջ Կարնոյ գաւառը իսլամացնել, թաթարն էլ ամենայն արագութեամբ Կ. Պոլսից սլանալով՝ նրան էր հետեւում: Բայց որքան արագ սլանում էր թաթարը, չէր կարողանում հասնել Միւֆթի փաշայի կարաւանին, որ վրէժխնդրութեամբ տողորւած՝ շտապում էր նոր պաշտօնավայրը: Միւֆթի - փաշան մտաւ Երզուրումի Օւան և հեռւից նկատելով Կարնի միջնաբերդը, բարձր աշտարակները, մինարէները՝ սկսեց ուրախութիւնից արտասուել: Կարաւանին հրամայել էր փաշան, անընդհատ շարունակել և անպատճառ նոյն գիշերը քաղաք մտնել: Երեկոյեան նրանք հասան Կան, որ Երզուրումից կէս ժամու ճանապարհով հեռու մի գիւղ է: Մինչ փաշան լողնած թան էր խմում, այդ գիւղում, արքունի թաթարը հասաւ նրա ետեւից և այնտեղ իսկ տւեց համբուրելու սուլթանի հրովարտակի կնիքը: Այդ հրովարտակի համաձայն, Միւֆթի - փաշան ճանապարհից պարտաւորեց ետ դառնալ իր պաշտօնատեղին՝ Ղալսերի և անգութ դահճի մուրազը մնաց անկատար: Միւթի փաշան այնքան բորբոքեց, այնքան կատաղեց, որ Օվալից դուրս չեկած՝ սրտի պալթունից տրաքւեցաւ, թէև նրա մարդիկը հրատարակեցին, թէ վէզիրի մարդիկը նրան

*) Մի քէսս ստակը հինգ հարիւր դուրուշ էր, կամ տասը բաջախը, Հունգարական ոսկի:

Թունաւորեցին:

Գործից շատ մօտ մարդիկ պատճում էին, որ
Էրզուրումի աղաների վրայ այս երկու հրովարտակը նըս-
տեց չորս հարիւր հազար քէսա ստակ, որ մեր փողով
արժէ մօտաւորապէս քսան միլիօն բուրլի *), և գու-
մարը բաժանուել է մեծ վէզիրի գենպետի ու ներքի-
նապետի մէջ . . .

Ահա թէ որտեղ էին ծախսում մեր պապերը
իրանց գանձերը . . .

27 Յուլիս 1898 թ.

Նախիջևան - Գօն:



Թ

Ք Ի Ի Լ Զ Ա Ն - Բ Է Յ Ի

Ա Ր Տ Ա Տ Պ Ի Ա Ծ Է

՝ Տարազ ՝ Հանդիսի № 14 - 16 1893 թ.

Ք Ի Ի Լ Ն Ա Ն - Բ Է Յ Ի

Ա

Իւսկիւղարի Սէլամսոյ թաղի և Չինգեանաների փողոցի մէջ գտնուում է Ղափուլար - Աղասիի բանուկ բաղնիսը, որը նշանաւոր է իր անուշ ջրով: Այդտեղ է յաճախում ժողովրդի մեծ մասը և սրովհետեւ սովորականից աւելի թանգ է գինը, շաբաթական երկու անգամ բաղնիս գնացող միւսլիմներին ձեռնատու չլինելով, հայի բաղնիս է համարուում: Որքան որ բաղդաւոր էր այդ բաղնիսի տէրը՝ Խօջա Իգրիսը իր ստացած ահագին քրէհով, որքան որ կասպալաուի, բաղնիսպանների և քիսաչիների օգուտը մեծ էր, այնքան թշուառ և այնքան անտանելի էր այդ բաղնիսի քիւլհանջիի (մոխրատան — *кочетаръ*) վիճակը: Քիւլհանջին, որի աշխատութիւնը ամենից ծանր և ամենից անտանելի էր, պարտաւորւած էր ամեն օր երկու անգամ ծխանի մոխիրը դուրս քաշելու, փայտ կոտրելու, և ի՛նչքան էր պէտք բաղնիսը տաքացնելու համար, վառելու, բոլորակ ջրհանին լծւած ձին խնամելու և անդադար ժամերով հսկելու, որ չըկանգնի պառաւ կենդանին, համարեա շատ չնչին վարձ էր ստանում՝ ամսական իննսուն դուրուշ: Խեղճ մարդը այդ չնչին գումարով պիտի կշտանար, պիտի հագնէր, պիտի բո-

լոր պահանջները լազեցնէր: Քիւլճանջինն ո՛չ տօն ունէր, ո՛չ դատիկ, նրա համար ո՛չ պաս կար, ո՛չ ուտիք:

Վեռ լաւ էր, որ քիւլճանջիները տան վարձ էլ չէին տալիս, նա էլ ապրում էր քիւլճանջիների նման քիւլճանում, որը մի հասարակ մարաքի պէս բան էր: Յատակը հողից, տանիքի ծածքը ծխից սեւացած, պատերը առանց ծեփի, մի ձեռքի տարածութեան չափ տանիքի լուսամուտը առանց ապակու՝ բաց էր ամառ, ձմեռ, զուռը կատարեալ չէր խփուում, անբաժան ձիու աղբը մի անկիւնում հաւաքւած, փայտի ձողերը մի կողմը շարւած, օջախից անդադար ճիւղտոցով դուրս էր թռչում կրակը և խանգարում ջրահանին լծւած ձիու ոլորւելուց առաջացած աղմուկը: Երբեմն քիւլճանջին լտրանոց կացինը ձեռքին փայտ էր կոտրում, երբեմն ջրհանի ճախարակներն էր եղում, երբեմն բաղնիսի պղինձն էր քննում և մերթ նստում օջախի զիմաց ամոռի նման սարքած քարի վրայ ու ծխում էր: Ծըխելիս նա աչքերը յառած էր լինում կրակի վրայ, միտքը աշխարհի, յաճախ մոռնում էր և անհասկանալի ձայն էր թռչում նրա շրթունքներից: Նրա դէմքը միշտ տխուր էր և երեսի խորշումները քրտինքով ու փոշիով ծածկւած: Քառասուն տարւան կը լինէր քիւլճանջի Ազգարը, թէև անխնամ մազերը, բեխերը սկը սել էին սպիտակել, բայց ինքը մարմնով լազթանդամ և հոգով բոլորովին երիտասարդ էր:

Ազգարին անունով չէին ճանաչում, նա յայտնի էր որպէս Քիւլճան-Բէլի (մօխրոցարանի-իշխան) և նրան փողոցում, թաղերում, կամ մի առանձին տեղ երբէք չէր կարելի տեսնել, Բայց և այնպէս,

թէև նա աշխարհից ճգնաւորի նման ձեռք էր քաշել, հեռացել, իսկ աշխարհը նրա պոչից չէր բաժանուում, նրա մօտ լաճախողների թիւը թէև շատ մեծ չէր, բայց քաղաքի ամեն կողմ անցած դարձանից նա շատ լաւ տեղեկութիւն ունէր. նա ապրելուց զգւած չէր, ինչպէս ինքն ասում էր, բայց

— Գիշտողների շրջանում չէր ցանկանում կեանք վարել:

Մի առաւօտ գործերը պրծնելուց լետոյ իր սովորական տեղը նստած ծխում էր, երբ քիւլհանի գուռը բացւեց, մի միջահասակ, ոչ շատ մաշւած շորերով մարդ ներս մտաւ, մօտենալով բարևեց ու նստեց օջախի կուշտը, Աագարի դէմուդէմ: Քիւլհանի էլը առանց շարժելու բարևը ընդունելուց լետոյ, դարձեալ լուռ՝ ընկղմած էր իր մտածութիւնների մէջ: Ներս մտնողը բնակարանի հետ ծանօթ չէր երևում, բայց նրա շարժումները բոլորովին ազատ էին: Նստելուց լետոյ, երկուսն էլ անմոռունչ ձեռքերը գլխները տանելով կրկնակի բարևեցին, առանց ընդհատելու լութիւնը: Այս ձևականութիւնից լետոյ իրար, վրայ մի այնպիսի հայեացք գցեցին, որ կարծես թէ ցանկանում էին իրար հարցնել իրանց մասին: Նորեկը ծըխախտախ տուփը հանեց և սկսեց մի սիգարա փաթաթել, նա սիգարը շինելիս մէկ-մէկ աչքի տակով նայում էր քիւլհանջի վրայ, որն անթարթ մտիկ է տալիս վառարանի ահաւոր բոցերին: [Ինչպէս երևում էր, այդ այցելութիւնը այնքան էլ դուր չեկաւ քիւլհանջիին և նա վերջապէս զայրութիւն չը կարողանալով զսպել, ասաց.

— Հան, ինչ ես իմացել, Մկօ, աս վախան ինչ
գարծ ունես դու տատեղ: Մկօն մնջեց, չըկարողացաւ
խօսել և աչքերը անպէս լսուեց քիւլհանջիի երեսին,
որ կարծես ուզում էր ասել, մի՛թէ չըգիտես:

Առժամանակ դարձեալ լռեցին: Այդ միջոցին
վեր կացաւ տեղից քիւլհանջին և բարձրանալով սան-
դուխներից՝ մտիկ տւեց բաղնիսի պղինձին ու ա-
սաց.

— Աս անիծւածն ալ լցւելիք չունի, քսան
տարի է կըլցնեմ, կըլցնեմ՝ նորէն դարտակ, նորէն
դարտակ: Ահա իմ էլ խազնաս *) (կասսա). ինչ ֆարդ
(տարբերութիւն) կալ ասոր ու Ղալաթի սարրաֆների,
Բէզէզ-Խանի բէզիրգեանների ու մալիէի սնդուկների
մէջ, անոնցն ալ դադարկ իմինիս պէս, անոնք ալ տա-
րին տասներկու ամիս ինձի պէս կըլցնեն, կըլնեն՝
չեն խալսիլ: Եանն անտեղ է, որ անոնք մարդու սիրտը
սառեցնելով ծոցերն ու ջէրերը կըդարտկեն ու կըլցնեն
իրանց սնդուկները, ամա ես ջուրի մէջի ճիճուները
կըխաշեմ: Փարզն (տարբերութիւնը) անտեղ է որ
անոնց մատաղները լիզու ունին կըլան, կերերան, կը-
պոսան, ամա իմ ճիճուներուս ձայնը մարդու ականջ
չի հասնի: Մէկ ալ որ իմ եռցուցած ջուրս մարդոց կը
ծառայէ, ամմա ադ անիծածներուն փողը սատանաներին
կուրախացնէ:

Մկօն մտալ լսում էր քիւլհանջիի փիլիսո-
փալութիւնը և չէր համարձակոււմ շշուէնջով, հա-

*) Տաճկաստանում բաղնիսների ջուր տաքացնելու
կաթսան անւանում է «Խազնա» — Գանձարան.

զարով անգամ նրան ընդհատել: Քիւլհանջին գործը վերջացնելուց լետոյ, ետ եկաւ և իր նախկին տեղը տեղաւորելով ասաց.

— Ի՞նչ դարդ ունեւ, ի՞նչ ես սֆաթդ (դէմքդ) կախել, ի՞նչի ես պապանձւել:

— Ի՞նչ խօսեմ, չեմ գիտեր, ասաց անլսելի կերպով Մկօն:

— Ի՞նչ, ի՞նչ է եղել:

— Ալ ի՞նչ պիտի ըլլայ, կացինդ վերցուր, զարկ-հօգիս աւ, պրծնիմ, ազատւիմ աս նեղութիւններէն:

— Կացինն ի՞նչ պէտք է, ել, գնա՛, անձայն, անձպտուն ընկիր ջրի խազնան, կըխաշիս, կազատուիս: Ատոր համար ալ ի՞նչ դարդ կընես:

— Ե՛հ, դարդ չունիս, ցաւ չունիս, մանր ու խոշորդ տունը քաղցած չեն, խանութդ չեն մէօհրել (կնքել), տանդ շէլ - շալաքը չեն ծախել, պատիւդ չամուրը չեն գցել, գուշմանների ետեւդ քեզ չեն ծաղրել, դատաւորները բանտի մութ գնդաններով քեզ չեն վախցուցել, հալբաթոր հանաք ալ կընես, քիչ մ'ալ աւել: Ութն ամիս է, հէջ մէկ օր եկար, հարցուցիր թէ— Մկօ, մեռա՛ր, ապրա՛ր, տունդ ի՞նչ կայ, ի՞նչ չըկայ:

— Դարդ մի ըներ, ութն ամիս որ դիմացար, ամիս մ'ալ կըդիմանառ: Մէկ ամսէն ետ մանչ, ետ աղջիկ կըծնիս, ալ ատոր համար մտմտալս, հարց ու փորձս գիտէր:

— Ծաղրիր, գու ալ ծաղրիր.

— Ի՞նչ ծաղրեմ, աղբա՛ր, քսան տարի է, որ ես աս քիւլհանը կսպրիմ, մէկ օր ներս մտած ունիս, մէկ

օր դու հարցուցած կան, — Ապար ինչպէս ես. լաւ ես,
գործերդ ինչպէս են:

— Քու բանդ ուրիշ, աղբւր, քեզ հետ ո՞վ գլուխ
ունի, դու վարժատնէն քիւլհան մտար, ո՞վ կրցաւ
քեզի խելք հասկցնել: Ես քեզ ինչ խօսէի, երբ դու
ամեն տեղ կըրօռալիր, — քիւլհանը սուլթանի թախտի
հետ չեմ փոխել:

— Նորէն ադ կըրօռամ, աղբւր, քիւլհանի
մէջ ալ պիտի մեռնիմ: Ամմա դու հարցնէիր, փըն-
տուէիր, օր մը քննէիր, պատճառը իմանալիր, չէր
ըլար:

— Քեզ հետ ինչ խօսէի, օր դու աշխարհքի
երեսին մարդու չէիր հաւանիլ. ամմա քիւլհանջուլթիւնն
ալ ձեռքից չէիր բաց թողնիլ: Մարդ տասը գլուխ
ունենար, քեզ խօսելու սիրտ չէր ընէր:

— Հիմա ադպէս կըխօսիս, ամմա օր մտա-
ծէիր, թէ աս մարդը ինչի՞ հեռու կը փախչի մար-
դոցմէ, անժամանակ դու ալ աս օրը չէիր ընկնի,
քիւլհանջիի օգնութեանը չէիր կարօտի: «Քեզ ո՞վ
ըսաց գարադ դառնաս, մկի մորթին կարօտ ըլլա՞ս»: «
Ի՞նչ ըսեմ, ինչ ընեմ, թէ փող պէտք է, էրեկ ամ-
սական տւին, անտեղ վախժուէն զուրուշ կալ, վերցուր
տար:

— Աղբան փողի պէտք չունիմ, մարդու պէտք
ունիմ, դու զիտես, ինչի պիտի ազատես աս կրակէն:
Թէ որ իմ գլխուս փորձանք դալ, իննը հոգի մանր ու
խոշորս վրադ պիտի մնալ: Քիզնէջ ջոկ երկնքի տակ
ոչ ազգական ունիմ, ոչ բարեկամ:

— Հապա սրտեղ են ան ընկերներդ, բարեկամ-

ներդ. որոնց հետ տարին տասներկու ամիս քէֆի մէջ էիր. ան շուն - շան որդիք, որոնց հետ կերար ու լավեցիր պատիդ կարողութիւնը: Մկօ, Մկօ, դու մեզք չ'ունիս, ամժա խելք ալ չունիս: Սիրտդ գէշ չէ, չարութիւն չը կալ թաղւած անօր մէջ, ամժա ինչ ըրած, որ... Ահա հօրդ ըրածի փոխարէնը: Կա իրեն խելքով ինձի կողօսակեց, զրկեց, աղբօր բաժինը կուլ տուց, ինչ է, որդին ապահովէ, ամժա ահա անօր ապահովութիւնը: Գու շատ լաւ գիտես, խիտ լաւ կը հասկանաս հիմի, ինչքան հիմնաւօր էր անօր^ը թողած ապահովութիւնը: Ինձ զրկեց և երբ ես զրկանքի ահաւորութիւնն հասկացայ, փնտռեցի և գտայ անպէս գործ՝, որ մարդ ինձի ալ չըկրնա զրկել: Հէշ բան որ չունենամ, ալ ինչէն ինձի պիտի չըրկեն, աղբւր: Մալ ունեցողը թո՛ղ վախենայ, գլուխ ծռէ փաշայի, բոշայի սոսներու տակ:

Գու որ խելահաս եղար, հօրդ մեռնելուց լետայ ձեռքդ առիր մեր պատական կարողութիւնը, ինչի՞ չըմտածեցիր, որ ադ միւլքերէն Առգարն ալ բաժին ունի: Դիտակ է, թէօր դու տալու ալ ըլլայիր, ես չէի ընդունիլ, ամժա մտքէդ անգամ չանցաւ... Գու ալ անոնց պէս սուտ էշ դարձար և անպէս ցոյց կուտաս զեռ ասօրս թէ՛ բանից խարար չես...

— Առգար, ախար դու օրական հազար քիւֆիւր կը թափէիր մալ ու միւլք ժողօղներու գլխուն, ես ինչ... .

— Հան, թէ որ ինձէն պատճառներն հարցնէիր, գու՛ն ալ քիւլհանջի կը դառնայիր, ամժա մէջքդ

սովոր չէր գետնի վրայ պառկելու, ծխի մէջ չէիր կրնար ման գալ, չոր հացով փորդ չէիր կրնար կշտացնել, շալ չէիր կրնար հագնել, ազոր համար ալ ինձի չէիր մօտենար: Իէհ, գնա հիմի ան քու ընկերիդ քով, թո՛ղ քեզի բաժին տան իրենց կարողութիւնէն:

— Հոգիդ սիրես, Ազգայր, ես քու սիրտէդ չունիմ, ադ քու հին երկար, բարակ ճառերդ թո՛ղ, հիմի ճարձ՝ գտիր ինձի ազատելու:

— Ի՞նչ ընեմ, ձեռնէս ի՞նչ կուգայ:

— Մոլլա Իգրիսէն՝ աս բաղնիքի տիրոջէն հազար լիրայ առինք և գրաւ գրինք տունն ալ, խանութն ալ, խանթի ապարանքն ալ: Կուրի պատճառով գործերս ձախ գնաց, չըկրցի երեք տարի տոկոսն ալ է տալ: Կօնսօլիտներիս տոկոսն ալ չըտուին, նեղն ինկած իննսունը երեք զեղջով ծախեցի: Տոկոս տոկոսի վրայ չորս տարւան մէջ երկու հազար չորս հարիւր լիրայի հասաւ պարտքս: Ես ալ շւարեցա՛, տեսա՛յ որ տունն ու խանութը չեմ կրնալ ազատել, միջի ապարանքն ալ է, ըսի ազատեմ: Աեր առի, հաւատացի Աբիկեան Սիմոնին, ան ալ կլլեց ու բերանն ալ սրբեց: Մոլլա Իգրիսը գանդատ տուեց, տունս ու խանութս մէկազատի (աճուրդի) միջէն երկու հազար երկու հարիւր լիրայի գնեց: Ադ հէրիք չէ, հիմի ալ ապարանքների համար նորից գանդատ է տուել, կուզէ ինձ ինչպէս գող՝ նստեցնել: Տունը ինչ օրն է, քեզ ինչ պատմեմ: Արաս խղճացին, Բէզէստանը*) ամսական

*) Ինչպազ — խանու կամ մեծ վաճառանոց:

Հինգ սկիւով տեղ տւին: Թէ նստեցնեն, ադ տեղն ալ պիտի կորցնեմ, գլուխս ալ, մանր ու խոշորս ալ...

Մկօն չըկարողացաւ խօսել, արտասուքները գլորւեցին նրա աչքերից: Քիւլհան-Բէլին էլ խիտ խոժոռեց գէմքը և խորասուզեց դառն մտքերով: Դարձեալ լռութիւնը տիրեց, միայն ձիու ոտնաձայնն ու ջրհանի ճախարակների սրսրոցներն էր լսուում: Սջախից ջերմութիւնը տարածւում էր և տաքացնում միայն երկու եղբօր որդոյ գէմքերը, իսկ քիւլհանում բաւական չէր բնական խոնաւութիւնը, քամին ամէն կողմից թափում էր ձիւնի հատիկներ: Այս միջոցին մի քիսաչի ներս եկաւ ու գոռաց.

— Ասօր ինչ է եղել, Ղազար աղբար, ջուրը չը տաքացաւ, հերիք ջուր քաշես:

Ղազարը անմոռունչ բարձրացաւ, ձին արձակելով տարաւ կապեց ու առաջը գարի լքցրեց: Մկօն անդադար ծխում էր ու հառաչում: Վերջապէս քիւլհան-Բէլին ազատելով գործից՝ եկաւ, նստաւ իր տեղը և ասաց.

— Հիմա ինչ կըսես, ինչ ընեմ.

— Չեմ գիտէր, դու գիտես. ինձ ազատէ բանտէն...

— Ինչպէս.

— Ինչպէս որ աշխարհքին, նեղաճներին կազատես...

— Մօլլա Իգիբիսը ան վախկոտներէն չէ, որ «բօ» ընելով հոգին առնես: Ան սատկի փարամ՝ չի բաշխիլ:

— Մէջլիսի բէխին տես (դատարանի նախա-

- գահին), նա կարող է գործը սրախի (կարգի) գնել,
— Անոնք ալ կը վախնան Բդրխից.
— Ճարը գտիր, ասաց կահագելով Մկօն:
— Հնար չըկալ: Քնն երկու, երեք ամիս նստիր,
իշու արքայութեան համը տես:
— Տունը՞, ասաց խեղդուած ձայնով Մկօն:
— Տունը ես կը պահեմ: Ատոր հոգը մ'ընէր:
— Օ՛ք, ասաց հառաչելով Մկօն և աչքերը
գետնին լաւեց:

Քարձեալ լուսթիւնը տիրեց, գարձեալ տխուր
մտքերը պաշարեցին երկու եղբօր զաւակներին: Քիւլ-
հան-Բէլին պատկերացնելով հօր և իր տաժանեղի ան-
ցեալը, հօրեղբօր և նրա որդու անսահման շաւղու-
թիւնները, բոլորի ներկայ վիճակը, մտածում էր ծը-
փալով դառն մտքերի անեղր ովկիանում: Զգում էր Մկօի
սարսափելի կացութիւնը, մտնում էր նրա հոգեկան
աշխարհը, բայց իր բուռն կրքերը, Բդրխի ահեղ սիժը՝
ստիպում էին, որ նա համաձայնի Մկօի մի առ ժա-
մանակ այդ անարգ վիճակին ենթարկելուն:

— Անհնարին է, Մկօ խօսք չեմ կրնար տալ,
ամձա կաշխատեմ համոզել Մոլլա Բդրխին, թէ խօսքս
չընդունի, չեմ կրնա ուրիշ բան ընել:

— Գու մէկ տես, թէ խօսք չըտայ՝ վերջը կը
մտածենք:

Բ

— Ան ալ ասօր ինձի պէս, մտածում էր Քիւլ-
հան-Բէյին՝ Մկօի հեռանալուց լետոյ: Քսան տարին մէկ
օրւան պէս անցաւ, այս կողմն ընկան, ան կողմն ընկան,
վերջը էլի դափ-դարտակ: Հիմի կուզէ, որ ես իրեն
ձեռքը նորէն զէնք տամ ու թողնեմ, որ երթալ նորէն
ուրիշներին կասկարի վրայ դնէ, խորվէ, նորէն ուրիշ-
ների կաշին քերթէ ու նորէն հօրեղբօր, մօրքուրի
տղօցն ու մանր ու խոշորին լացնէ, անոնց ձեռքէն դա-
տումները խլէ, տանէ իրեան ոչ ու փուշ ընկերների
փորը լցնէ, կերուխուսի, թղթի, բոզի, չիտեմ ալ ինչ
ճամպնեբու մէջ թափէ, կոխորճէ: Ամսական հինգ օսկիի
տեղ է գտել, մէկն հարցնէ, ադ սև գունն է մտել...
Այդտեղ նորէն բան մը կալ, ատոր ինչին պիտի հինգ
օսկի տան... Կեր, խմէ, պատռէ, թափէ, հարսնիք
ըրան, տղան կնքէ, քէլֆ ըրա ու քսան տարի մի փնտրիլ
հօրեղբօր որդիդ, ամմա որ նեղը կընկնես, հոգիդ բե-
րանդ կուգալ, իշու դրախտի ճամպան ցոյց կըտան, ալ
ազատելիք չունիս, վազէ Քիւլհանը, ըսա — Կամ կա-
ցնով ինձի սպանէ, կամ ազատէ: Հօրեղբօր որդիդ
ալ ոչխարի գլուխ, հոգին կրակը կը գցէ քեզ համար: Զէ,
ինչ որ կերար՝ հերիք է. հիմի ալ գնան, մէկ երեք-չորս
ամիս նստէ, քաղցած, ծարաւ, տկլոր, աղտոտ, թաց
հոգի վրայ պառկէ, չարչրէ, տանջէ, ան ժամանակ
կիմանաս, թէ ինչ գժար բան է զրկելը: Հիմի Իգրիսը

դէշ մարդ է քեզ համար, որովհետեւ հազար ոսկու տեղ՝ պապական չորս հազար լիրանոց տունդ, խանութըդ է խլել, քեզ ալ ստիպել է ծառայ դառնալու, ամ՝ մա երբ մութը բանտի մէջ երեք-չորս ամիս ոսկորնե-րուդ ծուծը չորանայ, ան ժամանակ քեզ զրկող Մօլլա-Իգրիսի Ինչ հրէշ ըլլալը կը կարողանաս հասկանալ:

Այսպիսի մտքերում խորատուզած Քիւլհան-Բէյին ծխում էր, նստած իր սովրական տեղը, բարկութիւնից մօտը դէմքը կրակ կտրած, մօշնչում էր, երբեմն երբեմն ծանր շունչ քաշելով: Արքան խորն էր մտածում, այնքան բորբոքում էր: Արդէն ճաշի ժամանակ էր, ներս մտաւ մի կին ձեռքին մի սինու վրայ դարսած կերակուրներով և մի շիշ գինիով: Այնքան վրդովւած էր Քիւլհան-Բէյին, որ չըլտեց անգամ կնոջ ներս մտնելը: Կինը օջախի մօտ սեղանը տեղաւորելուց լետայ, ասաց.

— Բարի լոյս. հան էլի ինչ է եղել, ինչի ես կարմրել:

Առանց պատասխանելու քիւլհանջին մօտեցաւ սեղանին: Կինը, որ երեսուն տարւանից աւել կըլինէր, վարժած լինելով նրա բնաւորութեանը, լռեց և օջախի առաջ քիչ կրակ քաշելով՝ կասկարով գրեց միտը խորովելու: Ծաշի ժամանակ նոյնպէս լուռ էր քիւլհանջին, իսկ կինը իր սևորակ խոշոր աչքերը, սուր սուր հայացքները անգաղար գցում էր բորբոքւած դէմքի վրայ և աշխատում մի բան կարգալ երեսի գծերում: Ետ շանցաւ, կնոջ սպիտակ այտերն էլ անհանգստութիւնից բորբոքւելով կարմրեցին և նա քիւլհանջին սթափեցնելու համար գինու բաժակը

լքցրեց և դրեց նրա առաջ: Անտարբեր Քիւլհան-Քելին շարունակում էր իր լուսթիւնը: Աւերջապէս չըկարողանալով կիրքը զսպել, ասաց կինը.

— Այ մարդ քիւլբաստին (խորոված) կերար, թասմ՝ գինի չըխմեցիր: Ասօր քեզ ինչ է եղեր:

Քիւլհան-Քէլին խմեց և բաժսիլը վաը դրեց նոյնպէս լուսթիւնով:

— Հագիս հատցուցիր, բերանդ մէյմը բաց, երկու խօսք խօսի, ինչ ես իմացեր, քեզ ինչ եմ ըրել:

— Կեզ ո՞վ ինչ ըսաւ, դու ինչո՞ւ տակ ու վրայ կըլլաս:

— Ախար չիտես, որ օրական սահաթմ՝ բաղտ ունիմ քեզ հետ անցունելու, ան ալ որ աղպէս չահրա ցոյց տաս, ալ ես երբ պիտի ուրախանամ: Քիչ լետոյ լարեց.

— Ինձ վրայ խօ՞ չես նեղացած:

— Ձէ, Էլբիս, չէ, ասօր ինձ մի խօսեցնի:

— Ախար ինչ ես իմացել, թէ դարդ ունիս, ըսա՛ մէկտեղ բաժնենք, թէ ցաւ ունիս, ըսա՛ դեղ ընեմ, թէ վիշտ ունիս՝ պատմէ, որ կրնամ քեզ մը խիթարել:

— Գու գիտես, որ քեզ տեսնելէս ետև ամեն ցաւէս կազատւիմ: Ի՞նչ պատմեմ ան բանը, որ դեղ չ'ունի:

— Ինձնէն գողտուկ է, ըսել է, ինձ կըխնայես, չես ուզեր, որ ես կիսեմ ցաւերդ:

— Է՛հ, աւել պակաս ինչի կըխօսիս: Ամեն բան գիտես, նորէն ինչ խօսեմ: Մեր Մկօն էր եկել և հերիք չէ, որ հալըը հօրս կողոպտել է, որդին ալ

կուզէ, որ ես երթամ տարազաջ (կախազան) ելնեմ ու իրան ազատեմ...

— Հոս էր եկել:

— Այստեղ էր, փարա տւի՛ լայեղ չըբաւ առնելու:

— Մեզք տղոցը: Աղջկները երեքը մէկտեղ հասել են, տղերքը մատղաշ... Պէտք է բան մ' ընել: Ա՛խ...

— Ահա, տասնը հինգ տարի է, կար կըկարես, հոգիդ դուրս կուգայ: Ի՞նչի չեն սորվիր կարել, ձեւել, լւացք ընել: Աեռքերը ծալեն, նստին, մարդիկը անոնց համար Բէյօղլուէն՝ ֆրանսուզներու մաղազաներէն կարած ֆիստան, շափղա բերեն, իրենք ալ ալմաստ, բըլիանդ քարերով սկանջները, ձեռները զուկեն, բէբէքի (տիկին) նման բարձերու արանքը նստեն: Թո՛ղ հիմի քիչ ալ բողցած մնան, որ դառն դատողների դադրը (լարդը) իմանան: Օրական հազար մարդ կըլողանալ աս բազնիքի մէջ, ադոնցէն մէկը օր մը հարցուցած կ'ալ, թէ ալդ բազնիքի մէջ ամենէն շատ չարչրուող քիւլհանջին ուտելու հաց ունի: Պիտի Ելբիսը օրական տասնը ութ սահաթ կար կարէ, փող վաստկէ, որ ինքն ու քիւլհանջի տղան ապրին... Տա՛ր, տա՛ր աս փարան, գնա՛, տղու քով:

— Մեզի պէտքը չէ, տանը փող կալ, ադ փարան տար ձգէ անոնց քով, ինչպէս կըլսեմ նեղութիւն ունին, ասաց Ելբիսը:

— Ադ փողը անոնց ետրան չի սողցնի, դու գնա՛ բանդ, թո՛ղ նեղ օրի մնան, որ իմանան, թէ ինչքան դառն է նեղ օրով ապրողներու հալը (վիճակը): Անոր կնիկն ու աղջիկները քուփէի ու սէթեայի

(ծածկւած պատգառակ) մէջ նստած՝ դադիֆա 1] շատ են մաշել, թո՛ղ քիչ ալ սրտերը, ձեռները, ոտները մաշեն, որ կար կարողների, լացք անողների, տախտակ սրբողների, սէթեան 2] կրողների հալէն հասկանան:

— Ե՛հ, ինչ մեղք ունին անոնք, իրենց խելքը շատ չի հասնի, մարդիկն ալ անոնց դաֆէսի (վանդակի) մէջ կը պահեն, որ չըլլայ թէ՛ քամի դիպչի: Ինչ կուզէ ըլլայ, բան մը ընելու է . . .

— Ձէ, երթամ գլուխս գրաւ դնեմ, խիղճս ծախեմ, փարա գտնեմ ու տանեմ անոնց տամ, որ անոնք այ քթով պնչով քիւլհանջիէն օգնութիւնն անգամ ամաշելով առնեն, ետև տանեն զիր ու զիբիլի տան: Ձէ, ուտել ուզողը՝ թող դատի: Ես տարին տասներկու ամիս անոնց համար գերութիւն չեմ կրնալ ընել: Իմ տւած օգնութիւնէն, ինչո՞ւ ամչնան, իրանք որ դատին, խօ՞ մարդու կարօտ չեն դառնալ:

— Հիմի գատելու սովոր չեն, լու պահած են, օգնելու է, որ քիչ քիչ սորվին:

— Գուն ալ ազպէս էիր աղջիկ վախաղ: Նեղն որ ինկար՝ եազմա 3] ալ ներկեցիր, կար ալ կարեցիր:

— Անոնք ալ կընեն, ան օր Խուցի դուգուէն իմացայ, որ սկսել են մօզիստէն կար տանել ու կարել: Մայրերն ալ սկսել է քերագեայ բանել:

— Թո՛ղ սորվեն, թո՛ղ նեղը մնան, որ իրենց մարդոցն ու ուրիշի օգնութեան չը կարօտին: Ես կամ,

1. Թաւիշ, 2. Պատգասակ, 3. Գլխի կապելու բամբակի թաշկինակ:

չըկամ, քեզ համար մէկ է, դու քու տղուդ ալ կը պահես: Անոնք ալ աշխատին, որ վարժւին:

— Լաւ, թո՛ղ սորվեն, ամմա ասօր բան մը գտիր, տա՛ր . . .

— Սորվեցնելու չէ, ես ողորմութիւն ոչ կուտամ, ո՛չ կառնեմ, գնա՛, գահալաս հերիք տանես:

— Տա՛ր, կըսեմ կո՛ր, ասելով դուրս գնաց էլբիսը:

— Քնա՛, բանդ, ասաց ու օջախում սկսեց փայտ գարսել քիւլհանջին: Նա փայտերը լցնելիս մըմնջում էր քթի տակ:

— Այդպէս, կը կակղնաս՝ կուտես: Ուրիշի դըռանը ծռուալ մտիր, ամուալ երեսուն օրը համբէօրական հազար նախատինք կրէ, վաղ տուր վեր, վար, որ իմանաս, թէ ինչքան դառն է զրկւած ըլլալը: Ան սկիները, որ կը բաշխէիր չալըջիներուն (սազանգար) մէլխանաջիներուն, չիտեմ ինչերուն, տես ինչքան դառն է վաստկելը: Ամմա՛ չէ խելոքցած, դեռ չէ հասկացած աշխարհի ինչ ըլլալը, թո՛ղ մէկ նստի, թո՛ղ մէկ անտեղի համն էլ առնի. ետեւ մարդ կը դառնայ: Երբ գործը պրծաւ, քիւլհանջին նստեց չիբուխը լքցրեց, վառեց, դարձեալ խորասուզւեցաւ մտածութիւնների մէջ ու ասած կատաղած.

— Ա՛յ, քեզ աւազակ. հա՛յ, Քաղաքի մէջ, լոյս օրով, դատով դատաստանով՝ հազար լիրայի տեղ չորս հազարանոց միւքերը առնել, վերջն ալ դեռ բանա նստեցնել: Մօլլա-Իդրիսը զուր տեղ փարայ խարջողը չէ, ինչու նորից գատ կը վարէ, ինչո՛ւ աւելորդ փարա կը ծախսէ . . . Երբ զիտէ, որ Մկօն էլ բան չունի վճարե-

լու: Աստեղ ալ բան մը կայ, աստեղ ալ Հանելուկ մը կայ, տեսնենք ինչ է:

Անցաւ մի շաբաթ, Մկօն կրկին եկաւ, խնդրեց, խօսեց, թախանձեց, բայց քիւլհանջին չը զիջաւ, չուզեց ուրիշ միջոցների դիմել:

— Ես տեսայ Մօլլա-Իգրիսին, տօսաց նա ծանրութեամբ, խօսեցայ, խնդրեցի, ամմա ան ըսաւ, որ չի կրնար դատէն ետ կենալ: Մէկ որ ծախս եմ ըրել, ըսած, մէկ ալ որ շարթ^{*}) եմ ըրել, պիտի ատոր նստեցնեմ, որ ուրիշ պարտականներս ինձնէն վախեան:

Մկօին վճռեցին երկու տարի բանտարկութիւն, փախցրած ապրանքի մի մասը գտան ու աճրդով ծախեցին, իրեն էլ բանտարկեցին: Քիւլհանջին ամեն օր մի փոքր հաց տանում էր իր հօրեղբօր որդուն, այնքան որ սովից չըմեռնի: Տանից թէև անկողին ուզարկեցին, բայց այդ անկողնով կաշառեց գարգիէնին (Gardien), որպէս զի աւագակների խոնաւ և սալալատակ բնից իրեն ազատելով՝ վերի լարկը փոխադրէ: Այդ բանը թէև Քիւլհան - Բէլի քէֆով չէր, բայց չը խօսեց: Մկօն ամեն օր տրտունջներ էր անում, Քիւլհան-Բէլիին ասում:

— Դու որ ուզեմայիր, ինձ աս օրը չէիր թողնի:

^{*}) Այրգում որով պայմանը գրժողի կինը արձակած է համարում և մինչև այդ կինը շարձակէ, մի ուրիշ բարդ չառնէ, ազահարզան չը սպ, էլ նախկին ամուսինը նորան չի կարող ասնել:

— Ես ալ կուզէի, որ դու ազօրը ընկնես ու ալ նեղ օրին մնացածներու հալէն հասկանաս:

— Օխի՛ծն օտարին կախելուց ազատել ես, մարդասպաններուն բանտէն փախուցել ես, ամմա հօրեղբօր սրգուզ հաւարին չը հասար:

— Ես կուզեմ, որ դու մարդ դառնաս...

— Քնն, ազ ծակ փիլիսոփայութիւնդ քիւլ-հանջիներուն կարգալ:

— Կուզեմ, որ դու ալ քիւլհանջի դառնաս...

— Ալ քիւլհանջիներէն ինչով եմ պահաս, ես ալ անոնց պէս տկո՛ր, ամմա ազ բանէն ինչ օգուտ: Տանը հաց կուզեն, մատղաշները քաղցած են:

— Անոնց դարգը մի ըներ, անոնք իրենց հացը իրենք կաշխատին:

— Վալ անոնց դատուծի գլխուն, ասեղով պիտի ապրին...

Օրից օր Մկոն կատաղում էր, նա միայն այժմ ըմբռնում էր, զգում իր դասը վիճակը: Նրա աչքի առաջից երբէք չէր հեռանում, ո՛չ Աբիկեան Միմօնի, ո՛չ Մօլլա Իգրիսի պատկերը, ո՛չ դատաւորների, ո՛չ սուտ վկաների, ոչ էլ այն ընկերների, որոնք հետզհետէ իրեն թողել հեռացել էին: Այն ընկերները, որոնք ժամանակով տանով, հարիւրով իրենից օգնութիւն էին ստացել, այժմ չնչին դումարներով, ծխախոտի փողով անգամ չէին ցանկանում թեթեացնել նրա վիճակի դառնութիւնը: Մինչ այդ նա չէր զգացել իր կորուստի ահաւորութիւնը, բայց հետզհետէ բորբոքում էր սիրտը և զգում էր, թէ որքան մեծասրտութեամբ էր տարել Քիւլհան-Բէլին այնքան զրկանքները: Այս փո-

խոսութիւնները նկատու՛մ էր Քիւլճան-Բէլին և ուրախանու՛մ, որ Մկօն աստիճանաբար ուղղու՛մ էր:

Ամեն օր նոյնպէս ճշմարիտ տեղեկութիւններ էր առնու՛մ Քիւլճան-Բէլին Մկօի տանից: Նա իմանու՛մ էր, թէ ի՛նչ էր մտնու՛մ նրանց տունը, կամ ի՛նչ էր գուրս գալիս: Շարաթական մէկ մէկ Մկօի տունը կապոցով բան էր ուղարկու՛մ, այնպէս որ նրանք չէին էլ իմանու՛մ, թէ ո՞վ էր ուղարկու՛մ: Երբ լսու՛մ էր, աղջիկների գործով զբաղելը, ասու՛մ էր մտքու՛մը.

— Ապրի՛ք, այգպէս, խելօք մարդը ոչ ոքի բեռ չի դառնալ:

Շատ անգամ գիշերը թողնու՛մ էր քիւլճանը, վազ էր տալիս Իջագիէ, Մկօի տան չորս կողմը շուռ էր գալիս, լուսամուտներից մտիկ էր տալիս, երբեմն զգուշութիւնով պարտէզից ներս էր մտնու՛մ և ամեն կողմը քննելուց լետոյ, վերադառնու՛մ: Երբ անմեղ երեխաներին նկատու՛մ էր մէջ գիշերին մի աղօտ լամպի լոյսով կար կարելիս, աչքերը լցու՛մ էին, սիրտը բորբոքու՛մ էր, կայծակի արագութեամբ թողնու՛մ էր ու հեռանու՛մ: Իր սովորական տեղը նստելուց լետոյ, խորասուզու՛մ էր և որևիցէ սթափումից լետոյ մըրմնջու՛մ.

— Մօլլա-Իգրիսի հարէմի մէջ քառասուն հարճեր օր ու գիշեր, երգեն, պարեն, անխնայ պատուեն, կտարեն, լափեն, լակեն, թափեն, իսկ Մկօի աղջիկները մինչի լոյս ճրագի մը լոյսով նստեն անոնց համար ֆէրէջէ (վերնագգեստ) մը կարեն, որ իրենց ուտելիք ցամաք հացը գնեն:

Օրիցօր այնպէս վրդովու՛մ էր քիւլճանջին, որ

իր կնոջ ու որդու համար էլ բոլորովին չէր մտածում խելքը, միտքը Մկօի երեխաների հետ էր: Նա գիտէր, որ էլբիսը էգ վագրի նման կարող էր պաշտպանել իր ձաղին, որդին մեծանալով փայտ կոտրելով, կամ փողոցներում տէփուրը գլխին ուտելիք ծախելով, օրական հացը միշտ կարող էր դատել, կինը փոր հացի, կամ շորի ու զարդի համար իրան չէր ծախել. այն ինչ Մկօի ընտանիքի գեւ թող էր, նրա մատղաշ երեխաները շատ էին, մայրը անվարժ, աղջիկները անփորձ և աւելի օգնութեան ու պաշտպանութեան կարօտ: Եւսկիւտարի բոլոր խանութւորները, թուլումբաջիները ճանաչում էին Քիւլհան-Բէլին, ամենքը նրան լարգում էին, որ խանութը մտնում, մի բան էր կշռել տալիս, կամ մի բան էր առնում, ոչ ոք նրանից փող չէր վերառնում, բոլորը գիտէին, որ քիւլհանջին ինքը պէտք չունէր, իրան համար ոչինչ չէր գնում, ինչոր առնում էր, ուրիշի օգնելու համար էր, իսկ մտագործները, հացթուխները, նպարավաճառները, իրանք էլ որպէս նեղ օրով մեծացած մարդիկ կամ իսկ և իսկ թուլումբաջիներ, նեղ օրում գտնուողների համար հոգիները չէին խնայել: Նամանաւանդ որ Քիւլհան-Բէլի նման կարևոր մարդու խաթրը սով կը կոտրէր:

Գ

Մի օր, մալխի սկիզբներին առաւօտը վաղ մի կոկիկ հազնւած թուլումբաջի երիտասարդ, բացեց

Քիւլճանի դուռը, ձեռին մի քթոց բռնած ու ասաց.

— Ազգար աղբւոր, մինակ ես, քեզ համար լաւ չիլէկ (եւակ) եմ բերել. հրամմէ:

— Տիգրան, դու ես, տար ծախէ, ես չիլէկն ինչ պիտի ընեմ:

Բոստանջիները (պարտիզպանները) քեզի վաւ զրկեցին:

— Ար աղպէս է, տար մեր Մկօենց տուն տը-
րոցը, ամմա չըսես, որ ես զրկեցի:

— Գլխուս վրայ: Երիտասարդը չորս բօլորը սիսեց քննել, այնպէս որ Քիւլճան-Բէլին հասկացաւ, որ մի բան ունէր ասելու, բայց տատանուում էր:

— Ինչ ունես, ալ աղայ, քեզ ինչ է եղել:

— Բան չը կայ, ասաց աչքերը գետնին լա-
ւելով:

— Չէ, անպատճառ գողտուկ բան մ' ունիս.

— Բեզնէն ինչ գողտուկ պահեմ, քանի որ եկել եմ քեզ ըսելու: Մկօենց տանը աս իրիկուն մուղիաթ (պահպանելու) ըլլալու է, ես կերթամ, մէկ երկու ընկեր ունիմ, ամմա քու գիտենալդ պէտք է: Գործը շատ ծանր է:

— Ինչ է եղել, ինչ կայ:

— Երկու ամիս է Մուլա-Իգրիսը, ջինայէթի Նէջիր Բէլը և ան շուն Մանուկ աղան ընկել են խեղճ կնկալ ետեւից... Քու մարդուդ հափսէն (բան-տէն) կազատենք ըսելով, կը խարխփեն, ամմա մտքերը ծուռն է: Ամեն օր Մկօին կը տանջեն, ան ալ խարար խարարի ետեւէն կը զրկէ, որ ճարմ' ընեն իրեն ազա-տեն:

— Քեզ ո՞վ ըսաւ, դու ինչէն իմացար:

— Էրէկ իրիկուն Մկօենց պատի տակես տեսայ անոնց, մօտիկցայ ու խօսածներն իմացայ, որ աս գիշեր տունը պիտի կոխեն: Արիկեան Սիմօնը խօսք տւեց, որ ինքը իրենց բաղչալէն կուգայ, դուռը կը բանայ: Թէ իրենց կամքով չը շարժին, աղմուկ հանեն՝ պիտի ըսեն, թէ գողցած ապրանք փնտրելու են եկել: Ես կուզէի միտանը անոնց հոգայ, ամմա Մարտիկը թողեց, ըսելով, որ գանք առաջ քեզ հետ խորհուրդ լնենք:

— Դու ինչ գործ ունէիր անտեղ, պառաւին չարչրելն ինչից իմացար, ասաց մտախոհ Քիւլհան-Բէլը:

— Ես . . . ասաց կակաղելով Տիգրանը ու չը կարողացաւ շարունակել:

— Դու ինչ, ինչու լուեցիր, ասաց բոցացայտ աչքերը ուղղելով քիւլհանջին թուլումբաջիի երեսին:

— Ես կը սիրեմ . . . ասաց խեղդւած ձայնով Տիգրանը, անոր հետ գիշերները միշտ կը տեսնւինք . . . Ան պատմեց:

— Որ գիտէիր, թէ ալդպէս բան կայ, ինչու ինձի՞ կանուխ չիմացուցիր:

— Ադ բանը էրեկ իմացայ:

— Լաւ, աս իրիկուն ան շտեղերը սպասէ: Ընկեր ունիմ ըսիր, հա՛, ան Մարտիկը, լաւ տղայ է: Երբ մարդ մօտենայ տանը, Մարտիկին կը հասցնես ինձի քով: Դու ու Մարտիկը հերիք էք: Ել մարդ պէտք չէ:

— Անոնք շատուր կըլլան, ու թ տաս մարդ:

— Բան չը կայ: Հա՛. հիմի գնա՛. Ազաւնուդ ըտէ՛, որ չը վախենայ, ես չեմ թողնի որ անոնց մազին մատ գիպչի: Անտեղէն գնա՛ Այթոււն-Զաղէլին ու Բէշիդ Փաշային բազնիքները, ըտէ՛ քիւլհանջիներին իմ անունով, որ գիշերս դուրս չելլան, թէ պէտք ըլլայ, իմաց կուտամ: Աւրիշ բան չը խօսիս: Կրակ ունիք, դանակ ունիք:

— Կայ:

— Անպէս շարժւեցէք, որ բան չը կուսեն: Հանդարտ, ծանր: Իէ՛հ, գնա՛:

Քիւլհան-Բէլին ընկաւ դարձեալ մտածութիւնների մէջ: Այդ օրը և այդ գիշերը անտանելի դարձաւ Քիւլհան Բէլի համար, տարիից աւելի երկարեց: Գիշերը անհամբերութիւնից երկու երեք անգամ մօտեցաւ, ման եկաւ Մկօի տան շուրջը և տղերքն այնտեղ պատրաստ գտնելով՝ մասամբ հանգստացած վերադարձաւ: Նրա սիրտը սաստիկ կերպով տրոփում էր, անհանգստութիւնից անդադար ման էր գալիս և ամենափոքր շոուկի ձայնը՝ նրա ուշքն էր գրաւում: Յաճախ բաց էր անում քիւլհանի դուռը, դուրս էր գալիս, մթնումը աչքերը չուած մտիկ էր տալիս, տկանջները սրած լուծ, ոչինչ, դեռ ոչ մի նշան չէր նկատում: Կէս գիշեր եղաւ, բէկչիները (գիշերապահ) սկսեցին իրենց բոլոր մահակների երկաթապատ ծալիները փոզոցների սալայատակին խփել և մի անախորժ գոչկենով իրար ձայն տալ: Ել չը կարողացաւ համբերել Քիւլհան Բէլին, դուրս եկաւ ուղղւեց գէպի Իջադիէ: Ճանապարհի կիսին Մարտիկը վազէվազ նրան գիմաւորեց և լախնեց, որ եկել և բռնի դուռը բաց

անելով՝ ներս էին մտել չարագործները: Այդ որ լսեց քիւլհանջին՝ բորբոքեաճ շտապեց:

Առանց խօսեցնելու Քիւլհան-Բէլին՝ լանկար-
ճակի մի մահակի հարեաճով փշրեց դրան առաջ դրած
պահապանի գլուխն ու գիակը գետին փռեց: Մոտին
դրան պահապան թողնելով՝ ներս մտան Տիգրանի և
Մանուկի հետ: Մութ բակում անսպասելի կերպով
նրանց դիմաւորեց երկրորդ պահապանը. որը նոյնպէս
ընկերոջ մօտ գնաց: Տիգրանը նրանց առաջնորդում
էր. իսկ ներսից գալիս էր լացի. որոտումի ձայն:

— Քանի հոգի ներս մտան, ասաց Քիւլհան-
Բէլին:

— Չորս, ասաց Տիգրանը:

— Պատշգամբի տակէն խօսակցութեան ձայն
կուգայ, ասաց Մարտիկը: Ականջները սրած, շնչերը
կտրած՝ ամենքը զգուշութեամբ սկսեցին լսել:

— Պէտք է ատոնց հոգայ, ասաց քիւլհանջին:
Տիգրան, Մարտիկ, դուրս գնացէք, ներսիններին ես
չեմ թողուր, որ ողջ դուրս գան: Արիւն չբժափէք,
ո՞վ պիտի մաքրէ գիշերը: Մէկ ես ալ աս պաղչային
մտիկ տամ:

— Պարտիզում Քիւլհան-Բէլին գիմաւորեց մի
հայ պահապանի ևս, որը ճանաչեց Քիւլհան-Բէլին և
ոտքերը ընկած, սկսեց աղաչել խեղդեաճ ձայնով.

— Աման, Աստու խաթէր: Ղազար աղբւր, ես
մեղք չունիմ, ես մէկ անգամ կրակն ընկայ, դու գիտես,
որ ես քու գերիդ եմ...

— Զանդ կտրիր, օձի լեզուովդ ինձ չես խափեր,
ասաց երկու ձեռքերով նրա կոկորդը սեղմելով Քիւլ-

հան-Բէյին. — Գրկցիդ դուռը բանալու և անօրէն դա-
զաններին ներս առնելու շատ ժիր ես:

Սիմօնը վերջին ճիգը թափած այս ու այն կողմ
ձգւելիս գիպաւ տանիքի խողովակի տակ գրած անձրևի
ջրի տակառին. որը վայր ընկաւ և ջուրը թրջեց եր-
կուսի էլ սրունքներն ու ստքերը: Քիւլհան-Բէյին
Սիմօնի գլուխը պատի անկիւնին անպէտ պինդ խփեց,
որը մի քանի ճիչ արձակեց ու վայր ընկաւ: Այս միջոցին սե-
նեակի աղմուկը սաստկացած լինելով, ոչինչ չըլտեցին:
Քիւլհան-Բէյին իսկոյն ներս վազեց: Նախասենեակում
նրան դիմաւորեցին Մանուկ աղան և Հասան Չաուչը:

— Քիւլհան-Բէյին, գոռաց Մանուկ աղան սար-
սափած:

— Ի՞նչ գործ ունիս այստեղ, գեաւոր, գոռաց
Հասան Չաուչը և ատրճանակը կրակեց Քիւլհան-Բէյի
կրծքին:

Գնդակը սպրդեց: Քիւլհան-Բէյին Հասան-Չա-
վուչի դաստակից բռնեց, աէւօլները խլեց և նրանով
զանգը փշրեց: Ննջարանից դուրս վազեցին և Քիւլ-
հան-Բէյի վրայ յարձակեցան Իգրիսն ու Նէջիբը: Մինչ
այդ՝ Մանուկ աղան դուրս թռաւ:

— Մահմէդ, Ալի, Հասան, Օսման, սկսեցին
գոռալ Նէջիբն ու Իգրիսը և աէւօլներնեքը դարար-
կել:

Բակի մէջ Մարտիկն ու Տիգրանը Մանուկ ա-
ղայի դատաստանը տեսած՝ ներս մտան: Սրանց որ տե-
սան, յուսահատեցան Իգրիսն ու Նէջիբը:

— Թէ չէք ուզէք մեռնել, զէնքերդ տւէք, գո-
ռաց Քիւլհան-Բէյին և վրայ հասաւ:

Մարտիկը նէջիր-Բէչի գաստակներից բռնեց, իսկ Տիգրանը Եղբիսի: ՔիւլՏան-Բէչին գէնքերը խլեց և ճոցերն ու գրպանները քննելով, ասաց.

— Տղերք, ամուր բռնեցէք, Տիմա կուգամ: Իսկոյն գուրս ելաւ, պարտիզում կապւած լըւածքի չւանը, որ քիչ ասաջ նկատել էր, քակեց ներս բերեց, սկսեց Եղբիսի ու նէջիրի ձեռքերը ետեւից ստքերի հետ կապկպել: Երբ վերջացրեց, ՔիւլՏան-Բէչին, ասաց.

— Հարսիկ, տունը ջլալ (պարկ) ունիք.

Երկիւղից ձայները քաշել, ներսից ոչ միայն գուրս չէին գալիս թշւառ արարածները, այլ մինչև անգամ պատասխանելու սիրտ չէին անուծ: Համբարութիւնը կտրւած՝ մօտեցաւ ննջարանի դռան և ասաց ՔիւլՏան-Բէչին.

— Աղաւնի, ազջիկ, չես իմանալ, տունը ջլալ կալ:

Աղաւնին գուրս եկաւ և կռանալով բազմոցի տակից գուրս հանեց երկու խոշոր պարկ *) ու լանձնեց ՔիւլՏան-Բէչին: Իսկոյն կալանաւորների բերանները կապեցին և նրանց պարկի մէջ գրին:

— Թէ ձայն հանէք, գուրս ալ Հասանի ու Սիմօնի քով կերթաք, ասաց ՔիւլՏան-Բէչին:

— Թէ ազատ իմ, քեզ կախաղան պիտի հանել տամ, մրմռաց Մոլլա Եղբիսը:

*) Ա. Պոլսում ամառանոց կամ ճանապարհորդութեան գնալիս՝ մեր մափրաշների փոխարէն խոշոր պարկեր են բանացնում:

— Իմ վիճիւքս ես չեմ փոխել, ճանրան ձայնդ
դուրս գալուն պէս, դամաս (դաշոյն) փորդ կը կոխեմ,
խկ գու ալ քու ուզածդ ըրէ, երբ ազատիս, ասաց
Քիւլճան-Բէլին նրանց պարկերի բերանները կա-
պելով:

Պարկերի բերանները կապելուց յետոյ, մէկը
ուեց Մարտիկի շալակը, միւսը Տիգրանի ու ասաց
ականջներում: — Տար Բէշիդ փաշայի բաղնիսի քիւլ-
ճանը: Այնտեղ պարկով կը թողնէք և կըսէք, որ ձեռք
չը տան մինչև իմ գալս: Այնտեղից ետ կը գաք ու
Ղուզղունջուգի ձորը գլորածները կը շալակէք, կը բե-
րէք ջհուգների գերեզմաննոցը:

Նրանց ճանապարհ գնելուց յետոյ, Քիւլճան-
Բէլին ներս կանչեց Մոսոին և մի կարպետով Սիմօնի
ու Հասանի դիակը փաթաթելով՝ շալակը բարձրացրեց
ու ասաց.

— Ջհուգների գերեզմաննոցը, ձորը մի իջնիր,
սարի ճանրով տար: Ես էլ հիմի կուգամ:

Նրան ճանապարհ գնելուց յետոյ՝ Մանուկ ա-
ղայի և բակի դռներում խեղդած երկու պահապան-
ներին էլ մի խտրում փաթաթելուց և կապկպելուց
յետոյ, ասաց.

— Աղաւնի, աղջիկս դուրս արի. ալ մի վախե-
նաք, հանգիստ քնեցէք, աս բեռը բռնէ՝ շալակս տուր:
Դուրսը բան ու ման չը խօսիք, ես առտու կուգամ,
դուռը լաւ կողպէ: Տիգրանին կըղրկեմ գիշերս, տունը
պահպանի, երբ որ գայ՝ դուռը բաց, անորմէն մի վա-
խենալ:

— Մօլլա Իգրիս, ասաց Քիւլհան-Բէլին Ալթուն Չաղէի բաղնիսի քիւլհանում՝ լուսադէմին պարկը օջախի մօտ քաշելով և ջլալի բերանը բաց անելով, եթէ հինգ հազար լիրա չես տար, եթէ տունն ու խանութը ան խեղճ կնկան ու աղջիկներուն չես դարձնել, քեզի կը խորովեմ աս օջախում

— Գեաւօր, գոռաց կալանաւորը թմբութիւնից սթափելով, ես քեզ . . .

— Մի ճղճղան, տես չորս կողմդ, պատերը քար է, դուռն ալ երկաթ, կրակն ալ վառած: Հինգ հազար լիրա, Մկօի տունն ու խանութը կնկանը պիտի կտա դարձնես:

Մօլլա Իգրիսը չորս կողմը քննելուց լետտով, լուսահատ հառաչեց:

— Բաղնիսի ջուրը պէտք է տաքցնել, լաւ մը տածէ, դու գիտես:

— Այստեղ փող սրտեղից գտնեմ, ասաց թօթօվելով Մօլլա Իգրիսը.

— Ծոցէդ ես հանել եմ բանկ Օտտօմանի չէկը, դու մենակ ձեռ քաշէ, ու մէօհրէ (կնքիր):

— Մէօհրիս քովս չէ:

— Քսակդ իմ քովս է, մէօհրիւդ ալ մէջն է: Երեք չէք կը տաս, մէկը երկու հազարի, մէկը երեք հազարի, մէկն ալ հինգ հազարի:

— Տասը հազար լիրա . . .

— Երբ տան թղթերը շինել կը տաս, հինգ հազարը ետ կըստանաս:

— Լաւ, որ այդպէս է, թողէք ձեռքերս: Ամժա
փողերն առնելուց լետոյ, թէ բաց չը թողնէք . . .

— Ես քեզի պէս նեամարգ (ամարգի) չեմ,
փողերն ասօր ստանամ, իրիկուն քեզ բաց կը թողնեմ:
Ամժա նէջիբ - բէլին բէհին (գրաւ) կըպահեմ, մինչև
որ տան թղթերը հարսիս տաս ու Մկօին էլ բանափց
բաց թողնել տաս.

Վայրկենական լուսթիւնից լետոյ, ասաց Մօլլա
Իգրիսը.

— Լաւ, տւէք ստորագրեմ . . .

Երբ վերջացրեց, ասաց Քիւլհան - Բէլին.

— Զըլնա թէ՛ խօջան, կը մտածես մեզնէն հա-
լիֆ (վրէժ) առնել: Նաղդ փողերը ասօր մենք կստա-
նանք, գու ալ գիշերս կազատուիս: Ամժա թէ մեզ մատ-
նես, կամ մէկու մը քիթն արիւնելու պատճառ ըլլաս՝
լաւ իմացիր, որ տանդ, տեղիդ, հարէմիդ կրակ կը տամ,
քեզ ալ անոր բոցերի մէջ կը խորւեմ:



Աւթն օր լետոյ Մկօն ազատել էր: Իգրիսը
տան ու խանութի թղթերը լանձնել էր Մկօյի կնոջը,
որը իւր աղջիկների հետ արհեստանոց բացած առա-
ւօտ իրիկուն կար էին կարում, քառասուն թշւառ
բանւորուհիների գործ մատակարելով — կշտացնում էին:
Նէջիբ-բէլը բարեկամներին և ծանօթներին հաւատա-
ցրել էր, որ Ալէմ-գաղի որսի էր գնացել: Տիգրանն
ու Աղաւնին նշանւել էին և Քիւլհան-Բէլին հինգ հա-

զար լիբան կարօտեալներին ցրելով, քիւլհանում ջուր էր քաշում բաղնիսի խազնան լցնելու համար ու մըտածում: Ելբիսը կարը շարունակում էր և ապրեցնում գաւակին ու մարդուն: Կ. Պոլսի ստիկանապետը հազարներ էր ցրում, որ իմանայ թէ որտեղ էին անյայտացել Աբիկեան Սիմօնը, Մանուկ աղան, երկու խողէմաներ, երկու ծառաներ և Համան Չաւուշը: Կասկածում էին Նէջիբ բէլի և Մուլա Իզրիսի վրայ, բայց դրանք երկիւղից ոչ մի բառ չէին կարողանում խոստովանել:

Մարտ 1893 թ.

Թիֆլիս

Ժ

ՕՐԻՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳ

Կ Ա Մ

Խ Ո Փ

Բ Ե Յ Ի Ա Ժ Է

**ԲԱԺԱՆՈՐԳԱԿՐՈՒԹԻՒՆ
Ա Տ Ր Պ Ե Տ Ի**

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱՆՈՒԻ

ԱՌԵՋԻՆ ԳՆՑ ՀԵՏՈՐԻ ՀԱՄԵՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Տասր սրտոկեր Թուրքամու-
յերի կեանքից
գինն և 1 ռ. կամ 5 դր.

ՎԻԻԲ. ԳԱՂՏՆԻԲ

Վկայ Թուրքիա-
յի արկածներից
գինն 1 ռ կամ 5 դր.

ԱԼՄԱՍՏ

Վկայ ստաջին նատոր Բարձր Հայոց
կեանքից գինն և 1 ռ. կամ 5 դր.
Երկրորդ նատոր " " " "

ԶԱԽԱՅԻՐ

Վկայ վերջին ոռոս թրք. սրտե-
լագվի, 1877 — 78 արկածներից
գինն և 1 ռ. կամ 5 դր.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ

նախարածոյ Թուրքամույերի կեանքից
գինն և 1 ռ. կամ 5 դր.

Գրքերը լոյս կը տեսնեն անպատճառ 1904
թւականի ընթացքում:

Բաժանորդագրինն է վեց հատորը միասին
4 ռուբլի պոստի ծախսով:

Բաժանորդագրութիւնը շարունակուլ է մինչև Մայիս
սոյն 1904 թ.

Գրմէ՛ TAURIS PERSE ATRPET

ՕՐԻՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳ

Կ Ա Մ

Խ Ո Փ

Ջ Ր Ո Յ Յ

Ն Ի Է Բ Ի Ե Զ Ի Կ Ի Ն

Մալխաս քէհան եօթը պորտով քէհաների
օջախից էր, նրա գուռը բաց, սեղանը գրած, առաւօ-
տից մինչև իրիկուն ճամբորդները — անցորդները, հիւ-
րերը բազմած նրա սուփրին, ուտում էին, խմում և
հագարաւոր օրհնէնքով հեռանում էին նրա գոնից:
Ամրող՝ նիրակում լալանի էր քէհալի տունը առատա-
բաշխութեամբ, Արզուրումից մինչև Սթամբուլ խօսւած
էր ու գոված Մալխասի անունը: Գիարբէքիից, Հա-
լէրից, Գամասկից ու Մարից եկող կարաւանները նրա
գրանը պիտի իջնէին ու իջեցնէին նշանաւոր ու ան-
նշան ճանապարհորդներին: Թիֆլիսից, Շաքի-Շիրւանից,
Գանջա-Ղարաբաղից ու խտաւորները ճանապարհին նրան
պիտի այցելէին: Մալխասի ճոխութիւնը այնքան էր
հռչակւած արևելքում, որ Սուլթան Մուրադը (Գ.)

չէր հաւատում, թէ Շիրակեցի մի այգալիսի Ռայա — հայ այնքան անսպաս ճոխութեան տիրէ:

Երբ Մուրադ սուլթանը (Պ.) պատերազմի դուրս եկաւ Պարսիկների դէմ, Բաղդադը նրանցից լափշտակելու համար, իւր բանակը նախ ուղղեց Վանանդի կողմը, տիրեց Կարսի բերդին և ամբողջ ձմեռը բանակով անցկացրեց Շիրակում՝ Մալխասի կալւածքում, հրամայելով վերջինին, որ իրեն և իւր ենիչէրական բանակը կերակրէ: Մուրադը համոզւած էր, որ իւր վաթսուն հազար հոգուց կազմւած բանակը պիտի լափէր ու թափէր, դարտակեր ու մարբէր Մալխասի առասպելական ամբարները: Բայց նա անչնփ զարմացաւ, ապշեց, երբ ամբողջ երեք ամիս նրա գնդերը կերան ու լակեցին և Մալխասի շրթունքներից ոչ թէ տրտունջ, այլ մի հառաչ էլ չը բարձրացաւ: Մուրադը ուշի ուշով հետեւում էր, թէ ինչպէս Մալխասը իւր անհաւոր բանակը կերակրելուց, դրաստները առատ առւտրտով, գարիով ու կոպտոնով կշտանալուց լետով, ամէն օրւայ անցորդներին էլ անձամբ առաջնորդում էր հիւրանոց, կողքին նստացնում, կշտացնելուց լետով, պալուսակներն էլ առատ էպաշարով լցնելով՝ ճանապարհ էր գցում:

Մալխասի անհոգ համբերատարութիւնը կտրեց Մուրադի հանգստութիւնը. նա այլևս չը կարողանալով գսպել իր կրքերը, կանչեց իւր մօտ տանուտէրին և ստաց.

— Մալխաս քէհն, ախար դու թալիսման ունիս, որ իմ ազահ ու անկուշտ գնդերը շեն կարողանում դարտակել քո ամբարները: Ահա երեք ամիս է, ու-

տում են, լափում, թափում են ու չեն կարողանում սպառել մթերանոցներդ:

— Թագաւորը շատ ապրի, ասաց Մալխասը, նրա շնորհիւ մեր ամբարներում այնքան մթերք կայ, որ կարող է ձեր ենիչէրիներին կերակրել եօթը տարի էլ:

— Սառնասրտութիւնդ խօսքերիդ ճշմարտութեան ապացոյցն է, ասաց Մուրադը: Քեզ հաւատում եմ, բայց չեմ կարողանում ըմբռնել, թէ ինչ կախարհական գաղտնիք կայ ամբարներումդ, որ չեն սպառուում:

— Ալլահը ձեր օրերը քաղցրացնէ, ասաց Մալխասը, խօսքով չեմ կարող փառատել ձեր մտքին տիրած տխուր կասկածները, եթէ ինձ վրա շնորհ ունիք, բարեհաճեցէք ինձ հետ այցելել շտեմարաններս, ամբարներս, մառաններս և գաղտնիքս ձեզ կը պարզւի:

Մալխասը Մուրադին տալաւ մի մեծ մառան, որտեղ դարուած էր հազարաւոր լուծ՝ ընտիր ու պինդ փայտերից պատրաստուած: Ապա մի ուրիշ մարաք տալաւ, որտեղ շարուած էր հազարաւոր անիւ մայրի փայտից պատրաստուած, յետոյ մի ուրիշ բակ, ուր հազարաւոր սալեր էին սարքուած, այդ տեղից մի ուրիշ մթերանոց, ուր հազարաւոր գութան էր դարուած, այնտեղից մի ուրիշ պահեստ, ուր հազարաւոր գութանի շղթայ էր կիտած, վերջը մի ուրիշ ներքնատուն՝ ուր հազարաւոր պարան էր կուտակուած և այսպէս անվերջ ման ածեց սուլթանին մի քանի ժամ: Մուրադը ապշած հետևում էր, չը կարողանալով զարմանքը ծածկել: Վերջապէս լաղթող աշխարհակալը լոգնած՝ ասաց քէ-

Հային, որք ուզում էր նրան մի ուրիշ բակ տանել.

— Տեսնում եմ, որ քո Հարստութիւնը սահման չունի: Տար ինձ գանձարանդ էլ ցոյց տուր, այն առասպելական սկիներիդ գէզերը և սկէ խոփդ, որ ապա հեռանամ վրանս:

Մալխասը նրան տարաւ մի ուրիշ մարաք, ուր հոգարաւոր արօրի ու զուլթանի խոփերը արծաթի նման փայլում էին և հրապուրում ամենաանշահախնդիրի աչքերն անգամ:

— Իմ Հարստութիւնս, գանձս, գոհարներիս շտեմարանս այս խոփերն են, ասաց Մալխասը ոգևորութեամբ, սրանցով են կերակրել իմ պապերը բիւրաւոր անցորդներին, սրանցով եմ կշտացրել ես անթիւ ճանապարհորդների և սրանք կշտացրին քո ենիչէրական գնդերին:

Մուրադն զգաց, որ իրաւի Մալխասի գանձարանում բացի արծաթափայլ խոփերը, էլ ուրիշ իրան չը կար և այդ խոփերն էին նրա առասպելական անսպառ գանձարանի առատարուղիս աղբիւրները:

Մուրադը անչափ գոհ սրտով բաժանւեց Մալխասից և վէզիբի հետ գիմեց իր վրանը: Ճանապարհին սուլթանին պատեցին գառն մտքեր և նա տխուր ու մտախոհ դէմքը այնպէս սարսափ գցեց վէզիբը սիրտը, որ վերջինիս շրթունքները երկիւղից ճեղքւեցան, լեզուն բերանում չէր շարժւում, որ մի բան խօսի և սուլթանին ուրախացնի: Մուրադը այսպէս երկար վէզիբին տանջելուց լետոյ, ասաց.

— Վէզիբ, քո կարծիքով ես եմ մեծ, ես եմ հարուստ, ես եմ երջանիկ՝ թէ քէհան: Իմ բաղաս է

աւելի հաստատ, թէ Մալխասինը, այս ուսլալինը:

— Հաւատացեալների հրամանատարդ, ասաց վէ-
զիրը, միթէ՞ աշխարհում Ալլահի շքից մեծ, քեզանից
հարուստ, քեզանից երջանիկ, քեզնից բարեբաղդ արա-
բած կարող է լինել:

— Ստու՛մ ես, վէզիր, կեղծու՛մ ես, ասաց Մու-
րադը հռոպելով, իմ պալատում ես էլ մի ժամանակ
աղալէս էի համոզւած, բայց այժմ զգացի, որ Մալխա
սը ինձնից մեծ է, ինձնից հարուստ է. ինձնից բազա-
ւոր է և նրա վիճակը ինձնից էլ, իմ ժառանգորդնե-
րից էլ աւելի հաստատուն է: Ես, եթէ միլիոնաւոր
ժողովուրդիս չը կեղքեմ, մի օր չեմ կարող ենիչէրի-
ներիս կշտացնել, իսկ նա ահա երեք ամիս է անխաբան
նրանց որկորը լցնելուց չը լողնեց և հաւատացած եմ,
որ ոչ թէ եօթը տարի, այլ եօթանասունը եօթը տարի
էլ կարող է նրանց կերակրել, առանց հռոպելու: Ես
կերակրում եմ զօրքս խալխին արտասուեցնելով, նա կըշ-
տացնում է իւր ամբարների բերքով, որը երկնքից է
նրան շնորհւել: Ալլահի շնորհն ու ճողորմութիւնը աւելի
չատ Մալխասի գլխին է տեղացել, քան թէ իմ: Ինձ-
նից առաջ հարիւրաւոր աշխարհակալներ եկել են, տիրել,
բռնակալել ու անցել Կարսի բերդի վրայով, հարիւրաւոր
գահակալներ իշխել են ու կորցրել այս անառիկ բեր-
դը, բայց Մալխասները հաստատ նստած են իրենց վի-
ճակում, ծաղրել են ինձ նման հազարաւոր բաղդախըն-
դիրների, որոնք նրանց գրանը իջեանող ճանապարհորդ-
ների նման եկել, լսվել, լսակել են ու անցել: Մալխաս-
ների քէհալութիւնը բարեբաստիկ է խալիֆութիւնից
էլ, աշխարհակալութիւնից էլ: Ես այնքան խելաղար

եմ, այնքան խենդ, որ այս ամէնը գիտենալով՝ դեռ լի-
մարաբար ձգտում եմ Բաղդատին տիրելու, կեանքս
անգամ վտանգի ենթարկելով: Թո՛ղ Մալխասները վախ-
լեն Ալլահի տուրքը, ինձ նմանները չեն կարող նրա-
նից այդ օրհնած հացը լափշտակել: Վէզի՛ր, քեզ հրա-
մալում եմ, այդ Ալլահի շնորհին արժանացածին այնպէս
պահպանես, որ նրա մաղին մարդ չըղիպչի, որպէսզի
Ամենարարձրեալը մեր հացը չը կարէ: Գրանց շնորհիւ
հաց ունի իմ բանակս: Գնա՛, հրամայի՛ր թո՛ղ բանակը
ճանապարհ ընկնի դէպի Միջագետ, միայն պատերազմի
տանջանքների մէջ կարող եմ մոռանալ այս վիշտը, որ
այս հայր, իմ այս սայաս՝ Մալխասը ինձնից հազար
անգամ աւելի բարեբաղտ է:

Վէզի՛րի սիրտը ծակեց խալիֆի նկատողութիւնը,
նա վախենում էր, որ Մուրադը նրան կարող էր կռա-
փնարան ղրկել, քանի որ վէզի՛րի անհողութիւնից նը-
րա երկրում ապրող որեւէ սայա աւելի բարեբաղդ էր,
քան թէ հաւատացեալների հրամանակալը: Այս մտքերը
բորբոքեցին վէզի՛րի սիրտը, նա սոսկալի կերպով կատա-
ղեց և վճռեց անպատճառ այդ հային՝ Մալխասին տա-
պալել, որ սուլթանի ենթագրութիւնները ջրուէր ու
իւր նկատողութիւնը արդարանար: Բայց սուլթանի եր-
կիւղից վէզի՛րը չէր կարող նոյնպէս բռնի ոյժ գործ դը-
նել, ուստի հնար չէ գտնում, որ նպատակին հասնի:

Երբ վէզի՛րը գարձաւ իւր վրանը, հրամանը ար-
ձակած զօրքին, որ պատրաստեն հետեւեալ առաւօտ
ճանապարհ ընկնելու, ընկաւ խոր մալամուռների մէջ,
չը կարողանալով այնպիսի միջոց հնարել, որ կարողա-
նար Մալխասին կործանել առանց բռի ոյժի: Այս գա-

սըն բոսպէններին վրանը մտաւ Մուրադի սիրելին՝ Գէլի-
Բէքիրը (խենթ), հարբած, մերկ մարմնի վրա թանկագին
մուշտակ հագնւած: Վէզիրը Բէքիրին նկատելիս չը կա-
րողացաւ ծիծաղը զսպել, ասաց.

— Խենթ, էլի ինչի եկար ու շընդմիջեցիր իմ
մտքերը:

— Արպէսզի քեզ մտորումներից ազատեմ, որ
դու էլ ինձ նման չը խելագարուես: Ինչ ես խոր-
հում:

— Թէ ինչպէս անեմ, որ առանց յափշտակութեան,
կամ արիւնահեղութեան թշնամուս կործանեմ:

— Նրան չը ջապատիր ինձ Իման լօթիներով, որ
գիշեր, ցերեկ ուտեն, խմեն, լափեն, թափեն, գործ
անելու, խորհելու միջոց չը տան: Այն ժամանակ նա
ինքնիքեն կը կործանի:

— Խելոքը մինչև մտածէ, ասաց վէզիրը, խեն-
թը ջուրը կանցնի:

Գէլի-Բէքիրի խօսքերը վէզիրի գլխում նորանոր
մտքեր ծնեցրին և նա Կ. Պոլսից բերած խեղկատակ-
ներին, գուսաններին, կաքաւիչներին թողեց Նիրակ,
ապսպրելով, որ զբաղացնեն Մախլասի որդուն:

Բայց աշխարհում չը կալ մի անկիւն, որտեղ
բարեբախտութեան կողքին վիշտն էլ որջ չունենայ:
Արքան որ բարեբախտ էր Մախլասը Մուրադի աչքում,
այնքան էլ դժբախտ էր իւր հայեացքում: Մեծատունը
միայն մի սրդի ունէր, նա էլ անչափ շոալլ, վատնող,
ամբողջ կարողութիւնը ցրող: Առաւօտից մինչև իրի-

կուն Բագրատը՝ Մալխասի որդին ընկերակիցների հետ որսի էր գնում, կամ այս ու այն այգիները հաւաքւած՝ ուտում էին, խմում, երգում ու պարում և վատնում Մալխասների դիզածները: Որքան խրատում էր ծիրունի նահապետը, որքան յանդիմանում էր, հնարը չէր գտնում: Բագրատը այնպէս էր հմարւած իւր ընկերներից, որ հօրը խօսքը Պագղեցու թիւն չունէր: Անփորձ երիտասարդը հաւատում էր բոլորին, շապում էր ձեռքն անցածը, նւիրում էր ընկերակիցներին՝ ինչ որ նրանք ցանկային, օր^նու գիշեր^ն նրանց սիրաշահելու համար գործադրում էր իր ջանքը ամբողջապէս, ամենամեծ զոհողութիւններով: Աէզիբի թողած գատարկապորտներն էլ զւարճացնում էին Բագրատին ու նրա ընկերակիցներին իրանց նւագածութիւններով ու կաքաւիչներով, այնպէս որ Բագրատը կեանքը միժնայնում էր սրանց շրջանում:

Ծիրունի Մալխասը, որդու աննուղղելի քնաւորութեան վշտից տանջւած, մաշւած, զգաց մահւան իրեն մօտենալը, ուստի կանչեց որդուն իւր մօտ, որ կտակը կատարէ, վերջին խրատը, գաղտնիքները յայտնէ և օրհնութիւնը տայ: Բագրատը համոզւած էր, թէ ահաւոր գանձեր ունէր իւր հայրը, ուստի խոհեմութեամբ մօտեցաւ նրա մահճակալին, ահանջները սրեց, լիշողութիւնը ամփոփեց, որ իմանայ, թէ ո՞ր մասնում և ո՞ր անկիւններում էր թաղւած հայրենի գանձերը: Մահամերձ նահապետը բոլորին դուրս արաւ իւր ննջարանից, հառաչելով ասաց որդուն.

— Բագրատ, ես համոզւած եմ, որ ընկերներդ շատ կարճ միջոցում պիտի ուտեն ու լափեն հօրդ ու

պապերիդ հարստութիւնը: Ինչոր ունինք, բոլորն էլ քեզ լալանի է, ծածուկ բան չունինք. փողերս էլ ալն է, ինչ որ միասին թաղել ենք, ոսկի ու արծաթ, մեր մութ քիլարում պղնձների տակ: Եղած-չեղածը գիտեմ որ մէկ-երկու տարուց պիտի սպառես, քանիոր նորից վատտակելու և փչացրածիդ տեղը լցնելու ոչ հաւաս ունիս, ոչ էլ ցանկութիւն: Մե՛ղք ինձ. իմ պապերի անւան, մե՛ղք ալն գանձերին, որ պիտի ցրես, քամուն տաս: Ի՞նչ կարող եմ անել, երբ արդէն իշխանութիւնը ինձնից առնելով Տէրը, քեզ է յանձնում: Արա՛, ինչոր կուզես, թողնւած է քո կամքին, քանի որ էլ ոյժ չունիմ քեզ սանձելու. դիմագրելու և կամ հոգէտուիս հետ կոււելու: Բայց մեռնելուց առաջ քեզնից մի պահանջ ունիմ, մի առաջարկ. երգւիր, որ սրբութեամբ կը կատարես իմ վերջին կտակս: Երգւիր, քու օջախի պատուով, երգւիր, պապերիդ լիշատակով, երգւիր հօրդ գլխով, ասաց հոգևարքէ ու մատը ուղղեց կրակարանի կողմը:

— Գլխուս վրա, ասաց Բագրատը խոնարհելով հօր վերջին կամքին:

— Ո՛չ, երգւիր, երգւիր, ասաց ծիրսւկը խեղդւած ձայնով, ամբողջ ճիգը թափելով և աչքերը լառեց Բագրատի երեսին:

— Երգւում եմ, ասաց Բագրատը խրոխտ ձայնով, սրտի զգացմունները անկեղծութեամբ արտայայտելով, երգւում եմ, հայրիկ, այս օջախով, որ սրբութեամբ կատարեմ վերջին կամքդ: Ասա՛, պատրաւտ եմ, լոււմ եմ քեզ, հրամայիր, հայրիկ:

— Երգւում ես,

— Եեղևում եմ պատուովս, լիշատակովդ, այս
օջախով, ուր բոցափայլել է մեր տոհմական կրակը
դարերից ի վեր:

— Արդիս, գիտեմ, համոզւած եմ, որ ամբողջ
գույքս պիտի ուտացնես այդ կեղծաւոր և նենգասիրտ
ընկերներին: Զգում եմ, որ նրանք քեզ այնպէս պիտի
քամեն, որ պիտի մնաս դափ-դարտակ, որ հացի կարօտ:
Այդ ժամանակ, այդ թշուառ վիճակում, երգւեցնում եմ
քեզ, երգւեցնում եմ իմ լիշատակովս, այս օջախով, որ
ուզւորութիւն չանես, ձեռ չը մեկնես որևէ ծանօթիդ,
կամ անծանօթի և չանարգես այն օջախի պատիւը,
որի անդամները որդոցորդի միշտ ուրիշի շնորհել են,
բաշխել են, որորմացել են ու լիառատ տւել, բայց
իրանք երբէք չեն մուրացել: Խոստանում ես կատարել
հօրդ վերջին կամքը, երգւում ես ճշտութեամբ կա-
տարել:

— Անպայման, հայրիկ, անպայման, երգւում
եմ և խոստանում: Գու ինքդ էլ հաւատացած ես, որ
որդիդ ձեռ չի կարող որևէ դէպքում մեկնել և նպաստ-
օգնութիւն խնդրել:

— Գիտեմ, դրա համար էլ կրկնում ու կտա-
կում եմ: Աւելի լաւ համարիր պատուով մեռնել, քան-
մուրալ, օգնութիւն — կարեկցութիւն խնդրել: Երբ
այլևս ծախսելու բան չես ունենալ, երբ լիովին կսպա-
ռես այս անհօն և հարստութիւնս, կայքերս, կալւած-
ներս, երբ բոլորովին լոյսդ կը կտրւի, սովը — քաղցը
քեզ կը տանջի, ցուրտը վզիդ կը չոքի և շորերիդ
պատառւածքից կուզենալ մերկութիւնդ գուրս թռչիլ,
մտիր մեր մառանը, մութն ահիւնը պղնձների վրան,

առատազօղից մի չւան եմ կախած, մի ամուր չւան, իւղած ու պատրաստ... : Երբ կեանքը կը գտնանայ, էլ որեւէ յոյսի նշույլ չեւ ունենալ այս ապարանքում, յուսահատութիւնը հոգուդ կը տիրէ, մտիք մտածող, քաջութեամբ մտեցիր չւանին, համարձակ բռնիր չւանը, գցիր վիզդ և կախուիր... : կախուիր... : խեղդուիիր... : Ես հաւատացած եմ, որ անագնիւ ապրելուց, ուրիշի ձեռք մեկնելուց նախապատիւ կը համարես մահը, կը կախուիս, կը խեղդուիս տղամարդի նման... : Երգւում ես...

— Երգւում եմ, հայրիկ, երգւում եմ և պաւստօս քեզ խօսք եմ տալիս, որ լիշատակդ յաւիտեան չը պիտի անարգեմ, չը պիտի խռովեմ հոգիդ յաւիտեան: Վստահիր ինձ, անհոգ եղիր, վերջին շնչիդ տակ չոքած երգւում եմ, խոստանում, որ երբէք չեմ մօւրալու, ոչ ոքի ձեռք չեմ պարզելու, կտակդ չեմ մօռանալու: Քեզանից ժառանգածս գոռոզութիւնը ինձ աւելի շուտով կօտիպէ ձեռքս պարզել հերոսարար կախառանի չւանին, քան թէ ստրկարար թշնամուցս նպաստ, օգնութիւն մօւրալու:

Այս խոստումը առնելուց լետօյ, հանգստացաւ ու հօնգաւ Մալխասը Քէհան:

Օջախի վարչութեան դէկն անցաւ Բագրատի ձեռքը: Հօրից մնացած պատրաստի գրամ, արծաթեղէն, ոսկեղէն, մարգարիտ, գոհար, կարպետ - գօրք, հոտեր, նախիրներ, ջոկեր, անթիւ անհաշիւ կալք ու կալանք հանդ ու այգի, լանձնեց Բագրատի իշխանութեան: Երա մի ստը Կարօ էր երգրում, միւսը Թիֆլիս - Երեւան:

Ընդհանուր գործակալներ, տեսուչներ, տնտեսներ կարգեց ու լանձնեց բոլոր գործերը, որ ինքը ազատ ու անկախ թափառի սրտի ուզած կողմէ: Անտեղեակ ելուստեղից, Բագրատը միայն պահանջում, ստանում, ծախսում էր, իսկ գործակալները գիշեր ցերեկ աշխատում էին, թէ Բագրատի պահանջները լրացնել և թէ իրենց սնգուկները լքցնել: Բագրատը բոլորովին ժտահար էր գործակալների վրա, անհոգ շարունակում էր իւր գրօսանքները, անխնայ ծախսելով, բաշխելով ու ցըրելով:

Ընկերակիցները երգում էին Բագրատի Յգլիսով և փառւանի նման զանազան աշխարհներից թռչում, գալիս հանգչում էին Մայիսանների հովանու տակ: Կեր ու խում, հագուստ, կապուստ, վայելք ու խնջուք, ամէն ինչ անպակաս էր: Օրերը ուրախ անցկացնելու համար, ամէն մէկը նորանոր հնարներ էր մտածում, պէսպէս խաղեր էր սարքում, որ գրաւեն Բագրատի սիրտը: Ամէն մէկը իւր սէրը, իւր անեղծութիւնը, իւր անձնը իրութիւնը ապացուցարելու համար խօսքեր էր, որ շուտով էր և ոչ մի ջանք չէր խնայում համոզելու համար: Բագրատն էլ համոզւած ընկերների անկեղծութեան վրա, աշխատում էր նրանց հետ զւարթ ժամեր անցնել, նրանց հաճութները լրանցել, ամէն մի ծանօթանձանօթի սիրտը շահել և ամէն մէկին իւր ջերմ, անկեղծ և անձնէր սէրը փաստացի ապացուցանելը՝ իւր ամենաբըջանիկ ժամերն էր համարում: Բագրատը ընկերներին, ծանօթներին և ամէն մի պատահողին իւր անձից շատ ու շատ էր սիրում և նրանց գոհացնելու, խնդացնելու և բաղդաւորացնելու համար՝ ոչ թէ միայն

նիւթապէս, ալլ կեանքովն անգամ միշտ պատրաստ էր, որ գրանց նեղութիւններից, պատուհասներից ու փորձանքներից փրկէ, ազատէ: Իւր անհուն սէրը, իւր բարեբաւութիւն Բագրատը ոչ միայն խօսքով գոչքով, գէլամով, կալքով ու ջանքով ապացուցել էր, ալլ հագար անգամ կեանքը վտանգի էր ենթարկել և մեծ հրճւածքով ազատել, բազում արացրել էր իւր ընկերակիցներին զանազան արկածներից:

Ինչպէս հաշուած էր գարեր ու գարեր Մալխասների տունը իւր հացով, հիւրասիրութեամբ և բարերարութիւններով, այնպէս էլ տարածւել էր Բագրատի մարդասէր, ազնիւ — աղայականութեան (gentillehomme) գործերը ամէն կողմ, ամէն բերան յափշտակած արմանքով ու զարմանքով գովում էր և պատմում նրա վեհանձնութիւնը, քաջասրտութիւնը, առատաձեռնութիւնը, անկեղծութիւնը և անձնօրութիւնները: Այս համբաւից աւելի ոգևորւած, աւելի յափշտակւած, էլ խիստ եռանդով ցրւում էր Բագրատը պապերի ժառանգութիւնը:

Արքան որ ջանք էին դնում Բագրատի հաւատարիմները, գործակալները և մտերիմները լցնել նրա զարտակ սնդուկները, նրանցից տասնապատիկ եռանդով շոալլ ժառանգորդը ցրւում էր: Ամէն մի ընկերոջ խնդիրքի դէպքում, խնդրոյի շրթունքների շարժումները չէ վերջացած, բառերը զեռ կիսաարտասանւած, Բագրատը նրանց նւիրում էր մատեաններ, սրեր, թըրեր, թիւնքներ, սակի, մարգարիտ, գոհար, կամ հագլազիւտ, ծանրագնի հնութիւններ, մինչև անգամ արտ ու ազարակ, ալզի ու անտառ կամ ամբողջ նախիր,

ջոկ, որոնք Բագրատի աչքում աւազի արժէք էլ չունէին: Բագրատը սէր էր որոնում, անկեղծ ջերմ սէր, անկաշառ ու անարատ սիրտ էր փնտռում, ինչպէս ինքը մտածում էր զէպի ամեն մի էակ. ընկեր թէ՛ ծանօթ, զրացի թէ՛ անցորդ, հարազատ թէ՛ օտար: Եւ Բագրատը սգևորւած իւր ընկերների ջերմ սիրով, իւր ծանօթների անհուն համակրութեամբ, արհամարում էր աշխարհի ահաւոր գանձերը, իւր պապերի դարերով դիզած գոհարները, որոնք ո՛չ լեզու, ո՛չ զգացում ունէին, ո՛չ էլ կարող էին նրա հոգուն ցնծութիւն ներշնչել: Բագրատը այնքան էր սիրում մարդկանց, որ ոչ միայն գանձերը, սնդուկները սրահները ու սենեակները դարտակեց. բոլոր գոյքը ցրեց պատահողներին, այլ նա պապերից մնացած հոգերն էլ, ազարազներն ու ամառանանոցները, այգեստաններն ու պարտէզներն էլ բաժանեց ընկերներին, ծանօթներին, իրեն պահելով մի միայն հայրենի նւիրական օջախը:

Երբ ամէն բան բաժանեց, երբ ամբողջ գոյքը ցրեց, երբ տունն իսպառ դարտակեց, երբ բոլոր գործակալները, սպասաւորները, ծառաները հեռացանք, ինքը մեն մենակ մնաց ահաւոր դարտակ տանը, պառաւած մօրը հետ, հասակակից ընկերները, ծանօթները և մտերիմները հետզհետէ բոլորն էլ հեռացան, ամէնքն էլ երես շուռ տւին: Քարեկամներն սկսեցին նրան նախատել, անարգել, որ ցրիւ էր տւել հայրենի գոյքը, ազգականները՝ նրա երեսն անգամ չէին ուզում տեսնել, այնքան որ զայրացած էին թշուառի

գէմ: Տարիներով նրա գլխով երգում ուտող և նրան
ահաւոր խոստումներով շշմացնող ընկերակիցները սկը-
սեցին նրան ծաղրել, արհամարել իրենց շրջանից հա-
նել, նրա ներկայութիւնից խուսարել, մինչև անգամ
փողոցներում ճանապարհները ծրմուսւմ էին, որ նրան
չը բարեհեն, կամ նրան կեղծելու չը պարտաւորին:
Իսկ Բագրատը գարձեալ պատրաստ էր նրանց համար
իւր վերջին պատասը գոհելու, գոչը բաժնելու և
և կեանքը վտանգելու, այնքան որ նրանց սիրում
էր: Բագրատի սրտում սէրն այնքան խոր և այնպէս
ընդարձակ արմատէեր էր գցել, որ այնտեղ տանու-
թեան բոյն գնելու որևէ խորշ չէր մնացել: Բարեհազի
երիտասարդը չէր նկատում, չէր կարող զգալ և են-
թադրել, որ իրենց անկեղծութեան վրա երգւող ըն-
կերակիցները ո՛չ միայն նրան չէին սիրում, չէին լար-
գում, չէին կարեկցում, այլ մինչև անգամ արհամա-
րում, ատում էին, ծաղրում:

Բայց կարիքը օրէցօր իւր ճիրանները աւելի
խոր մխից Բագրատի կոկորդը, նա մի օր զգաց վեր-
ջապէս, որ տանը ո՛չ հաց էր մնացել, ո՛չ էլ շորթան՝
մի ապուր եփելու: Ա՛յ եփող էր մնացել տանը, ո՛չ էլ
մաքրող, բոլորը, բոլորը քաշուել, հեռացել էին, բոլորը
երես շուռ տուել, նրա լւացքը մնացել էր՝ փոխնորդ
չունէր, շորերը - հագուստները կեղտուել էր՝ մաքրող
չունէր, կօշիկը ծակուել էր՝ դրամ չունէր կարկասանել
տալու և ամբողջ տանը, բացի գուռ ու փեղկից, ո՛չ մի
առարկայ չէր մնացել, որ կարողանայ ծախել,
կամ փոխել և մի քանի օրւա ապրուստ ձեռք բե-
րել:

Կարիքը նրան խրեց սև մտքերի ծովը, չքա-
ւորութիւնը նրան ալէժուփ տարաւ թշուառութեան
անդուեղը, նա ուշակորոյս չէր իմանում, որ կողմը
դիմել: Ամբողջ տան պահարաններն ու դարակները,
որոնք հազար անգամ քրքուել էր և յուսակտուր ետ
էր դարձել, անզգայաբար դարձեալ միառմի զննեց,
մեքենայաբար մտաւ ու ելաւ ընդ սենեակները,
մառանները, մարաքները, ախոռները ու գոմերը, ո՛չ
մի անկիւնից մի շիւղ չը գտաւ, ո՛չ մի բան աչքով
չընկաւ:

Ի՞նչ անէր, ո՛ւր դիմէր, նա մնացել էր մոլոր-
ւած: Մուրալ չէր կարող, խնդրելուց ամաչում էր,
գործ չը գիտէր: Երկար մտածելուց յետոյ, Բագրատը
որոշեց, որ իւր ընկերակիցներին տուն հրաւիրէ և
խնդրէ, որ իրեն մի յարմար պաշտօն — գործ գտնեն,
որ թէ անգործութիւնից ազատւի և թէ տպրուստի
հնարաւորութեան ունենայ: Այս որոշման հասնելուց
յետոյ, վստահ էր, որ իւր հարիւրաւոր ընկերակիցները,
բարեկամները սրտակից մտերիմները, որոնք երգւել
էին հազար-հազար անգամ նրա համար կեանքերը
զոհել, չէին խնայելու մի պատշաճ գործ գտնելու:
Այս որոշման հասնելուց յետոյ, նա գնաց պառաւ մօր
մօտ ու ասաց.

— Քալաջան, այսօր մենք ի՞նչ ենք ուտելու:

— Բալաջան, ասաց որդեսէր մայրը, որ պատ-
րաստ էր կուրծքը կտրելու և զաւակի քաղցը յագե-
ցնելու, այն տնտես կինը, որ եօթը տարւալ պահածոն-
ներից անգամ մաս էր թագցնում, որ կարիքի ժամին
գուրս բերէ ու շահի և ամօթով չը թողնի իւր տան

տղամարդին, ուրախալի ժպտով լարեց, — Պուտկի որջը
բիշիւղ ունինք, ամբարի անկիւնը ալիւք, վեր կենամ
շուղեմ, բիշի (իւղի մէջ տապակած խմոր) եփեմ:

— Բալաջան, ախար բիշին ես ինչպէս մինակ
ուտեմ: Գու պատրաստութիւն տես, ես էլ գնամ ըն-
կերներին ձայն տամ, գանք, միասին ուտենք, բիշ
խօսենք, սիրտս բացւի: Մինակութիւնն ինձ գժւեց-
րեց:

— Գու ես իմանում, որդի, ասաց մայրը և
դիմեց գործին:

Բագրատն էլ գնաց ընկերներին հրաւիրելու:
Ընկերներից շատերը արդէն բթերը ցցել էին, բարև
անգամ չէին ուզում տալ, շատերն էլ նրա գոլքով
հարստացած հեռուոր քաղաքներ էին գնացել, ոմանք
մերժեցին նրա հրաւերը այլևայլ պատրուկներով,
կասկածելով որ Բագրատը կարող էր նրանցից որևէ
նպաստ խնդրել, ուրիշներն էլ բիշի անունը լսելով՝
եկան ուտելու և ծաղրելու տնանկացածին: Հաւաքե-
ցան սրահը, պառաւ նանին եկաւ, հաց գցեց և մինչև Բա-
գրատի գնալը, նրանց գաւթի շունը մտել էր խոհանոց,
բիշին կերել և սինին գետին շուռ տալով՝ փչացրել էր
մնացորդը: Ոլոր-մոլոր շւարած ետ դարձաւ Բագրատը
և ասաց.

— Ներեցէք ինձ, ընկերներս, բարեկամներս,
ներողութիւն եմ խնդրում, մեր բիշի գլխին փոր-
ձանք է եկել: Մայրս խոհանոցի դուռը բաց էր թո-
ղել, մեր զամփոք մտել ու բիշին կերել է:

— Այ՛ թէ սուտ, հայ՛, բայց լաւ լարմարացը-
րեց, ասաց Բագրատի ընկերներից մէկը:

— Շատ ու քիչ բան լսել էի կեանքումս, ասաց երկրորդը, բայց շան բիշի ուտէլը չէի իմացել:

— Տո՛, շունն էլ բիշի ուտէ, ինչ լիմար լիմար դուրս ես տալիս, ալդպէս էլ սուտ կարելի է խօսել, ասաց երրորդը և վշտացած դուրս եկաւ:

— Լաւ, եղբայր, շունիս, ասո՛, շունիմ, էլ ինչի ես ստու՛մ- ասաց մի ուրիշը: Իմ էլ խելքս, սր ետեկցդ եկալ, չէ գնացի տիրացու Մելքոնի Տէրիսէն ուտելու:

— Եղբայր, բարեկամ, միթէ կասկածում էք իմ անկեղծութեան վրա: Երբ էք դուք սո՛ւտ լսել այս շրթունքներից:

— Զբաւորութիւնը մարդուն ստախօս էլ է զարձնում, ասաց մի ուրիշը և հեռացաւ:

— Իս առաջ էլ ալդպէս էր, ասաց մի աւելի անպատկառը, հարստութիւնն էր ծածկում գրաւրատները և ճանապարհ ընկաւ:

— Լոթիք, ստախօս, ամօթ է, բայց դու ամօթ էլ չունիս: Շունն էլ բիշի ուտէ, ասացին ու ցրեցցան բոլոր հրաւիրեալները և Բագրատը վշտից չէր իմանում ինչ ընթացք բռնելը: Բագրատը բորբոքւած կրկնում էր:

— Ես սուտ եմ խօսում, ես ստախօս եմ եղել, առաջ էլ կեղծելիս եմ եղել սրանց...: Ո՛հ, այս ինչ զարհուրելի զրպարտութիւն է: Ա՛յս ինչ սոսկալի նախատինք է: Ես՝ Բագրատս ստե՛մ, կեղծե՛մ և իմ կարողութիւնը ծածկէ-պարտկէ արատներս: Միթէ այդ մարդիկ համոզւած են խօսում, միթէ ընկերներիս սրտի խորքերում այս միտքը վաղ արմատացած է եղել:

Միթէ նրանք կասկածելիս են եղել իմ ազնուութեան-
անկեղծութեան վրա: Այս ինչ զարհուրելի վիճակ է:
Հազար անգամ երանելի չէի լինել, որ փոխանակ այս
խօսքերին, սիրոս սրով, նիզակով ծակէին ու դաշիւնով
խոցատէին, ... կամ ականջներիս փոխարէն ստամոքսս
թունաւորէին:

Այս սոսկալի մտքերով Բագրատը մի՞նացրեց
իւր օրը. գիշերն անհանգիստ, չը կարողացաւ խաղաղի
ու նիհիլի, դառն մտքերը նրանից չը հեռացան մինչի
լոյս: Լուսադէմին երբ թմրած ննջում էր, նրան երագ-
ւեց իւր հօր ուրւականը, որը լանդիմանալով ա-
սաց.

— Միթէ չամաչեցիր, որ երևակալեցիր շոգո-
քորթ ընկերներիդ աջակցութեամբ գործ-անարուստ ճա-
րել: Մալխասների անարժան զաւակ, միթէ այդքան
պիտի ստորանալիր, միթէ պիտի դրժէիր երգումդ,
խոստումդ...:

— Երգումս չեմ դրժել և խոստմանս գէմ չեմ
գործել, գոռաց ու զարթնեց Բագրատը: Նա ուշքը
հաւաքելուց յետոյ, կրկնեց ինքն իրեն.

— Երբէք, երբէք. Մալխասների կորիւնը չի
կարող որևէ անձի ձեռ մեկնել, կամ նպատտ խնդրել
ու նորից գլուխը բարձին դրեց, որ խաղաղի: Բայց
նիհիլը նրանից խոյս էր աւել, նա չը կարողացաւ հան-
գստանալ:

Գեռ արևի ճառագալիթները նոր էին ցոլացել
Արագածի գագաթին, երբ մի կարաւան բախղեց Մալ-
խասների հիւրասէր գուռը: Պատաւը վաղ էր վերկա-
ցել, դռները բացել, երեսը աղօթարան ուղղել, ծունր

դրել, աղօթքը մըմնջել, տուն գուռ մաքրել և հիւրանոցի մշտավառ օջախը բորբոքել էր: Նա հիւրերին ներս առաջնորդեց, իսկ ինքը մտաւ անսպառ ամբարների անկիւններից խոտ ու գարի ճարելու, ձու ու ձագ փնտռելու, որ կշտացնի հիւրերին ու գրաստներին և այնպէս ճանապարհ գցի: Բագրատը թէև վշտահեղձ, բայց ջանաց ժպտալի գիմաւորել անցորդներին, որ գոնէ անուշ խօսքով, զւարթ գէմքով նրանց սիրաշահէ: Հիւրերը տեղաւորել, մաքրել և տարածել էին, բազմոցների վրա հանգստանալու, ուր փուլած էին թէև քրքուած, բայց մաքուր թաղիքներ: Հիւրերի առաջնորդին թէև հաճելի չէր երևացել կրակարանի մշտավառ բոցերը, բայց նա կարողացել էր կրքերը զսպել, առանց ընկերակիցներին զգացումները արտայայտելու: Բագրատի ռոփորական հարց ու բարևից, պատշաճ տեղեկութիւններից լետոյ, կարաւանի առաջաւորը հարցրեց.

— Բագրատ քէհն, ուր են ձեր ծառաները, տուն, գուռ դարտակ եմ տեսնում:

— Աշխարհ է, ասաց Բագրատը հառաչելով, ոչ ոքի, ոչ մի բանի վրա չի կարելի վստահել. կային, իսկ այժմ չը կան:

— Ախար ուր են ձեր բազմաթիւ սպասաւորները, աղախիները, անասունները, ամբարները, անսպառ մառտներն ու մարաքները: Հրամայեցէք մեզ ճաշ տան, մեր անասուններին աւուրտ, քիչ էլ գարի: Մենք դեռ հեռու ճանապարհ ենք գնալու: Բագրատը լուած՝ չէր իմանում ինչ պատգամսանի: Նա պատրաստ էր իր սիրտը հանել, այդ հիւրերի համար խորովել ու

կշտացնել, բայց, հնար չունէր, իսկ տունը ոչինչ չէր մը նացել:

— Ախար այս տան վրայից հայր Աբրահամի օրհնութիւնը անպակաս էր, քմծիծաղով ասաց հիւրը, սրա բերքն ու բարին լագեցրել էր Հռոմի լէգէօններին, պարսիկ զօշուներին, թաթար վաշտերին, ենի-չերական օջախներին (գունդ), իսկ անժամ, անժամ եօթը հօգու և եօթը գրաստի անանց կշտացնելու էք ճապարհ գցելու: Աւրեմն ձեր տան վրայից նախախնամութեան օրհնութիւնը վերացաւ:

— Օրհնութիւնը չը վերացաւ, ս՛հ բարի հիւր, օրհնութիւնը անդառնալի է, ասլ մարդիկ վերացան, մարդիկ պակասեցան, ասաց հառաչելով Բագրատը:

— Քանիոր սէրը թռել է սրտից, մարդկային դիակները մարդահաշուի մէջ դասաւորելը սխալ է, ասաց հառաչելով Բագրատը: Չքացաւ սէրը, անհետացաւ անկեղծութիւնը, մարդկութիւնը չի կարող գոյութիւնը շարունակել: Ես պապերիցս միայն սէր էի ժառանգել, իմ երակներս սիրով էր լցւած, դրա համար ես սիրեցի անհուն մարդկութիւնը, նրան սիրելը պարտքըս է և երբէք չեմ զղջալ: Բայց շրջապատող ընկերակիցներին կրճբի տակից սէրը սրտով չքացել է, նըրանք կեղծեցին, ես հաւատացի, ես շնորհեցի-բաշխեցի, նրանք աւազակաբար կողոպտեցին, սրիկայաբար ծաղրեցին:

— Աւզինդ է ուրեմն այն համբաւը, որ գուսանները բերել էին վէզիբին. թէ Մալխասների ծուխը կտրուեց և ճրագը հանգաւ:

— Ինչպէս նկատում էք, վէզիբի սիրտը տեղն

ընկաւ: Երևի դուք նրա լրտեսներն էք: Գնացէք, լալտնեցէք վէզիբին, որ ուղիղ է, ես իմ ձեռքով պապենական գոյքս ցրեցի ընկերներին և ծանօթներին, որոնք ինձնից ալտոր երես են դարձրել: Ալտոր ես չքաւոր եմ, ամբարներս դափ դարդակ, բայց դեռ ևս սիրում եմ ընկերներին, սիրում եմ գրացիներին, սիրում եմ մարդկութիւնը և եթէ սրանց համար ինքս էլ զոհ գնամ, օջախիս ծուխն էլ հանգչի, տանս ճրագն էլ մարի. երբէք վշտանալու չեմ:

— Ել նոր պիտի հանգչի, ասաց հեզնելով հիւրը:

— Ինչի պիտի հանգչի, մէջ ընկաւ պառաւը, գոգնոցով բերած թիթէնը կրակարան լցնելով, ինչի պիտի ճրագ մարի, որդի, քանիոր դու ողջ ես, քանի որ անդամներս չեն գոսացած կաշխատենք ու կապրենք:

— Այնտեղ, որտեղ օրհնութիւնը գոյութիւն ունի, ասաց հիւրը, մարդիկն էլ անպակաս են լինում:

Պառաւը հիւրերին ապուշ կրթելով ետ դարձաւ, մի մաղ գարի բերեց և ասաց.

— Արիք, ձիերի գարին տւէք, անասուններն ուտեն:

Այս անսպասելի խօսքերը ծակեցին կարաւանի առաջնորդի սիրտը, որը տեղից բարձրացաւ, լսածները աչքերս՝ սուղեցելու: Գեռ անասունների կերը չը բաժանած, պառաւը խօնչէն բեջեց ու գրեց, տաք տաք իւխան վրան փռեց, տկի պանիրը, քամած մածուկը, կարագով մեղրը դասաւորեց վրան: Ետ դարձաւ ձուա-

զեղը բերելու: Բագրատը սեղանին մօտեցաւ և սկսեց հիւրերին հրաւիրել, խնդրել, որ ախորժակով ուտեն: Երբ հիւրերը և գրաստները կշտացան, ճանապարհ էին ընկնելու, առաջաւորն ասաց ընկերակցին.

— Զարմանալի է, անպէս կողոպուելուց, անպիսի աւարի ենթարկւելուց լետոյ, դարձեալ այսպիսի առատութիւն:

— Բուզան, Զենգիդ-խանը, Աէնկթիմուրը չըկարողացան դարտակել սրանց ամբարները, միթէ մի քանի ջահէլ-Չիհէլ ընկերներ պիտի կարողանային կործանել սրանց տունը: Սրանց մարմնի վրայից կաշին եթէ մաշկես, երկու օրից նոր կաշի կը կապեն: Թէև առաջւայ Մալխասների առատաբաշխ սեղանը չէր, բայց տեսար տնորար կախարդ պառաւը, դարձեալ կարող է օրական մեզ նման եօթը կարաւան կշտացնել և ճանապարհ դնել:

Երբ հիւրերը հեռացան, պառաւը սեղանը ժողովելով ասաց,

— Բագրատ, եթէ որևէ ճամբորդ էլի գայ, էլ ոչ խոտ ունինք, ոչ հաց: Ամբարի հողը մաղեցի, նրանից հազիւ մի մաղ դարի գտեցի: Իսկ իրիկւան հաց էլ, ճրագ էլ չունինք: Գնա՛, ճար արա, ալիւր ու ձէթ գաիր:

— Քալանջան, ինչ անեմ, ուր դնամ.

— Բալանջան, գնա՛, աշխատիր, ճար արա, տանդ ծուխն ու ճրագը մի թողնիլ հանգչելու:

— Ան, ասաց մտախոհ Բագրատը և տարածւեց հիւրանոցի բազմոցի վրա, խորատուզած տխուր մտքերով: Երբ երիտասարդը մտքով այլէծուփ խրւել էր վշտի

ովկիանի անյատակ անգունդը. հեռուից լուեցին կարաւանի գրաստիների զանգակների ձայները, որոնք աստիճանաբար մօտենում էին Մալխասների ուտայինն. Բագրատը հիւրանոցի բաց գոնից նկատում էր. թէ ինչպէս կարաւանը և նրա զանգակների բարձրացրած զողանչիւնը աստիճանաբար մօտենում էր իրենց տանը: Մալխասների ճետը չէր կարող տարակուսել, որ կարաւանը ուղղակի դիմում էր իրենց դուռը: Բագրատի գլխում հազարաւոր մտքեր իրար յաջորդեցին մի բոպէի ընթացքում, նրա սկանջում դեռ բազիւում էր մօրը խօսքերը, թէ — « Ել ո՛չ խոտ ունինք, ոչ էլ հաց: Աէթ էլ չունինք ճրագի համար »: Երիտասարդը յանկարծ տեղից թռաւ, մտաւ մութ քիւարը, ներսից դուռն ամրացրեց և խորխարելով առաջ գնաց: Բագրատի մարմնին պատեց սառը քրտինք և սարսուռը այնպէս բռնեց նրան ծնկները, որ նա դժւարութեամբ էր քայլերը առաջ փոխում:

Քիւարն այնքան մութն էր, որ ոչինչ չէր երևում և Բագրատը անդադար զարկում էր արկղների, դարտակ կարասների, անպէտք ու ջարդւած փեթակի տաշտերի: Նա գրպանից կայծաքարն ու պողպատիկն հանեց, մի քանի հարւածով արեթը վառեց, բամբակի կտորի վրա դրած այնքան փչեց, որ բարձրացած բոցով ճրագի պատրոյգը բռնկեց: Անթեղը դրեց պատի մէջ ցցւած ճրագակալի վրա, լռելայն մօտեցաւ այն անկիւնը, որտեղից մի ժամանակ դուրս էր հանել կազւած ոսկիների պտուկները: Բոպէական արագութեամբ Բագրատի լիշողութեան տեսարաններից սլացան ու անցան պապերը, հալը, դիզւած գանձերը.

այն ահաւոր պղնձներն ու պղձկալքը, որոնք մի ժամանակ դարուած էին այդ անկիւնում: Պալծառ պատկերներով նա լիշեց ճոխ ամբարները, լիք լիք մառաններն ու մարաքները, ախոռներն ու զոմերը և հացկատակների ահաւոր բազմութիւնը: Ներկայացան նրա մտապատկերներում այն բոլոր ծանօթները, մտերիմները և ընկերները, որոնց նա ցրել էր ամբողջ կարողութիւնը, որոնց նա սիրել էր հոգւով և բաղիւեց նրա ականջներին այդ կեղծաւորների վերջին խօսքերը, թէ ինքը — Բագրատը ստախօս է, խաբեփալ է, կեղծաւոր է — և այս բոլորը այնպէս խոր խոցեցին նրա սիրտը, այնպէս բորբոքեցին նրա մաղձը, որ նա աչքերը շուրջը դարձրեց և հեռուն նկատելով լացքի կոտրած աթոռը, դիմեց այն կողմը. բերեց գրեց անկիւնում, որ այդ աթոռի վրա բարձրանալ, որպէսզի կարողանալ չլանին հասնել և վիզը գցել:

Բագրատի մոայլ գէմքը բոլորովին թախիժով ծածկեց, երեսի կնճիռները խորացան, շնչառութիւնը ծանձրացաւ և հռուստանքները իրար ետեւից դուրս էին թռչում նրա սրտի խորքերից: Նա ցնցեց կանգնած տեղը, որպէսզի չը գլորւի, թիկունքը պատին կռթնեց և ձեռքը լւածքի աթոռի թիկնոցին գրեց:

Բագրատը գողում էր կախաղանի չլանի տակ, նա սոսկում էր և չէր ըմբռնում, թէ ինչ լանցանքի համար էր դատապարտուած այդ տխուր վախճանին: Նա մտածում էր, միթէ մարդկութիւնը սիրելը, ընկերութիւնը սիրելը այնքան մեծ ոճեր էր, որ դրա համար հայրենի կտակով, երդումով դատապարտել էր

անձամբ բարձրանալ այդ կախաղանը և վերջ զնեւ իւր դեռահաս կեանքին: Նա չէր ըմբռնում իւր դատապարտութեան իսկական խորհրդաւոր նպատակը: Նա մտածում էր այս հարցի խորը թափանցել, իսկ պատճառները չէր գտնում: Տխուր մտքերով կենտրոնացած նա թմրել, նիհրել էր և անշարժ մնացել կանգնած տեղը՝ անկիւնում, լացքի ակողմի մօտ, կախաղանի չւանի տակ:

Այս միջոցին նրանց բակի դռները ճրճուալով բացւեցան, կարաւանը մտաւ ակողմ, որի պատը կից էր մութ քիւարին: Չիերի գանգակների աղմուկը, սմբակների դոփիւնը և դղրդոցը՝ սթափեցրին Բագրատին: Նա անմիջապէս լիշեց հեռւից եկող կարաւանը, ըմբռնեց, որ իրենց տունն էր իջել: Նրա ականջներում կրկնւեցին մօր խօսքերը, թէ — «Ել ո՛չ խոտ ունինք, ո՛չ էլ հաց» — և լուսահատ երիտասարդը ամփոփեց ութերը, բարձրացաւ լացքի ակողմի վրա, նախապատիւ համարեց պատուով մեռնել, քանթէ ուրիշի ձեռմեկնել, կամ իրեն դուռը դիմողին քաղցած ճանապարհ դցելու նախատինքը կրել, ամօթանքը քաշել: Նա դողդոջիւն ձեռքերը պարզեց, քաշեց չւանը երկնցուց վիզը և ոտքը ակողմին զարկեց, գլորեց, որ կախի ու խեղդւի.....:

Բայց չւանը Բագրատի ծանրութեան չը դիմացաւ, վար իջաւ, անպէս որ նրա ոտքերը դեռանին դիպաւ: Պարանի ծալրերին կապւած առարկաներն իրար դիպչելով խորհրդաւոր ձայն բարձրացրին և կախողի հետաքլլիւթիւնը շարժեցին: Երիտասարդը մի քանի անգամ քաշքշեց չւանը իւր բոլոր ուժով և նայն խոր-

հրդաւոր դժուարացը կրկնեց, իսկ առարկաները դէմ առան կոնդերին, ցած չեկան: Բագրատը կրկին լւացքի մթոռը մօտեցրեց անկիւնին, բարձրացաւ ճրագը ձեռքին, զննեց առաստաղի այն խորշի խորքերը, որտեղից կախուած էր չւանը: Նա էլի բարձրացաւ և չւանի ծայրերին կապուած սյարկերը հետզհետէ ցած բերեց: Պարկերի բերանները բանալուց լետոյ, ապշեցաւ Բագրատը, երբ տեսաւ այն ահաւոր գանձը, սկիին ու գոհարը, մարգարիտն ու անգին քարերը և Մալխասների աւանդական առասպելական Ոսկի Խոյրը:

Բագրատը քիչ դրամ վերցրեց և գանձը կրկին իրեն տեղը կաղելով՝ դուրս գնաց, հիւրերի համար կարևոր մթերքը գնեց և նրանց կշտացնելով ճանապարհ դնելուց լետոյ, սկսեց կամաց կամաց տանից ցրած ապրանքը ետ գնել, կամ նրանց փոխարէնը ձեռք բերելով տունը լցնել: Նա իր ժառանգական հողերից մեծ մասը գնեց, այգիներն ու անտառները ձեռք բերեց, ախոռներն ու գոմերը ընտիր նժուղներով և եզներով լքցրեց, կովեր ու մատակներ կապեց իրենց մսուրքներին, գութաններն ու արօրները, սալլերն ու լուծքը կարգի դրեց և վերակենդանացրեց Մալխասների տունը: Պատաւ նանին էլ ուրախացրեց ամուսնանալով, սպալերի ընթացքին հետևելով, հարստացրեց իւր գիւղատնտեսական գործերը: Առաւօտից բրիկուն նա վազում էր գործին, հրամայում, սահանջում և ամէն բան անել էր տալիս, դուռը դիմող անցորդին ընդունելու համար: Բայց ինչպէս որ իր կշտացնելով ճանապարհ գցում:

Այս որ տեսան Բագրատի կեղեքիչ ընկերները, մնացին զարմացած, չէին ըմբռնում, թէ որտեղից էր ձեռք բերում նա այդ կարողութիւնը, ինչպէս կարճ միջոցում կարողացաւ հին գիրքը գրաւել: Ակամայ նրանք խոնարհուում էին Բագրատի առաջ, երես էլ չունէին, որ կարողանային մօտենալ, կրկին նրա հետ մտերմանալ: Նրանք, որ մի ժամանակ ճանապարհները ծրմռում էին, որ չը պարտաւորւէին խեղճացած Բագրատին բարեւել, այժմ եօթանասուն քալլ հեռուից նրան գլուխ էին իջացնում և ամէն անկիւնում նրա հանճարն ու սիրտը գովարանում:

Բագրատը չէր էլ ուզում տեսնել կամ լսել, թէ ինչ գիրք էին բռնել իւր նախկին ընկերակիցները իրեն վերաբերմամբ: Նա բաւական էր համարում նրանց սիրտը մաշող բարուական տանջանքը, ամօթանքը: Նա նկատում էր, թէ ինչպէս նրանք ամենայն ջանք գործ էին դնում իրեն հաճելի դառնալու, բայց ինքը՝ Բագրատը բացի փողոցային սառը բարեւները, ուրիշ լարաբերութիւն չէր էլ ցանկանում ունենալ: Նա լսում էր, թէ ինչպէս նրա ետեւից իրան գովում, երկինք էին բարձրացնում և ամէն բերան կրկնում էր. — Անկիւնի քարը գետին չի մնալ, անպատճառ կը բարձրանալ իւր տեղը: « Ժամանակ անցնելուց յետոյ ամէն բան մոռացան և Բագրատի աներես ընկերները մէկ մէկ մօտենում, խօսք էին գցում, կատակում, քծնում էին, որ գոնէ նրա արհամարական ժպիտն էլ է հաւաքեն: Մի օր գրանցից մէկը մօտեցաւ ու սասց:

— Բագրատ, ախար երբ պիտի մեզ մի ճաշկե-

լողթ տաս: Գնացիք Վրաստան, առանց մեզ հարսանիք արիք, էդ բաւական չէր, ետ դարձար ձեր երեսին էլ է չես մտիկ անում: Այդքան էլ զայրանալ պէտք չէ, դու չես կարող այնպէս հիմնովին փոխել, որ ժլատ դառնաս: Ինչի՞ ես երես շուռ տուի:

— Բարեկամ, ասաց Բագրատը մեղմութեամբ, երբ հայրական գոյքս ցրեցիք, առաջին անգամ դու երես շուռ տուիր, հիմի էլ, առանց մեղքդ խոստովանելու, ճարպիկութեամբ ուզում ես լանցանքդ ինձ վրա բարդել:

— Ախար քու ազնւութիւնը, իշխանականութիւնը էլ ուր կը մնա, եթէ վեհանձնութեամբ փոքրերիդ շը ներես:

— Երբէ՛ք խէն չեմ պահել, որ ներելու կարիք ունենամ: Ես ինչ մեղք ունիմ, եթէ դու լանցանքդ զգալով՝ ամաչել ես երեսդ ինձ ցոյց տալու:

— Ո՞վ չի ճանաչում քո ազնիւ և վեհ հոգին: Անցածը մոռացւած է, ես խնդրում եմ կիրակի ճոխ հարկ տեսնես, որ մեղաւորներին հաւաքեմ, գանք թողութիւն ստանանք, նախկին շնորհներդ վայելենք:

— Իմ սեղանս և գիրկս միշտ բաց է:

Կեր ու խումը կատարել վերջացրել էին, կե նացնենք ու մաղթանքները շոալուել էին արտասաւոր ճոռոմաբանութիւններով և սեղանը հաւաքելուն մօտեցել էր: Թէև ամեն գլուխ տաքացել էր, ամէն բերան երգ էր մրմնջում և ամէն լեզու լիբաւում էր, բայց Բագրատը այնպիսի գիրք էր բռնել, որ գեռ

չրթուենքները չը շարժած, բոլորը ուշքերն հաւաքած՝ նրա գէմքին էին նախում, ուշի ուշով լսում էին նրան: Այդ միջոցին Բագրատը առանց տեղից շարժուելու ասաց.

— Պարոններ, ես ձեզ մի նորութիւն ունիմ յատնելու: Խնդրում եմ, լրջութեամբ լսէք և իմ ենթադրութեան մասին ձեր կարծիքը յայտնէք: Մեկքոն, այն Խոյիլը բեր, հրամայեց Բագրատը սպասաւորին:

Ծառան մի ափսէի վրա գրած ոսկէ խոփը բերեց սեղանի մէջտեղը գրեց: Բագրատը մատով բոլորի հայեացքը խոփի վրա կենտրոնացնելով, ասաց.

— Պարոններ, գուք բոլորդ մեր տան ժառանգական ոսկէ խոփի պատմութիւնը լսած էք:

— Բոլորս, ձայն աւին ամէնքը, մարդւած զինւորների նման:

— Հանգուցեալ հայրս այս խոփը պահել էր մի խորշում, առանց տեղն ինձ յայտնելու: Եթէ տեղը զիտենայի, գուցէ այս ժառանգական անդին հնութիւնն էլ այսօր ձեռքիցս գուրս եկած լինէր: Ինչպէս ասացի տեղը չը գիտէի: Մի գիշեր պառկած տեղումս, լսում եմ, որ մկները մի տարօրինակ բան են կրծում և այնպիսի ճանգոց են բարձրացնում, որ էլ բունս չի տանում: Մէկ-երկու անգամ բարձրացայ, աղմկեցի, մկներին փախցրի, բայց ինչ օգուտ, երբ ես պառկեցի, նրանք դարձեալ մօտեցան իրենց կրծօնին: Քունս կտրուեց, գայրացայ, բարձրացայ ճրագը վառեցի և սկսեցի հետամտել մկներէ կրծօնից եկած ձայնին: Վերջապէս քանդեցի դռնաբէն, քանդեցի պատի քարերը և գտայ այս խոփը, որի կոթը, լաւ գննեցէք, լաւ

նախցէ՛ք, կրճած է: Մկները կրճել էին, գոնէ ես այսպէս եմ կարծում, ոսկէ խոփը: Այսպէս էլ զարմանք:

— Զարմանալու բան չը կայ, ասաց սեղանակիցներէց մէկը. ինչ էլ պատահել է, ես էլ տեսել եմ, թէ ինչպէս մկները ոսկի են ուտում:

— Հազար անգամ պատահած բան է, ասաց մի ուրիշը, մայրս պատմել է, որ ինքը տեսել է, թէ ինչպէս մուկը կրճել է նորա ոսկի ապարանջանը:

— Մօր պատմութեանը ինչ կարիք կայ, ասաց մի երբորդը, երբ ես ինքս տեսել եմ, թէ ինչպէս մի գիշեր մուկը մօտեցաւ մեր Նազուի գլխին և սկսեց ճակատի ոսկիները կրկանել:

— Նոր բան էք ասում, մէջ ընկաւ շորորդը, ինչ անբնական բան է մկի ոսկի ուտելը:

Եւ ամէն բերան հաստատեց Բազբատի ենթադրութիւնը, որը ոտք էր բարձրացել, ձեռքը սեղանի կրթնած գննում էր խօսողների դէմքերը և արտայայտութիւնները: Ել չը կարողանալով համբերել, ասաց.

— Թո՛ւ, ձեր երեսին, անամօթներ, կեղծաւորներ, շունը բիշի չի ուտիլ, իսկ մուկը ոսկէ խոփը կը կրճէ, կ'ուտէ: Կորէ՛ք, աչքիս առաջից ոսկիապաշտ խեղկատակներ, դուք չէք կարող գնահատել ազնիւ սրտի անարատ սէրը, դուք չէք կարող ըմբռնել սիրոյ վնասութիւնը, դուք չէք կարող սաւառնել անհուն սիրոյ անսահման տարածութեան մէջ: Գանձերս ձեզ կրկին ստրկացրել են և կեղծում էք Յուդայից էլ ստորաբար: Միթէ՛ ես այն մարդը չեմ, որին ստախօս ու կեղծաւոր

Հոչակեցիք, երբ շան կերած բիշից գատ բան չունէր
ձեր առաջը դնելու: Նունը բիշի չի ուտիլ, մուկը
ոսկի կուտէ...

Երբ հարկեօրները քարացած չէին կարողանում
տեղերից շարժուել, մի ճանապարհորդ մտաւ Մալխաս-
ների ընդունարանը և ապուշ կտրած զննեց ու ա-
սաց.

— Բագրատ, քանի որ դու այս սրտի տէրն ես,
որ դաւաճաններիդ դարձեալ սիրում և շուրջդ հաւա-
քած, չես խնայում ունեցածդ նրանց գոհելու, իմ
թակարգներս չեն կարող քեզ տապալել: Սուլթան
Մուրադի պատուհասից փախստական վէզիրը, որը տի-
րեց իւր տիրոջ՝ խալիֆի համար Բաղդադը, եկել է Նի-
րակի օրինական ժառանգի դրանը մի որջ է խնդրում,
ծառայելու և ապրելու...:

— Մեկքոն, վէզիրին խալաթ բեր, ասաց Բա-
գրատը, նրան աջ կողմը տեղ ցոյց տալով:

1898 թ. Յուլիս:

Նոր - Նախիջևան:



[-9m.]

